

Լ. Ս. ԿՈՎԱՆԵՐՄՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ
ՓՈԹՍՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРИАН

Л. Ш. АВАНЕСЯН

ИРАНСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ
В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1989

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՅՄՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՅՎԻ ԽՆՍԻՏՅՈՒՑ

41
7-85

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ
ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2736



ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՀ ԳՈ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1990

Տպագրվում է ՀեՄՀ ԳԱ Հր. Անուշանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների զոկտոր

Հ. Գ. ՄԱՌԻՍՅԱՆ

Գերբը հրատարակության են ենթարկվելով գրախոսների՝ բանասիրական
գիտությունների զոկտոր՝ Վ. Ա. Փայլանը և բանասիրական գիտությունների
մեկնածու Գ. Ս. Ասատույանը:

Հ 854 Հովհաննիսյան Լ. Ե.

Հայերենի իրանական փոխառությունները / [Պատ. խմբ.
Հ. Գ. Մուրադյան], ՀեՄՀ ԳԱ. Հ. Անուշանի անվ. լեզվի
ինս-տ.—Եր.: ՀեՄՀ ԳԱ հրատ., 1990—304 էջ.

Աշխատանքը եփրված է V—XI դդ. գրաբար մատենագրության մեջ
աճեցված իրանական ծայրում ունեցող բառերի համակարգման քննու-
թյանը: Բացահայտված են փոխառությունների սկզբնաղբյուրները, փո-
խառյալ միավորների գործնական յուրահատկությունները: Տրված է փո-
խառյալ բառերի համեմատարար շարքոված ցանկ:

Գերբը օգտակար մեծարկ է հայոց լեզվի պատմության մասնա-
գիտների, իրանագիտության շարքերով զբաղվողներին համար:

4502010000
Հ 703(02)—99 79—85

ԳՊԳ՝ 81 22

ԱՌԱՋԱՐԱՆ

Լեզվի կառուցվածքի պատմական զարգացումը, ինչպես բազմիցս
գիտված է ուսումնասիրողների կողմից, ամենից ավելի տեսանելի է
բառապաշարի ոլորտում: Այս իմաստով լեզվի կրած պատմական փո-
փոխությունների ուսումնասիրությունը ենթադրում է ամենից առաջ
բառապաշարի զարգացման ու փոփոխության՝ այդ թվում նրա կարևոր
տարրերից մեկի՝ այլ լեզուներից կատարված փոխառությունների բըն-
նություն:

Հայ-իրանական տնտեսական-բազարական կյանքի առանձնահատ-
կություններով պայմանավորված՝ երկու ժողովուրդների լեզվական
առնչակցությունները ակունքվում են հարաբարմյակների խորրից, և պա-
տահական չէ, որ հայերենի՝ հին լեզուներից կատարած փոխառություն
ների գերակշիռ մասը իրանական բառերն են: Այս տեսակետից էլ
խիստ կարևորվում է հայերենի իրանական տարրի ուսումնասիրու-
թյունը, մի բնագավառ, որը համեմատական լեզվաբանության կազ-
մավորման շրջանից եղել է համեմատաբանների, հայագետների ու ա-
րևելագետների ուշադրության կենտրոնում:

Մույն աշխատանքը նվիրված է հայոց լեզվի գրաբարյան փուլի
իրանական փոխառությունների քննությանը: Այս սահմանաբաժանու-
մը բնավ պատահական չէ, այլ նվիրված է նախ՝ նյութի բնութիւնով
ու ծավալով, սպա և գրաբարի, որպես հայերենի գրավոր ավանդված
նախնական ու լեզվի հետագա զարգացման բնօրհանուր միտումները
պայմանավորող վիճակի առանձնահատկություններով:

Գրաբարի իրանական բառաշղբար որակապես տարբերվում է մի-
ջին հայերենի (նաև հայ բարբարոսների) իրանական բառաշրտից: Վեր-
ջինն միշտ էլ գիտակցվել է օտար, զրկված լինելով լեզվում արմատա-
վորվելու կենսունակությունից, չի ծառայել նաև արդի հայերենին,
այնինչ գրաբարի իրանական փոխառությունների մեծ մասը, արգեն
V դ., միայն ստուգաբանորեն գիտակցվելով որպես իրանական, կազ-
մում էր մեր լեզվի հիմնական բառաֆոնդի անբաժան տարրը:

Տարբեր են նաև գրաբարի և միջին հայերենի իրանական փոխառությունների աղբյուրները: Վերջինների փոխառության աղբյուրը նոր պարսկերենն է. այնինչ, գրաբարի իրանական տարրերը ենթադրում են Տին և միջին իրանական լեզուների տարբեր աղբյուրներ, որոնց բացահայտումն ու քննությունը կարևոր է ոչ միայն լեզվի, այլև երկու ժողովուրդների պատմության որոշ հարցերի լուսաբանման տեսակետից: Ակնհայտ է նաև, որ գրաբարի իրանական բառաչափերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է նաև իրանական լեզուների ուսումնասիրության առաջընթացին, ուսումնասիրություն, որին հավաստի, առատ և անգնահատելի նյութ է տալիս հայերենը: Այդ է պատճառը, որ հայերենի իրանական տարրի ուսումնասիրությունը զբաղվում են նաև շատ իրանագետներ: Հայերենի իրանական փոխառությունների այս կամ այն հարցի վերաբերյալ մեզանում և արտասահմանում սովա է պատկանելի գրականություն: Մի շարք հարակից այլ հարցերի բացահայտման փորձերով հանդերձ, այդ զրահանությունը հիմնականում ստուգաբանական բնույթի է:

Իրանական լեզուների նոր, հավաստի վկայությունները, իրանագիտության ու հայագիտության զարգացման արգի մակարդակը հնագիտության են տալիս բացահայտելու հայերենում գործառոց մի շարք բառերի իրանական ծագումը, հիմնավորելու ու լրացնելու եղած մեկնությունները: Անշուշտ, սա կարևոր հարց է, որին և մենք հատկապես ենք մեր աշխատանքի վերջին գլխի մի բաժինը: Սակայն փոխառությունների քննությունը միայն ստուգաբանական վերլուծություն չէ: Ձգտելով չլրկնել նախորդներին, որն այնքան էլ դյուրին չէ մեծածավալ նյութի և բազմազան (հերթին իրարամերձ) ուսումնասիրությունների առկայության պայմաններում, մեր աշխատանքում անհրաժեշտ է ենք բավարար ուշադրության շարժանացած, կամ բյուրոփին դարձել ենք բավարար ինչպիսիքի՝ նպատակ ունենալով, նախ և առաջ, փոխառությունների բանական և կողմից զատ, ներկայացնել հայերենում իրանական տարրի որակական-գործառական յուրահատկությունները. երբ իրացի գերն ու տեսակարար կշիռը հայոց լեզվի մի կարևոր ու առանձնահատուկ փուլում:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից ու չորս գլուխներից: Ներածության առաջին բաժինը հայերենի իրանական տարրերի ուսումնասիրության հարցի պատմությունն է, որ շրջանաբաժանել ենք երեք փուլերի՝ ընդհանուր գծերով ներկայացնելով ու արժեքավորելով յուրաքանչյուր փուլի ձևորոշումները, այլև՝ առանձին ուսումնասիրող-

ների վաստակը: Հայերենի իրանական տարրերի ուսումնասիրության պատմության համակարգային ու ամբողջական ներկայացմամբ, այդ դեպքում առում արվածից ցուցադրումից ու արժեքավորումից հետո ավելի հստակորեն են ուրվագծվում այն նոր խնդիրներն ու բավարար լուծում շտապած հարցերը, որոնց և անզբաղարձել ենք մեր աշխատանքի համապատասխան բաժիններում: Ի զեպ, նախորդ ուսումնասիրությունների բնույթով պայմանավորված, նրանցում հայերենի իրանական փոխառությունների քննության պատմությունը ուշադրության չի արժանացել: Ներածության երկրորդ բաժնում քննվում են փոխառության տեսության հետ առնչվող մի քանի հարցեր, ելլում այն սկզբունքները, որոնք նյութի ինչպարանով օգտագործել ենք մեր կամ այն հարցը պարզաբանելու: Առաջադրվում են նաև փոխառությունների տարբերակման ու գնահատման նոր սկզբունքներ:

Առաջին գլխում, ըստ իրանագիտության մեջ ընդգծված դասակարգման, անզբաղարձել ենք իրանական լեզուների համառոտ քննարկումներ, նախ՝ որպես տեղեկատվություն (քանի որ մեր աշխատանքը նաև իրանագիտական է), այպա նաև այն պատճառով, որ աշխատանքի տարրեր հատվածներում շոշափվում են իրանական մի շարք լեզուների՝ հայերենի հետ ունեցած ազդեցությունը: Որոշ հատկանիշների վերահանումով, փորձել ենք տարբերակել Տին և միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունները: Հին իրանական լեզուներից հայերենի անցած բառաչափ առանձնացումը այնքան էլ դյուրին չէ և կարող է առարկությունների տեղիք տալ: Խուսափելով անվերապահ եզրահանգումներից, ջանացել ենք ի մի բերել այդ հարցի չափը եղած տեսակետները, գնահատել դրանք, որոշ զեպերում էլ ստացադրված հատկանիշներին ու օրինակներին ավելացրել տեղերը:

Միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունների առանձնացումը՝ հատկապես պարթևերենից ու միջին պարսկերենից (կամ ավելի ընդհանուր՝ Նյուսիս-արևմտյան ու հարավ-արևմտյան լեզուներից ու բարբառներից) արդեն ավելի հստակ է ինչպես առաջադրված հատկանիշների բնույթով ու քանակով, այնպես էլ վկայված նյութով: Քննությունը ցույց է տալիս, որ միջին իրանական ելված երկու լեզուների (կամ լեզվախմբերի) հնչյունական առանձնահատկությունները արտացոլվել են նաև հայերենի իրանական բառաչափում: Ներկայացվում են նաև ցանկեր ըստ փոխառության միջին պարսկական կամ պարթևական աղբյուրի:

Նյութի հավաքման և դասակարգման ընթացքում ակնհայտ զար-

Հալ, որ հայերենի իրանական բառաշերտի մէջ առկա են հնչյունա-
կան որոշ զանազանութիւններ ունեցող, իմաստով մտտ կամ նույնի-
սակ բառեր (ոչո—ոյժ, տոչո—տոյժ, կանոչ—քանոչ, ուսմ—[խ]րամ...):
Իրանական լեզուների, մասամբ և հայերենի հնչյունափոխական ա-
ռանձնահատկութիւնների հիման վրա այդ բառերի կիրառական, ծա-
ղումբարանական քննութիւնը ցույց է տալիս, որ փոխառյալ այդ ձևերը
նույնիսկ իրանական այս կամ այն փոյլին (կամ որոշ զնայերում հենց
նույն լեզվին) պատկանելու զնայքում, ենթադրում են ժամանակային
հաջորդում կամ նախորդում: Այս կարգի հարցերի պարզաբանման կա-
րեւորությունը անհերքելի է:

Նպատակահարմար ենք գտել այս զխում ներկայացնել նաև ի-
րանական լեզուների հնչյունական համակարգերը, հայերենի փոխառ-
յալ բառերի տվյալների վրա ի հայտ եկող հնչյունական համապա-
տասխանութիւններն ու օրինաչափութիւնները:

Երկրորդ զույգը վերնաքիչ ենք. Երանական փոխառութիւնների
քննութիւնը բոտ խոսքի մասերին: Ինչպես և սպասելի է, փոխառու-
թիւնների մեծ մասը զոչական է: Նշվում են հնչյունական-ձեռնարկա-
յին այն առանձնահատկութիւններն, որոնցով տարբերակվում են իրա-
նական ծագում ունեցող զոչականները և բերվում դրանց ցանկերը:
Պոչականների կիրառական առանձնահատկութիւնների բացահայտման
նպատակով կատարել ենք դասակարգումներ բոտ կիրառական ոլորտ-
ների: Նման գոտակարգում ունի և Ղ. Աճառչանը, սակայն մենք ա-
ռանձնացրել ենք միայն հիմնական ոլորտները, ընդգրկելով նոր նույնի,
շոշափելով նոր, շարժարժված հարցեր: Հատկապես նոր հայեցակե-
տերից են բնկված ժամանակ ցույց ավող բառերը: Մտնորմանն անդ-
բաղաձեռնով ցայտ է իրանական համարվող որոշ ամճանունների (արև,
մարգագ, հրտաից), տարբեր բնույթի փոստերով փորձում ենք հաս-
տատել դրանց ոչ փոխառյալ բնույթը:

Մանրազնին վերլուծության է ենթարկվում պետական-վարչական
բնագրավառի տերմինաբանութիւնը, առաջադրվում ստղագրաբանական
նոր փորձեր, բացահայտվում փոխառու և փոխառու լեզուներում նրանց
զբաղումը իմաստային առանձնահատկութիւնները: Այս ոլորտի մէջ
ընդգրկվող բառերի քննութիւնից բխող եզրահանգումներից մեկն այն
է, որ, չնայած առկա ծավալուն բառաշերտին, բառերի մի զգալի մա-
սը որակապես տարբերվում է իրանական փոխառութիւններից: Այս-
պես օրինակ, պետմոզ, անդերմայախ, մովպետան մովպետ, ոստ, ամ-
պարտաշ, հազարաուլտ... և նման շատ բառեր թեկուզ գործառում են

մեր մատենագրութիւն մէջ, սակայն դրանք ունեն միայն նեղ իրապրա-
կան ոլորտ, զերն են բառակազմական լայն հնարավորութիւններից,
նաև հաճախական չեն: Գրանք իրանական կլասերի համապատասխան
բնագրավառի արտացոլումների անդրադարձումներն են: Հայ հեղինակը
չէր կարող թարգմանել դրանք, չէր կարող նաև շրջանցել: Մի խոսքով,
զրանք ներկայանում են որպես միայն ու միայն իրանական կլասերի
արտացոլման լեզվական միջոցներ, ոստի առարկայական է զանում
նման կարգի բառերի սահմանազատումը: Սրանց համար առաջաբ-
կում ենք օտար բառեր տեքմերը:

Փոխառյալ անվանների թիվը հասնում է հարյուրի: Բերվում է
այլ ցանկը, նշվում այն անվանները, որ ի տարբերութիւն նախորդ
պատմասիրողների, փոխառյալ չենք զիտում: Հատուկ քննութիւն են
ենթարկվում իրանական ծագում ունեցող զունանունները, բացահայտ-
վում դրանց գործառական ու համահայկան յուրահատկութիւնները,
բնիկ զունանունների հետ ունեցած հարաբերութիւնները: Համարե-
լով այլ լեզուների բնձնած փաստերը, հիմնավորվում է այն թեզը, որ
իրանական զունանունները նախապես վերաբերել են որևէ առարկայի,
ունեցել են իրազրական կիրառութիւն, հետագայում՝ ամենայն հա-
վանականութիւնը հայերենի հողի վրա, ձեռք են բերել ընդհանրաց-
ված նշանակութիւն:

Բայական փոխառութիւնների հարցը քննելիս՝ առաջ է գալիս բա-
լական միավորը փոխառյալ միավոր համարելու կամ չհամարելու
խնդիրը: Այսպես, աշխատելի մեջ էլ-ը հայերեն մասնիկ է, իսկ իրա-
նական է միայն բալահիմբը: Ինչպե՞ս վարվել: Հանգել ենք այն եզ-
րակացութիւն, որ բայական ձևերը ամբողջովին անված փոխառյալ
միավորներ չպետք է զիտվեն: Ցանկերում, գործնալ փոխառյալ ար-
մատը մասնացույց անելու միտումով, պայմանականորեն կարելի է
ներկայացնել այն բայաձևերը, որոնց արմատը (հիմբը) անկախաբար
կամ ոչ բայական կազմութիւններում հանդես չի գալիս:

Անդրադարձել ենք նաև, այսպես կոչված, երկրորդական խոսքի
մասերին, նշել բուն խոսքի մասերից երկրորդականի վերաձեւում
նպաստող հանգամանքները, հնարավորութիւն զնայքում նաև իրանա-
կան զուգահեռների գործառութիւնները:

Երրորդ զխում քննված են մի շարք հարցեր, որոնք լուսաբա-
նում են զբարբեր իրանական տարբի որակական-գործառական առանձ-
նահատկութիւնները: Գասակարգել ենք փոխառյալ բառերը բոտ վիս-
յութիւն ժամանակաշրջանի՝ ներառելով 5—11 դարերը: Պարզվում է,

որ փոխառության մեծ մասը վկայված է 5-րդ դարից: Այդ դարից վկայված բառերն են, որ մտել են մեր լեզվի հիմնական բառաֆոնդը, շարունակելով գործածել նաև այժմ, նրանական բառաշարի ժամանակագրային արժեքավորումից դատ, ուշադրություն է դարձվում նաև մի շարք այլ հարակից հարցերի (փոխառյալ բառերի բնույթը, հաճախականությունը, կիրառության ոլորտները և այլն): Նկատվում են զեպտեր, էբբ տվյալ բարբ բարդված կամ անանցված ձևով վկայված է վաղ, իսկ արմատական ձևով համեմատաբար ավելի ուշ: Տրվում են նաև նման զեպտերի մեկնաբանությունները:

Փոխառությունների իրական դերի առարկայական զնահատման տեսակետից կարևորվում է փոխառյալ բառերի տարբերակումը բառահասարակություն: Առանձնացրել են քննություններ ենթարկել խոստովնով հաճախական բառերը: Պարզվում է, որ զգալի թվով բառեր հայ մատենագրության մեջ կիրառվել են մեկ-երկու անգամ: Դրանք արհեստականորեն մեծացնելով իրանական փոխառությունների թիվը, իրենց գործածական յուրահատկություններով էպպես տարբերվում են իսկական փոխառություններից:

Առանձին ենթադրվում անզրադարձել ենք անկախաբար շիրքաղող արմատների (բառերի) բնույթները: Մոտ 50-ի հասնող բառեր հանդես են գալիս միայն բարդված կամ անանցված ձևերով: Դրանց առանձնացմամբ շրջանառության մեջ է գրվում փոխառությունների առարկայական զնահատման մի շափանիշ է:

Այս դրի ծավալուն բաժիններից մեկը նվիրված է իրանական ծագում ունեցող անանցների բնույթները: Այդ անանցները տարբերակվում են առաջին հերթին երկու հիմնական դասավորվածությամբ) արմատական բառեր, որոնք հայերենում գործածելով այլ խոսքի մասային ածիցով, հանդես են գալիս նաև անանցական կիրառությամբ, բ) ձևությունները, որոնք հայերենում հանդես են գալիս միայն որպես անանցներ:

Իրանական ծագում ունեցող վերջածանցները նկատելիորեն զերպանցում են նախածանցներին: Նշվում են անանցների իմաստները, տրվում այն կազապարհները, որոնցում անկայանում է այս կամ այն անանցը: Առանձնակի ուշադրություն է դարձվում հայերենում և իրանական լեզուներում ձևային և գործածական ընդհանրություն ունեցող անանցներին: Բացահայտվում են երկու լեզուներում գրեթեբոլոր օրինակափոխություններն ու յուրահատկությունները, անանցների սփոխառման ուղիները: Մերժելի ենք համարում այն սկզբուրքը, երբ եր-

կու լեզուներում իմաստային ու գործածական ընդհանրություններ ունեցող համանման անանցների անկայության զեպտում անպայման հասկանալի է որպես փոխառություն՝ անտեսելով ծագումնաբանական ու գործածական ընդհանրությունը:

Օտար ազդեցությունները ի հայտ են գալիս նաև պատճենմամբ, որի զեպտում շրջանառության մեջ են գրվում ոչ միայն օտար՝ այլև մայրենի լեզվի հնարավորությունները: Իրանական լեզուներից պատճենված օրինակներում զերպալիս են բարդ բառերն ու կապակցությունները, հատկապես բայական հարադրությունները: Պատճենումը որպես մայրենի լեզվանյութի միջոցով օտար միավորի ներքին ձևի փոխառություն, ենթադրում է երկու լեզուների սերտ աննջություն, փոխառում լեզվի համարադրի խոր իրազեկություն: Աշխատանքում բերվում են իրանական լեզուներից պատճենված բազմաթիվ օրինակներ, բնվում փոխառու զուգահեռ հետ ունեցած հարաբերությունը: Չունտեսելով, նաև զերպահանասելով պատճենումների զերբ հայերենի իրանական փոխառությունների համակարգում, երկու լեզուներին բնորոշ ձև-իմաստային ընդհանրությունները անպայման պատճենում չենք դիտում համարելով դա միակողմանի մտոցում, փոխառյալ տարրի արհեստական զերպահանասում, նման հարցեր շրջանառվում ենք հաշվի առնել նաև ալյալ լեզուների զարգացման ներքին գործոնների ընդհանրությունը, այս կամ այն լեզվի բուն հնարավորությունները:

Փոխառությունների համակողմանի հետազոտության միտումով, առանձին ենթադրվաներում բնեկ ենք փոխառյալ համանուններն ու համանիշները:

Համատեղակի անդադանով համանունության լեզվարանական ըրժնեմքը, ենելով մեր նյութի առանձնահատկություններից, համանունները տարբերակելիս, կիրառել ենք, այսպես կոչված, համագրության և ոչ թե համահնչության սկզբուրքը: Առանձնացված են տարբարմատ և նույնարմատ համանունները: Վերջիններս բնականաբար ավելի մեծաթիվ են, և սրանք բնությունը կարծու է հատկապես այն պատպատահական կամ շատաճառաբանված նմանությունների հետ, սպաս նույնարմատ համանունների անկայությունը ինքին ենթադրում է իմաստային զարգացման ու իմաստափոխության երևույթ, որի գործընթացի բնույթները կարևոր է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ զեպտերում համանուն

շարքերի անդամներից մեկը իր իմաստը ձեռք է բերել հայերենի հոգի վրա, այլ կերպ ասած, բարձր այդ իմաստով չկա փոխառում լեզվում: Առավել ուշադրություն դարձնելով այս կարգի բաների քննությանը, եզրակացնում ենք, որ դրանք չպետք է փոխառություն համարել. սկզբումք, որ պետք է կիրառել ընդհանրապես փոխառությունների մեթոդներով հետազոտություններում: Վերջում սրվում է համանունների ցանկը:

Իրանական ծագմամբ համանիշ բաների քննության նպատակը՝ համանիշային խմբերը ներկայացնելուց դատ, նաև բաների գործառուական, իմաստային տարբերությունների ու ընդհանրությունների ներկայացումն է, իրանական տվյալ բառաշեղթի լեզվական արժեքի համակողմանի բացահայտումը: Մեծ թիվ են կազմում գոյական համանիշները, կան նաև ածականների համանիշության օրինակներ: Գերբխոզը են համանիշների երկանդամ շարքերը: Համանիշ անդամների նրբորձիմաստային, կիրառական առանձնահատկություններն ակնհայտ են ոչ միայն տարբեր դարերից, այլև մեկուկից զարկը վկայվածների միջև, որն ավելի է կարևորում դրանց քննությունը, ստիպում բացի ժամանակագրայինից բացահայտելու նաև այլ գործոններ:

Ուշադրության են առնված երեք տանջակից ավելի համանիշային խմբեր. էին նկատի առնենք այն հանգամանքը, որ որոշ խմբեր ներառում են 3—4 միավորներ, այպա 70-ից ավելի փոխառյալ բաների կիրառական, իմաստային մանրազնիքի քննությունը ինքնին արդեն արժեքավորվում է: Իրանական փոխառությունների համանունության և համանիշության հարցերը, որոնք ի զեպ երբքը չեն շոշափվել, կարեւորվում է նաև որպես զբաղարի համանունության ու համանիշության մասնակի քննություն, չարք, որ դարձյալ հետադրոված չէ:

Աշխատանքի վերջին գլուխը նվիրված է իրանական փոխառությունների բանական քննությանը: Իրանական փոխառությունների ածեքանմեծ թիվը տալին է 2. Անտոյանը՝ 1405 բառ: Ըստ ամենայնի արժեքավորելով մեծամասն գիտնականի վաստակը, նշում ենք նաև փոխառյալ բաների տարբերակման, ավելի ճիշտ, նրա ներկայացրած ցանկի վիճելի սկզբունքները, թերությունները: Ցանկի շքշքրաման նպատակով անդադարառում ենք նորագույն մի շարք հետադրություններում իրանական համարվող որոշ բաների ծագումնաբանական վերլուծությանը, գտնելով, որ ամենայն հավանականությամբ դրանք բնիկ բաներ են և ոչ թե փոխառյալ. այս կազմեաից էլ առանձնացնում ենք իրանական փոխառությունների նախկին ցանկի-

րում զետեղված մի բանի բաներ, փորձելով հավաստել դրանց ոչ փոխառյալ բնույթը: Եվ եթե դրանք անվերապահորեն չենք կարող բնիկ համարել, այպա անվերապահորեն չենք կարող նաև փոխառյալ համարել: Այսինքն՝ փոխառյալ բաների ցանկում դրանց զետեղումը այսօր չի արդարանում:

Այնուհետև, մեր կողմից առաջ բաղված սկզբունքների համաձայն՝ համադաստարան հիմնավորումներով փոխառությունների շարքից հանվում են բազմաթիվ այլ բաներ (մոտ 70):

Այս զլխում արժարժված խնդիրները, սակայն միայն իրանական փոխառությունների օգտման» նպատակ չեն հետապնդում, այլ՝ այդ բառաշեղթի բոտ հետազոտի ներողական ներկայացման: Ուստի մեծ ուշադրություն ենք դարձրել նաև ցանկի համայնմանը՝ ճնշվելով ետահայտանական ուսումնասիրությունների, այլև մեր իսկ ստուգաբանությունների վրա: Քննության ենք առել մոտ 130 բառ, տալով ստուգաբանության համառոտ պատմությունը և, մեր կարծիքով, հավաստի ստուգաբանությունը, զեահատելով և հարավորության զեայքում լրացնելով ստուգաբանական այլ փաստարկներով: Իրանական ցանկի համայնումը կապված էր մեծ ղովարությունների հետ. հարկ եղավ ծանոթանալ օտարալեզու բաղմամբիվ գրքերի ու ամսագրերի, բնագատարար օգտագործել զրանջում՝ մեկ հետաքրքրող նյութը, չգայթակղվել և անպայման իրանական շհամարել հրապուրել, բայց զեռես անհամոզիչ ստուգաբանությունն աուաշարկվող, բաղմամբիվ բառեր: Բուլքը զեպերում ավելի քան 130 բաների ներուլի քննությունը նորուլի է լուսարանում և փոխառությունների բանականության բնույթագրքը: Այն կարծիքին չենք, որ մեկ հայտնի են եղել բուլք նոր ստուգաբանական հիմնավորումները. իդեալականը դա կլիներ, որը սակայն հարավոր չէ հենց միայն ժամանակի տեսակետից:

Աշխատանքի վերջում ներկայացված է զբարբայան փուլի իրանական փոխառությունների ճշգրտված ու ամբողջացված ցանկը, որը բնականաբար չի հավակնում վերջնականը լինելու:

Ն Ե Ր Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Է

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊԱՏՄԱՌԹՅՈՒՆԸ
(հարցի պատմության համառոտ ակնարկ)

Քնկզտ հայերենի իրանական տարրի համակողմանի ու գիտական ուսումնասիրությունը կապվում է համեմատական լեզվաբանության սկզբնավորման հետ, սակայն հայերենում իրանական մի շարք բառերի առկայությունը եկատված է վաղուց:

Գրաբարի իրանական բառաշխարհի բնութայունը կարելի է շրջանաբաժանել երեք փուլերի:

ԱՌՍԶԻՆ ԵՐԶԱՆ

Ժամանակագրային սահմանները բավական ընդարձակ են՝ ներառելով V—XIX դդ. իրանական թվականները, այսինքն՝ հայ մատենագրության կազմավորումից մինչև համեմատական լեզվաբանության կազմավորման շրջանը:

Հայերենի իրանական տարրի վերաբերյալ առաջին դիտարկումները V դ. մեր պատմիչներին են: Ազաթանզեղոսը, Սցիկը, Խորենացին ունեն իրանական բառերի, հատկապես որոշ հատուկ անունների մեկնություններ: Այս մեկնությունները դիտարժան են ոչ թե պիտականության, այլ մեզ հետաքրքրող հարցի առաջին արժարժումները լինելու փաստով, մանավանդ, որ մեր լեզվաբանական աշխատություններում դրանք երբեմն շրջանցվել են:

Բերենք մի քանի օրինակ վաղ շրջանի մեր պատմիչներից. «Ի դեղին զոր Բագալաթիճն կուչն ըստ պարթևարէն լեզուին» (Ազաթ., 412): «Գայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաան, որ անուանակ կուչի ի պարթևարէն լեզուին դիցուան» (426): «Ջրուան, որ թարգմանի բախտ կամ փառ» (Նզն. 113): «Հըրամաշից աղաղակել զօրացն» («Մարամատ», որ թարգմանի մարս եկն. յայս ի սոյն ձայն անուանեցաւ

Մարմէա» (Խոր. 173): «Ձի Ածղահակ ի մեր լեզուս է վիշապ» (84): «Եւ ոչ կամեցան հնազանգել՝ նմա բնակիչք լերինն, որ կոչի յերեսան լեզուն Պատիճահար գաաա, որ է Գեղմանց լեռան» (182): «Այլ պատուին յԱրտաշիսէ գեղիքս և դաստակերտօք և անուանին Ամատունիք, որպէս թէ կէք» (187): «Ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող, քանզի յստաշ անուանէր Վաղեգեսոս ի յունաց լեզուն» (197): «Նա և զարքունիսն փոխէ վերոյ անուառին յոստ մի, ապարանս հովանատրս շինեալ, որ ըստ պարսկական լեզուին Գուին կոչի, որ թարգմանի բլոր» (265)»:

Թ. Արծրունին էլ փորձում է ստուգաբանել Արամաւտ և համակցելն բառերը: «Իսկ զանոն քաղաքին կուչեցին Արամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձևովեբա, կամ թէ՛ Արտաշէսի կէք, զի ըստ պարսիկ ձայն մատ կէք թարգմանի» (53—54): Սա թերևս նորենայցու՝ Ամատունիք-ի ստուգաբանության ազդեցությունն է արժամ:

Իրանական բառաշխարհի մակերեսային բնությունն կա և որոշ քերականական աշխատություններում: Առաջինը թերևս Գ. Մագիստրոն է, որ Թրակացու քերականության իր մեկնության մեջ խստակով փոխառությունների մասին ընդհանրապես, անդրադառնում է նաև հայերենում մի քանի պարսկերեն բառերի, զնահատում դրանց գործածական արժեքը, կատարում մի շարք ճիշտ ստուգաբանություններ³:

«Իսկ մեր ի պարսից քաղում ինչ ընտաներար ունեալ պեհտոս, որպէս զուտ և որդէ, մարքար, աազան, որ է շրոյ անօթ, գաազան, որ է վարիս արջառոյ, խաղազան որ է վարիշ իշոյ և այլք այսպիսի բաղում, որ գրեթէ հասարակորդ է լեզուս մերոյ» (229): Մեկ այլ տեղ Մագիստրոսը ստուգաբանում է հայերենում գործատող մի քանի անձնանուններ. թեև ստուգաբանությունները, ինչպես և սպասելի է, գիտական չեն, սակայն ուշադրա՛վ է ան, որ հեղինակը այդ անձնանունների համար իրավացիորեն տեսնում է ռասբ աղբյուր. «Մ'ը Շափաըշ, ըստ պարսկականին շաբի բաշ՝ միշտ ուրխս թարգմանեալ... ս'ը Բաուս փառացի և ըստ պարսկականին քազմանի... ս'ը Տիգրան, որ ըստ պարթևից մեծ և ծանր»⁴:

Միջնադարյան քերականներից Հ. Սրզնկացին նույնպես նշում է իրանական բառերի գոյությունը, բայց նա բառ առ բառ կրկնում է Մագիստրոսին⁵: Մինչև 19-րդ դարի սկիզբները եղած քերականություններում, միշտ էլ, խստա՛յն է փոխառությունների մասին, բայց իրանական լեզուներից օրինակներ չեն բերվում⁶: XIX դարի քերականություններում էլ այդ հարցը չի արժարժվում⁷. սա պետք է բացատրել

ու՛ր թէ հեղինակների անգիտութեամբ, այլ քերականութիւնները բնույթով, որովհետեւ հարցերի քննութեան նպատակադրում չկար: Իրանական բառաշարի յուրատեսակ քննութեան է կատարված նաև բառարանագրական բնույթի աշխատութիւններում: Նմանօրինակ աշխատանքներից առաջինը թերևս «Բարգամանութիւն Պարսիկ բառից ի վարդան գրոց» փորձածավալ գործն է՞, որի հեղինակը Եղիշէի պատմութիւնը հասկանալի դարձնելու միտումով առանձնացնում, մեկնում է իրանական մի բանի բառեր: Բառարանագիրը Եղիշէի պատմութեան մեջ հանդիպող բոլոր իրանական բառերին չի անդրադարձել, որովհետև ինքն էլ բազմաթիվ բառերի իրանական ծագումը չի նկատել: Մեզադրելու հեղինակին այդ բանի լիմացութեան մեջ անվերջ էլ, բանի որ մի բանի հարչութամբ չէտու միայն՝ համեմատական լեզվաբանութեան զարգացումով, հնարավոր եղավ պարզել այս կամ այն լեզվի ստոր տարրերի իրական պատկերը: Բառարանագիրն այս լիմացութեան էլ արժեքավորվում է այլ առումով: Հեղինակը առանձնացրել է 30-ից ավելի բառեր (ղեկնմազդի, ամպարտբաշն, պահլաիկն, պարակաղենն, շկաթակ, լակիշ, վատախտարակ... և այլն): Կիշանակի սրանք հասկանալի չեն եղել հեղինակի ապրած դարաշրջանում (ավելացնենք՝ դրանից առաջ և հետո էլ): Այդ բառերը հիմնականում վերաբերում են պարսից կրօնին, վարչական-պետական տերմիններին, որոնց ստույգ մեկնութիւններն այսօր էլ ըստ սովորյալ մեծ գծվարութիւնների հետ են կապված: Զարմանալի է, որ բառարանագիրն մի շարք բացարձակութիւններ թերի են կամ սխալ: Օրինակ, զամվզ-ը բառ հեղինակի դիտվում է «ոչնաև խոտէ, զոր այլ գիրք աճառ ասէ լուալեաց»: Համարենք հեղինակին թուրքմացութեան մեջ էլ զցել Եղիշէի «Ձեռք առաց զորիցը մի լուացին» (52) նախադասութիւնը: Մովաղտան մովաղտ-ը մեկնվում է «իշխանաց իշխան»: Այս էլ թերևս գալիս է «եւ բանգի ինքն իսկ մոզպետն իշխան էր աշխարհին» (152) նախադասութիւնից: Բոլորովին արտառոց մեկնութիւն ունի փտովալան (փոշտիպան) բառը. այն թարգմանված է «մարմնապահ կանայք մտգուցն, սարկապուհներ»: Բայց Եղիշէն կիրառել է երկու անգամ. «Եւ մնացեալ մոզպետն և փշտովանացն որք կապանսն ապրեալ էին...» (133): «Յանգղնեցան և կանայք փշտովանացն լուարի կիրակիի անցուցանեալ զճրագոտն...» (65): Հավանաբար սխալ մեկնութիւնը զալիս է երկրորդ նախադասութիւնից, որի իմաստը բառարանագիրը չի հասկացել:

2736

Հայ-իրանական լեզվական աննշմանները լուսարանող Կարէ աշխատանք է Հակոբ Տրտույանի բառացանկը, որը կցված է Կեոր Պալատացու պարզեղենի-Տալիքին բառարանին: Հրատարակելով Պալատացու բառարանը, Շ. Տրտույանը բառարանից առանձնացրել է այն բառերը, որոնք քնդհանուր են պարսիկերենում և հայերենում, ավելի միշտ, առանձնացված են նույնանիշ և նմանաձայն բառերը. «...Տուրովեցար ևս ի բառարանէս զամենայն նմանաձայն բառս, որ ընդ Հայս և ընդ Պարսս և դասակարգեցար ի վերջոյ հանդէպ միմեանց: Ի զուգորութենէ աստի զայն միայն է մեզ հալատեղի թէ վասն մերձառյուրեան և սահմանակցութեան երկուց աղգացս՝ բազում նմանութիւն էր ուրից ևս ռոյ խոսից ընդ մէջ Հայոց և Պարսից. այլ ոչ թէ և լեզուի մերոյ և ազգի նոյն զու ընդ նոսա: Զի և յօրինուած իսկ և կազմութիւն երկաթանշար լեզուացն յայտնի ցուցանեն թէ բովանդակութեամբ զանազնին երկուքս այսարիկ ի միմեանց» (էջ Ե—Բ):

Բառացանկը ընդգրկում է 433 բառ: Ինչպես տեսնում ենք, բովանական մեծ թիվը, որ գերազանցում է հետագա շատ ուսումնասիրողների կողմից հայ-պարսիկերեն աննշմանների բացահայտմանը նվիրված աշխատութիւններում բերվող համաբնույթ բառերի թիվը: Սակայն բառացանկի արժանեքը միայն բանակի մեջ չէ: Հեղինակը կատարել է նաև այլ դասակարգումներ: Նա աստղանիշով առանձնացրել է այն բառերը, որոնք անհնայտորեն հայերենը փոխ է առել պարսիկերենից: Դրանք մեծ մասամբ ճիշտ են: Թերեք մի բանի օրինակներ կգրէ, այլեւ, ռան, ռզմ, սպար, սերկու, վիզուիկ, փնյման...¹⁰: Այս կարգի բառերի թիվը հասնում է 78-ի:

Նշվում են նաև այն բառերը, որոնք հայերենին ու պարսկերենին են սոցել մեկ այլ աղբյուրից (հունարենից, եբրայեցիներից), իսկ 344 բառերի ծագումը նույնպես էլ՝ ինչպիսի մայր—madar, ծանկն—zann, նաւ—nav և այլն: Սա արդեն երրորդ դասակարգումն է, որի մեջ փաստորեն ընդգրկվում են հնդգերբարդական ծագմամբ բառերը:

Հիշյալ բառացանկը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից (Աճառյան, Զահուլյան, Աղայան, Սուրբազյան...): «Այդ բառարանը,—գրում է է. Աղայանը,—Միսիթարի բառարանից հետո ասորին լուրջ ստուգարանական փորձն է... Եվ այդ այն ժամանակ, երբ դեռևս լույս չէին տեսել ոչ միայն Պետերմանի և Վինդիզմանի, այլև Բուպպի, Թաակի ու Գրիմմի աշխատութիւնները... Այս է, որ մեզ լիովին իրավունք է առլիս Գեորգ Դպիրին իսկական լեզվաբան համարելու»¹¹: Գ. Զահուլյանը բարձր գնահատելով այդ աշխատանքը, նշում է,

որ երբեք չի կարելի Պետերմանին համարել որպիս հայերենում և իրանական լեզուներում ընդհանուր բառերի մասին խոսող առաջին հեղինակի: Այդ չի կարելի սակը հատկապես այն պատճառով, որովհետև Պետերմանին բաշ ծանոթ է եղել Գեորգ Գպիրի աշխատանքը¹²:

Այսպիսով, իրավամբ Հ. Տյուզյանի գործը պետք է համարել հայ-իրանական լեզվական առնչությունների վերաբերող առաջին գիտական աշխատանքը, որը կարևորվում է հատկապես նյութի ծավալով և ուսումնասիրության սկզբունքներով: Այդ են հաստատում նաև աշխատանքին տրված գնահատականները¹³:

Հայերենում գործառոց մի շարք իրանական բառեր մատանշվում են նաև Մխիթար Սեբաստացու բառարանում: Նկատենք, որ Սեբաստացին բերականության մեջ այդ հարցը չի շոշափում: Եվ վերջապես պետք է նշել հայ բառարանագիտության թագը հանդիսացող Նոր հայկազյան բառարանը, որտեղ մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ զգալի նյութ կարելի է գտնել Հիշելիք, որ թևկուզ բառարանը լույս է տեսել 1836—37 թվականներին, սակայն աշխատանքը սկսվել և վերջացել է վաղ, այսինքն՝ բառարանի երախտավոր հեղինակները իրենց ուսումնասիրությունները կատարել են դարձյալ համեմատական լեզվաբանության կազմավորումից առաջ:

Պատմաբանասիրական բնույթի աշխատություններում հարցը շոշափված է Ղ. Թևհիճյանի կողմից: Թեև նա հայերենը նախամաշը լեզու համարող հեղինակներից է, այդուհանգիթը նշում է, որ հայերենը փոխառություններ ունի հին հարևան լեզուներից, հատկապես պարսկերենից ու Հունարենից: Ուշագրավ է նաև օտար բառերի արժեքավորման նրա սկզբունքը: «Այն բանը, որը յուրյա լեզուաց սպրեղալ մտանս ի մեր լեզու, ոչ կարեն ի պերև հանել զայս պարծանս նուրթեան. զի ի բազմածամանակեաց գերութեան ազգիս ի մէջ պարսից և լուռաց հարկաւորացս մտանէին ի մեզ օտարաձայն բառք, որպէս ձ այլ մայր լեզուս գտանին սպրեղալ¹⁴: «Հնախօսութեան» երկրորդ հատորում նա փաստորեն ճիշտ է ստուգարանում սպարապետ, սպասալար, մարզպան բառերը: «Մարզպան բառ է պարսից նշանակէ կողմնապա՛, յայս անուն կոչին պարսիկք զիշխանն, զոր առաքէին յաշխարհ մեր երբմն բնիկ ազգս պարսիկ և երբմն հայկազուն» (220): «Սպարապետ անանցեալ է ի սիրահար բառն պարսից, նշանակէ առ մեզ զօրապետ, զօրավար» (275): «Սպասալար ելեալ ի սալար կամ որ նոյնն է սաղար բառն, նշանակէ պետ սպարացս» (276): Իրանական մի բանի բառեր էլ բնեջում են այլ աշխատության մեջ¹⁵:

«Զի առաջին վանկն յաշտ (իմա՛ Յիշտիշատ-ի—Լ. Հ.) ելեալ ի պարսից բառն աշրի նշանակէ հաշտութիւն, որ է վախճան աղօթից և զօհից» (92): «Ստան անուն անանցի առ մեզ ի ոսբամ բառն պարսից, որ բաց յալլ նշանակութեանց՝ նշանակէ առ նոսա նաև Սեամ գրան» (458): «Թուի լեալ բառը մրնական ի միջր բառն պարսից, որ է արեգն» (25): Այս շարքում մասամբ ճիշտ է միայն միեր բառի ստուգաբանությունը, իսկ մյուսները կեղծ մեկնություններ են: Ավելին, «Հնախօսութեան», 3-րդ հատորում, իրանական ծագում ունեցող մի շարք բառեր համարում է հայերեն: Այսպէս, համեմատելով պար. եկվ, հուն. եկու, լատ. եովուս և հայ. ետր, որը բառ հեղինակի «ի բարբութիւնս լինի նա» (18), նա նախաաղբը հայերեն բառ է գիտում: Թեև սովակ է լեզուների համեմատության փորձը, բայց ակնհայտ է նաև սխալը: Սրամաղբը ստուգաբանում է «սիրդ մարդ», բազմ-ն վազէ և այլն:

Այսքանով կարող ենք ավարտել իրանական տարրի ուսումնասիրության առաջին փուլի վերաբերյալ մեր նկատառումները: Ամփոփենք:

1. Այս փուլի ժամանակային սահմանները թեև բավական ընդգրկուն են, սակայն իրանական բառաշեքտի ուսումնասիրության ձեռքբերումները շատ բիշ են՝ կապված տվյալ ժամանակահատվածում լեզվաբանական գիտության զարգացման ոչ բավարար մակարդակի հետ:

2. Հիշյալ փուլում՝ հատկապես վաղ շրջանում, առկա են հայերենում գործառոց իրանական հատուկ անունների ստուգաբանության փորձեր:

3. Գիտական լուրջ արժեք է ներկայացնում միայն Հ. Տյուզյանի բառացանկը՝ կազմված համեմատական լեզվաբանության սկզբնավորման նախաշեմից:

4. Ուսումնասիրության առաջին փուլը կարելի է անվանել իրանական որոշ տարրերի նկատման և տարերային ստուգաբանությունների շրջան:

ԵՐԿՐՈՐԻ ԵՐՁԱՆ

Այս փուլը ընդգրկում է 1836—1875 թվականները: Հիշյալ ժամանակահատվածը կոչվում է նաև հայերենի իրանական ծագման տեսությունների շրջան¹⁶: Ժամանակադարյին այդ հատվածը համընկնում է համեմատական լեզվաբանության զարգացման առաջին շրջան:

Երև, երբ լեզվաբանական գիտություն մեջ ի թիվս այլ հարցերի բազմա-
ցուցվում էր հայերենը իրանական լեզու լինելու թեզը: Միայն 1875 թ.
Հյուրըմանի կոմիտեի ժխտվեց այդ տեսակետը, և հայերենը գրեցվեց
որպես Տեղեկությունական լեզվաբանության ասանձին հյույր միջոց է, գի-
թանական: արավեսան հնկում էր հշմարտութան լրիզունվեց, բայց այն հաղ-
մասին կհասնեք իր տեղում:

Մինչև համեմատական լեզվաբանության սկզբնավորումը հայե-
րենի ծագման, լեզունների ցեղակցության մեջ նրա գրաված տեղի մա-
կանը կային հակառակ, իրարաներթ (կրթմն էլ ոչ գիտական) տեսա-
կետներ հայերենի Տեղեկությունական ծագման հարցը առաջին անգամ
մանի «Հայոց լեզվի քերականություն» աշխատության մեջ համեմատա-
գրուների որոշ տվյալներ: Այս գրքում հնչյունական և քերականական
հարցությունների վրա, հեղինակը նաև գրում է այն եզրակացությունը, որ
ման և իրանական լեզուների հետ ունեցած սերտ առնչությանն է
տեղը արիական լեզվաբանի մեջ» հոդվածը: Մրանց վաստակը գնահա-
տելի է նախ և առաջ որպես առաջին համեմատականների, որոնք ա-
ռաջ բաշեցին հայերենի Տեղեկությունական լեզու լինելու հարցը¹⁷ և հա-
մարընին հայ-իրանական (կամ հնդ-իրանական) լեզվական որոշ տար-
կան լեզու լինելու վարկածը դարգացում գտավ Ռ. Գոշին, Ֆ. Բուպի,
Ֆ. Մյուլլերի և Պ. Լապարդի աշխատություններում: Գոշին գտնում է, որ
հայերը մտնում են իրանական, ավելի չուտ՝ արիական ցեղերի մեջ
և հայերենը հատկապես ցուցադրում է արիական բնույթ: Նրա մտա
ասակախ հասակ չէ «արիական», «իրանական» բերումներ, մի բան, որ
բնորոշ էր այդ շրջանի ուսումնասիրողներին:

Հայերենը իրանական լեզու էր համարում նաև համեմատական
լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Ֆ. Բուպը:
Ընդպես հայտնի է, Բուպը իր համեմատական քերականության առա-
ջին հատորում հայերենը լեզ գիտեցող, առնինչ ներկրորդ հրատարա-
կություն առաջարանի զգալի մասը վերաբերում էր հայերենին: Հայե-
րենի հանդեպ Բուպի այս նոր մտնեցումը բացատրվում է Պետերմա-
նի և Ավեղիշանի գործերի ազդեցությամբ: Ընդունելով հայերենը

որպես իրանական լեզվաձույր, Բուպը հնչյունական որոշ համեմա-
տություններ կատարելով հայերենի, սանսկրիտի և գեղերենի միջև,
գտնում է, որ հայերենը որոշյալ դիրք է գրավում իրանական լեզվա-
խմբի մեջ, կրթմն ներկայացնելով ավելի հին միջանկ, քան արևմե-
նական պարսկերենը: Այսօր մեզ համար այս ենթադրությունը կորցրել է
իր կարևորությունը, որովհետև այլևս հայերենի իրանական ձույր լի-
նելու հարցը չի կարող ուսումնասիրության նյութ լինել, և բնականա-
բար բոլոր նախորդ ուսումնասիրողների տեսակետներն ու հիմնավո-
րումները կարելի է մերժել, իսկ նրանց ուսումնասիրության մեթոդ-
ներն ու եղանակները համարել սխալ: Իսկ եթև ետ դառնար մտ
մեկ հարցուրսմակեց ավելի բնիկած ժամանակաշրջան, ապա կտես-
նենք, որ այս կարգի ենթադրությունները հնչյունությամբ լին ստար-
վում: Ավելին, ամեն մի նոր ուղղություն, մեթոդ կամ աշխատանքի
եղանակ ու սկզբունք օգնել է հշմարտության բացահայտմանը:

Իր մի շարք հոդվածներում, աղբյուրանալով հայերենի ասարքի
հարցերի, հայերենի՝ որպես իրանական լեզվի ընդ պաշտպան էր հան-
դես դրվին Ֆ. Մյուլլերը «Այլ հոդվածներով Մյուլլերը քննության է
անուն հայերենի գրեթե ամբողջ կազմը՝ սկսած զրից ու հնչյուններից
մինչև բառապաշարն ու բերականությունը, բայց որում բոլոր այդ հն-
ազգաբանություններն էլ նա կատարում է գերազանցապես իրանյան
լեզուների համեմատությամբ, որով և կամենում էր հաստատել այն
գրույթը, որ հայերենը արիական (հնդ-իրանական) ձույրի մեջ իր-
անական լեզուների մերձավոր ազգակիցն է»¹⁸:

Համեմատական լեզվաբանության էական նվաճումներից մեկը
ասարքի լեզուների միջև հնչյունական համապատասխանությունների,
հնչյունափոխական օրինաչափությունների բացահայտումն է: Մյու-
լլերը նախորդների համեմատությամբ շրջանառության մեջ դրեց Երուս-
ղիմ փաստը, բացահայտեց նոր օրինաչափություններ: Նա այնքան
համոզված էր իր տեսակետների ու փաստարկների ճշմարտության մեջ,
որ Հյուրըմանի հոդվածներից հետո էլ, զարձալ մնաց իր տեսա-
կետին և շարունակեց զարգացնել այն: Հակադրությունը Հյուրըմանի
հետ վկայում է հեղինակի գաղափարական համոզվածության օգտին:
Ընդ այդ հակադրությամբ չպետ է թերազնահատույի ականավոր արևե-
լազեռի վաստակը: Համեմատության նրա սկզբունքները, հայադիտու-
թյանը վերաբերող բազմաթիվ դիտողություններն ու սուղաբանությու-
ններն անմիտելի դեր են խաղացել հայ-իրանական լեզվական աննչու-
թյունների լուսարանման գործում:

Այս շրջանի ակնաւոր հայագետներէն է Պ. Լազարը, որի ուսումնասիրությունները ցայտ չեն կորցրել իրենց գիտական արժէքը: Կենելով հմուտ արեւելագետ, քաջատեղյակ լինելով նաև հայերենի, Լազարը հայերենը համեմատեց արեւելյան լեզուների հետ, ցույց տաւով այն ընդհանրությունները, որոնք առկա են այդ լեզուների, հասկալան իրանական լեզուների ու հայերենի միջև: 1850 թ. հրատարակվեց իրանականի՝ հայերենի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունը, որ վերաբերում էր հայերենի և սանսկրիտի բազմաձայնների համեմատական քննության: Հայերենի հնչյունաբանության, բառապաշարի, լեզվի պատմության մի շարք այլ հարցերի և անդրադարձել է հնդկական տարրեր տարիներին հրատարակած իր ուսումնասիրություններում: Սակայն հայագիտական հետազոտությունների նրա զբոսը գործողը «ձայնական ուսումնասիրությունը»¹⁴ աշխատությունն է, որտեղ ընդգրկում են նաև նրա նախորդ ուսումնասիրությունները կամ նրանց հիմնական գրույթները: Ո՛րն է Լազարի հիմնական գերը հայագիտության, մասնավորապես հայ-իրանական լեզվական անընդունակների ուսումնասիրման գործում: Ինչպես այդ ժամանակաշրջանի շատ լեզվաբաններ, այդպես էլ Լազարը մեծ տեղ էին հատկացնում լեզուների, այլալ զեպում հայերենի և իրանական լեզուների հնչյունական օրինաչափությունների բացահայտմանը: Սակայն Լազարի հիմնական գերը այլ է: Նա հայերենի բառապաշարի գիտական ուսումնասիրության օգույթն է իր զբոսում նա նախ ներկայացնում է ստուգաբանված բոլոր հայերեն բառերը, որոնց թիվը անցնում է երկու հարզարից (այդ ստուգաբանությունների զգալի մասը հենց Լազարիին է): Այլևայն, հնդկական կապածելով որոշ ստուգաբանությունների համաստիությունը, սույն է իր կողմից ճիշտ համարվող ստուգաբանությունների ցանկը, համեմատելով այդ ցանկի բառերը մի շարք հնդկեկրոնական լեզուների հետ²⁰: Այս կարգի բառերի թիվը հասնում է 1800-ի: Լազարի այս աշխատությունը, փաստորեն, հայերենի ստուգաբանական բառարանի անդրանիկ փորձն է, նախորդ ուսումնասիրողների ձեռքբերումների գիտական ամփոփումը: Ինչպես նշում է է. Աղաչանը, նրա աշխատությունը որպես հայերեն լեզվի ստուգաբանական առաջին բառարան քղեալ այսօր էլ Հրաչյա Աճառչանի ծովածավալ Արմատական բառարանի հրատարակությունից հետո իսկ, չի կորցրել յուր արժէքը: Հայերեն բառերի ստուգաբանությունների մանրակրկիտ միժնակագրությունը նա զեռ լրիվ շափով պահպանում է և կպահպանի յուր արժէքը»²¹:

Նշենք, որ թէ նախորդ հետազոտողների կողմից ստուգաբանված ու Լազարի տեսանկյունից ճիշտ համարվող, այնպես էլ նրա իսկ ստուգաբանությունների զգալի մասը իրանական ծագում ունեցող բառեր են: Ուսումնասիրության եղանակներով ու ընդգրկմամբ առաջ անցնելով նախորդներից, Լազարը նախորդների նման հայերեն համարում էր իրանական լեզու: Այս եղանակաբանությանը նա հանդես է հայերենի բառապաշարի մանրակրկիտ ուսումնասիրությամբ, հնչյունական օրինաչափությունների բացահայտմամբ: Նա հայերենի բառապաշարը բաժանում է երեք շերտերի՝ հայկական կամ հայկյան, արշակունյան և սասանյան (էջ 208): Հայկական շերտն էլ, ըստ հնդկականի, իրանական բնույթ ունի, թեև իր առանձնահատկություններով տարբերվում է մյուս երկուսից: Ուրեմն, անկախ բառապաշարի շերտերի անվանումից, Լազարն էլ անվերապահորեն ընդունում էր հայերենի իրանական բնույթը:

Կարելի է ներկայացնել նախահայրը մանյան շրջանի որոշ հետազոտողների ևս, բայց դրանց վաստակը մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ չնշին է, ուստի ավարտենք Լազարով, որի ուսմունքը մասնականաշրջանի հայագիտական մտքի ամփոփումն է:

Եթէ փորձենք զեահատել 1837—1875 թթ. ընկած ժամանակահատվածի, այսինքն՝ հայ-իրանական լեզվական աղբյուրների ուսումնասիրության ներկրող շրջանի նվաճումները, սպա առանց վարանելու պետք է ասել, որ հայագիտությունն առհասարակ այդ շրջանում հասավ աննախընթաց ձեռքբերումների, որն առաջին հերթին կապվում էր համեմատական լեզվաբանության կազմավորման և զարգացման հետ: Հայերենը համարվեց հնդկությունական լեզվաբանների լեզուներից մեկը: Եվ եթէ այդ շրջանի լեզվաբանական միտքը անկարող եղավ ճշտորեն որոշելու հայերենի գերքը հնդկությունական լեզվաբանությամբ, սպա իրանական աղբյուրությունների բացահայտման ուղղությամբ կատարվեց անզեահատելի աշխատանք:

ա) ներկայացվեց իրանական զգալի տարրի առկայությունը հայերենում:

բ) բացահայտվեցին հնչյունական-հնչյունափոխական հիմնական օրինաչափությունները հայերենի և հնդ-իրանական, մասնավորապես իրանական լեզուների միջև (հետագա ուսումնասիրություններում այս հարցի վերաբերյալ միայն մասնակի ուղղումներ և ավելացումներ կատարվեցին):

գ) կատարվեցին մեծ թվով ստուգաբանություններ, բացահայտելով

Հարյուրավոր բառերի իրանական ծագումը:

դ) նկատվեց իրանական տարրեր շերտերի անկալությունը հայերենի բառապաշարում:

ե) առանձնացվեց իրանական փոխառությունների ձևա-կառուցվածքային մի բանի խումբ:

Ընդհանուր առմամբ, արվագծվեց և հիմնական զծերով ամբողջացավ հայերենի իրանական տարրի ուսումնասիրության գիտական համակարգը:

Զիշյալ փուլում մեզ հետաքրքրող Հարցի գիտական ուսումնասիրությանը զբաղվում էին նաև հայ բանասերներն ու լեզվաբանները: Ծիշա է այդ շրջանում զեռես կային հետազոտողներ, որոնք համառոտ-րեն զեռես ընդունում էին հայերենի նախամայր լեզու լինելու տեսությունը (Զարգահանայան, Փաղունի): Զարգահանայանը զեռես քննադատում է այն բանասերներին, զոր կուղեն մեր լեզուն ուրիշ երկրորդական լեզուներէ առաջ եկեա՞ծ սեպել ու անոնց լեզուին մէջ փնտրել մեր լեզուին ծագումը²²:

Մ. Փաղունին տեսնում է որոշ բառերի իրանական բնույթը (ոստան, առուշան, պարպետ...) բայց այդ կարգի փաստերը երկրորդական համարելով ու կրկնելով Ինճիկյանին, Ավզերոյանին ու Չամչյանին, անվերապահորեն հայերենը նախամայր լեզու է համարում: Ավզիյն, նկատելով տարրեր լեզուներում զդրություն ունեցող նմանափայ բառերի անկալությունը, Նեղինկը գտնում է, որ լեզուները այդ բառերը վերցրել են հայերենից՝ Բարեխոյան խառնակությունից հետո: Երինակ լատ. ախս, մոս, անկուլաս համարում է հայերեն հա, մակն, անկուլան բառերը²³: Անշուշա, և Զարգահանայանը, և՛ Փաղունին ծանոթ էին համեմատական լեզվաբանության նվաճումներին, բայց չէին հրաժարվում նախասկզբնական լեզվի գաղափարից, համարելով այն ազգային արժանապատվություն:

Փնկես ոչ հատուկ նպատակադրումով, բայց իրեն բնորոշ խոր գիտականությամբ մեզ հետաքրքրող Հարցին անդրադառնում է ժամանակի ականավոր գիտնականներից մեկը՝ Ա. Այտընյանը²⁴, Քննելով փոխառությունների կամ, ավելի ճիշտ օտար ազդեցությունների Հարցը՝ Այտընյանը գտնում է, որ Վելզուի մէջ օտարություն բանի մք տեսակ է. 1. օտար բառ, 2. օտար ձև (աժանց, բարդ, չօրով), 3. օտար նշանակություն, 4. օտար ոճ կամ գարծուած (քեր. 323): Այս բաժանումը այսօր էլ արդիական է: Այտընյանը գտնում է, որ որևէ լեզվում օտար ազդեցությունների չափն ու համախա-

կանությունը, առաջին հերթին կախված են տվյալ լեզուն կրող ժողովրդի բնակության աշխարհագրական դիրքից ու արտաքին բազմազան պայմաններից, այս կապակերպ էլ նա բացատրում է հայերենի օտար ազդեցությունները (334): Այտընյանը նկատում է նաև, որ համեմատ օտար համանիշ բառերից լեզուն նախընտրում է հինը. «զոր-օրինակ, բնօրի է մարշամակ (պրս. բառը) և ռամկական է մահրամայ (արաբ.) բառ.» (328): Այտընյանը կատարում է նաև որոշ ստուգաբանություններ. օրինակ, նաեպիկ բառի առաջին գիտական ստուգաբանությունը նրանն է, որ նշված է և Արմատական բառարանում: Վերջապես, Այտընյանի ավանդը նաև այն է, որ տեսնելով իրանական բազմաթիվ բառերի անկալությունը հայերենում, կարողանում է տարբերակել օտար փոխառություններն ու լեզուների ցեղակցությամբ պայմանավորված տարրերը. «Օտարություն կամ օտար բառ կանուականնց այն եկամուտ բացատրություններն, որ ժամանակաւ հետզհետէ լեզուի մք մէջ կուպան կը մտնեն և ոչ թէ ազգաց սկզբնական ցեղակցութենէն պատճառած նշուերիւնը (ընդգծումը մերն է—Լ. Ը.)՝ որով լեզուներն այլ իրարու խնամութեամբ կը յօդին, զորօրինակ հայը՝ յունին և պարսկին հետ. որոնց երկուրն ալ հաստատապէս հայերէնի հետ արմատական բաներու մէջ կը նոյնանան: Այս վերջինները ներքին են ու բնական, իսկ առաջինները՝ արտաքին և պատահական» (224—225): Այս միտքն է, որ հետագայում զարգացվեց Հյուրըմանի կողմից:

19-րդ դարի երկրորդ կեսին հայագիտական կարևոր հետազոտություններով ապագրկ են մտնում նաև Ռուսաստանում ապրող և ստեղծագործող մի շարք մտավորականներ: Նրանք բաշատեսակ լինելով՝ հայ մտանկագրությանը, հաղորդակից լինելով հայ բանասիրության, հատկապես Մխիթարյան մխարտության ուսումնասիրություններին, ինչպես նաև եվրոպական գիտական աշխարհին, հանգես են զալիս ծանրակշիւ ուսումնասիրություններով:

Մտ. Նազարյանը իր ուսումնասիրություններում բազմիցս շոշափել է նաև հայոց լեզվի, հատկապես աշխարհարարի հետ կապված բազմապիսի Հարցեր. դա պատահական չէ. Նազարյանը գտնում էր, զոր հայոց ազգի տունը, պիտոյ է լինուի նրա լեզուի շինութեամբը²⁵: Ինչ վերաբերում է հայերենի և իրանական լեզուների առնչակցությանը, Նազարյանը ևս գտնում է, որ «հայոց լեզուն է մի ճուրղ այս մեծ և լայնատարած հնդկա-եվրոպական սանակիրտ լեզուների և պատկանում է մանավանդ թէ նոցա զերդաստանին արևմտեան Ասիայի մէջ, աչիւնքն

է իրանեանը, որին պատկանում է նոյնպէս հին զենք և պարսիկ լեզուքը²⁶:

Արժեքավոր են Մ. Էմինի արեւելագիտական-հայագիտական հետազոտութիւնները: Հատկապէս հեթանոսական շրջանի հայ-իրանական կրօնական կյանքին, զրանց ընդհանրութիւններին վերաբերող ուսումնասիրութիւններում Էմինը ցուցաբերում է պատմարան-բանասերի նաև լեզվաբանի մեծ հմտութիւն²⁷: Նա հայերենին միայն իրանական ծագում չի վերագրում, այլ՝ «մեկ կողմէն նախնի բարեխաչաց և մէկ կողմէն զհետ լեզուն գործածող ցեղերուն կցորդ...»²⁸:

Հայ-իրանական լեզվական անդամութիւնների ուսումնասիրութեան մեջ խոշոր ավանդ ունի Ք. Պատկանյանը, որին առանց վարանելու կարելի է համարել ժամանակի նշանավոր հայագետ-արեւելագետներից մէկը: Պատկանյանը անդրազարծել է հայերենի իրանական ազդեցութիւններին վերաբերող բազմաթիվ հարցերի, ցուցաբերելով խոր իմացութիւն, օգտագործելով ուսումնասիրութեան առաջավոր մեթոդներ ու եղանակներ՝ բնավ չզիջելով եվրոպացի հայագետներին, իսկ որոշ հարցերում էլ առջը անցնելով իրանցից: Սկզբնապէս, ինչպէս և դա սպասելի էր, Պատկանյանը յուրացնելով համեմատական լեզվաբանութեան նվաճումները, շատերի նման հայերենը իրանական լեզու էր համարում: Քննելով հայերենում գործառող մի շարք պետական-վարչական տեքմիններ մտազգան, սպարապետ, հազարապետ, ամբարապետ, փուշտիպետնազար... և այլն (Քվով 25), Պատկանյանը մի կողմից բացահայտում է հին իրանական կյանքի այդ բնագավառի որոշ էական առանձնահատկութիւններ, մյուս կողմից էլ հավատարմ հայերենի ու պարսկերենի ծագումնաբան ընդհանրութիւնը՝ հայերենի ու հայերենին վերագրելով իրանական ծագում²⁹: Իհարկէ, այստեղ սկզբունքորեն նոր բան չի ավելանում նախորդների ասածներին, կարելու համար էլ, որ գիտնական-հետազոտողը կրտահանգումը հիմնավորելու համար չի կրկնում նախորդների փաստարկները, այլ շրջանառութեան մեջ է դնում նոր փաստեր՝ այն էլ կարելու: Մեկ այլ ուսումնասիրութեան մեջ քննութեան առնելով հայոց ամսանունները, միտում է դրանց մոլորվորական ստուգաբանութիւնները, գտնելով, որ նախաձայնը, մեհեկան, անկկան, հրտից, հոռի, առլ ամսանունները իրանական են³⁰:

Պատկանյանը ի մի է բերել և խմբավորել հայերենի օտար բաները, կատարել է ստուգաբանութիւններ, բացահայտել հնչյունական

որինավարտութիւններ, արել իրանական փոխառութիւնների իմաստային ու կառուցվածքային դասակարգումներ՝ քննադատորեն օգտագործելով նախորդների տեսակետները: Նա այն գիտնականներից է, որ նոր փաստերի, նոր եզրահանգումների անկախութեանից կարող էր վերանայել նաև իր իսկ կարծիքը: Հյուրըմանի հողվածներից հետո, Պատկանյանն էլ փոխեց հայերենի գրաված դիրքի մասին իր նախկին տեսակետը և ընդունեց հայերենի առանձին լեզվամշակույթ լինելու գրույթը: Այդ անգամն էլ կուրորն լին: Գիտնականի իր հերթին նոր փաստերով հիմնավորեց այդ 1879 թ. Պատկանյանը հրատարակեց իր արձեքավոր «Նախառութիւններից մեկը»³¹, Այս գրքում նա համառոտաբար անգրագետում է հայերենի տեղի հարցի պատմութեանը, հատուկ ուշադրություն է դարձնում հնչյունական-հնչյունափոխական երևոյթներին: Քննելով մի շարք բառեր (զգոյլ, գաւազակ, խարազան, փառլ, ապանկան...), Պատկանյանը եզրակացնում է, որ դրանք հնչյունաբանորեն բնորոշ են մեկ լեզվի՝ իրանականին, զրանք հայ-իրանական ծագումնային ընդհանրութիւններ կապանցող բառեր չեն, այլ իրանական փոխառութիւններ³² (ընդգծումը մերն է— Լ. Ն.):

Սա արդէն կարեւոր եզրահանգում է: Հյուրըմանի պէս նա առաջադրում է փոխառութիւնների ու ընդհանրութիւնների տարբերական հարցը: Առջը անցնելով նախորդներից, նաև հետագա շատ ուսումնասիրողներից, Պատկանյանը առաջգրում, կարեւորում ու օգտագործում է մի նոր սկզբունք՝ գտնելով, որ հայ իրանական լեզվական անւնութիւնները ուսումնասիրելիս շարժել է բավարարվել միայն գրավոր ավանդված ավանդներով: Նա առաջադրում է մի կողմից իրանական բարբարային նրբախ ուսումնասիրութիւն, գտնելով, որ որոշ օրինակներ հնչյունական տեսակետից իրանական զրական լեզուներով մեկ հայտնի գրավոր ավանդված մեկուղի չեն բացատրվում: «Հայկական լեզուն,—գրում է Պատկանյանը, պարսկական բարբարաների հետ համեմատելով, լեզվաբանները միայն այն հին ու նոր իրանեան բարբարաները աչիի առջ ունեն, որոնք ունեցել են և ունեն գիր ու գլուխութիւն: Մակայն բառերը ոչ միայն գրեթէ են անցնում մէկ լեզվից միւրը, այլ շատ ավելի յաճախ ազդելի միմեանց հետ ունեցած կենդանի հաղորդակցութեան և անբնդհատ պատահումներների արդիւնք են... Պարսկական լեզուի, բարբարաների փոխադարձ յարաբերութիւններին անտեղեկի, զծուրք է վտանահարար խօսել այն բառերի վրայ, որոնք պարսկերէն լեզուից անցել են արջ լեզուներ: Կարող է պատահել, որ պարսկական բառը պարսկականի հետ համեմատելիս այնպիսի տարբերակական

բութիւն երևալ, որ հետադիմեամբ կարող է մտորութեան մէջ ձգել հետազոտողին... վերջիվերջոյ կարող է զուրա զու, որ ենթադրեալ բառը ամենին հայկական չէ, այլ պարսկական զատական բառ... ուստի և չբավականանալով լոկ պարսից դրական լեզուով, հարկ է այդգիտի զննչերեամբ զանազան բարբառների դիմել, որոնցով խօսում են պարսկական ազգի զանազան ցեղերը» (էջ 86—87)։ Պատկանյանը կարևորում է նաև հայ բարբառային նյութի ուսումնասիրությունը, բանի որ հայ մատենագրության մէջ բոլոր իրանական բառերն ու բառածները չեն կարող վկայված լինել։

Այս գրքում թեև նա որոշակիորեն մեթոմ է հայերենի իրանական ճշուղ լինելու տեսակետը, բայց գիտականին վաշի բծախնդրություն ու գիտական հիմնավորված կսակածամտութիւնն է ցուցաբերում վճռական խոսք ասելու հայերենի գրաված տեղի հարցում՝ գտնելով, որ անհրաժեշտ են նոր փաստեր։

Այդ նոր փաստերն և հարցի նկատմամբ հստակ դիրքորոշումն ենք գտնում նրա հաջորդ՝ 1882 թ. յույս տեսած աշխատութիւն մէջ։ Մի շարք բառերի բնութիւյմը (կեռայ, նիգակ, վանգ, գէւ, աշակերտ...), որոնք կազարգի մտտ համեմատվում են բակարիերների, նոր պարսկերենի հետ, Պատկանյանը բացահայտում է դրանց պահալովական բնույթը և համարում պահալովական փոխառություններ։ Նշում է նաև 50 բառ, որոնք առաջին անգամն են մեկնելում որպէս իրանական³²։ Ինկատենք, որ նրա բնորոշները և մեկնությունները հիմնականում ճիշտ են։ Պատկանյանի աշխատանքից հետագայում օգտվել են Հյուսիսային և Անատոլիայի։

Պատկանյանը (և), (ա) հաղելականով, ր ու ուով սկզբով արդեն նկատված փոխառությունների կողքին մի շարք նոր բառեր էլ է նշում. երազ, երաշխ, երատա, առատ, սառա և այլն³⁴։ Հաստակ ուշադրություն է դարձնում նաև հայ անձնանուններին, որոնք իրանական ծագում ունեն³⁵։ Այս գրքում նա փորձում է մեկնել (հիմնականում ճիշտ) մեր պատմիչների՝ Խորենացու, Նիղիշի, Արծրունու մտտ հանդիպող որոշ բառեր ու առանձին հատվածներ (զարախալուտ, ամպարտաբաշ, բոզպախտ...)։³⁶։

Իր աշխատություններում իրանական փոխառությունների հետ կապված բազմազան հարցերի խոր ու համոզիչ քննութիւյմը Պատկանյանը ներկայանում է որպէս հայերենում իրանական ազդեցությունների լավագոյն հետազոտողներից մեկը։ Այլ հետազոտողները նույնպէս այս կամ այն առիթով անդրադարձել են իրանական ազ-

դեցությունների հարցին. դրանց մասին այստեղ չենք խոսում, որովհետև նրանց դիտողությունները թուղիկ են և մասամբ կրկնություն։

ՆՐՈՐԻ ԵՐԶԱՆ

Այս շրջանը սկսվում է 1875 թվականից՝ Հյուսիսային նշանավոր «Նեղիվրոպական լեզուների շրջանների հայերենի գրաված դիրքի մասին»³⁷ հոդվածով։ Հայագիտութիւն հետագա զարգացման համար ուղեկցւոյին այս հոդվածում Հյուսիսային Նեյլոնական-Նեյլոնափոխական, այլև ձևարանական օրինաչափությունների վերանմանով փասնց հայերենը իրանական լեզու լինելու տեսությունը. հայերենը համարվեց Նեղիվրոպական լեզվաբնութանիցի առանձին ճշուղ։ Նոր տեսութիւնն հաստատումը պահանջում էր նոր հարցադրումներ, օրենքների մէջ բացատրություններ տեսնելու և դրանք գիտականորեն օգտագործելու համոտություններ։ Հիշյալ շրջանում Հյուսիսային հայ-իրանական լեզվական առնչությունների վերաբերող ուսումնասիրությունները կարեւորվում են առաջին հերթին հայերենի՝ Նեղիվրոպական լեզուների մէջ գրաված տեղի իր իսկ առաջ քաշած տեսակետի փաստարկմամբ։ Ըստ իրենի իրանական տարրի ուսումնասիրութիւններ նա նվիրել է բազմաթիւ այլ հոդվածներ, իսկ այդ աշխատանքների պատկեր «Նալիական քերականությունն» է։ Այս աշխատութիւնն հիմնական նպատակը հայերենի փոխառւոյալ ու բնիկ բառերի առանձնացումն է։ Դա պատահական չէ։ Հայերենի ինքնուրույն ճշուղ լինելու տեսակետը հիմնավորելու համար անհրաժեշտ էր հայերենի բառապաշարից դատել բոլոր օտար տարրերը, առանձնացնել նաև բնիկ հայկականը՝ վերջինիս ավելի խոր քննութիւնն համար։ Իրանական ծագում ունեցող բառերը բնութագրված են դրքի առաջին հատորում (էջ 9—280)։ Նա առանձնացնում է 686 իրանական բառեր (հին փոխառություններ), ստուգաբանում դրանք, օգտագործելով նախորդների աշխատանքը և զնահատելով նրանց վաստակը։ Մտտ յոթ հարյուրի հասնող իրանական բառերի առանձնացումը հայերենի իրանական տարրի աննախորժաց քննութիւն էր։ Հիշենք, որ Հյուսիսային ստուգաբանությունների գերաշիշտ մասը այսօր էլ քննութիւն է հայագիտութիւնն կողմից։ Իր գրքի երկրորդ հատվածում նա անդրադանում է նոր պարսկերենից ու արաբերենից հայերենին անցած բառերին։

Չնայած հայերենում իրանական բառերի զգալի բանակին, Հյուսիսային գիտական վերլուծությունը հաստատի, որ բանական կողմը

պեռես հայերենը իրանական լեզու համարելու փաստարկ չէ: Հայերենին վերաբերող այս եզրահանդումը ընդհանուր լեզվաբանական արձեռնակը այս կամ այն լեզվի տեղը ճշտելու առումով:

Հայերենի իրանական փոխառություններ հասկացություններ գիտական շրջանառության մեջ մտավ դարձյալ շնորհիվ Հյուբշմանի, բանի որ հայերենի իրանական տարրերը արդեն դիտվում են ոչ թե որպես բնիկ, այլ՝ փոխառու տարրեր: Այլ կերպ ասած, իրանական փոխառությունների առաջին ուսումնասիրողը դարձյալ Շ. Հյուբշմանն էր: Հյուբշմանը երկնով հայ-իրանական անալոգիաների պատմությունից, որոշում է նաև իրանական լեզուներից կատարված փոխառությունների ամենաբուռն շրջանը՝ մ.թ.ա. 1-ին—մ.թ. 1-ին դարերը: Սա հավաստի եզրահանգում է, որի օգտին խոսում են նաև լեզվական տվյալները՝ պարթևական փոխառությունների մեծ ստիպող իրանական այլ լեզուների համեմատությամբ: Իրանական լեզուներին վերաբերող Հյուբշմանի դիտարկումները մեծապես նպաստեցին նաև իրանական լեզուների ուսումնասիրությանը:

Իրանական փոխառությունների համակարգային ուսումնասիրության զործում մեծ վաստակ ունի նաև Ֆրանսիացի հայագետ Ա. Մելնե՝ նոր ժամանակների մեծագույն լեզվաբաններից ու հայագետներից մեկը: Հեղինակի հայերենագիտության տարրեր հարցերին վերաբերող բազմաթիվ հոդվածներից մի քանիսը նվիրված են հայերենի իրանական փոխառություններին, որոնցում հայագետը կատարում է նոր ստուգաբանություններ, բացահայտում հայ-իրանական հելլոնական նոթ համապատասխանություններ, քննում իմաստային-գործառական ընդհանրություն ունեցող որոշ բառեր³⁹: Հենվելով ժամանակի առաջգրած պահանջներին, նոր, թեև սակաւ տվյալներով, Մելնե փորձում է հայերենի իրանական փոխառությունները տարրաբաժնել ըստ հարավային և հյուսիսային բարբառների: Սա հայերենի իրանական տարրի ուսումնասիրության նոր էրակետի առաջացում էր, որն արգրանում է մի կողմից՝ իրանական փոխառյալ բառերի հելլոնական որոշ զուգածների, մյուս կողմից՝ իրանական լեզուների ու բարբառների նոր վկայությունների առկայությամբ⁴⁰: Հայերենի իրանական փոխառությունների ծավալումը քննություն կա և Ք. Սպեկյանի, Շ. Տաշյանի «Ուսումն գրասկան հայերեն լեզուի» գրքում (Վիեննա, 1920, էջ՝ 496—724): Ուսումնասիրության էական արձանիքը տվյալ հարցի եվրոպական հայագիտության կողմից կատարված քննության

ներկայացումն է: Անշուշտ, որոշ զեպերում էլ առաջադրվում են նոր գրություններ:

Յայժմ իրանական փոխառություններին նվիրված ամենամտրոշական ուսումնասիրությունը շր. Աճառյանինն է: Տիրապետելով մի շարք հին ու նոր լեզուների, իրազեկ լինելով ժամանակի համեմատական լեզվաբանության նվաճումներին, մեր ժամանակների պանամփող լեզվաբանը ի մի բերելով բոլոր նախորդների արածը ու իր իսկ արժեքավոր ու մանրագիտի պրոպոսիցիաները, երկու տարրեր աշխատություններում գիտականորեն լուսարանեց ու ամրագրեց իրանական փոխառություններին վերաբերող բազմաթիվ հարցերը՝ նախ՝ իր անզուգական Արմատական բառարանում մեկ առ մեկ ներկայացրեց բոլոր այն բառերը, որոնք իրանական ծագում ունեն: Գա սուկ բառերի ծագման մատնանշում չէ: Իրեն հատուկ բնութագրությամբ, լուսարանչյուր բառի մաս Աճառյանը բերում է եղած բոլոր հիմնական ստուգաբանական փորձերը. բազմաթիվ բառեր էլ ստուգաբանում է ինքը: Այս իմաստով Արմատական բառարանը միայն բաարմատների բացատրություն չէ, այլ նաև հարցի պատմություն: Արմատական բառարանը մեզ ներկայանում է նաև որպես տվյալ զեպում իրանական փոխառությունների ուսումնասիրության մի կարևոր բնագավառի՝ ստուգաբանությունների պատմություն՝ հնագույն շրջանից մինչև Հյուբշման ու Աճառյան: Ամենայով բավարար ու իր ժամանակաշրջանի համար սպասելի նյութ, մեծավաստակ գիտնականը իրանական փոխառությունների այլևի համապարփակ ուսումնասիրությանը անդրադարձավ «Հայոց լեզվի պատմություն»⁴¹ մեջ: Այստեղ, նախ անդրադառնում է հազարամյակների ակունքներ ունեցող հայ-իրանական անալոգիաներին, ընդգծելով այն առարկայական պատմաներն, որոնք նպաստեցին իրանական տարրի ներթափանցմանը: Աճառյանը կարևորում է այն բառերի տարրերակումը, որոնք 1) հայերենը և իրանական լեզուների ժառանգություն են ստացել շեղ-կերպական լեզվից, 2) հայերենը փոխ է առել իրանական լեզուներից, 3) թե՛ հայերենը և թե՛ իրանական լեզուները փոխ են առել մի երրորդ աղբյուրից, 4) պարսկերենը փոխ էլ առել հայերենից: Վերջիններս ախբան էլ շատ չեն և այդ հարցին առ այսօր բավարար ուղադրություն չի դարձվել: Մի բանի բառ՝ բարեկենդան, աղիս նշում է Աճառյանը, մեկ-երկու բառ ավելացրել են հետագա ուսումնասիրողները: Մեր աշխատանքում էլ այդ խնդրի խոր քննության նպատակագրում չկա, սակայն վստահորեն կարելի է առել, որ մանրագիտն

ու առարկայական վերլուծությանը իրանական լեզուներում կգտնվեն հայերենի որոշ տարրեր, և թերևս արդեն հասունացել է հայ-իրանական լեզվական փոխադարձ ազդեանքի քննության ինչդիրք՝ մասնավոր հայերենի իրանական տարրի ամբողջական քննությունից հետո:

Աճառյանը տալիս է նաև այն հայտնի հնչյունական համապատասխանությունները, որոնք առկա են իրանական լեզուների ու հայերենի միջև: Հյուրըմանի և Մեյլի նման Աճառյանն էլ գնում է հին իրանական լեզուներից կատարված փոխառությունների տարբերակման հարցը, սակայն նկատելի է, որ իստում, զգալի բառաչերտ չի առանձնացնում, բանի որ այդ բանձանակ, նաև այժմ տվյալ հարցի պարզաբանման համար բավարար նյութ չկար և օգտագործվող սկզբունքներն խիստ պայմանական են: Գարձյալ քնդհանուր և ճշմարիտ եզրակացությունը մնում է այն, որ հայերենը ամենաշատ փոխառություններից կատարել է միջին իրանական լեզուներից: 240—292 էջերում Աճառյանը ներկայացնում է հայերենին անցած բոլոր իրանական բառերը՝ 1405 բառ, ըստ հնարավորին նշելով դրանց ձևերը իրանական տարրեր լեզուներում: Ինչպես նկատում ենք, Աճառյանի բառացանկը ավելի քան երկու անգամ ձգվալուն է Հյուրըմանի ցանկից: Իր նախորդ հոդվածներից մեկում («Արարատ», 1902, էջ՝ 65) Աճառյանը նշում է 750 փոխառություն՝ առանց ցանկը ներկայացնելու: Ըստ երևույթին, նկատելի է անվանել Հյուրըմանի ցանկը՝ որոշ ճշրգրություններով: Աճառյանը իր նոր ցանկի մեջ ներառել է բազմաթիվ բառեր, որոնք ստուգաբանվել են Հյուրըմանից հետո (նոր ստուգաբանությունների զգալի մասն էլ իրենն է): Ուրեմն, հենց երկու ցանկերի համեմատությունը վկայում է, որ Հյուրըմանի փշայական սերականություններից մինչև Աճառյանի ուսումնասիրությունները քնկած կարճ ժամանակահատվածում զգալի առաջընթաց է կատարվել մեզ հետաքրքրող հարցի լուսաբանման ուղղությամբ: Աճառյանը կատարել է նաև իրանական փոխառյալ հատուկ անունների քննություն՝ մեծապես օգտվելով Հյուրըմանի աշխատություններից:

Եթե քնդհանրացնելու լինենք Աճառյանի՝ որպես հայերենի իրանական տարրի հետազոտողի դերը, ապա անվարան կարելի է ասել, որ այն կարևորվում է առաջին հերթին ժամանակի իրանագիտական նվաճումների ամբողջական ներկայացմամբ: Նրա ուսումնասիրությունները հաստատուն գիտական հենք են հայերենի իրանական տարրի նոր հետազոտությունների համար:

Այժմ էլ հրապարակ են գալիս հայ-իրանական անչուրությունների

վերաբերող ուսումնասիրություններ: Միայն չեն լինի, եթե ասենք որ այդ հարցին անդրադարձել են համարյա բոլոր հայագետներն ու իրանագետները: Առանձնապես մեծ է իրանագետ է. Բենվենիստի կատարած գործը: Նրա՝ մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները գիտական շրջանակներում հետաքրքրություն առաջացրին արդեն 20-ական թվականներից: Բենվենիստի առաջադրումն է եղել փոխառյալ իրանական տրադուցների ու կոլուցների, փոխառությունների բուն աղբյուրների, հնչյունական որոշ առանձնահատկությունների և այլ հարցերի քննությունը: Հենվելով իրանական նոր աղբյուրների տվյալների վրա, Բենվենիստը առաջադրում է իրանական մի շարք փոխառությունների ստուգաբանական նոր փաստեր, հիմնավորում ծագումնաբանորեն անհայտ մի քանի բառերի իրանական քնույթը:

Հայերենի իրանական տարրի ուսումնասիրման գործում անժերխտելի է նաև Հ. Բեյլի դերը: Բացի ստուգաբանական կարևոր պրոպոսիտներից, Բեյլիի՝ իտալան-սակերենին նվիրված ամփոփիչ ուսումնասիրությունները անդնահատելի նյութ են տալիս ինչպես իրանական լեզուների նոր տվյալների ներկայացման, այնպես էլ այդ տվյալների հիման վրա հայերենի իրանական բառաչերտի որոշ տարրերի նորոգիչ լուսաբանման տևանկներից:

Բառաքնական-ստուգաբանական արժեքավոր գիտություններ ունեն Հենիզզե, Սենդերնյին, Թ. Եմիսը, Լերուան: Զ. Բուրնիեզին մասնաշնչում է իրանական մե քանի փոխառությունների բարբառային աղբյուրը, բացահայտում իրանական այս կամ այն լեզվից ու բարբառից հայերենին անցած բառաձևերի հնչյունական որոշ օրինաչափությունները: Երգրոջային գիտականներից առաջին հերթին պետք է նշել Ա. Փենիխանյանի վաստակը, որ կիզորդելով հմուտ իրանագետի և հայագետի կարողությունները, մի շարք մեծարժեք ուսումնասիրություններում անդրադարձել է փոխառությունների հնչյունական-հնչյունափոխական օրինաչափությունների բացահայտմանը, բազմաթիվ սերժիները՝ իրանական լեզուներում ու հայերենում դրանորդ քնդհանրությունների, կիրառական-իմաստային շտրահատկությունների քննությանը: Գնահատելի են նրա ստուգաբանական ճշգրտումներն ու նոր ստուգաբանությունները:

Մ. Անդրեյիկաշվիլու գրքում⁴² 5—15-րդ դդ. վրաց մատենագրության տվյալների հիման վրա քննվում են վրացերենի իրանական փոխառությունները: Մեզ համար արժեքավոր է հատկապես գրքի երկրորդ

գլուխը, որտեղ բնական են պարթևական ծագում ունեցող բառերը, որոնց մի զգալի մասը վրացերենին է անցել հայերենի միջոցով:

Այստեղ չենք նշում մի շարք համեմատարանների, պատմաբանների ու արևելագետների, որոնք այս կամ այն առիթով անզրազարձել են մեզ հետաքրքրող հարցերին, արևել արևմտավոր դիտողություններ ու եզրահանգումներ: Գրանց մասին հարկ եղած զեպրուստ կիտավի համապատասխան տեղերում: Իրանական փոխառություններին տարրեր առիթներով անզրազարձել են նաև հայ ուսումնասիրողները (Պատրուբանի, Վարդապետյան, Ռ. Արքատճաճյան, Ակիբյան, Ննզղույան, Քիրեաբյան, Աղբալյան, մեր օրերում՝ Գ. Նաթրադյան, Պ. Բեղիրյան...): Գ. Հասկանի է է. Աղաջանի գիտական վաստակը այս բնագավառում ներկայանում է մի շարք ստուգաբանություններով, սորոք անանձին բաների մասնակի վերլուծություն լինելուց դատ, ունեն նաև, ընդհանրապես հայ-իրանական լեզվական աղբյուրներ լուսարանող արժեք⁴²:

Ամփոփ ներկայացրինք հայերենի իրանական տարրի ուսումնասիրության բնագոյնն ու ձևեր բերած նվաճումները: Այո՛, արդյունքները չափազանց շոշափելի են, սակայն հարցը սպառված չէ: Մեծածավալ նյութը, այդ նյութի բնույթը առաջադրում են նորանոր խնդիրները: Անխիբներ զեռ շատ կան:

ՓՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԵՑԱԿՆԵՐԸ ԱՅ ՍԱՀՄԱՆՈՒԹՅԱՆ

Փոխառությունները բնորոշ են բուր լեզուներին: Չկա մի լեզու, որ կատարելապես զեծ լինի օտար ազդեցություններից: Ազգի հասարակական բնույթը, լեզուն օտեղծող ու կրող մտքովրդի՝ այլ մտղովորդների հետ ունեցած բազմաթիվ ու տարարնույթ հարաբերություններ պայմանավորում են օտար ազդեցությունների անխուսափելիությունը, որը, վերջին հաշիվով, նաև լեզվի զարգացման ազդակներից մեկն է նաեղիսանում:

Փոխառությունների զործրնթացը անընդճատ է: Ժամանակակից այս կամ այն հասվածում՝ կազված, առաջին հերթին, լեզվի զար-

գացման արտաքին, կամ, ալիլի ճիշտ, արտալեզվական զործրների հետ, այն կարող է լինել բուռն կամ զանազակ, սակայն՝ ոչ քաղցած: Քարացած չին նաև փոխառությունների բնույթյան ձևերն ու մեթոդները: Գիտության զարգացումը ի հայտ է բերում նոր փաստեր, առաջադրելով բնույթյան նոր ձևեր, հանգեցնելով նոր եղախանգումների: Պատահական չէ, որ թէ ընդհանուր լեզվաբանական և թէ առանձին լեզուների նվիրված աշխատություններում փոխառության հարցը եղել է մնում է ուշագրության կենտրոնում: Ի զեպ, այդ հարցի կարևորությունը նաև այն է, որ ի պարփակվում են լեզվաբանական շրջանակներում, այլ աղբյուրներ է պատմության, մշակույթի և ընդհանրապես հասարակության զարգացման հետ՝ նպաստելով նաև ոչ լեզվաբանական խնդիրների լուծմանը:

Փոխառության տեսության վերաբերող գրականության մեջ բնույթում են բազմապիսի հարցեր: Նկատվում է փոխառություն հասկացության երկու՝ ենդ և լայն բնույթում: Ամաք փոխառություններ են համարում միայն այն օտար բառերը, որոնք առկա են (վկայված կամ զործրտում են) օտար հնչյունական կազմով և չեն ենթարկվել փոխառու լեզվի հնչյունական-հնչյունափոխական օրենքներին: Սա փոխառության ենդ բնույթումն է, որի մեկ այլ արտահայտությունն էլ այն է, երբ հաշվի են առնվում փոխառությունների կիրառական առանձնահատկությունները և փոխառություններ են դիտվում միայն այն օտար բառերը, որոնք կայուն ու համախական կիրառություն ունեն: Գոյություն ունի և հակառակ միտումը, երբ բնագրծակվում են փոխառություն հասկացության շրջանակները՝ ներառելով նաև օտար հիմքերից ու բառույթներից կազմված ամանցավոր, բարդ ձևերը, բառակապակցություններն և այլն⁴³:

Արդ, որ մտտեցումն է ճիշտ: Անվերապահորեն չպետք է ընդունել մեկը և մեթոլ մյուսը: Ամեն ինչ կախված է ուսումնասիրության նպատակներից ու հայեցակետից, բնվող նյութի բննետած հարադարություններից: Իդեալականը օտար սարերրի ամբողջական բնույթումն է. ոչ միայն օտար ձևերի, այլև օտար միավորն ընդգրկող մայրենի ձևերի բնույթյամբ է, որ ալիլի լիարծեր է բացահայտում օտար ազդեցությունների զեր փոխառու լեզվում: Սակայն այս կարգի բնույթյունը չափազանց զմլար է. երբեմն էլ անկարելի՝ մանականգ փոխառությունների զգալի քանակի և փոխառու լեզվում զրանց բառակազմական լայն հնարավորությունների առկայության զեպում: Ինչ վերաբերում է փոխառություն տերմինի շրջանակներին, ալիլի արա-

⁴² Մեր աշխատանքը հանձնված էր հրատարակության, երբ լույս տեսավ Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի պատմություն», 4, 1, Երևան, 1937 աշխատությունը, որի մի ընդամենը քաթիքը վերաբերում է իրանական փոխառություններին: Գծարխաբար լեզուագիտանք օգտվել այդ զործրը:

մարտականը օտար նկույր + մայրենի լեզվի նկույր կառույցները փոխառություն չ'ամարելն էլ Ալգզեև էլ վարվել ենք մեր աշխատանքում:

Ճիշտ է նաև այն մտածելով, երբ ստանձնագրում են համարակազմ կիրառություն ունեցող փոխառությունները եղակի վկայություններին: Վերջիններին համար կարելի է առաջարկել որևէ նոր տերմին, սակայն էականը տերմինային տարրերակազմը չէ, այլ փոխառություն լեզվի համակարգի մեջ ունեցած դերը: Առանց այդ հանգամանքի հաշվառման երբևէ գերազանցատուում է փոխառությունների դերը՝ հաշվի առնելով միայն նրա քանակական կողմը: Ի դեպ, լեզվաբանական գրականության մեջ առայժմ որովայն չեն (Ֆերև հնարավոր էլ չէ որոշել) փոխառյալ բարոյականի փոխառելի սահմանները: Պարզ է մի բան. կարևորը փոխառությունների քանակը չէ, այլ՝ գործառնական, բառակազմական հնարավորությունները: Հայտնի է նաև, որ օտար բառերի քանակը չի կարող փոխել լեզվի բնույթը: Վերջինս պայմանավորված է առաջին հերթին քերականությամբ, քերականական իր առանձնահատկություններով: Անդրև համակարգերի համակարգ էլ քերականական փոփոխությունները արագորեն որակականի են վերածվում այն ենթահամակարգերում, որոնք կազմված են սակավ տարրերից, և վերջիններին միջև առկա են ոչ բազմազան հարաբերություններ: Բավական է, ասելով, հնչույթային մեկ-երկու հակադրություն, և լեզվի հնչույթային համակարգը էական փոփոխություններ կկրի, ձևեր կրելի նոր որակ, քանի որ հնչույթային միավորների թիվը խիստ սահմանափակ է, սահմանափակ է և այդ միավորների միջև գործող հարաբերությունների շրջանակը: Լեզվում քանակական մեծ փոփոխություններ կատարվում են իմաստային կամ, չայն առումով, բառապաշարային մակարդակում, բայց քանի որ այն համակարգի արարելը և նրանց միջև գործող հարաբերությունները բազմազան են, քանակական փոփոխությունները որակականի չեն վերածում:

Սակայն լպկետը է թերազանատել և անտեսել փոխառությունների քանակական կողմը: Ըստ Հ. Աճառյանի հայերեն իրանական լեզուներից փոխառել է 1405 բառ: Սա վերջնական չէ, և այդ թիվը կարելի է ավելացնել: Կան լեզուներ, որ ավելի շատ փոխառություններ ունեն: Սերնայ, 13—20-րդ դդ. իտալերենը ֆրանսերենից փոխառել է 2798 բառ¹⁾, զգալիորեն ավելի շատ, քան հայերենի իրանական փոխառություններն են:

Այս և նման զուգահեռների ղեկավարում պետք է հաշվի առնել փոխառյալ բառերի բնույթը, դերը, գործառնական շրջանակները, այլև՝

որ խիստ կարևոր է, փոխառության ժամանակաշրջանը: Նոր մատակերներում հեռակապի, մամուլի զորեղ միջոցները նաև լեզվական ազդեցություն զորեղ խթաններ են: Այստեղից էլ մի նոր հետևություն տարրեր են հին և նոր փոխառությունների նախապահները, հետևաբար տարրեր են հին և նոր փոխառությունների զեպահման շափանիչները, ուսումնասիրության խնդիրներն ու ղեկավարությունները: Օրինակ, էթև նոր փոխառությունները ուսումնասիրողի համար էական ղեկավարություն չէ փոխառության կոնկրետ աղբյուրն ու փոխառման ժամանակաշրջանը որոշել, ապա հին փոխառությունների ղեկավարում սա շափազանց ղեկավար է, երբևէ՝ անլուծելի:

Ինչպես հին են փոխառությունները, այնքան առարկայական են դրանց ուսումնասիրության ղեկավարությունները, որովհետև փոխառության աղբյուրի, ժամանակաշրջանի, փոխառու և փոխառու լեզվում բառիմաստների ընդհանրության ու տարբերության հարցերից զատ, (հարցեր, որոնց պարզաբանումը շափազանց կարևոր է), հին փոխառությունները ժամանակի ընթացքում ենթարկվում են լեզվական նույն փոփոխություններին, ընթանում ստանդարտական այն զարգացման ուղիով, ինչ մայրենի լեզվի բառերը:

Երբեմն էլ նույն բառը կարող է փոխառվել մի քանի անգամ տարբեր ժամանակներում: Նման ղեկավարում արանք ունենում են հնչյունական որոշ զանազանություններ, և նոր կատարված փոխառությունները ավելի հարազատ են ներկայացնում փոխառու մեր կրկնվող փոխառությունների պատճառը նաև հին և նոր փոխառությունների նշանակությունների միջև զուտություն ունեցող տարբերություններ (բառիմաստի նեղացում, լայնացում, ընդհուպ միջև նոր իմաստ), հմտ. իրանական պաշտպան և փուլափայան բառերը:

Հնարավոր է նույն բառի (հիմնականում հնչյունական որոշ զանազանություններով) միաժամանակյա կամ ժամանակային կարճ հատվածում փոխառել: Այս դեպքում դրանք մեծազանում են փոխառության տարրեր աղբյուրներ (իրանական փոխառությունների ղեկավարում, օրինակ, իրանական տարրեր լեզուներ կամ բարբառներ), ընդ որում, էթև բառերի արտաքին-հնչյունական կողմը նույնական է, ապա, անշուշտ, փոխառու աղբյուրներում դրանք զգուհարում են իմաստային զանազանություն, այլապես փոխառու լեզուն երավարարվել մեկ փոխառությամբ:

Փոխառության տեսության հարցերը քննելիս, վերջինս շրջանառության է ղեկավար ենընդուն (ինտարսա) հասկացությունը. այս անդամ

տակ բացի զանցվածային բառային փոխառություններից, ներառվում է նաև բերականական կարգերի, ձևույթների, հնչույթների, հնչերանգի փոխառություն: ներշնչության հասկացության հիմնավորումը գտնում ենք խորհրդային լեզվաբան Մ. Բորոզինյի մոտ՝ զերմաներենի և ուսուսումնասիրենի փոխազդեցության քննության մեջ¹⁶: Ըստ Բորոզինյի, ներշնչում հասկացությունը կապված է նախ և առաջ, արտալեզվական, պատմամշակութային գործոնների հետ և կապվում է շերտերի (սարատների՝ սուբստրատ-նկմաշերտ, սուպերստրատ-մակաշերտ, ազստրատ-առշերտ) տեսության հետ՝ կազմելով նրա շերտերից տարրը¹⁶:

Ներշնչության երևույթը երկու ժողովուրդների ու լեզուների շրփման հարաբերությունից բացի ենթադրում է նաև փոխառու լեզվի մեջ նոր տարրի մուծման ու ակտիվ գործածության հնարավորություն, երկու լեզուների (անկախ նրանց ազդեցական կապից) զարգացման քննահարություններ:

Լեզուների փոխազդեցության ուսումնասիրության մեջ նոր հասկացությունների, այդ թվում՝ ներշնչում հասկացության կիրառումը ակտիվ գործնական հունի մեջ կարող է զինել նոր հարցեր, սակայն, քանի որ առայժմ հաստի չէ այդ հասկացության բմբռնումը, ուստի փոխառությունյան հարցերին վերաբերող շատ աշխատություններում այդ տերմինին և երևույթին, առայժմ քնականաբար բավարար ուշադրություն չի դարձվում:

Փոխառյալ բառերի մուտքը այս կամ այն չափով փոփոխության է ենթարկում լեզու: Լեզվաբանական գրականության մեջ տարբերակվում են լեզվի փոփոխությունները պայմանավորող երկու կարգի գործոններ. ա) արտաբին, բ) ներբին: Արտաբինը կամ արտալեզվականը առարկայական իրականություն, հասարակության կողմից լեզվին ներկայացվող ազդակն է, իսկ ներբինը կամ լեզվականը պայմանավորված է լեզվի կառուցվածքով, նրա բուն էությունը: Արտաբին և ներբին գործոնները գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ, և միշտ չէ, որ դրոսին է լինում դրանց առանձնացումը: Բերենք մեկ-երկու օրինակ. գրաբարի կրավորական սեռի արտահայտությունը բարզ էր ու խճճված, չկար կրավորականություն արտահայտելու միասնական ցուցիչ: Արդի գրական հայերենը՝ Վ՝ մասնիկի միջոցով զգալիորեն բարեփոխցր փյնակը: Լարց է առաջանում. սա ներքե՞ն փոփոխություն է, Թե՞ արտաբին: Անշուշտ ներբին, բայց կա և արտաբին գործոնը. դա հաղորդակցման պահանջն է, այնևի ճիշտ, հաղորդակցումը դուրսին

գործնելու ձգտումը: Մեկ այլ օրինակ. արևմտահայերենում գործ արվեց շրջանառության մեջ զինել իզական սեռ արտահայտող հե (ենթա) ձևերը: Հիշենք Պ. Գուլյանին:

Նի զիս իր բով նստեցուց, ... ներս զիմացը վըրա...

Ակզան ստեղծեց նոր բառ, բերականական նոր արտահայտություն (այլ բան է, որ այն տարածում չտավ): Այստեղ ակհնայտ է փոխառության ներքին գործոնը, բայց այդ փոփոխության իրականացմանը նպաստել է արտաբին գործոնը, մի շարք լեզուներում իզական սեռի ուղղան ցուցիչ ունենալու փաստը, սովալ զեպրում, ըստ երևույթին, Ֆրանսերենի անմիջական ազդեցությունը: Գրաբարում նույնպես նմանօրինակ փորձեր են արվել՝ վաղ գրաբարում հունարենի, ուշ գրաբարում՝ լատիներենի ազդեցությամբ, որոնք, ինչպես դիտենք շարժառնվողների մեք լեզվում:

Բառապաշարի փոփոխությունները հիմնականում արտահայտվում են փոխառությունների միջոցով: Անժխանի է, որ փոխառության գործընթացում կարեորվում է արտալեզվական գործոնների դերը:

Տվյալ լեզվում որևէ օտար լեզվի բառերի քանակը, նրանց ընույթը, վիզըին հաշվով փոխառու և փոխառու լեզուները կորոնների՝ երկու ժողովուրդների պատճռության, տնտեսական-քաղաքական, մշակութային կյանքի ու հարաբերությունների լեզվական արտացոլումն է: Հայերենի իրանական բառապաշարի զգալի քանակությունը հենց արտաբին գործոնի արգասիք է. հարյուրամյակներ շարունակ լեռնով զբացիներ (երկար ժամանակ նաև բարի զբացիներ), զանվելով Իրանի տնտեսական-քաղաքական ազդեցության տակ, մեր լեզուն էլ քնակա-նարար իր բառապաշարի մեջ է ներառել այդ հարաբերություններն ու կյանքն արտացոլող բազմաթիվ իրանական բառեր: Հին լեզուներից լատիներենը նույնպես զգալի բառեր է վերցրել հունարենից, որ պայմանավորված է հունական մշակույթի, փիլիսոփայության ու գրականության վրա հունական քաղաքակրթության մեծ ազդեցությամբ: Պատահական չէ, որ լատիներենում հունարեն բառերի արդյալությունը ումանք դիտում են իբրև ոչ այնքան լեզվական, որքան պատմամշակութային երևույթ¹⁷: Այս նկատմանում մեք, իհարկե, դարձյալ բառապաշարի փոփոխության արտաբին և ներբին գործոնների փոխկապակցվածությունն և արտալեզվական էական լինելու հարցն է:

Նկատված է, որ քննահարապես շուտ և շատ են փոխառվում անձնանունները, սովալ ժողովրդի կողմից ներմուծվող առարկաների ու ապրանքների անունները, մանավանդ էրբ այդ հասկացությունները

չկան փոխառու լեզվում: Ինչպես դեռ եկատեղ է Հ. Պատուլը, էնիս Ներ-մուծվող իրերը հումք են կամ բնության բարիքներ, ապա հնարավոր է, որ քաղաքակրթության ավելի ցածր մակարդակում գտնվող ժողովուրդների լեզուներից կատարվեն փոխառություններ՝ տվյալ հաս-կացություն հետ:»:

Այնինչ, պետական-վարչական տերմինների, նաև որոշակի մտա-վոր տեխնիկական միջոցներ պահանջող արդյունաբերական առարկա-ների ու գործիքների անվանումների (որոնք դարձյալ շուտ են անցնում մի այլ լեզվի մեջ) փոխառումը, անպայման ենթադրում է տվյալ բնա-զավառում փոխառու լեզուն կրողների համեմատաբար բարձր մա-կարդակ: Օրինակ, հին հայերենի ուղղմական տերմինաբանության զգալի մասը իրանական է, բանի որ պատմական իրադրությունների ընդունվելուց հետո կյանքի այդ բնազավառը դարպասման առավել բարձր մակարդակ ուներ: Իսկ այս կարգի փոխառությունների ընդունումն ու յուրացումը ինքնին ենթադրում է քաղաքակրթության դարգացման որոշակի աստիճան:

Փոխառություններին վերաբերող լեզվաբանական աշխատություն-ներում հաճախ քննվում են նաև տարբեր ճանապարհներով (գրավոր և բանավոր) փոխառված բառերն ու նրանց հետագա ճակատագրի հետ առնչվող հարցեր: Հասկանալի է, որ գիր ու զրականություն չու-նեցող ժողովուրդների մոտ լեզվական ազդեցություն միակ ճանա-պարհք բանավորն է, իսկ գրի և զրականության առկայության դեպ-քում երկու ճանապարհներն էլ գործում են, բայց ոչ հավասարաչափ: Օրինակ, 18—19-րդ դդ. եվրոպական լեզուներին անցած ռուսական բառերը հիմնականում գրավոր ճանապարհ են ենթադրում՝ ռուս զրոշ-ների Թարգմանության միջոցով, իսկ այդ եուլն շրջանից եվրոպական լեզուներին ռուսերենին անցած պատկանելի բառապաշարը անցել է կ' մեկ, կ' մյուս ճանապարհով:

Փոխառությունների ուղիների հարցը պետք է քննվի՝ երկու ժո-ղովուրդների պատմատեսական, մշակութային կոնկրետ փոխա-րաբերությունների իրական պայմանների հաշվառմամբ: Այլ կերպ ա-սած պետք է հաշվի առնել դարձյալ արտալեզվական բուն հանդա-մանքները, որոնք տվյալ ժամանակահատվածում պայմանավորում են փոխառության այս կամ այն ուղին:

Ընդունված է այն տեսակետը, որ բանավոր ճանապարհով ան-ցած բառերը Անափոխվում են՝ ենթարկվելով մայրենի լեզվի բառերի հնչյունակազմին և հնչյունական օրենքներին, իսկ գրքային փոխառու-

թյուններում այդ գործընթացը դանդաղ է ընթանում և նկատվում է բառ հնարավորին օտար հնչյունակազմք բիլ փոփոխելու և հարազատորեն սպիկելու միտում: Սա բնդհանուր առմամբ ճիշտ է: Սակայն բանավոր ուղիով կատարված փոխառությունների մասին տրված եզրահանգման մեջ անտեսվում է հաղորդակցման դերը: Ենի բանավոր անցած փո-խառություններն ավել լեզուն կրողների հետ հաղորդակցման նպա-տակով են, ապա այս դեպքում պետք է հարաուտորեն պահեն օտար հնչյունակազմք՝ հենց այդ օտարի հետ հաղորդակցելու համար: Դա առավել իրականանում է երկու հարեան ու սերտ շփման մեջ գտնվող ժողովուրդների ստորյա կյանքի պայմաններում: Օրինակներ կարծում ենք պետք չեն:

Հարց է առաջանում, ո՞ր ճանապարհով անցած բառերն են ավելի արագ արմատավորվում փոխառու լեզվի մեջ՝ ձևոր բերելով համա-ժողովրդական գործածություն: Բանավոր ուղիով անցած բառերը (մա-տակալից հետո, կապի և լեզվի տարածման այլ միջոցների բացա-կայության պայմաններում) երկար ժամանակ կարող են գործառնել միայն որոշակի տարածքում՝ սահմանափակ շրջանում: Իսկ զրակա-նության միջով անցած փոխառությունները նմանօրինակ սահմանա-փակվածություն չեն կարող ունենալ: Ավելի ճիշտ, վերջին ուղիով ան-ցած բառերի կոնկրետ տարածքային ընդգրկվածությունն էլ նստորք ենթադրելի չէ:

Ի՞նչ ուղիով են անցել հայերենի իրանական փոխառությունները: Ամենայն հավանականությամբ կ' բանավոր, կ' գրավոր ժամանա-կային մեծ սահմանները հնարավորություն չեն տալիս պարզելու և առանձնացնելու հատկապես այս կամ այն ճանապարհով անցած բա-ռաշեղթերը: Պետք է ենթադրել, որ հին փոխառությունների դերակշիռ մասը ենթադրում է անցման բանավոր ուղի՝ որպես երկու ժողովուրդ-ների սերտ շփման արգասիք: Ի դեպ, մեր մատենագրության մեջ չավանդված, բայց բարբառներում պահպանված իրանական բառերի առկայությունը հավաստում է բանավոր փոխառությունների հնարա-վորությունը: Անշուշտ, որոշ բառեր, հատկապես նեղ գործածական պետական-վարչական տերմիններ, կարող են անցած լինել իրանա-կան զրավոր աղբյուրներից՝ փաստաթղթային գրագրության միջոցով: Ինչ վերաբերում է հայերենում իրանական տարրի համընդհանուր տա-րածվածությանը, ապա անպայման բառերի մի զգալի բանակ մեղա-նում համընդհանուր տարածում է ստացել հայ մատենագրության մի-ջոցով՝ սկսած 5-րդ դարից: Կրանք հատկապես զրավոր (գրական)

լեզվին բնորոշ բառեր են, որոնց մի մասը ժամանակագրորեն հնու-
նալով փոխառության ակունքներից դազարել է օտար գիտակցվելուց:
Փոխառության գործընթացում համախ բառն ու նոր հասկացու-
թյունը միասին են փոխառվում, որովհետև միշտ չէ, որ նոր հասկա-
ցություններ արտահայտելու համար լեզուն դիմում է սեփական մի-
ջոցերին: Մեծ մասամբ, հատկապես նոր հասկացության մտար-
ծելու սկզբնական շրջանում լեզուն այդ հասկացության հնա վերց-
նում է և նոր, օտար բառը, հարստացնելով իր բառապաշարը: Եր-
բեմն էլ առանց փոխառելու հասկացությունը վերցվում է միայն այդ
հասկացությունն արտահայտող բառը. այդպիսին են, օրինակ եվրո-
պական լեզուներում առևերևից կատարված մի շարք փոխառություն-
ներ՝ կոլխոզ, իրգա, տայգա, ցառ, մամիկ և այլն: Ընդգծված բառերով
արտահայտված հասկացությունների բովանդակությունը եվրոպացի
կարող է ընկալել, բայց դրանք նրանց իրակառուցյանը բնորոշ երե-
վույթներ չեն, այս կարգի փոխառություններն էլ միշտ ընկալվում են
որպես օտար բառեր: Միշտ չէ, սակայն, որ փոխառությունը կոչված է
նոր հասկացության արտահայտման համար: Հարազատ կամ օտար
այլ բառի առկայության դեպքում էլ, կատարվում են նոր փոխառու-
թյուններ՝ հարստացնելով բառապաշարի համանիշային շարքերը (Հա-
յերենի իրանական փոխառությունների համանիշ բառերին կանդրա-
զառանքը առանձին): Նյութի ամենամանրադիմն բնութանքի ասի հնա-
բազմոր չէ բացատրել, թե ինչու հատկապես լեզուն փոխառել է այս
կամ այն համանիշը: Այս հարցի պատասխանը առավել զգվար է հին
փոխառությունների դեպքում:

Ըստ երևույթին համանիշ բառերի փոխառությունը հնարավոր է
զանոնում այն պատճառով, որ փոխառություն շրջանում փոխառյալ միա-
վորի իմաստային ընդգրկվածությունը չի համընկնում մայրենի լեզ-
վում գործառոց համապատասխան միավորին, այլ կերպ ասած, դրանք
իսկական համանիշներ չեն, առավել ևս նույնանիշեր: Համանիշային
որոշ ներբանյանք. փոխառյալ միավորը ձևոր է բերում նուստագ նը-
կարատե գործածության ընթացքում՝ նոր միջավայրի համապատաս-
խան միավորի ազդեցություն: Քնպես այլ առիթով էլ ենք կրկնելու,
բերենք մեկ օրինակ: ձևերմակ գունանուրը սկզբնապես գործածվում էր
միայն ձիու գույն արտահայտելու համար, հետագայում արդեն ըն-
դարձակելով գործառության ոլորտները, փաստորեն դարձավ օպիտակ
ածականի համանիշը: Փոխառյալ միավորի սկզբնապես նեղ կիրառու-
թյան օրինակներ շատ կան: Այստեղ ինքնբերական առաջադրվում է

փոխառության բազմիմաստության հարցը: Փոխառվում են բոլոր ի-
մասունքներ միանգամից, թե՛ միայն մեկ իմաստը: Առանց օրինակներ
բերելու տրամաբանական պետք է համարել այն, որ փոխառության
գործընթացում փոխառվում են ավելյա բառի ոչ բոլոր իմաստները,
այլ այն (կամ այնպիսիները), որոնք առավել անհրաժեշտ են ավելյա
հասկացությունն արտահայտելու համար: Վերջին հաշվով, բազմիմաս-
տությունը խոչընդոտում է նոր հասկացության ընկալմանը, նաև հա-
զորակցմանը: Ուրեմն պետք է կարծել, որ առավել հեշտ են փոխառ-
վում մեկիմաստ բառերը, իսկ բազմիմաստության դեպքում, նախապես
փոխառվում են համենայն դեպս ոչ բոլոր իմաստները: Բայց տարբեր
լեզուների ընձեռած փաստերը ցույց են տալիս, որ փոխառությունների
համակարգում առկա են նաև բազմիմաստության օրինակներ, այն էլ
բավականին շատ:

Այդպիսի օրինակներ կան հենց մեր բնութան առարկա նյու-
թում, երբեմն նաև փոխառու և փոխառյալ լեզվի իմաստային լրվի
համընկնումներով: Սա չի հակասում նախորդ մեր կերահանգմանը. այդ
իմաստները միանգամից չեն փոխառվել, այլ՝ աստիճանաբար, որը
Նեարավոր է, մանավանդ երկու լեզուների անընդմեջ և սերտ շփու-
մների պայմաններում: Երբեմն փոխառյալ միավորը նոր միջավայրում
իմաստային զարգացման ու փոփոխման ենթարկվելով, ձևոր է բն-
րում բոլորովին նոր որակ, նոր իմաստ, որը չկա փոխառու լեզվում:
Տվյալ դեպքում զա չէ մեզ հետաքրքրողը, այլ այն, որ ոմանք սա ևս
զիտում են որպես փոխառություն, որը մեր կարծիքով ճիշտ չէ:

Ուշազբալ է և այն, որ տարբեր (հատկապես միևնույն լեզվա-
յանքին պատկանող) լեզուներում նկատվում է փոխառյալ միավորի
զարգացման նույն ընթացքն ու աստիճանականությունը: Այսպես հու-
նարենից կատարված առաջին փոխառությունը առկա է հնդկա-
բուդայական շատ լեզուներում. նախնական «կշոբ շափ» միջև
վերջնական «բեզունակություն», շնորհ, տաղանդ» իմաստների միջև
ուսումնասիրողները տեսնում են անցման հետևյալ միջանկյալ աս-
տիճանները 2. տակու կշիւ, տակու ծանրություն՝ հետագայում՝ ոսկի,
կարողություն, 3. կամք, ձգտում, 4. ցանկություն իրագործելու ու-
նակություն⁴⁶: Իրանական փոխառություն համարվող ալլախունմ-ը հա-
յերենում սկզբնապես ունեցել է օտանջվել, շարշարվել», այնուհետև
«աշխատել, գործ անել», այժմ ունի նաև «շատ՝ ստանալ» նշանակու-
թյունը: Այս հասկացությունն արտահայտող բառերը մի շարք լեզու-
ներում դարձյալ ունեն նույն իմաստները: Սա, իհարկե, թեև հետա-

բըրբըրական երևույթ է, բայց բացարձակ կանոն չէ. նման օրինաչափությունների բացահայտումը համեմատական իմաստարանության խնդիրն է:

Փոխառությունների վերաբերող ուսումնասիրություններում հարկ է լինում գործ ունենալ որչա՞ր դասակարգումների հետ, որոնց միջոցով, ըստ հնարավորին, ամբողջական է դառնում նյութի քննությունը: Գոյություն ունեն ամենատարբեր բնույթի դասակարգումներ, սակայն փոխառությունների վերաբերյալ մեզ ծանոթ տեսական գրականության վերլուծությունը թույլ է տալիս կորակացնելու, որ առայժմ փոխառությունների դասակարգումների, այլ կերպ ասած փոխառությունների էական հատկանիշների առանձնացումն ու վերահաման միասնական ու հստակ շափանիշներ չկան: Երբեմն դասակարգումների հիմքում ընկած հատկանիշները միայն օժանդակ դեր են կատարում փոխառությունների խոր ուսումնասիրման գործում՝ իրենց հերթին հիմք հանդիսանալով անորոշ և նույնիսկ սխալ կորահանգումների համար: Օրինակ, Ֆրանսիացի լեզվաբան Պիեր Գիբոյն ուսումնասիրության մեջ⁵⁰ Ֆրանսիերենում օտար բառապաշարի ուսումնասիրության հիմնական նշանակետը բառ-հասկացարյուն-առարկա հարաբերությունն է, որը չի նպաստում օտար բառերի համակարգմանի բնությունը:

Անկախ փոխառությունների ծավալից միշտ առաջ է գալիս օտար միավորը փոխառություն համարելու կամ չհամարելու հարցը: Նման դասակարգումը էլակետային է և սկզբունքային նշանկություն ունի օտար բառաշարի բանական և արժեք միջոց գնահատման գործում: Առայտ, ինչպես նշել ենք, այդ հարցում միասնական ըմբռնում չկա: Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ օտար միավոր ու փոխառություն հասկացությունների սահմանները նույնական չեն. ուստի փոխառություններ չենք համարում հետևյալ դեպքերը.

1. Երբ միավորը համատեքստում հանդիս է գալիս որպես օտար բառ, և արվում է նրա բացատրությունը, մեկնությունը: Այսինքն՝ գործ ունենք ոչ թե փոխառության, այլ օտար բառարանային միավորի հետ:

2. Օտար սխալագիր ձևերը, մանավանդ երբ փոխառու լեզուն գործածում է այդ բառի միշտ ձևը (մեր մատենագրության մեջ հանդիպող ահակ, ապիկամ ճիշտ ձևերի հետ հանդիպում ենք և աֆիկ, ապիմակ սխալագրությունների):

3. Այն կազմությունները, որոնց մեկ բաղադրիչը մայրենի լեզվի ձևույթ է (ան-ուս, սորա-կալ):

4. Համանուն շարքերի այն միավորները, որոնք փոխառու լեզվում հետանալով նախնական իմաստից ձևոր են բերել նոր իմաստ, որը չկա փոխառու լեզվում: Սա մայրենի լեզվի ստեղծած նոր բառ է:

Որոշ վերապահություններ փոխառություններ չպետք է համարենք նաև այն օտար տերմինները, որոնք փոխառու լեզվում գործառում են փոխառու լեզվի տվյալ (հիմնականում չբարձրանվող) հասկացությունները ներկայացնելու համար: Որպես օրինակ իրանական լեզուներից հայերենին անցած բառերից կարելի է նշել դերանդերմապետ-ը, կոդոպետ-ը, փուշպիպետաղաթ-ը, մովզեանս մովպետ-ը և այլն:

Փոխառությունների տարածված դասակարգումներից մեկն էլ այն է, երբ նշանակում են ընդունվում փոխառության գործընթացում և գրանից հետո փոխառյալ միավորների կրած փոփոխությունները, այլ կերպ ասած, երբ հաշվի է առնվում փոխառությունների վիճակը (սաստոս) փոխառու լեզվում՝ բնիկ բառապաշարի համեմատությանը: Փոխառությունների ստատուս անվան տակ Օ. Շախրաջը նկատի ունի ա) փոխառյալ բառերի ղերտը և հանձնախանությունը (գործառական սաստոս), բ) նրանց ձևական հատկանիշների (բերականական, հընչյունական ուղղագրական) համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը փոխառու լեզվի բառերի ձևավորվածության հետ (ձևական սաստոս)⁵¹: Ձևական սաստոսը, փաստորեն, օտար հնչյունակազմի պահպանման կամ փոփոխության հարցն է: Փոխառյալ բառապաշարի, մեջ, իբր, առանձնանում են այնպիսի բառեր, որոնք հարազատորեն են պահել մայրենի լեզվի հնչյունակազմը՝ չենթարկվելով նոր միջավայրի ազդեցությանը, այն դեպքում, երբ նույն լեզվից կատարված մի շարք փոխառություններ ձևոր են բերում նոր ձևավորվածություն՝ հարազատանալով փոխառու լեզվի բառապաշարին: Նման դասակարգումը արժեքավորվում է հատկապես այն ժամանակ, երբ բացատրվում են (որը միշտ չէ, որ հնարավոր է) նոր միջավայրի օտար բառերի հնչյունակազմի փոփոխություններին օժանդակող կամ խոչընդոտող հարաբերություններն ու պատճառները: Բնական է, որ ինչքան բառի արտաբերի, հնչյունական կազմը փոփոխության է ենթարկվել նոր միջավայրում ու նոր պայմաններում, այդքան նա ձևոր է բերել յուրացման բարձր աստիճան: Թեև, ինչպես կտեսնենք, միշտ չէ, որ ձևական և գործառական ստատուսներ ուղիղ համեմատական են. օրինակ, անդլերենում լատիներենից և հունարենից փոխառված մի

շարք բառեր (chorus, museum...) թեև պահպանել են փոխառու լեզվի բնորոշ վերջավորությունները, այդուհանդերձ ունեն համախոսկան կիրառություն և գործառնական լայն տարածում, կան նաև հակառակ օրինակները: Ազգարանական գրականության մեջ տարբերակվում են հստակաձև և ճիստաձև բառեր հասկացությունները՝ կապված օտար վերջավորությունների հետ: Անգլ. asbestos, creterion, maximum... բառերը չհատված են, որովհետև ստուգաբանորեն գրանցվել են վերջավորությունները հունական կամ լատինական են, իսկ anarchy (հուն. ἀναρχία), emergency (լատ. emergenti) հատված բառեր են, որովհետև թեև պահված են օտար արմատը (հնդեվր) բայց փոփոխված են վերջավորությունները):

Հայերենի իրանական փոխառությունները առատ նյութ չեն տալիս ձևական հատկանիշներով դասակարգման համար, այդուհանդերձ որոշ հասկանիշներ (հնչյունախմբեր) կարելի է առանձնացնել, որոնք հարազատ են փոխառու լեզվին՝ գրանից են նր. [սչ] > չև հնչյունախումբը (հրովարտակ, հրաման, աշխարհ, աշխտ...) նաև ակ վերջավորությունը (թեև միշտ չէ, որ ակ-ով վերջացող բառերը անպայման իրանական են):

Փոխառությունների խորքային քննությանը մեծապես նպաստում է ըստ գործառնական ստատուսի կատարված առանձնացում-դասակարգումը: Ինչպես արդեն ասել ենք, հենց նման դասակարգումն է նպաստում օտար բառերի որակական ղեկ, իրական այն հարաբերությունների բացահայտմանը, որոնք, ակա են օտար և մարենի բառապաշարի միջև: Այս դասակարգման անհրաժեշտությունը ի հայտ է գալիս հատկապես փոխառությունների ծավալային և ժամանակային մեծ ընդգրկման ժամանակ: Հարուստ նյութի զեպքում կարելի է կատարել բազմատիճան դասակարգում: Այսինքն՝ առանձնացնել ոչ միայն նվազ համախոսկան ու համախոսկան բառերը, այլև վերջինիս մեջ կատարել նոր դասակարգումներ՝ ըստ կիրառության ոլորտների, իմաստների փոփոխության, նոր բառեր կազմելու հնարավորության և այլն: Այսպիսի պատմության որոշ հարցեր լուսարանելիս, առաջ է գալիս նաև փոխառությունները ըստ սկզբնաղբյուրների դասակարգելու պահանջը: Այս դասակարգման տվյալները ինքնին տալիս են ներլեզվական շատ հարցերի պատասխաններ, բացահայտում են բառապաշարի զարգացման ակունքներն ու միտումները, այլև փոխառության ժամանակաշրջանի գործոնների հաշվառումով, նպաստում են արտալեզվական, տվյալ զեպքերում այդ լեզուները կրող օտոլուրդների

պատմության որոշ հարցերի լուսարանմանը, բանի որ փոխառությունը նաև պատմությանը վերաբերող երևույթ է: Նման դասակարգումները իրագործելի և սխառներից համեմատաբար զերծ են այն զեպքում, երբ հայտնի են փոխառու լեզվի տվյալները: Սակայն հաճախ այդ տրվյալների առկայությունը կարող է փոխառության աղբյուրի որոշման միջոց պատկերը շտալ, մանավանդ երբ առկա է միջանկյալ աղբյուրի հնարավորությունը: Որինակ, հայերենի իրանական փոխառությունների մի մասը ավանդված էր իրանական լեզուներում (հնչյունական որոշ փոփոխություններ տվյալ զեպքում է կանա շին և կարող են գիտվել հայերենում կատարված ձևական փոփոխությունների արգասիք): Բայց ուսումնասիրողը անվերապահորեն չի կարող գրանք համարել հին իրանական լեզուներից կատարված փոխառություն՝ անուսուխով իրանական լեզուների միջին փուլը: Բուն կամ միջանկյալ սկզբնաղբյուրների ըստ հնարավորին տարբերակումը, ինչ խոսք, ավելի կարժեքավորի փոխառություններին վերաբերող այս կամ այն աշխատանքը: Ի զեպ, միջանկյալ օղակ կարող են լինել ոչ միայն միևնույն լեզվի տարբեր փուլերն ու վիճակները, այլև այլ լեզուներ: Օրինակ, իրանական որոշ բառեր հայերենին են անցել ասորերենի միջոցով կամ հակառակը, իսկ արդի հայերենի ներուպական բունների զգալի մասը տարածված է որսերենի միջոցով):

Փոխառությունների ուսումնասիրության ժամանակ շրջանառության մեջ են գրվում նաև այլևայլ կարգի դասակարգումներ՝ ըստ կիրառության ոլորտների, իմաստային զառնարի, խոսքի մասերի, իմաստափոխության զրևերումների և այլն: Պարտադիր և նպատակահարմար էլ չէ փոխառություններին վերաբերող այս կամ այն աշխատանքում կատարել բոլոր հնարավոր դասակարգումները, դա կհանգեցնի ավելորդ կրկնությունների, եզրահանգումների տարածության: Կարևորը նյութից բխող էական հատկանիշների առանձնացումն է և այնպիսի դասակարգումների կիրառումը, որը պահանջում է ուսումնասիրության նպատակը:

Պ Լ Ո Ւ Ն Ա

ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐ: ՓՈՆԵՍՈՒՄՔՈՒՆԵՐԻ ՍՎԶՐՆԱԳՅՈՒՐՆԵՐԻ
ՀԱՐՅՐ

ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՑ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ առանձին խումբ են կազմում իրանական լեզուները, որոնք ափելի մաս լինելով հնդկերենին, կազմում են հնդ-իրանական (կամ արիական) շյուզը: Իրանական լեզուների գիտական համակարգմանի ուսումնասիրությունը սկսում է XIX դ. վերջից, XX դ. սկզբից: Հետագայում իրանական նոր լեզուների հայտնաբերման, լեզվական նոր տվյալների ուսումնասիրությունը շարունակվում են իրանագիտության շրջանակները, կատարվում մի շարք էական նշագրումներ: Ափելի հասակ տեսք է ստանում իրանական լեզուների գիտական պատկերագրումը, որը էական է այդ լեզուների պատմության, նրանց պատմական զարգացման տարրեր փուլերի ընդհանրությունների ու օրինաչափությունների բացահայտման համար:

Գիտության մեջ ընդունված է իրանական լեզուները դասակարգել ըստ զարգացման 3 փուլերի՝ հին, միջին՝ և նոր: Այս դասակարգումը պայմանական է, և ինչպես նկատում են մի շարք ուսումնասիրողներ, ափելի շատ հնեված է պատմական, մշակութային, ժամանակաշրջանին, բան լեզվական հատկանիշների վրա: Այս շրջանաբաժանման մեջ լեզվական սահմանագծումները որոշակիորեն ուրվագծվում են միայն հին իրանական և մյուս (միջին և նոր իրանական) լեզուների միջև: Իսկ միջին և նոր իրանական լեզուների սահմանազատման գործոնները փաստորեն բացարձակ ժամանակագրային են. նորը ներառում է բոլոր կենդանի լեզուները, միջինը՝ նից որոշակիորեն տարրերով մահացած լեզուները²:

Այժմ համատեսակի ներկայացնելը իրանական լեզուները ըստ տարրեր փուլերի, առաջին ուշադրություն դարձնելով այն լեզուներին, որոնք ազերսներ ունեն հայերենի հետ:

Հին իրանական փուլը ընդգրկում է մ.թ.ա. II հազարամյակից մինչև մ.թ.ա. IV—III դդ.: Ենթադրվում է, որ մ.թ.ա. II հազարամյակում տեղի է ունեցել արիական լեզվական ընդհանրության բայթայթումը և իրանական լեզուների առջատումը (ՕԿՂ, 1979, 28):

Վաղնշական շրջանի իրանական լեզուների մասին գիտությունը հայտնի փաստերը ափելի բան սույ էն: Կարելի է վկայակոչել միայն համեմատական լեզվաբանության առանձին տվյալներ, որոնցում սակայն ամբողջական պատկերացում չենք կարող կազմել իրանական լեզուների հնագույն վիճակի մասին (հնագույն վիճակ ստելով նկատի ունենք հնդիրանական ընդհանրության բուրյայումից մինչև հին իրանական լեզուների առաջին գրավոր հուշարձանները ընկած ժամանակահատվածը): Այդ ժամանակաշրջանը ընդգրկում է մտ տասը դար. ժամանակաշրջան, երբ տեղի էին ունենում տարբեր ցեղերի ու ժողովուրդների տեղաշարժեր ու շփումներ, իսկ իրանական լեզուները (բարբառները) բաժանված լինելով արիական հիմք-լեզվից, կրում էին զանազան հնչյունական, քերականական իրանական լեզվի զոյությունը: Ասիայից բացառելով միասնական իրանական լեզվի զոյությունը: Առանձին, հնարավոր չէ վեր հանել այդ շրջանի ընդհանուր իրանական կամ նախիրանական լեզվական համակարգը. կարելի է խոսել միայն առանձին երևույթների մասին, որոնք օրրկն հնարանություններ առկա են հին իրանական գրավոր աղանղված, մասամբ նաև ափելի ուշ շրջանի լեզուներում:

Ասենք, որ հին իրանական փուլ և հին իրանական լեզուներ հասկացությունները համարժեք չեն ինչպես ժամանակագրորեն, այնպես էլ լեզվական հատկանիշներով: Հին իրանական լեզուներից յուրաքանչյուրն արդեն գիտությանը հայտնի որոշակի համակարգ է: Դրանք ներկայանում են իրենց առանձնահատկություններով ու ընդհանրություններով:

1. Ավեստայի լեզուն (ավեստերեն)

Ավեստան կրոնական տեքստերի հավաքածու է, որն իր մեջ ներառում է նաև գիտություն, իրավական նորմեր, լեզենդներ և այլն: Այդ տեքստերի ծագման ու արձանագրման որոշումը փաստորեն անհնար է, բանի որ Ավեստայի տեքստերը ներկայացնում են տարբեր հնար է, բանի որ Ավեստայի տեքստերը ներկայացնում են տարբեր

գործը, թերևս նաև իրանական աշխարհի տարբեր տարածքները: Ազիս-
տայի հաստատվածները երկար ժամանակ հաջորդվում էին բանավոր: Որոշ
հաստատվածներ առաջին անգամ գրի են առվել թերևս մ.թ. առաջին դա-
րերում:

Սասանյանների օրոք, երբ գրադաշտականությունը հայտարար-
վում է Իրանի պաշտոնական կրոն, կատարվում է ալեխտայի կարգա-
վորում (կողմնակցացում): Նման կարգավորում էղել է թերևս և առաջ,
սակայն կարգավորման ժամանակի և տեղի հարցը առայսօր հստակո-
րեն որոշված չէ: Սասանյանների ժամանակ ստեղծվում է հատուկ այ-
բուրեն՝ այսպես կոչված Վարջայի պահպանողների հիման վրա, որը
տարբերվում է վաղ սասանյան գրություններից: Այդ գրությամբ կազ-
մված են սրտերի ժողովածուն ստացավ apastāg, Յ. պրս. avistā
անունը: Միջին պարսկերենով տրվում են ալեխտայի տեքստերի թարգ-
մանությունները, մեկնությունները (zand): Հնուագայում ուսումնա-
սիրողները կոչվին թուլլ է տրվում այս նրկու տերմինների ոչ ճիշտ
գործածություն, և ալեխտա, ալեխտերենի փոխարեն շրջանառության
մեջ էր գրվում զենդ ալեխտա և զենդերեն հասկացությունները:

Թեև ալեխտայի կարգավորումը և պաշտոնական գործածությունը,
ինչպես առանձին, տեղի է ունենում սասանյանների օրոք, այսինքն՝
միջին իրանական լեզվափոխում, սակայն ալեխտան որպես համակարգ
ներկայացնում է հին իրանական փուլը, նույնիսկ լեզվական առանձին
տարրեր, կառուց կապակցություններ հանդում են հնդիրանական հան-
րուկան շրջանին: Իրանագիտության և հասկապես ալեխտայի տեքս-
տերի ուսումնասիրության նպատակների շնորհիվ, այժմ որոշակիորեն
հայտնի են ալեխտայի բերականական համակարգի հիմնական գծերը,
հին պարսկերենի հետ ունեցած ընդհանրություններն ու յուրահատ-
կությունները:

Ինչ վերաբերում է ալեխտերենից տնցած հայերեն փոխառու-
թյուններին, ապա որոշակի բան դժվար է ասել: Փոխառությունների մեջ,
իհարկե կան բառեր՝ հասկապես գրադաշտական կրոնին վերաբերող,
որոնք բնորոշ են ալեխտերենին, բայց անմիջապես ալեխտերենից
անցնելու հանգամանքը անստույգ էլ է:

2. Հին պարսկերեն

Հին պարսկերենը գրավոր պահպանված լեզուներից է: Գրավոր
վիճակը ներկայացնում են արեմենյան դինաստիայի (559—331 մ.թ.ա.)
սեպագիր արձանագրությունները: Հիմնականները Գարեհի (522—486),
50

Փարսբուսի (486—465 մ.թ.ա.), Արտաքսերքես 3-րդի (359—338)
արձանագրություններն են:

Ինչպես նկատված է, թեև հին պարսկերեն սեպագիր արձանա-
գրությունների նյութը բանականության վերջում է ալեխտայի լեզվական
նյութին, սակայն ուսումնասիրության համար առավել արժեք է ներ-
կայացնում, քանի որ ունի համեմատաբար ավելի շնորհիտ թվագրու-
թյուն, տեղագրություն և առավել հավաստի է ներկայացնում որոշակի
տարածքի որոշակի լեզվի իրական վիճակը:

Հին պարսկերենի սեպագիր հուշարձաններն են Բեհիսթունի, Նագշե
Ռոստամի, Շոշի (Սուզ), Պերսեպոլիսի արձանագրությունները: Սեպա-
գիր արձանագրություն է գտնվել նաև Իտալիայում, որը աննայն
հավանականությամբ տեղափոխված արձանագրություն է (OIRA, 1979,
237): Պատմական, լեզվական տեղեկությունների հաջորդման տեսա-
կետից արժեքավոր է հատկապես Բեհիսթունյան արձանագրությունը,
որը մեծ ծավալից բացի նաև հուսելու է՝ գրված հին պարսկերենով,
էլամերենով և արբաղերենով:

Երկու խոսք հին պարսկերեն սեպագրերի բնույթի մասին: Այդ
սեպագիր համակարգը հատուկ մշակված չէր, չունեք ալեմբղություններ
ու նախօրինակ և շատերին էլ մատչելի չի եղել: Ենթադրվում է, որ
նույնիսկ Գարեհ թագավորը չէր կարող կարդալ իր գործերը փառա-
բանող արձանագրությունները, քանի որ սեպագրերը էղել են խիստ
պայմանական նշաններ, որոնք իմացել են միայն հատուկենա մար-
դիվ թերևս միայն փորագրիչները: Արեմենյան թագավորության ան-
կումով դադարեց և արեմենյան գրերի օգտագործումը, մնացին միայն
եղած սեպագիր արձանագրությունները, որոնք ազդեցություն թողեցին
նաև հետագա գրությունների վրա: Սակայն գիտության համար ար-
ժեքավորվում է ոչ թե սեպագրերի բնույթը, այլ այդ սեպագրերի մի-
ջոցով մեզ հասած պատմական ու լեզվական նյութը: Այդ նյութի ու-
սումնասիրությամբ վեր հանվեցին հին պարսկերենի հիմնական օրի-
նալագությունները: (Հին պարսկերենի իրավիճակին վերաբերող շատ
հարցեր այսօր էլ լուծված չեն. օրինակ, թեև հին պարսկերենի բե-
րականություն և ուղղագրության ուսումնասիրությամբ որոշ հետա-
զոտողներ գտնում են, որ այն արեմենյան առաջին արձանագրություն-
ներից շատ առաջ գրական լեզու էր, սակայն սա միայն կարելի է հա-
մարել որպես վարկած: Պարզ չէ նաև այն, թե հին պարսկերենը եղել է
խոսակցական, թե՞ սոցիալական վերնախավի լեզու):

Նշենք հին պարսկերենի հնչյունական որոշ առանձնահատկություններ, որոնք այս կամ այն ձևով աղբրավելու են մեր ուսումնասիրության մեջ արժարժեղ հարցերին:

Հին պարսկերենի հնչյունական համակարգը հետևյալն է. կարճ ձայնավորներ 3, 4, 5, երկար ձայնավորներ՝ 3, 4, 5, 6, ձայնավոր 7: Չայնավորական համակարգը նույնական է ավեստերենի հետ: Բազմայնական համակարգը ներկայանում է հետևյալ հնչյուններով.

- 1), 5, 6, m
- 1, 6, 7, n
- 8, j
- k, 9, x
- s, 5, c, z
- r, l, y, v, h

Բոլոր բազմայնիկը համապատասխանում են ավեստերենին՝ հետևյալ բացառություններով.

(1)-ավեստերեն (X¹) հմտ. vinda. farasān (հատուկ անուն է)-x¹ara 6 d- (իր. *z-ից) ավես.-z: dasta, ազ. zaste: (d-իր.*d-ից-ազ. d (darga-ազ. darga տերիորա: Ավեստերենի հետ համընկնող հարս. z-ն հանդիպում է միայն օտար տեղանուններում և ենթադրյալ մարական տարրերում: հարս. 9-ազ. s: 9ard-ազ. sar6d օտարիչ:

Կան նաև մի քանի ոչ կական հնչյունական տարրերություններ (ան՝ս ՕՄԳ, 1979, 243—244):

1.-հնչյունը հին պարսկերենում համախական չէ (արիական փուլում հեղ. 1 արտահայտվում էր 7-ով: Հին պարսկական արձանագրություններում առկա է օտար մի քանի բառերում. Labnana (կերանան), Haldita (հայ անուն է) և այլն:

Փաստերը թույլ են տալիս որոշ աղբյուրներ տեսնելու հին հայերենի և հին պարսկերենի միջև. առաջինը երկու լեզուների տրիպարանական բնղձանրությունն է: Հին պարսկերենին բնորոշ կցականությունն ու քեթականությունը՝ վերջինիս աստիճանական թուլացման միտումով, բնորոշ էր նաև հայերենին, Երկրորդը՝ երկու լեզուների բառապաշարային շատ տարրերի բնղձանրությունն է, որը դրսևորվում է ինչպես բնղձանուր հնղեթուպական բառաշարում, այնպես էլ հայերենում հին պարսկերեն (բացառված չէ և հակառակը) բառերի օակայությունը:

Արձանական արձանագրությունները մեզ համար արժեքավոր են նաև հայերի և Հայաստանի մասին հաղորդող տեղեկություններով: Այդպիսի տեղեկություններ կան հատկապես Դարեհի արձանագրություն-

ներում: Նվաճած երկրների մեջ Դարեհը նշում և Հայաստանը՝ Ար-մինան (§ 6): Հայ անձանուններից են Գաղարշը (§ 26), Արթա, Հալդիտա (§ 49, 52), տեղանուններից՝ Զուլա ավանը (§ 26), Տիգրա (§ 27), Ուլամա (§ 28), Աուտիարա գավառ (§ 30): Սրանք պատմական հավասար տեղեկություններ են, որ վերաբերում են մ.թ.ա VI—V դդ.:

Ուսումնասիրողները համակարծիք են հին պարսկական արձանագրությունների ուժի՝ ուրարտերենից կրած մեծ ազդեցության հարցում (աուրական կամ բարելական ազդեցություններ ժխտվում են): Իրեն նախորդող ուրարտական արձանագրություններից վերցրել է կառուցվածքի հենքը, խոսքային բանաձևերը, կերպավորման բացալայությունը, զեղարվեստական արտահայտչությունները, մակրիբների օակայ գործածությունը: Սա նույնպես երկու ժողովուրդների պայտիկների և հայերի վաղնջական աղիւրների մի վկայություն է:

Այսպեսով ավարտենք հին պարսկերենի վերաբերյալ բնղձանուր գիտողությունները, մանավանդ որ այդ լեզվի որոշ իրողություններ մասին խոսելու ենք նաև հաջորդ բաժնում, նաև բոս անհրաժեշտության հրնթացս այլ հարցերի բննության:

3. Մարերեն և սակերեն

Այս լեզուներով զրավոր հուշարձաններ չեն եղել: Դրանց վերաբերյալ իրանագիտության ալյալները չափազանց սուղ են և սահմանափակվում են միայն մի քանի հատուկ անուններում պահպանված տարրերով, որոնց միջոցով ուսումնասիրողները փորձում են բոս հնարավորին վերականգնել և ներկայացնել այդ լեզուների հիմնական առանձնահատկությունները:

Մարերենը հին իրանական ցեղերից մեկի՝ մարերի լեզուն է: Ներկայիս Իրանի հյուսիս-արևմտյան մասում մ.թ.ա. VIII—VII դդ. մարերը ունեին հզոր թագավորություն: Մարական մի քանի հատուկ ա-նուններ ու ցեղանուններ պահպանել են ասորական, հունական աղբյուրները, հին պարսկական արձանագրությունները: Մարերենի լեզվական երևույթների վերհանման գործը դրաղեցրել է նշանավոր շատ արևելագետների, առանձնապես մեծ է սովետական գիտնական Ի. Դյակոնովի վաստակը: Մարերի պատմության մի շարք կնձոտտ հարցերի լուսարձանման հետ մեկտեղ, գիտնականը փորձում է ներկայացնել մարերենի բառային կազմը, հնչյունական որոշ յուրահատկություններ:

Կազմելով հնդեվրոպական վերականգնիված և իրանական մի շարք լեզուների համապատասխան հնչյուլների համադրական աղյուսակ (էջ 68), Դյանհոնդի գտնում է, որ հնչյունական կազմի տեսակետից մարերենը զգալիորեն տարբերվում է հին պարսկերենից՝ մերձենալով ավեստերենին և ապա՝ սողգրերենին ու խորեզմերենին: Նման զուգահեռների վրա հիմնված կորահանգումները թևեկ կարող են և վիճելի լինել, սակայն արժեքավորվում են նաև այդ ցեղերի ու լեզուների ընդհանրության աստիճանների, մի շարք այլ հարցերի բացահայտման տեսակետներից:

Արքին շրջանում աշխուժանում է հույց լեզվում գործառուղ իրանական տարրի մեջ մարական շերտի տարրահամման միտումը. թե որքանով են արդարանում այդ փաստարկումները, առայժմ զո՞վար է ասել, նախ և առաջ՝ իրանական լեզուների համակարգում մարական նյութի շտարբերակվածության, ավելի ճիշտ՝ բիշ հայտնի լինելու պատճառով: Իհարկե, այն հանգամանքը, որ հայերը և մարերը ապրել են հարևանությամբ, ինչպես նաև մարերի վերարերջույ մեր մտականագրության ու բանահյուսության մեջ ավանդված տեղեկությունները հիմք են տալիս ենթադրելու նաև հայերենում մարական ազդեցության հնարավորությանը: Ուսումնասիրողներն էլ, ինչպես կտեսնեք բիշ հետո, հենվում են հիմնականում հայերենում իրանական տարրի զոսերտղ առանձնահատկություններից՝ բացահայտելու այլ տարրի մարական շերտը:

Սակերենը կամ սկյութերենը իրանալեզու սակերի (սկյութների) լեզուն է: Այդ ցեղերը մ.թ.ա. I հազարամյակի կեսերին ընդգրկում էին մի հսկայածավալ տարածք՝ Մեծ ժողից մինչև Չինաստանի սահմանները: Արևելքում (Արևելյան Փուրքեստան) գտնված են մեծ քանակությամբ փաստաթղթեր (մ.թ. VI—X դդ.), որոնք որոշ տեղեկություններ են տալիս սակերների վաղնշական վիճակի մասին, իսկ արևմուտքում (Սև և Ազովի ծովերի առափնյա շրջան, հյուսիսային Կովկաս, սակերի հետագա՝ ալանների) գոյությունը հաստատում են այդ տարածքի որոշ տեղանուններ, հույն և լատին մի շարք հնդեվրոպերի հազորդումներ: Արդի իրանական լեզուներից օտերենը նույնպես հաստատում է այդ ցեղերի գոյությունը Հյուսիսային Կովկասում: Ալանների մասին կարևոր են նաև հայ մասունագրության աղյալները (հիշենք թեկուզ Արտաշեսի և Սաթենիկի մասին զոգարիկ լեզնիցը):

Սկյութերների (սակերների) ուսումնասիրությամբ զբաղվել են այնպիսի նշանավոր արևելագետներ, ինչպիսիք են Միլեն, Թեյկենիստըր,

Հենինգը և այլք: Այդ բնագավառի նվաճումները սակայն մտերեն կապվում են սովետական արևելագետ Վ. Արևաի անվան հետ: Օտար տարրեր աղյուլներում, առեղանմաններում ու ցեղանուններում պահպանված սկյութական տարրի հետազոտությանը, նա առանձնացրել և կազմել է սկյութների բառացանկը (մոտ 200 հիմք)՝ դրա հիման վրա ներկայացնելով այդ լեզվի հնչյունական-ձևաբանական, բառակազմական որոշ իրողություններ: Բառացանկի համադրումը իրանական լեզուների հետ, վեր է հանում զգալի ընդհանրություններ. միաժամանակ, ինչպես նշում է Արևանը, սկյութական բառապաշարը ենթադրում է մի շարք յուրօրինակ տարրահամմանները սղասականա իրանական լեզուներից՝ ավեստերենից ու պարսկերենից¹⁰:

բ) ՄԻՋՆԵ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՒԼ (Մ.թ.Ա. IV—III—Մ.թ. VIII—X դդ.)

Այս փուլի ժամանակագրային սահմանները համընկնում են Իրանի և իրանական ժողովուրդների պատմության և մշակույթի հետագա ընթացքը պայմանավորող երկու կարևոր իրադարձությունների հետ. առաջինը Ա. Մակեդոնացու արևելյան արշավանքն էր, արևմենյան տիրապետության տապալումը և հունական աննախընթաց ազդեցությունը իրանական ժողովուրդների կյանքում, վերջինը՝ արաբների կողմից Իրանի և Միջին Ասիայի նվաճումը, այդ երկրների ընդգրկումը արաբական խալիֆայի կազմում և իրանական ժողովուրդների իսլամացումը:

Այս փուլում ուժեղանում է իրանական լեզուների տարբերակվածությունը, որն ավելի ակնբախողին արտահայտվում էր ժամանակագրային սահմանների վերջում, երբ առկա էին հնչյունական, ձևաբանական- շարահյուսական ցայտուն տարբերություններ գրականոց մի շարք լեզուներ ու բարբառներ: Ինչպես նկատում է Ի. Օրանսկին, արդեն մ.թ. 6-րդ դարում սողգիացիին կամ խորեզմացին իրենց լեզվով լեին կարող բացատրվել իրանական սարահարթում պարսկերեն կամ պարսկերեն խոսողների հետ¹¹:

Միջին իրանական փուլում ավելի էին հստականում այն տարբերակիչ հատկանիշները, որոնք բնութագրում են, այսպես կոչված, արևմուտքում և արևելյան իրանական լեզուները:

1. Միջին պարսկերեն

Արևմտյան իրանական լեզուներից է: Ինչպես ցույց է տալիս անվանումը, ներկայացնում է պարսկերեն լեզվի միջին փուլը, դարբաց-

ման միջին ստորինը: Միջին պարսիկները եսխապեն զործառում էր Իրանի հարավ-արևմտյան շրջաններում, որը արեմնկանների՝ հին պարսիկների սեպագիր արձանագրությունների ստեղծողների հայրենիքն էր: Միջին պարսիկները էր հիմնական դժերով ներկայանում է որպես հին պարսիկների շարունակություն: Ժամանակի ընթացքում ավելի ընդարձակվում են միջին պարսիկների տարածական օտճանները՝ ներառելով նաև հյուսիսային և արևելյան շրջանները: Այդ լեզվի տարածքային ու զործառական ուղղությունից ամենաընդգրկուն ժամանակահատվածը մ.թ. 3—7-րդ դարերն էին, ավելի կոնկրետ 224—651 թվականները, այսինքն՝ սասանյանների ղեկավարած ժամանակաշրջանը, երբ այդ լեզուն հանդես էր գալիս որպես պետության և զբաղաշարժական կրօնի պաշտոնական լեզու:

Միջին պարսիկների զարգացման ընթացքը ուսումնասիրողները բաժանում են Երկու փուլի. ա) վաղ (արշակունյաց) և բ) ուշ (սասանյան): Ուշ շրջանի հիմնական հնչյունական ստանձնահատկությունները զրոհարվում են միջին և ետմայնավորային դիրքերում խուլների ձայննշագմամբ (նույն դիրքում <Ճ>, <Վ>, <Յ>, բառակազմում <Ղ> անցմամբ (ՕՊԳ 1981, 7):

Իրանագիտական գրականության մեջ հաճախ միջին պարսիկներն տերմինի փոխարեն օգտագործվում է պահլավերեն տերմինը. տերմինների այս անհաստատությունը երբեմն կարող է որոշ շփոթություն առաջացնել իրանական, հասկանալի միջին իրանական լեզուների իրողությունները գնահատելիս, մասնավորապես որ պահլավերեն (pahlavi) տերմինը ստուգաբանորեն նշանակում է պարսիկներն, որը զգալապես տարբերվում է միջին պարսիկներից, և պարթև ցեղերն էլ նույնական չէին միջին պարսիկները կրող ցեղերի հետ: Իրենք՝ միջին պարսիկներն էլ կողոնքը, իրենց լեզուն անվանում էին pārsīg (pārsik): Հետագայում X—XI դդ. այդ տերմինը արաբացված fārsī ձևով կիրառվում է ամբողջովում է նոր պարսիկների համար, իսկ միջին պարսիկներին՝ վերջինիս հետ շփոթելու համար տրվում է pahlavi անունը (ՕՊԳ, 1981, 7): Մեր աշխատանքում օգտագործում ենք միջին պարսիկներն տերմինը, իսկ պահլավերեն՝ միայն ուրիշ հնդիրանկներից կատարված հոլանդերի ժամանակ, եթե հեղինակը կիրառել է այդ տերմինը:

Միջին պարսիկների ուսումնասիրությունը, որ կարելի է բավարար համարել, հենվում է բավարժեցված գրականության ընձեռած տվյալների վրա: Նախատեսանյան շրջանի միջին պարսիկների լեզվական իրողությունների մասին առաջին և միակ (թվեալ շափազանց աղտո) տեղե-

կությունները տալիս են մ.թ.ա. երկրորդ հարյուրամյակից հասած գրամները: Սասանյան շրջանից՝ Արտաշիր 1-ի (224—241), Շապուհ 1-ի (241—272), Ներսեհի (293—303), Շապուհ 2-րդի (309—379), արձանագրությունները: Գրանցից Արտաշիրի և Շապուհ Առաջինի արձանագրությունները եռակիցու են՝ միջին պարսիկերեն, պարթևերեն, հունարեն: Մեղ է հասել նաև աշխարհիկ ու կրոնական բնույթի, հարուստ գրականություն, որը ծավալուն էլույթ է տալիս միջին պարսիկերենի ուսումնասիրության համար: Կրոնական գրականությունից նշենք Բունդահշեր թաշխարհաստեղծում, որ պարունակում է 13000 բառ: Արտաշիրաֆ նամակը (մոտ 9000 բառ): Աշխարհիկ գրականությունից՝ հիշատակել են Քարնամակի Արտաշիրի պապական «Արտաշիրի պապականի զործերը» (5000 բառ): Այս գիրքը պատմում է պարթև արշակունիների ղեկավարած ինքնատիպի անկման և սասանյան իշխանության հաստատման մասին, իրադարձություններ, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ծանրանում են նաև մեր պատմության հետ:

Իր ավելուով, ժամանակի իրանական նորմերի ու հասարակական կյանքի ալիքայի կողմերի ներկայացման անսակեից ուշագրավ է հատկապես Մաալան հազար դատաստանաց գիրքը, որ գիտության մեջ հայտնի է Սասանյան դատաստանագիրք անունով¹³:

Միջին պարսիկերենի հուշարձանները ներկայանում են երկու տարրերի գրություններ՝ պահլավական և մանիթեական: Առաջինի հիմքում ընկած է արամեական գրության տարբերակներից մեկը: Այդ այբուբենը սկզբնապես ընդգրկում էր 22 նշան: Գրաբ ժամանակի ընթացքում զգալի փոփոխություններ են կրում և արդեն, այսպես կոչված, «գրքային պահլավերենում», այդ նշանների թիվը հասնում է 15-ի: Միջին պարսիկերենում առանձին նշաններ կապին միայն բաղաձայնների և երկար ձայնավորների համար, կից՝ ձայնավորները, բացառությամբ սկզբնական դիրքի, հիմնականում էլ են նշվում: Գրությունը արեց ձայն էր: Ուշ շրջանում հանդիպում է եւս ուղղահայաց գրություն: Պահլավական գրությունը հարուստ էր զարգափարագրերով: Բազմաթիվ բառեր ստանալիս ընթերցանությունը կհասկացվելիս որպես արամեերեն, սակայն արամեական այդ տարրերը հանդես են գալիս որպես զարգափարագրեր, այլ կերպ սասած, դրանք տառերով չէին կարգացվում, այլ ներկայանում էին որպես ամբողջական նշաններ, որոնք ընթերցանություն ընթացքում մերեմայրերն փոխվում էին մայրենի լեզվի համարպատասխան բառերին:

Մանիթեական գրության հիմքը գործյալ արձաններն է (պալմիր-

յան տարրերակ): Մրանք զերծ են գաղափարագրերից: Գրության այս առանձնահատկությունը՝ բավական շատ ձևազարդի առկայությամբ հնարավորություն տվեց միջին պարսկերենի լեզվական մի շարք իրողությունների բացահայտմանը, մի բան, որ զգժար է պահպանված կրոնական բնույթի է: Այն գիտությանը հայտնի դարձավ XIX դ. վերջերից՝ Ռուրճանի հուշարձանների հայտնագործմամբ ու ուսումնասիրությամբ:

2. Պարսերեն

Մ.թ.ա. առաջին հազարամյակում տարածված էր Միջին Ասիայի հարավային շրջաններում, հորասանում և Իրանական սարահարթի հյուսիսային մասի մի շարք շրջաններում: Արեմենյանների օրոք պարսկերենի հայրենիքը ընդգրկված էր իրանական (արեմենյան) թագավորության կազմում: Պարսկերենը արևմտաիրանական խմբի լեզուներից է (Միջին պարսկերենը հարավ-արևմտյան, իսկ պարսկերենը հյուսիս-արևմտյան խումբն են ներկայացնում): Քնդուտ պարսկերենի ու պարսկերենի մասին հիշատակություններ կան վաղնջական շրջանից, սակայն այդ լեզվի հին վիճակի մասին դիտությունը որևէ փաստ չունի: Արեմենյան շրջանից պարսկական հուշարձաններ չեն մնացել: Ա. Մակեդոնացու արևելյան արշավանքներից հետո՝ Մեկնեզյանների ժամանակաշրջանում, այդ նահանգներում պաշտոնական լեզուն հունարենն էր: Այսօր պարսկերենին վերաբերող գիտությունը հայտնի փաստերը ներկայացնում են այդ լեզվի միջին փուլը: Այդ է պատճառը, որ իրանագիտական գրականության մեջ պարսկերենը դիտվում է ուսումնասիրվում է որպես միջին իրանական լեզու:

Պարսկերենի պետական ինքնուրույնության շրջանը մ.թ.ա. 250—մ.թ. 224 թվականներն են: Արշավանքների հիմնադրի Աքեմենդ պարսար է սկսում սելևկյանների դեմ, իսկ նրա հաջորդ Տրդատը Պարսկերստանը և Արգանիան ազատարելով սելևկյաններից, ստեղծում է հզոր պարսկական պետություն՝ ընդարձակված սահմաններով՝ ներառելով Մարաստանը, Ասորգասականը, Էլամը, Միջագետքի մի մասը, Հայաստանը: Պարսկական թագավորությունը գոյություն ունեցավ 476 տարի, իր տեղը զիջելով Իրանում պետական և բազաբական ասպարեզ իրավ սասանյան իշխանությանը: Բնականաբար պարսկերենից մեզ հասած տվյալները հիմնականում վերաբերում են այդ շրջանին, թեպետ սասանյանների տիրապետության սկզբնական շրջանում պար-

սկերենը դեռ գործառնության մեջ էր, որ հաստատում են Հենց սասանյան մի շարք արձանագրությունների պարսկական տարրերակներից: Պարսկերեն ավանդված հնագույն բնագրերը Ավրոմանում հայտնաբերված կալվածագրերն են (մ.թ.ա. 88 թ.): 1948—53 թթ. սովետական հնագետների՝ Նիսայում (Աշխարազի մոտ) կատարած պեղումների ժամանակ հայտնաբերվեց շատ 2000 փաստաթուղթ: Գրանք արամեանաուտ, գաղափարագրերով լատիպանց հարուստ գրություններ էին, որոնք ուսումնասիրողներին երկրներանքի առաջ են կանգնեցնում: Համարելի դրանք պարսկերենն թի արամեերեն՝ պարսկական որոշ բառերի օգտագործմամբ: Իդրը դեպքերում այդ փաստաթղթերի պարսկական նյութը խնայեց պարսկերենի ուսումնասիրությանը: Պարսկերենի բառապաշարի վերաբերյալ առատ նյութ է տալիս հայերենը, որը պահել է բազմաթիվ փոխառություններ՝ լրացնելով իրանական աղբյուրներում վկայված պարսկական բառապաշարի բացը:

Ուսումնասիրողները տարբերում են պարսկերենի զարգացման երկու փուլ: ա) վաղ շրջան, որն արտացոլված է հիմնականում Նիսայի և Ավրոմանի նյութերում, բ) ուշ շրջան, որը ներկայանում է մանիքեյական հուշարձաններով: Նրվու շրջանների լեզվական տարբերությունները ի հայտ են գալիս հատկապես հնչյունաբանության մեջ: Մրանց հաշվառումը կարևորվում է հայերենի պարսկական շերտի ուսումնասիրության, հատկապես փոխառությունների ժամանակաշրջանի ճշգրտման հարցում: Դժվարություն է առաջացնում այն հանգամանքը, որ, ինչպես նշում են որոշ ուսումնասիրողներ, պարսերեն հասկացության մեջ ներառվում են, ըստ երևույթին, մեծ թվով միջին իրանական բարբառների՝ ընդգրկելով նորասանը (ներառյալ Միջին Ասիայի հարավ-արևմտյան մասը), հյուսիսային և հյուսիս-արևմտյան Իրանը՝:

Միջին իրանական փուլը ներկայանում է նաև մի շարք արևելա-իրանական լեզուներով. սրանց անմիջական աղբյուրները հայերենի հետ չեն են, կամ կարելի է ստել բացակայում են. ուստի կենդակայանները ավելի համառուտ նշենք, որ երբեք այդ լեզուների տվյալների միջոցով է հաստատվում հայերենում այս կամ այն բառի իրանական բնույթը, որովհետև միշտ չէ, որ միջին պարսկերենը կամ պարսկերենը պահպանել է այն:

3. Սողերեն

Արեմենյան արձանագրություններում հիշատակվող հին Սողդիպի լեզուն է (Ձարեվյան գետի հովիտը և նրա հարակից շրջաններ): Մ.թ.ա.

առաջին դարերում ընդարձակում են սողզերենի տարածքային սահմանները: Չնայած Միջին Ասիայի և Աֆղանստանի տարակազմ ընակչությանը, մինչև մ.թ. IX դ. սողզերենը այդ տարածքի հաղորդակցման և դրապրոֆյան հիմնական լեզուն էր: Սողզերենը գիտությունը հայտնի դարձավ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին՝ Միջին Ասիայում և Քուրճանում կատարված հնագիտական պեղումների շնորհիվ: Սողզերենի շարունակությունն է համարվում այժմյան լադոսի բարբարը (Սամարղանդի մաս), որը անհնապեղ բարբառներից է:

4. Խոտանասկերեն

Գործածվել է Տիրեկի շրջանում՝ Խոտանի օաղեսի իրանալեզու բնակչության կողմից: Ենթադրվում է, որ դրանք Հնդկաստան շարժվող սակերի մնացորդներն են եղել (ՕՈՂԱ, 1981, 233): Պահպանված լեզվական հուշարձաններից (VII—X դդ.) նկատվում է ընդհանրությունը սակերենի հետ: Մ.թ. XI դ. Խոտանը նվաճում են մուսուլման ուլուզները. այդ ժամանակաշրջանից էլ անհետանում են Խոտանական գրությունն ու լեզուն:

5. Բակտերեն

Գործառում էր պատմական Բակտրիայի տարածքում (Ամու-Կարիայի վերին և միջին հոսանքից մինչև Հինդիկուշի լեռնաշղթան): Գրվածք հուշարձանների թվեր մեծ չէ: Գրությանը այն առանձնանում է միջին իրանական բույր լեզուներից: Հարմարեցված լինելով հունական այբուբենին, բակտերենում դրվում էին և ձայնավորները: Գիտությունը հայտնի բակտերեն բառերի քանակը 100-ից չի անցնում:

6. Խորեզմերեն

Նին խորեզմի լեզուն է (արդի հարավային Քուրքմինիայի և Խորանի տարածքում): Գործառում է մինչև XIII—XIV դարերը: Խորեզմերենի վերաբերյալ տվյալները հիմնականում X—XIII դդ. արաբատա գրություններում պահպանված բառերն ու դարձվածներն են: Նկատված է, որ աղբյուրներ օժի սակերենի ու սողզերենի հետ, զգալի է արաբերենի ու պարսկերենի ազդեցությունը:

զ) ԱՌ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՅԴՈՒՆԻՐ

Ժամանակային սահմանները ընդգրկում են մ.թ. 8—9-րդ դարերից մինչև մեր օրերը: Տարածքային սահմանները բավական ընդարձակ են՝ Կովկասյան լեռներից մինչև Պարսից ծոց, Միջագետքից մինչև

Հնդկաստան, Արևելյան Քուրքեստան¹⁵: Նոր իրանական լեզուների ու բարբառների թիվը հասնում է 40-ի: Գրանք բառ տարածքային ու բնականական հատկանիշների, բաժանվում են երկու խմբի՝ արևմտաիրանական և արևելաիրանական: Արևմտաիրանական խումբը ներկայացնում են.

Նոր պարսկերենը. Իրանի պետական, պաշտոնական լեզուն է: Կենդիվ միջին պարսկերենի շարունակությունը, նոր պարսկերենը այդ լեզվի նոր լինական է՝ ենթարկված ներքին զարգացման մի շարք փոփոխությունների, կրած օտար ազդեցությունների՝ հիմնականում արաբերենից, որ ակնհայտ է հատկապես բառապաշարում: Գրությունը այսօրևատա էր նոր պարսկերենով ստեղծված է հարուստ գրականություն:

Տաջիկերենը Տաջիկական հեՄՀ ազգային ու պետական լեզուն է: Տարածված է նաև Ուզբեկստանի որոշ շրջաններում: 1939—1940 թթ. շրջանառության մեջ էր լատինական, իսկ 1940-ից ուսուսական այբուբենը: Տաջիկերենը մեծ ընդհանրություններ ունի արդի պարսկերենի հետ:

Քրդերենը գործառում է Իրանի, Իրաքի, Սիրիայի, Քուրդիայի բնակչության շրջաններում: Քրդախոս բնակչություն կա նաև Հայկական, Արևմտա-իրանական մյուս լեզուների համեմատությամբ քրդերենում սովա են մի շարք տարբերություններ: Պետականության և ազգային լեզվի բացակայության պայմաններում քրդերենը ներկայանում է մի շարք բարբառներով: հեՄՀ-ում ապրող քրդերը օգտագործում են ուսական, իսկ արտասահմանում՝ լատինական կամ արաբական այբուբենը:

Բարաբերենը Ազր. հեՄՀ և Գաղստանի իրանալեզու բնակչության մի փոքրիկ խմբի լեզուն է:

Փալիշերենը գործառում է Ազր. հեՄՀ հարավային մասում, Իրանի մերձկասպյան որոշ շրջաններում: 30-ական թվականներից Ազրբեջանում թալիշական գիր ստեղծելու փորձերը չհաջողվեցին՝ թալիշների փոքրաթիվ լինելու պատճառաբանվածությամբ:

Բելուզերեն. Բելուզիստան պատմական նահանգի լեզուն է (Իրանի և Պակիստանի տարածքում): Բելուզ բնակչության թիվը մոտ 1,5 միլիոն է: Բելուզերենը այսօրևում են նաև Քուրքմինիայում, Աֆղանստանում, Հնդկաստանում: Բելուզերենի բառապաշարը հարուստ է փոխառություններով: Քերականական-հնչյունական համակարգը այնչի քիչ նորամտությունների է ենթարկվել, քան նոր պարսկերենինը:

Արևելյան խումբը ներկայացնում են հիմնականում.

Ավգաներենը (փուշտու). տարածված է Աֆղանստանում և Պակիստանի հյուսիս-արևմտյան մարզերում: Աֆղաններ կան նաև Իրանում և Բելառուսի տարածքում: Գրությունը արաբա-պարսկական է: Գրական-գրավոր աֆղաներենի հիմքում լանդաշարի բարբառն է:

Օսերենը հՈՂՄ կազմի մեջ մտնող Հյուսիս-օսեթական ինքնավար հանրապետության (ԻնժՄՇ-ի կազմում) և Հարավ-օսեթական ինքնավար մարզի (Վրաց. հՈՂ) գրական լեզուն է: Օսերենի գրությունը հիմքում ընկած է ուսական այբուբենը՝ ուսուկրենում բացակայող որոշ տառերի (հնչյունների) հավելումով: Օսերենում առկա են հին իրանական մի շարք հնարանություններ, իսկ ընդհանրապես օսերենի բառապաշարը աչրի է ընկնում նորամուծություններով՝ կատարված կովկասյան լեզուներից ու ուսուկրենից: Օսերենի բարբառներից են դիգորերենը և իրոներենը:

Արևելաիրանական լեզուներից են նաև յաղորբերենը, վախաներենը, յագզուլուներենը: Վերջիններս այլ բարբառների հետ կազմում են, այսպես կոչված, պամիրյան խումբը:

Մեր նպատակը չէ երկու խմբի լեզուների ընդհանրությունների ու առանձնահատկությունների մանրամասն վերհանումը: Իրանագիտական գրականության մեջ դրանք ընկած են: Ներկայացնենք միայն երկու հատկանիշ: Նկատված է, որ հնչյունաբանության մեջ երկու խմբերի տարբերությունը հիմնականում պատմական կարվածքով է: Համաժամանակյա հնչյունական տարբերությունները զգալի չեն: Հին իրանական բառակցիքի *ձ, *ձ, *գ պահպանված են արևմտյան խմբում, *չ, ձ, *լ արևելյանում: Հին իրանական ց *ն, *xt խմբերը արևմտյանում ներկայանում են նույնպես՝ *ձ, *լ, *d: ¹⁵ Բնշ վերաբերում է բառապաշարին, ապա արևելաիրանական լեզուները քիչ են ազդվել Թուրքերենից ու արաբերենից: Սա, նախ և առաջ, պայմանավորված է աշխարհագրական և պատմական գործոններով:

Եթե խոսելու լինենք նոր իրանական լեզուների հայերենի վրա ունեցած ազդեցության մասին, ապա պետք է նշել միայն նոր պարսկերենը, մասամբ քրդերենը: Այդ ազդեցությունները ի հայտ են գալիս հատկապես մեր բարբառներում, որոնք գրական լեզվի առկայության պայմաններում դուրս են մղվում հայերենի բառապաշարից:

ա) ՉԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՅԲԱԲԵՆԻՆԵՐԻՆԵՐ

Իրանական փոխառությունների սկզբնաղբյուրների հաջոց

Հայերենի իրանական փոխառությունների առանձնահատկություն-

ները, նաև ուսումնասիրողների դիտարկումները ցույց են տալիս, որ այդ փոխառությունները ենթադրում են տարբեր սկզբնաղբյուրներ: Անընշտ, նորից հարկ չկա ապացուցելու, որ հայերենում գործառույթ իրանական բառաշարի մեծագույն մասը միջին իրանական լեզուներից է. դա հիմնավորվում է լեզվական նյութի յուրահատկություններով, արտաբերական գործոններով: Այժմ արդեն որոշակիորեն զրվում է փոխառությունների տարբերակման հարցը մի կողմից՝ ըստ իրանական լեզուների հին և միջին փուլերի, մյուս կողմից՝ ըստ այդ փուլերի որոշ լեզուների: Ինականաբար առավել զգվար է հին իրանական լեզուներից կատարված փոխառությունների հարցը, որովհետև այդ լեզուներից մեզ հասած ավյալները բավական սուղ են, և ապա հայերենում գործառույթ այս կամ այն բառի վկայությունը որևէ հին իրանական լեզվում գեղես անմտտելի փաստ չէ այդ լեզվից կատարած անմիջական փոխառության հիմնավորման համար, քանի որ այդ կարգի բառերը կարող են անցած լինել միջին իրանական լեզուներից:

Արդյոք հին իրանական լեզուներից հայերենը փոխառություններ վերցրել է, թե՞ ոչ: Այսօր նույնիսկ ոչ մի փաստ չպահելու զնայքում էլ կատարաբանը պետք է զրական լինի, որովհետև հայերենի և պարսկերենի միջև սերտ աղերսներ կղի են նաև այդ շրջանից՝ իսկ քաղաքական, սոցիալական աղերսները անպայման ենթադրում են նաև լեզվական աղերսներ: Ուրեմն, քականաբար պետք է զրվի հին պարսկերենից ու մարերենից անցած տարրերի հարցը:

Մարերենի մասին գիտությանը փաստորեն ոչինչ հայտնի չէ. այդ լեզվի որոշ իրազեություններ կողմնակիորեն ենթադրվում են այլ լեզուների մոլյալների միջոցով: Հայերենի իրանական փոխառությունների որոշ հնչյունական առանձնահատկությունների հաշվառումով, ուսումնասիրողները փորձում են տարբերակել նաև մարական շերտը: Անդրադասանք այդ կարծիքներին ու առաջադրված հնչյունական առանձնահատկություններին: Գեղես Ա. Մեյնեն է նկատել, որ հին պարսկերենի մի շարք բառեր՝ վզուկ, գան, սապ, բազ, մազ, փառ մարական ծագում ունեն¹⁷: Եթե սրանք ծագումով իրար մարական են, ապա ստույգ չէ փոխառության անմիջական աղբյուրը:

Հայերենում գանձ, բրինձ, պղինձ բառերում ձ- առկայությունը ջ-ի փոխարեն հիմք է տալիս դրանք համարելու մարական փոխառությունների (Հյուբշման, Աճառյան): Հենիգը այս շարքին միացնում է նաև Գինձ-ը (Asia Major, 1963, № 2, 195—199)¹⁸: Մարական են համարվում Արտասազ, Փաննասազ, Մինր հատուկ անունները:

Վերջին ժամանակներս հայերենում մարական ծագմամբ բառերի տարրերակմանը, որանց հնչյունական օրինաչափությունների բարձրահաստիքը անզորագործել է արևելագետ Ա. Փերիխանյանը¹⁶, որի փաստարկումները բավականին ուշադրով են:

Վաղուց է նկատված, որ իրանական մի բանի բառեր հայերենում ունեն աշ տարրերակները: Ինչպես՝ սեաւ-շավ, վարս-վարշ (ամակ) և այլն: Անշուշա, սրանք ենթադրում են փոխառության տարրեր ազրյուր-ներ: Արևելագետներն էլ համարում լինելով այս հարցում, տարակարծիք են փոխառության բուն ազրյուրի որոշման մեջ: Բայնիկին ընդ-մենք համարում է հարավ-արևմտյան բարբառներից (միջին պարսկերենից) անցած, որովհետև նրանք անարդյունավետ ու ոչ հաճախակն են պարսկերենի ա-ով ձևերի համեմատությամբ (Le fonti, 24): Բնիվիկստի կարծիքը հակառակն է: Սեաւ ձևի ղուգահեռը սեա-նելով Շաւար և Շաւաստ հատուկ անուններում և սողերենում՝ Տ՝ աւս, խորեմերենում՝ Տ՝ աճ, գտնում է, որ ... այս նույն բարբառային առյուրներն են, որ հայերենում տվել են Շաւաստ և Շաւարը հատուկ անունները²⁰:

Ա. Փերիխանյանը նշված հատուկ անունների համատեքստային ու պատմական բնույթյամբ գտնում է, որ Շավարը Կամսարականների (մարացած պարսիական մի հյուրի) ավանդական անձնանուններից է, իսկ Շաւաստը՝ Աքրոնիկների, որանց տերությունը գտնվում էր Մարասանի անմիջական հարևանությամբ: Նա անզորագոնում է նաև Շաւարշաան տեղանվանը (Աբարսից հարավ), որից հյուսիս բնկած Մարասան, իսկ արևելքում Մարակներ տեղանունները հիմք են տալիս շաւ-ը և նրանով կազմված վերոհիշյալ ձևերը մարական համարու-նում²¹: Ըստ երևույթին՝ հայերենում անկատարար զործածվելիս է ևղել շաւ սեաւ բառը, որի սպացույցը կարող է լինել վրաց. շավ սեաւ բառը, որը թերևս հայերենից է անցել: շաւ. շաւ-ը դուրս է մղվել պարսկական seaw-ի կողմից, որն, անշուշտ, ավելի ուշ շրջանի փոխառություն է²²: Այսպեսով, s-ձ - տարրերակներից երևելով Ա. Փերիխանյանը մարական է համարում շաւ-բաղադրյալ ձևերը, վաղաձայն, շաւն, շաւ, շեաւ, շահեն, ղիկ (նաև՝ ատրաշէկ)²³ բառերը:

Փորձ է արվում մարական շերտ տարրերակել նաև մեկ այլ սկզբունքով: Ինչպես գիտենք, իրանական ծագմամբ որոշ բառեր ունեն ա կամ և նախաձավելվածք: Ա. Փերիխանյանը ա-նախաձավելվածքով մի շարք բառեր գիտում է որպես մարական: Առյուր միջ. պր. τού (τό), τήεν: Ենթադրվում է միջ. մար. *arōō (-i) ձևից²⁴, Արախ/ Ե-

տախ, Արաւնդ/ Երաւնդ ղուգածներից առայինները նույնպես Ա. Փերիխանյանը համարում է մարական²⁵:

Իրանական բաց արմատ հայերենում արտահայտվում է աբազ և երազ ձևով: Ուրեմն, վերոհիշյալ սկզբունքով կարելի է ենթադրել աբազ-ի մարական բնույթը: — Ա — նախաձավելվածք ավելանում է նաև շխ, սպ հնչյունակապակցություններից առաջ. ազպպե և օրինակ աշխարհ բառու: Ա. Փերիխանյանը դարձապես տեսնում է հյ. աշխարհի միջ. մար. a x š a h r համապատասխանությունը²⁶: Ինչ վերաբերում է աշխար, աշխատ, բառերին, ապա — ա — ի ավելայության զեպում էլ կազածելի չէ նրանց միջին իրանական բնույթը²⁷:

Ինչպես տեսանք մարական փոխառությունների տարրերակման հատկանիշները առայժմ վարկածային են, հետևաբար կասկածելի է ըստ այդ սկզբունքների տարրերակված ոչ այնքան ծավալուն բառաշերտի խոփոխներ: Անզորագոնանք այդ հատկանիշներից մեկին՝ —ա—, —ե— նախաձավելվածքների հարցին: Նկատենք, որ հայազիրություն մեջ վաղուց բնորոշված է այդ նախաձավելվածքների ու նախաձավելված հայկական բնույթը: Ընդ որում, որանք անկա են ոչ միայն փոխառույթ, այլև բնիկ հայերեն բառերում. (ա)նուն, (ա)նասպել, (ա)ուշ, (ե)ղ-բայր, (ե)րեկ: Ոմանք այդ նախաձավելվածքները գիտում են որպես հայերենի հնագույն բարբառային արտահայտություններ: Գեղեւ Ը. Ա. ճանաչող հատուկ ուշադրություն դարձնելով հին հայերենի Ե կամ դ-ով սկզբող բառերի սկզբում ավելացած ա կամ և ձայնավորների և բնիկով այդ ղուգածներով բոլոր բառերը, ենթադրում է նրանց բարբառային բնույթը²⁸: Այս հարցին մեզանում հատուկ ուշադրություն է դարձրել նաև է. Աղաչանը: Նա նույնպես դրանք գիտում է որպես հին բարբառային տարրերակներ: Խորանալով հարցի բնույթյան մեջ, Աղաչանը գտնում է, որ. «Հին հայերեն բարբառների մի խմբում ընդ սկզբող բառերի սկզբում ավելացել է այն ձայնավորը, ինչ որ եղել է բառի մեջ: Բարբառների մյուս խմբում անխտիր ավելացել է ե²⁹: է. Աղաչանը բացահայտում է նաև ընդ սկզբող բառերի առանց նախաձավելվածի հանդես գալու օրինաչափությունը:

Եթե այդ նախաձավելվածքները իրոք հայկական իրողություն են, (իսկ այդ շարք բառերի զեպում դա անձխաւել է), ապա Խորանալիք-նայն միջ հատկանիշների հիման վրա փոխառությունների՝ ըստ տարրերակվածքների տարրերակումը չի արդարանում, իսկ եթե հավասարի է իրանական լեզուներում a-ով ձևերի ավելայությունը, ապա այս

դեպքում էլ չի արդարանում անվերապահորեն դրանց համար փոխառություն մտրական աղբյուր տեսնելը:

Ի տարրերովյուն մարերենի, իրանագիտությունը հավաստի տրված լայնք ունի հին պարսկերենի վերաբերյալ՝ շնորհիվ արեմենյան շրջանից մեզ հասած սեպագիր արձանագրությունների: Չենք անդրադառնում գիտություն մեզ զեռես փաստորեն չտուժված այն հարցին, թե ե՞րբ և որտե՞ղ է հին պարսկերենը դարձել պաշտոա ջեղի լեզուն, սրանք թեև կարևոր են հայ-իրանական լեզվական աղբյուրների նախահիմքերի պարզարձման համար, սակայն կարող են մղել զայնթակիչ սխալներ, որովհետև վիճարկելի են ինչպես իրանական ժողովուրդների (արիական հանրության) կենտրոնի և իրանական սարահարթ թափանցելու ուղիները, այնպես էլ հայերի և հայերենի կազմավորմանը վերաբերող մի շարք տառանջարկին հարցերը:

Հին պարսկական արձանագրություններում վրայված շատ բառեր առկա են և հայերենում. Ելենք մի ցանկի²⁷. apach-պարսանք, aršiti-աշտակ, atar-ատր, azdā-ազ, baga-բազ (draug > draujana-դրուժան²⁸, dasta-զաստ, dastakante-դաստակոյ, difri-դարի²⁹, gāhu-գահ-ու-գաւ-Տա-դուշ, framāna-հրաման, fraša-հրաշ, framātar-հրամանատար, kama-կամ (ք), karša-քարշ, kapautaka-կոպուտա, կապուտակ, magu-մոց, xauda-խուզ, xratu-խրատ, patikara-պատակեր, uši-ւժաշն-ուշ, stera-ստերզ-ասան (տեղանվանակիրտ մասնիկ) duš (մասնիկ)-զո(թշ) միտական մասնիկ, vaztaka-վազուր:

ձշգրիտ ու հավաստի են այս բառերի իմաստները, ակնհայտ են նաև հայերենի համապատասխանությունների իմաստային ընդհանրությունները: Գարնյալ առաջնում է՝ այն հարցը, թե վերահիշյալ բառերը հայերենին են անցել անմիջապես հին պարսկերենից, թե՞ ավելի ուշ, միջին իրանական լեզուներից:

Ումար ընդհանրապես ժխտում են հին պարսկերենից անմիջական փոխառության նուրավորությունը: Այն են ինչ էլ գրում Ա. Մեյլեն. «Հետաքրքրական էլիներ իմանալ, թե արեմենյան շրջանի պարսկերենը որոշ հետքեր չի՞ թողել արդյուր հայերենում: Եթե զուրկություն ունեն, ապա դրանց թիվը բավական սահմանափակ պիտի լինի. արեմենյան ժամանակաշրջանում տեղի է ունեցել բազաբական գերիշխանություն, սակայն այդ ժամանակ երկիրը զեռես իրանացած էլք, ինչպես այն կիսով չափ եղավ հետագայում: Այնուհանդերձ գոնե կա մի դեպք, որտեղ զայնթակվում ենք առաջադրել այդ հարցը. այն ուլ-գիների անունը, որ սիրում էին ունենալ պարսիկ զեկավաշները, տա-

բաժվել է հարևան լեզուներում. այն անցել է արամեերենին և նույնիսկ հունարենին, որտեղ ատտիկյան շրջանից սկսած իր հերթին լայն չափով տարածվել է παρσικιστος ձևով. պարսկերենը զեռես այն անիք pālex ձևով, որտեղ —rd-ի միջին իրանյան զարգացումը հանդիսացող 1-ն պարսկական է, սակայն նրա z-ն հ.ե. ցի-ի հին իրանական զարգացումը, վկայում է, որ դրա հաստատումը, անշուշտ, Persi-ից չի գայնա (հայտնի է, որ այս բառի արմատի կոկորդային ճեղչունի զարգացումը վկայված է հին պր. didā «ամբողջ բառում»): Ուրեմն, զարմանալի չէր լինի, եթե այդ բառը հայերենի կողմից փոխ անված գտնեինք արեմենյան ժամանակաշրջանից ետև. և անշուշտ հենց այդ է՝ տեղի ունեցել, որովհետև իրանական մ-ն փոխական մ ձևով պահպանվելու, ինչպես մյուս բառերում, ենթարկվել է հայերենի բազաձայնական տեղաշարժին և հանգել ա-ի: Համեմատենք իսպախիների՝ հույներին *παρσικιστος* երկրի անունը, որտեղ մ-ն նույնպես անցել է հայ. տ-ին: Պարսկա-ի զեկացը եղակի է, և ընդհանուր սամբը, պետք է ընդունենք, որ հայերենի իրանական հին փոխառությունները պատկանում են պարթևական շրջանի տարրեր ժամանակներին³⁰:

Թվում է, արեմենյան շրջանից, ավելի միշտ, հին պարսկերենից միայն պարսկա-ի փոխառությունը տեսնելը խիստ ծայրահեղություն է: Պատմական ավյալները հաստատում են հին պարսիկների ու հայերի անբառ շփումները բազաբական, անտեսական բնագավառներում: Պետք է նկատել ունենալ նաև այն, որ հին պարսկերենից փոխառված բառերը հետագայում կարող էին ենթարկվել ինչպես միջին իրանական լեզուների, այնպես էլ հայերենի օրինչպություններին: Որոշ բառերի հին պարսկերենի ծագումը կարելի է փաստարկել նաև լեզվական ավյալներով: Օրինակ, եթե հարս. au հայերենի ոչ համապատասխանությունը անմիջապես հարս.-ի համապատասխան ճեղչունթամբի արտացոլումը չէ, ապա գոնե այն ակնհայտորեն հին երևույթ է: Իհարկե բացառված չէ հայ. ոչ մի. իր. Օ միջանկյալ օղակը, բայց քանի որ օ-ն տալիս է նաև n (dōtak-դորակ, kotak-կոտակ...) կարելի է ենթադրել, որ հարս. au մի. պր. օ — հայ. ոչ(ու) անցյուն ենթարկվող բառերի գոնե մի մասը անմիջաբար հին պարսկերենից է (անոշշ, կապուտա, գոշշ...): Հաս Մ. Աղաթիկյանի «Գրություն» — ոչ — երկբարբառն ունի տարրեր ծագում, որոշ բառերում հ.ե. շրջանից է զալիս, իսկ իրանական փոխառություններում արտացոլում է հին պր. au երկբարբառը (պ՛ւ. օ), բայց ոչ երբեք երկբար-ն³¹:

Հայրս.-ի որոշ բառերի բնալին ձայնավորը հայերենում արտահայտվում է որպես բառի հնդգիշ. magu-մագու-, (անմիջապես հին պարսկերենից լինելը զգմբարենում է և-ի պահպանումով), գահ-ու (gāhu-ից) xradu-իրարա-ու, Հայրս. bagab- կարելի է անսկի Քագարա անվան մեջ: Կարելի է նշել ակամա-ն (միջին իրանականից լինելու զեպրում թերևս սպասելի էր ակամակ: Բայց ման. պրթ. կա 'g'm'y (aṣamāy) (qhit-lain, 60):

Հին պարսկերենից անցած բառերի մեկ սկզբունք էլ առաջարում է է. Աղայանը. «Ուր հայերենն ունի բառամիջի է, նա ստացվել է հին պարսկերեն ai (=ապեսա. ae)-ից: Հնդհականին, ուր որ հին պարսկական ai (ապեսա. ae) երկարբարտի փոխարեն ունի և, սպա զա ստացված է պահլավական Ե-ից»³⁵: Գիտնականը այս եզրահանգմանն է գալիս եկատերով, որ պահլավերեն Ե-ի զիմաց փոխառյալ բառերում ունենք և կամ է. ինչպես լեն-դեն. gēs-դէս, avēr-աւեր. ֆե-չէ-չէն, վեհեռ-դեհեհան և այլն: Ուրեմն, այս սկզբունքով առաջնորդվելով այնտեղ, գազվեկ, գուլ(է), գուլէ, շէն, պարուկ, պլե, եսնդես, վէգ, վէմ, գլե, տէգ բառերը կարող ենք համարել հին պարսկերենից կատարված փոխառություն Այս շարքի մեջ են մտնում նաև հայերենում է-ի հնչյունափոխության նեթարված բառերը. պիսակ, ցիգակ...: Սկզբունքը հասակ է. և Նրն այդ բառերը անմիջապես հին պարսկերենից չեն անցել, սպա անշուշտ պիկիլի հին են Ե-ով ձևերից: Անարդ, երիտասարդ, նաասարդ բառերը նույնպես կարող են նեթարել հին պարսկական ծագում: Բառերի երկրորդ բազորից իր. 53:ժ Ետարիս բանն է. որը պարթևերենում 53:Է է. իսկ միջին պարսկերենում՝ 53:Է: Երև հայերենի նշված բառերը միջին իրանական այնպիսի բարբառներից են, որ պահել են 53:ժ, անբ, ուրեմն, անկասկած դրանց աղբյուրը հին պարսկերենն է³⁶:

Հին փոխառությունների մեջ պետք է զեռնել նաև -ի-ով վերջացող մի քանի իրանական բառեր. աբի(է), անաբի, ապակի, քշեա-վի, կարի, ճարտմանի, նաակաթի(է), պատասխանի: Ինչո՞ւ ենք հակված օրանք հին փոխառություններ համարելու: Նախ ասենք, որ -ի-ն տարրեր բեռնի ու թերևս նաև տարրեր ծագում ունի Հայտնի է, որ վաղ դարբարում հանդիպում ենք -ի-ով մի շարք բառերի, որոնք հետագայում հանդես են գալիս առանց դրա (արժուի, պատասխանի, հիսրիս...): Ի-ն ուրեմն, հանդես է գալիս ոչ միայն իրանական փոխառություններում: Ի-ն նաև հին անականակերտ է. բնորի, բարի և այլն³⁷: Հունական փոխառություններում -ի-ն համապատասխանում է 68

ios, iov, ias ia-ին έκκλήσια—կկկկկկ, անդրաս—անդրի, անդրիս—անդրիզի, անդրիս—սպեղանի»³⁸:

Իրանական փոխառություններում հանդես եկող -ի-ն թերևս միջին իրանական փուլում բացակայում է: Է. Բենվենիստը -ի- համար կեթաղում է հին iya: Այսինք, աբի—հայրս. airya (ariya) մարերի maīyārya պատասխանի-ն էլ թերևս կեթաղում է հին *patīsaaxvāniya³⁹: Ուրեմն, -ի-ով վերջացող իրանական փոխառությունների զոնն մի մասը կարելի է համարել հին պարսկական, թեև փոխառության անմիջական աղբյուրն էլ հին պարսկերենը չէ, սպա այդ բառերը փոխառվել են միջին իրանական փուլից կատարված զանգվածային փոխառությունների ընդգրկող ժամանակաշրջանից առաջ: Նկատենք, որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են աբի, անաբի, ճարտմանի, մաբերի, հայերեն ծանոթ են եղել միջին իրանական փուլից առաջ:

Ավելասերներից կատարված փոխառությունների մասին որոշակի բան չենք կարող ասել: Ինչ է. Անդրոնիկաշվիլին կեթաղում է, որ նեշվակ, դեռ, դոթո(է) բառերը բնորոշ են ավեստերենին (էջ 522), բայց զա առարկելի է: Փոքրիչառն հիմնավոր փաստ չկա հասկացված ավեստերենից անմիջարար անցած բառերի տարբերակման համար:

բ) ՄԻՋԻՆ ԻՐԱՆԻԱՆ ԱՊՐԵՆԱՊՐԵՆԵՐՆԵՐ

Սովա ծավալուն ելույթն ու բազմազան հատկանիշները թույլ են տալիս ավելի հատկորեն ապրերակելու միջին իրանական լեզուներից հայերենին անցած բառերը: Ինչպես գիտենք միջին իրանական լեզուները բաժանվում են երկու մեծ խմբի՝ չուրաս-արևմտյան (NO) և հարավ-արևմտյան (SO): Այս բաժանման տակ, հատկապես, կրք հարցը աղերսվում է հայերենի փոխառության աղբյուրներին, եկատի է անվրձում պարթևերենը (NO) և միջին պարսկերենը (SO), որովհետև այդ լեզուներն են հայերենի փոխառության հիմնական աղբյուրները:

Գնեն Ա. Մեյնն էր փորձում ապրերակել հայերենի իրանական փոխառությունները բառ նշված երկու լեզուներին՝ առանձնացնելով մի բանի բառեր⁴⁰: Աճառյանն էլ փաստորեն կատարում է նման առանձնացում հիմք ընդունելով մի շարք բառային գույզեր. աշխարհ-շարհ, պաշտպան—փուշտիպան, հրտասա—փարտախ, սպարապետ—սպապահակա, Արամազդ—Որմիզդ, Վահագն—Վահրամ, Վրկէն—Գուրգէն,

պարթև—պահլավ և այլն⁴¹, միշտ է, Աճառյանի տարբերակումը զօտ ժամանակագրային է (իր տեղիմարատնությամբ զույգերի առաջին անդամները արշակունյաց շրջանից են, հետևաբար ավելի հին, իսկ երկրորդները՝ սասանյան՝ ավելի նոր), բայց փաստորեն այստեղ նույնպես կարելի է տեսնել բոտ NO և SO լեզուների (բարբառների) տարբերակման փորձ:

Նշված հարցը առաջգրել է փորձել են նոր փաստեր գտնել նաև ուրիշ հետազոտողներ, սակայն, քանի որ հասակ չէին NO և SO իրեմների լեզվական բնորոշ հատկանիշները, բնականաբար հայերենի՝ իրանական փոխառյալ բառերի սկզբնաղբյուրների հարցն էլ բավարար լուծում չունենր: Այլ է լիճակը այժմ: Պայմանավորված առաջին հերթին իրանագիտության ձեռքբերումներով, այդն հասակորեն ուրվաօժիված են պարթևերենի և միջին պարսկերենի հնչյունական համակարգերը, այդ համակարգերի բնչնաբնություններն ու յուրահատկությունները, զարգացման, ու փոփոխության օրինաչափությունները, որոնք ներկայացված են իրանագիտական համապատասխան գրականության մեջ: Ուրեմն, հենվելով իրանագիտության բնձեռած հնարավորություններին, նաև հայերենի իրանական փոխառությունների հնչյունական առանձնահատկություններին, փորձենք բոտ հնարավորին տարբերակել բառապաշարը բոտ պարթևական և միջին պարսկական սկզբնաղբյուրների:

Այս ընդգնակումում առաջին լուրջ քայլը Ջ. Բոլոնիզիի մի ուսումնասիրությունն է⁴², որտեղ NO և SO խմբերի տարբերակիչ հատկանիշների հիման վրա տարբերակվում են նաև հայերենի որոշ փոխառությունները: Օգտվելով այդ աշխատանքից, ներկայացնենք համապատասխան դասակարգումները՝ լրացնելով նոր օրինակներով, ըստ հարկի հայտնելով նաև որոշ նկատառումներ:

1. Միջձայնավորային և կոնանյավորային դիրքերում NO-ի S-դիմաց SO-ն ունի եր 2ձմտ. պրթ. ('b)'n's—միջ պրս. vlnāh: Պրթ. rō-bās (rwb's)—միջ. պրս. rōbāh, պրթ. das—միջ պրս. dah: Ըստ այդմ վնտ. պտաուճատ, կարելի է համարել պարթևական, իսկ նկահ, դան (ամն), դանգարամ⁴³ միջին պարսկերենից անցած բառեր:

2. Պարթ. d(š)-ի դիմաց միջ. պրս. y: Ըստ այդմ սպարապետ, սպարապարթևական են, իսկ սպայ, պայապետ⁴⁴ միջ. պարսկերեն, միջ պրթ. wyd'n—միջ. պրս. wy'n⁴⁵—հայ. վրան (պարթևերենից), հայրս apadāna—հայ. սպարառք (եթև փոխառության աղբյուրը սովիշապես հին պարսկերենը չէ, այս անկասկած պարթևերենն է), պրթ. *apešā

—հայ. ապիրառ: Բոյք-ը NO-ից է, իսկ նայիրուակ, հրբուակ, նոշիրուակ բառերի երկրորդ բաղադրիչը միջ. պրս. bōy-ն է, հետևաբար այդ բառերն էլ SO խմբից են, ինչպես նաև վարապիրայ, ասնվիրայ, որոնց երկրորդ բաղադրիչը պարթևերենում virad է: Հայրս. xauda—պրթ. xwawd, միջ. պրս. xoy—հայ. խոյր (պարթևերենից) Դասաիրակավելին համապատասխանում է միջ. պրս. dastyar-ին, քան պրթ. dst-d'r-ին Դասա-ով կազմութունները հայերենում բավական շատ են: Ոմանք պարթևերենում այդ ձևի առկայությունը համարում են փոխառություն միջին պարսկերենից, քանի որ պարթևերենում սպասելի էր zast: Այս հանգամանքը զգվարտնում է դասա-ով կազմությունների փոխառության բուն աղբյուրի հարցը:

3. Իր-rd—պրթ. r(rd?)—միջ. պրս. lr Պրթ. w'r—միջ. պրս. gul—հայ. վարց: Աւսարք, նավասարք, երեսուսարք եթև անմիջապես հին պարսկերենից չեն, այսու ենթադրելի է NO աղբյուր:

4. pat-ով ձևերը բնորոշ են NO խմբին, իսկ SO-ին pay. հմտ. պրթ. pdg'm միջ. պրս. paygam, պրթ. pdr'st—միջ. պրս. payrast և այլն Ուրեմն, հայ. պատպամ, պատմուճատ, պատրաստ, պատկեր, պտորոզ... ենթադրում են պարթևական աղուքը, իսկ պալման, պաշքուր, պաշպատ, պաշուտկ... միջին պարսկերենից⁴⁶:

5. Հին իր. Թ-ը NO-ում ներկայանում է hr/h, SO-ում՝ S: Պրթ. pwhr-միջ. պրս. pus: Հայ. պահ, պահք, պահպան, պարհակ... պարթևերենից են, իսկ պատանիկ-ը միջին պարսկերենից:

6. Պարթևերենի մի հատկանիշ էլ Բոլոնիզիին համարում է որոշ զեպչերում v-ի պահպանումը միջ. պրս. v-ի դիմաց, հմտ. pw'g ժմապուր—միջ. պրս. նոր պրս. pak: Բոլոնիզիին հայ. զարբ-ի միջ հակված է տեսնելու այդ v-ն, հմտ. պրթ. z'wr—միջ. պրս. zōr: Խարհ, դա հնարավոր է, և չմտնելով զարբ-ի պարթևական ծագումը, հայ. դրություն մեջ շ-ի առկայությունը կարող ենք համարել o-ի առ արտահայտությունը: Ի զեպ, հիմնավորվում է նաև սարբ-ի պարթևական բնույթը, իսկ նասար/ակ-ը որ առանց v-ի միջին պարսկերենից է: Այս կերպ բառերը հայերենում համանիշներ են⁴⁷: Կարելի է կարծել, որ դիտար-ը նույնպես NO-ից է, եթև բնչունենք բարբառային գծարթ SO աղբյուրը:

7. Պարթևական մի քանի բառերում բառավորից g-ն միջին պարսկերենում ներկայանում է v-ով. հմտ. պրթ. mog—միջ. պրս. mov, պրթ. mwtg—միջ. պրս. murv: Մոզ, մոզպետ ուրեմն, կարելի է դիտել որպես NO-ից անցած բառեր, մովպետան մովպետ, մովան անդեր-

ձապետ SO-ից՝ վերջիններս, իրքը, մեր մատենագրության մեջ հանդես են գալիս որպես սասանյան շրջանի կրոնական տերմիններ, Մոզ-ը հայերենում բացի այդ նշանակությունից ունի նաև «կախարդ, բուրմ» բնո՞հանրական իմաստը, որը ի վերաբերում միայն գրագաշտական մոզությունը Հմմտ. «Գահն անդ այր զոմն մոզ՝ ստտ մարգարվ հրեայ» (ՆՃԲ) «Այր ոմն Միմոն մոզ էր և պաշնցուցանէր զագգն սամարացուց» (Գժ. Ը, 9)։ Մոզ «կախարդ, բուրմ» իմաստի արտահայտությունը է նաև մոզմ «կախարդեմ», մոզական և այլն։ Մոզ «բուրմ» ոչ տերմինային, բնո՞հանրական նշանակությունը եղել է և իրանական լեզուներում՝ նախքան դրագաշտության պաշտոնական կրոն ձևաշվերը։ Ինչպես նշում է Ի. Դյակոնովը. «...միայն այն ժամանակ, երբ սասանյանները օրոք դրագաշտությունը վերջնականապես հանրամատչեց, երբ ավետարյա կանոններ համարյա կամ լրիվ օտ՝ մանված էին, քրմերի առտին, ժողովրդական անվանումները իրեն «մոզեր» կամ «մոզերի պետեր» կարող էին պաշտոնական ձանձույտ ստանալ»¹⁸։

Մի խոսքով, մոզի մով ձևը և մոզ որպես դրագաշտական տերմին փոխառվել է միջին պարսկերենից, իսկ մոզ «բուրմ» բնո՞հանրական իմաստը և բառածին էլ ավելի հին ակունքներ ունի և ենթադրելի է NO աղբյուրը։

8. Բոլորինգին մեկ այլ հատկանիշ էլ առանձնացնում է կապված իր. Դ (վանկարար Բ-ի) արտահայտության հետ։ Այդ Դ-ն միջին իրանական լեզուներում ներկայանում է ir, ur, ri հնչյունակապակցությունը։ Որոշ բառերում պրթ. a-ի անկախությունը միջ. պրս. u-ի դիմաց Հմմտ. var—gul, հայ. բարբ—միջ. պրս. buš և այլն, ենթադրելի է տալիս, որ a-ով ձևերը պարթևական ծագում ունեն (մարզ, վարզ, քերես նաև պաշտպան՝ ի հակադրություն փուլտիպանի)։

Անշուշտ, հնարավոր է վերոհիշյալ բառերի պարթևական ծագումը, բայց առաջադրված շափարիշը քերես այնքան էլ համոզիչ չէ։ Բանն այն է, որ ուսումնասիրողների մեծ մասը չեն տեսնում իր. Դ—պրթ. ar համապատասխանությունը։ Նշվում է հիմնականում ir, ur, ri համապատասխանությունը՝ բաղմամբի՞լ օրինակներով։ Այդ պատճառով էլ հայ. մարզ, պարիշտ բառերի բուն աղբյուրի հարցը առայսօր վիճելի է։ Մարզ-ը, օրինակ, միջին իրանական լեզուներում murγ (murv) է։ Պատահական չէ, որ Բեյլիև մարզ-ը համեմատում է օսեթ. marγ-ի հետ (REA, 1965, 1—2)։

9. Պարթևերենի ձե հնչյունակապակցությունը միջին պարսկե-

րենում համապատասխանում է st: Պրթ. fryšig—միջ. պրս. frēstak: Ըստ այդմ հայ. նրնչաակ-ը ենթադրում է NO աղբյուր։ Հայ. պարիշտ—միջ. պրս. parist զուգահեռից կարելի է ենթադրել, որ պարիշտ-ը հյուսիս-արևմտյան լեզուներից է։ Կարելի է համարել Լուսա և բարբառային կաշա ձևերը։ Առաջինի միջին պարսկական բնույթը հաստատվում է ոչ միայն ստ հնչյունայնությամբ անկախությամբ, այլև - Լ-ի

10. Պարթևերենի ո՞՞ն համապատասխանում է միջ. պրս. ու-ի Հմմտ. պրթ. And'm—միջ. պրս. hannam: Ուրեմն, հայ. անկամ-ի պարթևական բնույթը կասկած չի հարուցում։

11. Հայերենի իրանական մի քանի բառերում -տ -ի անկախությունը հուշյալ կարելի է գիտել որպես NO լեզուների հատկանիշ։ Հմմտ. պատեէն, ամբաստան—միջ. պրս. pačēn > hampačēn և այլն։

12. j—դիմաց միջին պարսկերենի որոշ բառեր ունեն՝ j. jawitean, ātagōv, jāitūk: Ուրեմն, իր. ջաապով, ջատուկ, ջուխտ, ջախանան (խոսքով)¹⁹ բառերը միջին պարսկերենից են ակունքում։ Նկատենք, սակայն, որ ի հակադրություն j-ի j-ով ձևերը անխափ չլինոք է պարթևական համարել։ Բանն այն է, որ j—j հնչյունափոխությունը վերաբերում է միջին պարսկերենի ներքին զարգացման օրինաչափությանը, և ջ-ով ձևերը ընդգրկում են միջին պարսկերենի ուշ, j-ով ձևերը՝ վաղ շրջանը։

13. Իզաֆեռային կազմությունները անխափ SO-ից են. դեհի-մազդեհ, բուհեննիկ, հոշիբուակ, դարիմեննի...։

14. Իր. dy-ն հյուսիս-արևմտյան լեզուներում Ե է, հարավ-արևմուտյանում՝ մ։ Ըստ այդմ դարապան, դարապաս, միջին պարսկերեն են, իսկ բարապան-ը պարթևերեն։

15. SO խմբին պետք է դասել Դ-ով սկսվող իրանական այն բառերը, որոնք հայերենում ներկայանում են n-ով՝ առանց նախահավելիվածի։ Վաղ փոխառություններում Դ է և անպայման նախահավելված (երազ, արազ...):

16. Քերև NO—խմբին պետք է դասել nj-ի ձևերը. պահաեշ, Եահաեշ, տակե(ել), սապեշ(ակես) և այլն։ Պարթևերենի nj-ի դիմաց միջին պարսկերենը մի շարք բառերում ունի nz:

17. Հին իր. Sp—NO-ում մնում է sp, SO-ում՝ s: Ման. պրթ. *spg—միջ. պրս. sak «շուն», պրթ. asp—միջ. պրս. asp նաև՝ asvā «հեշտալ»։ Ապ սձի» և այդ բառով կազմված ձևերը ծագումնաբանորեն ներկայացնում են NO խումբը, բայց դրանք անով են նաև միջին

պարսկերենում, ուստի հայերենի փոխառության հարցը հստակ չէ: Այդպես է և սպիտակ-ը:

18. Միջ. պրս. pēs — պրթ. prw'n համապատասխանությունը հաշվի առնելով Ջ. Բոյունիզին պէշպայ, պէշասպիկ բառերի փոխառության աղբյուրը համարում է միջին պարսկերենը:

19. Բացի նշված հատկանիշների հիման վրա կատարվող տարբերակումից, որոշ բառերի սկզբնաղբյուրը կարելի է որոշել պարթև-վերենում կամ միջին պարսկերենում վկայված ձևերի համադրությամբ. օրինակ, միջ. պրս. xurmā, պրթ. armāw (BSOAS, 13, 645) հայ. արմաւ-ի ակնհայտ զուգահեռը պարթևական ձևն է: Կամ, ասենք, միջ. պրս. tōhm, պրթ. twxm ձևերից հայերեն տոնմ-ին համապատասխանում է միջ. պրս. ձևը, եթե պարթևական ձևը h/x հնչյունափոխությունն արտահայտություն չէ⁵⁰:

Հաշվի առնելով այս հատկանիշները նաև արտալեզվական որոշ տվյալներ փորձենք առանձնացնել հայերենի իրանական բառաշերտը բոտ պարթևական և միջին պարսկական սկզբնաղբյուրների: Ենկատենք, որ այս առանձնացումը որոշ չափով պայմանական է: Ենթափոխառությունների զգալի քանակություն չի ենթարկվում այս հատկանիշներին, երկրորդ՝ շատ բառեր պարթևերենում ու միջին պարսկերենում նույնական են, երրորդ՝ այդ լեզուների միմյանցից կատարած զգալի փոխառությունների պատճառով, զմիարանում է հայերենի փոխառության սկզբնաղբյուրի որոշման հարցը:

Այդուհանդերձ բառերի որոշ խումբ կարելի է ենթարկել համապատասխան դասակարգման:

ՊԱՐԹԵՎԵՐԵՆ (NO խումբ)

- ախորժ
- ամբարտաւան
- անդամ
- անդարձ
- աշխատ
- աշխար
- աշխարհ⁵¹
- աշխոյժ
- ապարան(ք)
- ապիրատ

ՄԻՋԻՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ (SO խումբ)

- ակահ
- ահամգ
- ահոկ
- անաշահիկ
- անդամ(եմ)
- անդերձապետ
- (ան)խուէջբարէ
- ապարահ
- բահունդ
- բանուական

- ատրուշան
- արագ
- արժ
- արմաւ
- աւճան
- աւճառ
- աւրհն(եմ)
- աւրէն
- բագ
- բարգաւաճ
- բոյր
- բուրուառ
- գրաւ
- գրականան
- գունդ
- գուշակ
- դաշխուրան
- դաշն
- դաւաճան
- դեսպան
- դժուար
- դշխոյ
- գրուատ
- գրութ
- երազ
- երախտ
- երակ
- երանգ
- երաշտ
- երաստ
- երկ
- դաւր
- զոհ
- ժահ
- ժահք
- ժանուար

- բարամ(ունք)
- բողպաշտ
- բուհննիկ
- գազերրուակ
- գահնամակ
- գոմէզ
- գոյբուակ
- գոլ(եւ)
- դահլիճ
- դաստ
- դաստակ
- դաստապակ
- դաստասակ
- դաստիրակ
- դարապան
- դարապաս
- դարապետ
- դարիննիկ
- դենիմազդեզն
- դենպետ
- զժար
- զինդակպետ
- թուանիկ
- խոտտակ
- խոտակղար
- խորբալ
- կոտպետ
- հրրուակ
- հոշիբուակ
- ճերմակ
- մատան (զունդ)
- մովան անդերձապետ
- մովպետան մովպետ
- նազ
- նայիրուակ
- նոփրակպետ

Ժանս
 խոյր
 խորան
 կաս
 կոժ
 համբու
 համարէն
 համբոյր
 հանդերձ
 հարադատ
 հարկ
 հաւասար
 հրակէր
 հրիտակ
 ճակատ
 ճանապարհ
 ճիշտ
 մարախ
 մարդ
 մարգարէ
 մոզ
 մոյր
 յաւժ
 յաջ(կամ)
 նախարար
 նիշ
 նուէր
 նուիրակ
 շէն
 շնորհ
 պակաս
 պաշտպան
 պատգամ
 պատերազմ
 պատիր
 պատկեր
 պատճեն
 76

շահախորտակետ
 շահակետ
 շահատան
 շապոտան տակառակետ
 շարսաղար
 պայագատ
 պայիկ
 պայման
 պայմաններամակ
 պայուսակ
 պայքար
 պահեզ
 պէշապիկ
 պէշոպայ
 պասանիկ
 պատգոս
 քատագով
 քատուկ
 քաւիտեան
 ջուրտ
 ոսղմ
 ոսմ
 ոսմվիլբայ
 ոստ
 ոտնիկ
 ոտն(ական)
 ոտտատակ
 ոտտագէտ
 սաղար
 սակստան անդերձակետ
 սանգարամետ
 սպայ
 սպայակետ
 սպասալար
 սպոտ
 վարսավիրայ
 փուշտիպան

պատմունակ
 պատմունան
 պատշաճ
 պատուատ
 պատուար
 պատուէր
 պատուան
 պատուհաս
 պատուպար
 պատրաստ
 պատրոյկ
 պատրունակ
 պարեկ
 պարիշտ
 սահման
 սեւա
 սեպուհ
 սպանդարամետ
 սպառ
 սպարակետ
 սպիտակ
 ստուար
 վարդ
 վարդակետ
 վարժ
 վարմ
 վեհ
 վէժ
 վնաս
 վրան
 տոյժ
 օժիտ

փուշտիպանսաղար,
 քուստ

Անկախ փոխառութեան բուն աղբյուրից, փոխառյալ մի շարք ձևեր են թաղարվում են ժամանկագրորեն նախորդում կամ հաջորդում Դասավելի ակնհայտորեն է զգացվում հատկապես լժորդ հնչյունների անկախութեամբ:

Քիչ վերը արդեն նշել ենք, որ միջ. պրո. յ-ով ձևերը ուշ շրջանի երևույթ են՝ յ-ով ձևերի համեմատությամբ. ուրեմն շ-ով մի շարք բառեր, որոնք առկա են հայերենում նախորդում են յ-ով ձևերին Այգալսն են քերես և ու-ով փսոզ բառերը, որոնք ժամանակագրորեն հասցորդում են ու-ով ձևերին: Եվ էթե ու-ով և ու-ով ձևերի բաց միջ. պրո. կամ պրթ. սկզբնաղբյուրի տարբերակումը երբեմն կարող է պայմանական լինել, ապա հաստիկ է նրանց ժամանակագրային տարբերակվածությունը: Նախ՝ ու-ով բառերի զերակշիռ մասը ավանդված է ուշ շրջանից. ուստի Այգալս-ը XI դ., Լախ-ը՝ IX: Ռախ-ով մի շարք կազմություններ (Լախագրան, Լախական, Լախակից, Լախահաղոր, Լախիթ), նույնպես ուշ շրջանից են: Բացառություն է կազմում Լախիթայն, որն ինչպես գիտենք սասանյան շրջանից կատարված փոխառություն է, այսինքն նույնպես բ-ով ձևերից ուշ: Երկրորդ՝ նույնիմաստ փամ իմաստով մոտ բառերում բ-ով և ու-ով ձևերի առկայությունը ինքնին վկայում է, Ե-ի հնչյունական նոր որակ, որ հնարավոր է տարբեր ժամանակային կորվածքներում: Օրինակ, ապարասան և Երասանի կողքին ունենք Լախասան, որոնցում իրանական նույն *rasan «ասան, պարան» արմատն է: Ռազմ ձևի հետ առկա է (պատե)բազմ, որն ակնհայտորեն հին է: ram-ը առկա է Լախ, Լախիկ և Լախ Երասանում. Երասան, Երասանի է Լախիկ և Լախ Երասանում՝ դարձյալ բ-ու հակադրությամբ և այլն:

Ավելի նոր են շնչիկ խուլերով ձևերը՝ խուլերի համեմատությամբ: Սկսենք կ-է-ից:

Նախ, սաներ, որ ք-ով ձևերը անհամեմատ քիչ են: Միջին իրանական փուլում, հատկապես վաղ շրջանում կ-ն զեռես շնչեղացված էջր. պատահական չէ, որ Մելին չի ընդունում Լաշ-ի իրանական ծագումը, որովհետև իրանական Կաշ-ից հայերենում սպասելի էր *կաշը, *կաշըն (MSL, 8, 280): Իրոք, շնչեղ խուլերի գոյությունը նաև որոշ բառերի զեպրում՝ փիղ, թուր, շաման... կարող է կասկածի տակ զենել փոխառության իրանական աղբյուրի հարցը, բայց փաստ է և այն, որ այդպիսի ձևեր իրանական փոխառություններում իրոք կան: Իր. kan(d) «փորել, քանդել» արմատը հայերենում առկա է կան, կանդ, նաև Բանդ ձևով: Հմտ. եկամակ, վկանդել, Բանդ, Բանդակ: Քաչկեն «զարհանք» բառը մեկ անգամ գործածել է Եղիշեն: Նույն արմատն է կասել բառում (s-է հնչյունափոխությունը օրինաչափ է): Տկառ, կարող, կարի կարառ բառերում Կառ արմատն է. սրա է-ով Լաքրե-րակը առկա է պայառ. Բախիար բառերում (գործածված է երկու

անգամ՝ Եղիշենի մոտ): Այս բառում, ինչպես տեսնում ենք արմատը առկա է և կ-ով և ք-ով: Ուշ շրջանից ունենք Բառառ, որն արդեն նոր պարսկերենից կատարված փոխառություն է:

Ծ-րդ դարից ունենք կնչ և Բէշ «կրտս»: Հետաքրքրական են այս բառերի գործածության փնտազարական տվյալները: Կիրանկ են միայն Եղիշենը և Եղիշեն, որովհետև այդ երկու հեղինակներն են հատկապես կարողացած իրանական իրականությունը, իսկ կնչ-ը գրապատկան կրոնի է վերաբերում միայն Կնչ 4 անգամ գործածել է Եղիշեն, իսկ Քէշ-ը 8 անգամ՝ Եղիշենը: Քէշ-ը ամենայն հավանականությամբ ավելի ուշ ձև է: Ինչպես նշել ենք, է- Աղայանը հաշվի առնելով է-ի առկայությունը Քէշ-ը համարում է հին պարսկերենից կատարված փոխառություն, իսկ կնչ-ը ավելի նոր՝ ուշարձակերենից: Մեր կարծիքով Աղայանի գիտողությունը ճիշտ է վերականգնված *կնչ-ի զեպրում: Ք-ի առկայությունը ինքնին եկեղծում է բառածին և փոխառության համեմատաբար նոր շրջան:

Պ-Փ: Այստեղ էլ նկատվում է համարյա նույն օրինաչափությունը: Փ-ով փոխառյալ ձևերը անհամեմատ քիչ են և ավելանում՝ նոր: Արդեն նշել ենք պաշապան-փուշափայան զուգահեռը: Ծ-րդ դարից ունենք պայլիկ «սուրհանդակ», իսկ փայլիկ ավելի հետին ձև է և մեզանում էլ ավանդված է ուշ՝ 13-րդ դարից: Տ-Ք: Անցման զուգահեռ օրինակներ քիչ չեն: Կարելի է նշել տախտ-բախտ. վերջինիս հետին ձև լինելը կասկածից զուրկ է:

Ճ-Չ: Իր. Շ-ով սկսող բառերը դարբարում են իրկայանում են Ճ-ով: Ուշադիր նայելով փոխառություններից ջանկը՝ նկատում ենք, որ շ-ով իրանական բառերը նոգրաբարյան փուլից են (չաղ, շուխայ, շեշ-մակ...), Ծ-րդ դարից բարձրության մեջ նանդիպող առանձնապես, երգը բառը (բարգասան, ամբարձասան, նուա՛ճ) արդեն 13-րդ դարից հանդես է գալիս շ-ով առաջ:

Ե-ի դիմաց դարբարում -շ-ունենք միայն շաման (բուսանուն է) բառում: Վ՛չայ ձեզ դպրաց և փարիսեցոց կեղծատարք. նի տասնորոգը զանախի և զսամիթ և զաման...» (Մտթ ԻԶ, Կհ Ծառյ. ԻԷ, 25, 27, 28): Այսպիսի եզակի վիճակներում հինք չի տալիս իր. Շ-հայ. -չ. օրինաչափությունը արձանագրելու Ծ-րդ դարում, մանավանդ, որ դաշլին կողբաբարյան փուլի բառը 7-րդ դարում գարձյալ ճ-ով է. (Նմտ. զարիեննիկ բառի մեջ):

Ժամանակային տարբեր կտրվածքներ են ներկայացնում նաև ձայնեղ -խուլ հնչյունային հակադրությամբ ձևերը, ընդ որում առաջին-

ները, ավելի նոր են: Անգար «Տամարի, մի բանի տեղ դնել» բառը մեկ անգամ գործածել է Նզդեհը: «Եթե լայն միտք ունեւորող էին, ապա ե կուտօթեան չէր յանգարի կուտօթեան»: Բառը աղբրովում է միջ. կր. *angärtten*՝ հետ, իսկ իրանական բառի արմատն է *kar* «ասնել, կատարել», որը հայերենում կար է: Իր. **par* արմատը նկատ — **nipara* բառում ավելի հինն է: Ներկայացնում բան ամբար—ում: Բառ երկվայթին հայ. տազնայ—ը, (ԷԼԵ, իրոք փոխառություն է) ավելի հին է, բան, միջ. պրթ. *ignbn*⁵², Կարող ենք նշել նաև կոչս «կողմ» և այդ արմատի գոտ ձևը՝ պատգոսպպան բառում:

Չայենդ -խոյ տարբերակային ձևեր կարելի է համարել և դաման—տաման.ը: Տաման.ը Արմ.—ում ստուգարանված չէ: Ունանք, թվում է իրավացիորեն, դամ և ամ արմատը կապում են իր. **daž*՝ հետ (տես Արմ. տաման բառի ստուգարանության պատմությունը): Նշված երկու բառերի ծագումնաբանական ընդհանրությունը կարող է հաստատել նաև դարձան և տարձան ձևերի առկայությունը:

Խույ-շնչեղ, խույ-ձայնեղ հնչյունափոխությունները կարող են լինել նաև հայերենի հին բարբառային երևույթներ: Հիշենք, որ Դիոնիսոսի մեկնիչներից Անանունը արգեն արձանագրում է բազուկ բառի բազուկ, պագուկ, փագուկ արտասանությունը: Բայց մեր նշած հրեչյունափոխական օրինակափոխությունները գործել են փոխառում լեզվում և հայերենը երևի հարգատարեն ներկայացնում է իրանական ձևը՝ դունե վերը բերված բառերի դեպքում:

Փոխառված բառերի շարքում կան մի քանի զույգեր, որոնք ներկայանում են Գ—Ժ տարբերակներով: արգ—արժ, բազ—բամ, ոյզ—ոյժ, առյզ—առյժ: Մրանց՝ ժամանակային տարբեր հատվածներ ընդգրկելու, փոխառության տարբեր արդյունքներից լինելու հարցը հստակ չէ: Թերևս միայն կարելի է համոզված ասել, որ Ժ-ով ձևերը պարթևական ծագում ունեն:

• •

Քանի որ խոսք եղավ հնչյունական որոշ առանձնահատկությունների մասին, ապա այստեղ նպատակահարմար ենք գտնում հայերենի իրանական փոխառյալ բառապաշարի ամլայների հիման վրա ներկայացնելու փոխառու և փոխառու լեզուների հնչյունական հիմնական օրինակափոխությունները:

Նախ ընդհանուր գծերով ներկայացնենք միջին իրանական փուլի՝ հայերենի հետ աղբրովող երկու հիմնական լեզուներին՝ պարթևերենի ու միջին պարսկերենի հնչյունական համակարգը:

Միջին պարսկերենի ու պարթևերենի ձայնավորական համակարգը նույնական է. երկար *ā*, *ī*, *ū*, *ē*, *ō*, կարճ, *a*, *i*, u: Բաղաձայնական համակարգում նույնպես զգալի տարբերություններ չկան: Վաղ պարթևերենի բաղաձայնական համակարգը ներկայանում է. խույ պայթական *p*, *t*, *k*, ձայնեղ պայթական *b*, *d*, *g* (ճեղքային շփական *β*, *ɟ*, *γ*), պայթաշփական *č*, խույ ճեղքային *t*, *s*, *š*, *x*, *x'*, *h* *մ.թ. ա. նաև* *h*), ձայնեղ ճեղքային *v*, *z*, *ž* (*ո-ից* հետո *ʃ* ենթահնչյուն), *y*, *l* *ոեղաղմի*, *m*, *n*, *β* *թրթռում*: ⁵³:

Վաղ պարթևերենի բաղաձայնական համակարգը համեմատաբար բիշ է հետացել ընդհանուր իրանական վիճակից: Կարելի է նշել հետևյալ փոփոխությունները.

1. *h* (Յ) հնչույթը գոյություն է ունեցել բոտ երևույթին մինչև *մ.թ. առաջին* հարյուրամյակը. մեր թվարկության սկզբին այն սկզբնական դիրքում դարձել է *s*, հոմաձայնավորային դիրքում՝ *h*: *մթ—ը՝* *h*: 2. *ɾ* վանկարարը վերածվել է ձայնավոր *+**ɾ* (*ու*, *ի*, *ու*):
3. *l* լայն տարածում է ստանում *ž* հնչույթը՝ զարգացալով իր. **l*-ից (տարբեր դիրքերում) և **č*-ից (հոմաձայնավորային դիրքում):
4. *j*-ն պահպանվել է սուկ որպես *ž*-ի տարբերակ (*ո-ից* հետո):
5. *β* հայտ է գալիս *l* հնչույթը, բայց միայն մի քանի բառերում: Ուշ պարթևերենի բաղաձայնական համակարգի փոփոխություններից նշենք. խույ պայթական *p*, է հոմաձայնավորային դիրքում վերածվել է ձայնեղ ճեղքայինի (*β*), (*δ*) զանալով *b*, *d*-ի ենթահնչյուններ: *k*-ն ձայնավորից և *ɾ*-ից հետո ձայնեղացել է, համընկնելով *g*-ին:

Միջին պարսկերենի՝ հին իրանական համեմատությանը կրած փոփոխություններից նշենք. *մ*-ի *s* կամ *h*-ով արտահայտությունը, *ɾ*-ի վանկարար արժեքի կորուստը, *l*-ի լայն տարածումը: Ավեստերենում *l* չկար, իսկ հին պարսկերենում առկա էր միայն մի քանի օտար հատուկ անուններում: Միջին պարսկերենում այն զարգանում է զուտ իրանական հողի վրա՝ հիմնականում **ɾ**մ*-ից և ձևոր է բերում լիիրավ հնչույթի կարգավիճակ: Հետագայում բուն միջին պարսկերենի համակարգում առաջանում են որոշ փոփոխություններ. խույ *p*, *t*, *k*-ի ձայնեղացումը միջ. և հոմաձայնավորային դիրքում, նույն դիրքում *č*—*z* անցումը, *y*—*j* անցումը: Այս երեք փոփոխությունները կատարվել են սասանյան շրջանում⁵⁴:

Հասակ չէ չի հարցր: Քեկ Մակիկեզի միջին պարսկերենի համար պայմանականորեն ներառում է չ, սակայն նրա բառարանում իսկ միջին պարսկերեն բառերի տառադարձան ժամանակ էրբէր չ չի նշվում:

Այժմ համառոտ ցույց տանք իրանական հնչույթների համապատասխանությունը հայերենում՝ փոխառյալ նյութի տվյալների վրա: Այդ համապատասխանությունները ժամանակակից ներկայացված են Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» գրքում (հատ. 1-ին, էջ 238—239), որտեղ զուգահեռների էլ անգլագրաբան էր փոխառությունների սկզբնաղբյուրների բնութագրան ընթացքում:

Իր. ձ, ա—հայ. ա (ոլոր դիրքերում) azāt—ազատ, axl—ախտ, āstār—աստառ: Իր. pat, pail, āhōyēթի a-ն հայերենում միշտ ապիս է —ե, հմմտ. պիտ, գարպապտ, անդերձապտե ե այլն: var—վերջածանցի a-ն որպես կանոն տալիս է ո: Հմմտ. gahvar—գահաւոր, ganjuvar—գանձաւոր: Այսուհի զործ ունեցող ոչ թե Յ—ն հնչյունափոխություն, այլ մեկ ուրիշ երևույթի նստ. փոխառություն շրջանում դիտակցելով var անանցի բառակազմական խմատը, հայերենը այն փոխարինել է նույնիմաստ սեփական անը անանցով: Իր. ē, e—հայ. է, ե: Հ. Աճառյանը նկատում է, որ բառակերպում (վերջնափոխում) e-ն է իսկ բառակերպում՝ ե: Իհարկե այսպիսի օրինակափոխումն կա, բայց ինչպես տեսանք երևույթը կարելի է բացատրել նաև տարրեր սկզբնաղբյուրների գոյությունը: Որտե բառերում ծ-ի հնչյունափոխությունը հայերենի հնչույթափոխական օրինակափոխման արտահայտություն է. nēznk—նէշնակ—նիշակ, spētak—*սպէտակ—սպիտակ ե այլն:

Իր. ī, i—հայ. ի: Բառակազմում ի ով սկզբի փոխառություններ շունենք, (զբաղարում ամենզգված բառերից բացառություն է կազմում իշխան-ը, որը մենք իրանական փոխառություն չենք համարում (224—225): Այլ դիրքերում հմմտ. *niš-նիշ, *nišra—նիշր, dipīr—դիպիր: Բառակազմում բաղանդայն+ի հնչույթափոխի i-ն շեշտի սպեցիությունը փոխվում է—ը-ի. հմմտ. vinas—վնաս, vitar—վտար, nizār—նիզար, ni-kār—նիկար:

Իր. ō, o—հայ. ոյ, ո: Օրինակաբեր օ-ոյ-ն է, բայց կան նաև բացառություններ հմմտ. bōrak—բորակ: Սրանք ենթադրում են փոխառության տարրեր աղբյուրներ է. Աղայանը «Հնդեվրոպական օ>հայերեն Ու հնչյունափոխության ժամանակը» շահեկան հոդվածում (ՔՅՀ, 1985, № 2), մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ կատարել է վիճակագրություն և համապատասխան երախանդում. «Հը. Աճառյանի իրա-

նական փոխառությունների ցանկից հանելով պահլավական այն բոլոր փոխառյալ բառերը, որոնք ունեցել են օ և առանձնացնելով օ>Ու-ն օ <Ո հնչյունական համապատասխանություններն ունեցողները, ստացել ենք հետևյալ պատկերը. Պահլ. օ-ն հայերենում դարձել է Ու միայն 8 բառում, իսկ մնացել է Ո(0) 37 բառում (ընդամենը) 46 բառ): Այս վիճակագրությունը վնայպում է հետևյալ երկախցու-թյանը. պարթևական օ >Հայերենում Ու հնչյունափոխությունն ունեցող բառերը պարթև արշակունիների դինաստիայի ստաշին 100—150-ական շրջանի, այսինքն՝ մ.թ.ա. 1-ին դարին նախորդած ժամանակահատվածի փոխառություններն են, իսկ պարթևական օ>հայ. Ո(0) համապատասխանությունն ունեցողները մ.թ.ա. առաջին դարից սկսած մինչև Սասանյանների կործանումը (642 թ.), բայց մեծ մասամբ Պարթև Արշակունիների օրոք» (էջ 29—30): Ե. Աղայանը կարողացրում է նաև, որ մինչև մ.թ.ա. 1-ին դարը գործում էր նախահին-հայերենյան օ>հայերենյան Ու հնչյունական օրինքը:

Իր. ā, u—հայ. ու: arūs—արուսեակի, bānū—բանուական, būn—բուն, gund—գունդ, uxt—ախտ: Իր. duš/duš—ածանցի u-ն հայերենում սպլում, կամ փոխվում է բարի (զժգոն,զժխեն,զժված), ātur բառը հայերենում հանդիպում է Բարի (զժգոն,զժխեն,զժված), ātur բառը հայարալյան, աարալյան, աարալյան: Իր. ū—հայ. ոյ որտե զուգահեռները (samūr—սամուր, gūn—գոն) օրինակաբ չեն և թիրեկ ենթադրելի է փոխառության անպահի աղբյուր, որ ուներ օ:

Իր. b—հայ. բ, ւ: Իր. b—հայ. բ հանդիպում է բառակազմում, բառակերպում՝ ձայնորդից հետո և բառակերպում: bānbišn—բանբիշն, gum-baš—գմբիթ, *apastamb—ապատամբ: Իր. b-ն բառակերպում՝ միջնախ-վորային դիրքում տալիս է ւ-, *tabil—տաբիլ, varaband—վարաբանդ: Նկատվում է, որ իր. b-ն արևմտյան իրանական լեզուներում տալիս է b, իսկ արևելյան լեզուներում՝ (w, v): Հմմտ. հայրս. band, նպրս. band, ոռւշ. vind, վախ. vand²⁸: Իր. b—հայ. ւ—համապատասխանությունը չպետք է կապել այս երևույթի հետ. ալլ դիտել հայերենում վ-ի արտահայտությունն առանձնահատկություն: Կարելի է կարծի, որ փոխառու լեզվում էլ ետնախավորային (b)-ն որոշակիորեն տարրերվել է ձայնիչ հպական (b)-ից՝ ունենալով ճնդգալին-զփական կրանց: Հնչական այս առանձնահատկությունն էլ հայերենում գրու-թյան մեջ արտահայտվել է—ու-ով բ-ի փոխարեն:

Իր. ē—հայ. ք առկա է բոլոր դիրքերում. čakāi—ճակատ, čāpūk

—ճապուկ, nachĭr—նախճիր, mač—մաճ: Ը—չ անցումը գրաբարյան փոխին բնորոշ չէ:

Իր. Ժ—հայ. ց—՝ բառակցում, բառամիջում՝ բաղաձայնից հետո և բառավերջում, dašt—գաշտ, andōh—անդո՛ս, gund—ցունջ: Ժ-ն միջ-ձայնափոքարյին զերբում ապխի է ք-ի Գա փոխառու լիզվի Ժ-ի տար-բերակ ձ-ն է. mida մար, *hadazat—հարգազտ, spālpet—spāzpet—սպարպետ: Իրանական լիզումներում (ձ)-ի առկայությունը ուսումնա-սիրողների կարծիքով հաստատվում են նաև հայերենի իրանական փոխա-ռությունների ընձևած փաստերով: Քանի որ հայերենը չափի ը հըն-չյունը և չկա համապատասխան առաջ աղ ճնչյունի նշանակման համար, պրթ. համաձայնփոքարյին ը նշանը արտահայտվել է ք-ով⁵⁷:

Իր. ց-ն (նաև Դ տարբերակներ) —հայ. —գի gavars—գավարս, angām անգամ čirag (čirag)—ճրագ, moγ—մոդ:

Իր. Է-ն հայերենում ներկայանում է մի շարք ճնչյուններիով՝ կախ-ված զերբից և ճնչյունափոքարի: Առ պարմանափոքարից է, նախ և առաջ հայերենում (ֆ) ճնչյունի քցտսկպոթխար. šacuh—šar—ի սար: Հա-լերենի բարբ սաներում (հասո՛պպնս գրաբարի նման Թ չուճնցոզ սա-րածքում, Է-ն զարձալ ֆ է. kafis փրփուրք—քափ, Միբ, Իբ. aīsōs—հայ. ախտս (ուճենք նաև ափսոսալ (ախ նճԲ), Իբ. iramān—հրաման Ի-ճնչյունախմբի. Իր-անցումը սրինջափ է): Այն կարող է իրանական փո-խառու սկզբնաղբյուրից և լինել հայերենի տասադարձման արջուճք: Է—գիմաց և ուճենք գրաչ (drais), աճան (ačar) քաներում:

Իր. Ի—հայ. և հանախական է լուրջ զերբերում, hamāk—համակ, āhōk—անոկ Բորջ զեպքերում Ի-ն բառակցում սլվում է. *harzak—արձակ (եթե վերջինս իրոք իրանական փոխառություն է):

Իր. Ե—հայ. բը: jatagōv—չառապով, tanj—տանց (եմ): Ինչպես նշել ենք Իր. Ե-ի որջ քաներում ձ համապատասխանությունը (զամձ, բը-րիճ...) հիմք է տալիս վերջինից չհամարելու միջին իրանական լիզումներից կատարված փոխառություն, այլ՝ ազվելի հին՝ մարտական:

Իր. Կ—հայ. կ: kapik—կապիկ, karavan—կարավան, kōlak—կո-տակ Բորջ զեպքերում Կ-ի գիմաց ք—է: kēš—քեշ:

Իր. Լ—հայ. Լ (ղ): *laškar—լաշկար, dahlič—ղահլիճ, salār—սա-զար, spahsālar—սպասալար:

Իր. մ, ո—հայ. մ, և. māhik—մահիկ, gōmēz—գոմէզ, duškām—զժկամ, nachĭr—նախճիր, dēvan—դեւան: Մի շարք քաներում Իր. ո-ն ներկայանում է մ: anbar—անբար, anbōh—անբոհ: (Ինչպես նկատում

է Լ. Մարաղանը, սա փոխադրեցական ճնչյունափոխություն արգասիք է)⁵⁸:

Իր. Բ—հայ. բ, ո: rag—(ա)րաց, ramik—ամախի⁵⁹: Ինչպես նշել ենք Իր. Բ-ն ձևերը ներկայացնում են տարբեր աղբյուրների վաղ փոխա-ռություններում ո-ի առկայությունը պետք է քայտարել Է-ի, կամ Է-ին հաջորդող ո-ի ազդեցությամբ. *čurak—ճուռակ, ափեսա, asbarənan—հայ. սպաս, varəna—հայ.—վառ (եթե վերջինս իրոք իրանական փո-խառություն է), vaha—čarana—վաճառ, հպրս. parana, parna—հայ. պատա, *pati—čarana—պատճառ:

Իր. Տ—հայ. տ *slav—սևա, dastak—զատակ, spās—սպաս:

Իր. Տ—հայ. շ, šapik—չապիկ, rōš i—ուշ(ակոն), *čāš—ճաշ:

Իր. Թ—հայ. տ, ք: tap—տապ, ātur—աար, dāt—զատ, tang—թանց tošak—(Լ-ի) ազդեցությամբ՝ առվի, աղի): vattar—վատար, եթե երկրորդ Լ-ի ճնչկազանքը փոխառու լիզվից չէ (երկու խալերի կողմ-կողքի գանգվել կարող է պատճառ լինել նրանցից մեկի ճնչկազանքն)⁶⁰ (առնձմանություն), ապա ճնչկազանքն երևույթը կատարվել է հայերե-նում՝ նկատել, որ առկա են վաքթար, վաքթար վիպարությունները:

Իր. Վ—հայ. վ, ւ: Ինչպես գիտենք հայերենում Լ-ն, երբեմն նաև ու-ն հանդես են գալիս որպես վ ճնչյունի զերբային տարբերակ Վ-ն հանդես է գալիս բառակցում, նաև ո-ից ճեսու, Լ-ն՝ միջձայնալի-րային և բառակերպի ետմ պնաղբյուրյին զիրքում՝ բացի ու ձայնափոքին ճարտրոց զերբից⁶¹, նույն երևույթը ներկայանում է և իրանական փոխա-ռություններում. vāčār—վաճառ, vang—վանի, gōv—գով (ևլ), dusrav—գորսով, avazan—աազան, gahvar—գահաար, iravē—հրաւէր, grāv—գրա⁶²:

Իր. Վ—հայ. ու հանդես է գալիս երկարբառային զերբում՝ ձայնա-փոքից առաջ, բաղաձայնից հետո, tuvanik—թուանիկ, šāhvār—չահաար parvaz—փարտազ, dušvar—դժար: iva—ճնչյունափոքար հայերենում ներկայանում է ուս երկշարքառով. nivaz—նուազ, nivag—նուազ:

Իր. Խ—հայ. խ: xurtak—խորտակ, axl—ախտ, səx—սոխ (եթե վեր-ջինս իրոք իրանական է):

Իր. Կ—հայ. Ե: yaz—լազ, jašt—լաշտ, *payusak—պայտակ, hu-māy—հմայ(ել): Բառակերպում Ե-ն հիմնականում ձայնավորից հետո է (առնվիրբալ, վարսավիրալ...), որը համապատասխանում է նաև հայկ-րենի ճնչյունական օրենքներին:

իր. շ—հայ. գր. շօր—գոր, ʔindan—գնդան, azd—ազգ, gōmez—գովէզ:

Հայերենում ր-ից հետո որոշ բառերում շ-ի գիմաց առկա է ձ. an-darz—անգարձ, barz—բարձ, marzitan—մարձ(նյ)... Թերևս այս բառախմբի համար պետք է ենթադրել փոխառություն մեկ այլ՝ անժանոթ աղբյուր, որտեղ իրանական շ-ն ունի Գ հնչումը:

Իր. շ—հայ. ժ: Հայերենի հնչյունական համակարգում ժ-ն հանդես է գալիս մեծ մասամբ իրանական փոխառություններից: Ավելին, այժմ հայտնի է, որ ժ ունեցող փոխառյալ իրանական բառերը զայիս են պարբևներենից, կամ համեմատն զնպս հյուսիս-արևմտյան բարբառներից: žang—մանց, dažan—զաման, hāž—բաժ: Հիշենք, որ զ ժ մասնիկը նույնպես իրանական է (ինչպես նաև այդ մասնիկը ներառող շատ բառեր. դժկամ, դժկամակ, գժիկպ...): Ե. Աղայանը քննելով զժ-ը լծոր-գտությունները իրանական փոխառություններից և նկատելով, որ ունենք զժօխժ, զժկնպ, զժուար... մյուս կողմից՝ րջնամի, րշուսու նույն duš-ի գիմաց, եղրակացում է, որ ժ—շ հնչույթները լրացացիչ բաշխման մեջ են եղել⁶²: Կարևոր է կարծել, որ հայ. զժ-ը զայիս է անմիջապես իր. duž-ից, իսկ րշ-ը՝՝ duš-ից⁶³:

Նշել ենք, որ ու, vi հնչյունախումբը գտնում է նլը/ վլը: av-ը հաճախ հայերենում գտնում է ով—dusrav գարով, Xosrav—Խոսրով, fravartak—հրովարտակ, bavandak—բովանդակնախ բաւանդակ/:

Եթե այս երևույթը զուտ հակական չէ, ապա պետք է ենթադրել իրանական տարբեր աղբյուրներ, մասնավոր, ալշի ով զուգահեռ ձևերի համար⁶⁴:

Իր. x՝a-հնչյունախումբը հայերենում ներկայանում է խո/երբեմն՝ խա/՝ x՝ar—խոհ, x՝arak—խորակ, x՝artik—խորտիկ, x՝astak—խոտակ, nixx՝ar—նշխոր: Ըստ երևույթին այն արտահայտում է իր. x և v՝ հնչյունների հարաբերությունը:

Որոշ բաղաձայնական խմբեր հայերենում ենթարկվում են զրափոխության. xš—շի. xšēl—աշխէտ, baxš—բաշի, čarx—ճար, čar-xak—ճարարակ⁶⁵; muhrak—մուրակ, šnohr—շնորհ: Հայտնի է նաև, որ-իը-կապակցությունը երբեմն ներկայանում է և. mehrakan—մեհեկան pahc—պահ, vaspuhrakan—վասպուրական:

Գ Լ Ո Ւ Ե Ք

ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈՒՍՈՒՐԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՌԹԱԳԻՐԸ ԸՍՏ ԽՈՍԻՐ ՄԱՍԵՐԻ

ԳՈՅԱԿԱՆԵՐ

Փոխառությունների նվիրված լեզվաբանական գրականության մեջ բազմիցս հաստատված է, որ փոխառյալ բառերի ընդհանուր թվի մեջ գերիշխողը զոյականներն են: Դա պատահական չէ: Գոյականները իրականության տարիաների, երևույթների, հասկացությունների արհեստաստվածն են, իսկ վերջիններս ալիելի շուտ են փոխառվում: Գոյականներից հետո զայիս են անականներն ու բայերը: Այսպես կոչված, երկրորդական խոսքի մասերը փոխառությունների մեջ չնչին տոկոս են կազմում: Մեկ հայտնի բազմաթիվ վիճակագրական տվյալներից բերենք միայն մեկը, որ վերաբերում է Ֆրանս-իտալական լեզվական անընդունելիքին: 13—20-րդ դդ. իտալերենի՝ ֆրանսերենից կատարած փոխառություններում զոյականները կազմում են 79,7%, անականները՝ 9,9%, բայերը՝ 10,4%, մակրայնները՝ 0,3%, ձայնարկությունները՝ 0,1%¹: Ֆրանսերենի՝ իտալերենից կատարած փոխառությունների տոկոսային համամասնությունը մոտավորապես նույն պատկերն է ներկայացնում՝ 1221 փոխառյալ բառերի 1005 կամ 82,3%-ը գոյականներ են²:

Հայերենի իրանական փոխառություններում էլ գերակշիռը զոյականներն են: Դասակարգումներով աշխատանքը լծարբարեկելու համար, այստեղ փոխառյալ զոյականների ցանկը չենք ներկայացնում: Մենք կատարել ենք մեկ այլ դասակարգում (փոխառությունները ըստ զարբերի), որտեղ և ներսում է, որ իրոք գոյականները անհամեմատ շատ են մյուս խոսքի մասերից: Բերենք դարձյալ մեկ վիճակագրական տվյալ. 7-րդ շ. վկայված յոթ տասնյակից ալիելի փոխառ-

յալ բառերի մեջ գոյական ընն միայն անազարմ, համազար, սպումել բառերը:

Անօգտակար շենք համարում ներկայացնելու փոխառյալ գոյականների մի քանի խմբեր բոտ բուսականական առանձնահատկություններին: Այլ կերպ ասած, որպես տարրերակման հատկանիշ նկատի են անվում այն ձևերը, որոնք կամ հնչյունախմբեր, որոնք բնորոշ են իրանական փոխառություններին:

Քննությունը ցույց է տալիս, որ բավական շատ են ա) —ով—ով վերջացող բառերը, ամբարտակ, ապտանեղակ, ապտտակ, արունանակ, աւազակ, բազմակ, բածակ, բամբակ, բարակ, ճորսի շուն, բորակ, գաղերբուակ, գամատրակ, գահնանակ, գաստանակ, գոյրբուակ, գոմարտակ, գուշակ, գրտակ, դահնանակ, դաշնակ, գաստակ, գաստտակ, գաստհարակ, գաբրձակ, գեպակ, դիպակ, դմակ, դորակ, դրոշակ, երակ, ցանչակ, գուրբակ, քստրակ, թաշխնակ, թռակ, խոտտակ, խորշակ, կարկանդակ, կշտապանակ, կոհակ, կտտակ, կրպակ, համբարակ, հանգանակ, հեշնակ, հոշրբուակ, հպտտակ, հրապարակ, հրբուակ, հրնշտակ, հրովարտակ, ճախարակ, ճանքակ, ճաշակ, ճատրակ, ճարակ, ճիշտակ, նամակ, նաստտակ, նաշիրտակ, նապատտակ, նափակ, նեպակ, նիզակ, նշանակ, նուիրակ, նատտակ, շահդանակ, շաշմակ, պահակ, պայմաննամակ, պայտտակ, պատակ, պատմունակ, պատուիրակ, պատրունակ, պարենակ, պարտակ, պիտակ, պիտտակ, բոտառակ, ստակ, սկառտակ, սմբակ, սմնակ, սորհանդակ, ստամբակ, սրուակ, վանդակ, վարձակ, վարձակ, վերձակ, վեղենակ, վիճակ, վեռտտակ, վտակ, վտաակ, տախտակ, տապակ, տատրակ, փերեղակ, քանդակ, օշարակ, օրինակ:

բ) բառակցում պատ բաղադրիչով բառեր. պատարար, պատգամ, պատգարակ, պատգոսապան, պատերազմ, պատկանդարան, պատկեր, պատճառ, պատճեն, պատմունակ, պատմունան, պատուիր, պատուզամ, պատուտան, պատուար, պատուէր, պատուիրակ, պատուիրան, պատուհան, պատուտ, պատուրդ, պատրուակ, պատրունակ:

գ) բառակցում ապ(ապա) բաղադրիչով բառեր. ապակի, ապահարգան, ապախտար, ապաշուտ, ապատտան, ապարանքան, ապարանք, ապարանք, ապարանգակ, ապալէն, ապիզար, ապշոպ, ապտամբ, ապուխտ, ապուտ, ապրդում, ապրում:

դ) հր- հնչյունախմբով բառեր. հրահանգ, հրաման, հրաշք, հրա-

պարակ, հրասախ, հրաէր, հրնշտակ, հրտակ, հրբուակ, (Մի շարք բառեր հր, հր ունեն բառամիջում կամ բառավերջում. աշխարհ, պարհ, ճանապարհ...)

ե) իրանական լիզունբում ր-ով սկսվող բառեր, որոնք հայերենում հանդես են գալիս ե- նախահավելվածով. երազ, երախ, երախտ, երանգ, երանք, երաշխ, երաշտ, երասան, երաստ երիտասարդ, երկրաշխ, եր (խշ)-հնչյունախմբով ունեցող բառեր. աշխար, աշխարհ, աշխարհակ, աշխտ, արշխ, բաշխ, բաշխ:

Կարելի է առանձնացնել զմ(ջ) հնչյունախմբով բառեր (զմել, զմոխ, թշնամի...), առավել շատ են այս կազմովյալ անականները: Բավական մեծ խումբ են կազմում համ- մասնիկով սկսվող բառերը, դրանք մեծ մասը, սակայն կարող է լինել հայակազմություն: Վերջապես պետք է նշել նաև բառավերջում պան/պետ կազմություն ունեցող բառաշարքը: Կրկնությունից խոսափելու համար դրանք այստեղ չենք թվարկում: Այդ բառերի մասին կխոսենք այլ առիթով:

Փոխառություններին վերաբերող ցանկանություն մեջ հաճախ փոխառյալ բառերը գասակարգվում են նաև բոտ կիրառության ոլորտներին: Այս, անշուշտ, նպատակով է փոխառյալ բառաշարքի ավելի մասնամասն ու բծախնդիր ուսումնասիրությանը, ինչպես նաև արտակերպական որոշ շարքերի լուսարանմանը: Այդպես է վարվել և Հ. Աճառյանը: Մենք կառանձնացնենք գոյականների կիրառության մի քանի ոլորտ, որոնք բնորոշում են զգալի նոր նյութ կամ էլ պահանջում քննության նոր հայեցակետ:

1. Կենդանական աշխարհ.

բազ, բազկ, բարակ, բարք, բշշ, մշխոյ, գապան, գրտտ, գոմէշ, խարբուզ, կապիկ, կարիճ, կիզում, կուզ, ճուռակ, մատակ, (մատենակ), մարախ, մոցես, մուշկ, յատենակ, յովազ, յովատակ, նապատտակ, նափակ, նահանգ, նոխազ, շահեն, շարպազանգ, պատրունակ, սամուր, սիրամարգ, վազր, վարազ, վիշապ, տատրակ, տղբուկ, փալանիկ, փիղ, քուտակ:

Այս շարքի մեջ չենք մտցնում սարկ-ը, որովհետև այն կարող է լինել և բնիկ հայերեն բառ: Քալթար «բորենի» բառը գրաբար մատենագրության մեջ ավանդված չէ և առկա է միայն որոշ բարբառներում (Աճառյանի ցանկում սրանք կան):

Վերահիշյալ խմբի բառերի կեսից ավելին վկայված է V դ.: Այժմ էլ գործածական են այն բառերը, որոնք վկայված են այդ դարից:

2. Բուսական աշխարհ.

Ազոխ, անանուխ, անգուժատ, արմու, բամբակ, բան, բուրձենիկ, բուն, բուրաստան, բրինձ, գաղերբուակ, գաղզլեն, գաւարս, գոյիբուակ, գաւաստան, դարիճենիկ, դժնիկ, դրախտ, զոփրակ, ծած, կաղամբ, կանկար, կնդրուկ, կնճիթ, համապարամ, հիրիկ, հոշիբուակ, հրբուակ, ճանբակ, ճանդան, մանուշակ, մարգ, միրգ, մուրս, մօրուս, յամբիկ, նարգէս, նոճի, շահգանակ, շաղգամ, շամդրուակ, շաման, պատուստ, պահէլ, պարտէլ, պիտակ, պղպղի սարոյ, սմնակ, սնգորուղ, սոխ, սոնիճ, վարդ, վարունգ, փաղանգամուշի, բրբուտ, օշինիք, օշնան:

Այս խմբին պատկանող երկու տասնյակից ավելի բուսեր (անգուտան, գարապղպղ, միրակ, կարու, շահճուակ...) վկայված են միայն Բուսաբաններում կամ ետգրարարչան փուլում, այդ պատճառով ցանկի մէջ չենք մտցնում: (Մրանք նույնպէս զետեղված են Անատանի ցանկում): Գաւարս, զոփրակ, ծած, ճանբակ, օշնան բուսերը մեր մասուննագրութեան մէջ վկայված են 1—2 անգամ: Մի շարք բուսեր (բան, բուրձենիկ, գաղերբուակ, գոյիբուակ, դարիճենիկ, հոշիբուակ, հրբուակ, ճանդան, շահգանակ, պիտակ, սնգորուղ, փաղանգամուշի) վկայված են միայն VII դ.՝ Խորենացուն վերագրվող աշխարհագրութեան մէջ՝ որոնք ոչ միայն հաղվադեղ, այլև համատեքստով պայմանավորված բուսեր են: Աշխարհագրութեան հեղինակը խոսելով այս կամ այն երկրի մասին, թվարկում է նաև այդ երկրին բնորոշ բուսերը՝ իրանական անվանումներով: Բուսերի այդ տեսակները չկային Հայաստանում, և հեղինակը կամա թև ակամա դրանք ներկայացնում է օտար անվանումներով: Սրինակ, Զինաստանի նկարագրութեան ժամանակ գրում է. «...և է ճննասան բնդարձակ զաշտ արարածնար: Լինի ի ճննաց աշխարհին դարիճենիկ և հոշիբուակ և բուրձենիկ և կապիճն և սրիկոն» (615): Ընդհատաբար նկարագրելիս օգտագործում է ուրիշ օտար բուսեր. Ընմտ. «Լինի անդ ոսկի և արծաթ, պղպղի և սնգորուղ և ամենայն բուրձենի, հայուկ, փաղանգամուշի, բափուր, ճանդան...» (Ն.տ.): Զգացվում է, որ անձանոթ հասկացութիւնների զեպրում, հեղինակն օգտագործում է օտար բուսեր: Ըստ երևույթին հեղինակը օգտվել է իրանական սկզբնագրութեցի, բանի որ ինչպէս տեսանք որոշ զեպրերում անձանոթ հասկացութիւնները ներկայացնում է իրանական անվանումներով:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ բուսերը իսկական փոխառութիւններ չեն, դրանք հաղվադեղ հանդիպող անվանումներ են: Մրանք փոխառութեան հասկացութեան հետ անվկում են լուկ այնքանով, որ վկայ-

ված են մեր մասնագրութեան մէջ: Եվ եթէ վճռականորեն չենք կարող պնդել դրանց և այդ տիպի բուսերի՝ փոխառութիւնների ցանկում չզետեղելը, ապա գրեն պետք է դրանք առանձնացվեն և զիտվեն որպէս փոխառութիւնների յուրահատուկ խումբ, որը փոխառու լեզվում դրբուտում է մի շարք սահմանափակումներ (զործառական, բառակազմական, հաճախական, ժամանակագրային և այլն):

Բուսական աշխարհին վերաբերող Բուսաբանում այն բույսերն են, որոնք ներմուծվել են Հայաստան:

Ինչպէս նկատում է Անատանի, օրիկի հայկական 21 բուսանուններից շատը ներկայացնում է վայրի բույսեր կամ անտառային ծառեր, մինչդեռ իրանականներից շատերը մշակական բույսեր են:Փոխառյալ, բուսանունների մի ստված մասն էլ ծագկանուններ են, որը հաստատում է, որ ծագկանունները Հայաստան է մտաք գործել Իրանից, որտեղ այն դեռևս արեմենյան շրջանից լայն հռչակում ունէր:

Այստեղ նպատակահարմար է նշել նաև ուսելիք և բովելիք արտահայտող փոխառյալ բուսերը. դրանք են. ամիճ, ապոխտ, գրասկ, խոճ, խորակ, խորտիկ, կակի, կարկանդակ, կտակ, հրուշակ, ձար, ձաշ, նկան(ակ), նշխար, նպար, պաշար, պարէն, բաշկէն, օշարակ: Այս խմբի մէջ գերակշիռ են հացատեսակները կամ ալյուրով պատրաստած ուտելիքներ, հացատեսակ արտահայտող բուսերից են նկան-ը, արտագարանատիւսան տվյալներից կնկով մտորի մէջ թխած հացն է, Բաշկէն-ը զարեհացն է, գրտակ-ը կլորածն հացն է: Անշուշտ, հայերը հաց և հացատեսակներ ուժեցել են վաղնջական շրջանից, սակայն Իրանից մտաք է գործել նաև նոր տեսակների՝ համապատասխան անուններով:

3. Մարմնի մասեր.

Անգամ, բաղուկ, բաշ, դէս, դանդան, դաստ, գաստակ, դէմք, դմակ, երակ, երակ, երան, կուշտ, ճակատ, պտակ, պիտակ, սմբակ, վարս, փիղ, բաշ:

Մրանցից միայն դանդան, փիղ, Բաշ բուսերն են, որ այժմ գործածական չեն: Գաստ-ը թեև վաղ գրաբարում հաճախական չէր, սակայն նրա բառակազմական ակտիվութիւնը հաստատում է, որ վաղ շրջանից բառային իմաստը հասկանալի է եղել, հնարավոր է նաև բանավոր խոսքում նրա անկախ, հաճախական կիրառութիւնը: Գանձակ «փոր, ակիք» բառիմաստը հավանաբար ձևոր է բերվել հա-

չեղենում, ուստի բառը այդ իմաստով փոխառություն չենք համարում» (ՏԼ՝ ս էջ 223):

Մարդու և մարմնի մասերին վերաբերող բնիկ հայերեն բառերը մոտ երեք անգամ շատ են:

4. Հագուստ, զարդարանք.

Աճառ, անդրափարտիք, աշխարաւանդ, ապարանդան, ապրիշում, աստառ, արտախոյր, բազպան, բահուանդ, բեհեզ, գորշապահանգ, գրապան, դիպակ, գրոշակ, «քրանցք», զանկապան, զստնաուխտ, ըստօրակ, քաղ, քաշկիկանկ, խոյր, կամար, կերպաս, կշտպանակ, կոշիկ, հանդերձ, ճածանլաուխտ, ճամբար, «մանյակ», մեհնանդ (կանացի զարդ): մեկնան, մոյկ, մուճակ, շապիկ, շատրուան «վարագոյր», շարագոյր, պահճաւանդ, պատտառ, պարեհնակ, պարտակ, պրակ, սանդալ, սնդրու, վառ, վարշամակ, վարտիք, վտաւակ, փաղան, փարուսդ, «ծապավեն»:

Այս շարքում կարելի է դնել բառ, բայ «գորգ», վերմակ, սապաւստ, զորք բառերը:

Այս խմբավորմանը վերաբերող բնիկ հայերեն բառերը զգալիորեն քիչ են (ըստ Աճառյանի հաշվումների՝ 12 բառ):

5. Սարքավորումներ, գործիքներ.

Անգղ «աման», սպրչում, ապրանջակ, առասան, առպանդակ, բազմակ, բամակ, բուրտառ, դահ, գահաւորակ, գանդանանեզ, զաշխորան, զաստապան, զաստառակ, զարդիճ, զեփպակ, զոյլ, երասան, զամբիջ, զանդակ, քալոյկ, քմբուկ, ժանուար, լական, խան «սփին», խարազան, կուժ, հաւան, ճրագ, մեխոյկ, մտակ, մշոփի, մոժ, նուազ «բաժակ», շարաւանդ, շիշ, պաղան, պաշուսակ, պտտգորակ, պարտոյլ, սապատ, «եղորձ», սկտառուակ, սրուակ, վանդակ, վարագոյր, վարաւանդ, վարձ, վին, տախտ, տաշտ, տապակ, տապան, տախդ, փեթակ, քաշիկ, քորձ, քակ:

Այս խմբավորման մեջ կարելի է առանձնացնել մի քանի ենթախմբեր. ա) նկատելի է, որ շատ են ձիու ստրուքները (ապրիշում, առասան, սապանդակ, դանդանաւանդ, երասան, վարաւանդ): Այս ենթախմբի բառերը աղբրվում են նաև ռաղմական տերմինների հետ, բ) լույսի աղբյուրներ (բազմակ, ճրագ, մոժ, պտտոյլ, այտաղ կարելի է դնել և պատւանճը): գ) նստելու առարկաներ (գահ, գահաւորակ, զարդիճ, զեփպակ, ժանուար, տախտ): Վերջիններս մի ընդհանուր հաս-

կացության (առարկայի) զանազան տեսակներն են, որոնք օգտագործում էին պարսիկները: Գեոպակն ու ժանուարը, օրինակ, ինչպես նշում է Աճառյանը, ճամփորդական միջոցներ էին: «Առնուտ երկրներում և երկարատև ճամբորդությանց համար սայլերը անհարմար էին. մի հեծնէլը փոքր մանուկների և զանվական տիկիների համար դոժվար էր. ուստի հնարել էին զեփպակը և ժանուարը: Առաջինը մի տեսակ հովանավոր կտար և կամ պաղպարակ էր, որ ծառաները ձեռքերի վրա բարձած ամենու էին: Իսկ երկրորդը (ժանուար) ներկայացնում էր ձիու կամ ջրու մէջքին բարձած մի զույգ փոքրիկ սենյակ. հասակը զորք կամ անկողին փռած և շորս կողմերը վարագույրով պատած ժանուարները մինչև այսօր էլ զործանական են Պարսկաստանում և արդի պարսիկներնով կոչվում են քելավա՛հ: Վերորդայ խմբավորման մեջ համարյա չկան հողամշակութային գործիքներ (միայն մանն է. որի իրանական ծագումը ստույգ չէ): Երկրագործության այդ ճյուղը մեղանում զարգացման թերևս ավելի բարձր մակարդակ ունի, քան հարեան Իրանում:

6. Ծինարչուն.

Ախոռ, ական, ամբարտակ, սպարան, սապատան, սապարէզ, սալզան, բազին, գմբեթ, դահլիճ, դաստակերտ, զտրապառ, դիւան, զեղան, խան, «իջևան», խորան, կրպակ, ճնճիշ, մաշկապարճեն, պատշգամբ, պատտաք, պարխալ, պարկէն, սրահ, սրկապան, «եներքին սենյակ», վան(ք), վրան, տամար, տաղաւար:

Վրանառիպ շինություններ են արտահայտում վրան, խոհան, տաղաւար, մաշկապարճեն-ք: Տանաք սրկապան ունի օպարատ, արքունիք» նաև «անկելանոց, հիմանդանոց», հետագայում՝ «աղոթատուն» իմաստը նույնը և վան(ք), որը որպես կրոնական հասկացություն, բարձմաստի հետագա զարգացման արդյունք է: Ինտրապան ունի «բնակարան, հյուրանոց», «թիւան» նշանակությունը: Բազին-ը միշտ էլ հայտնի է որպես կրոնական հասկացություն:

Այս խմբավորման տակ ներկայացվող բառերի զգալի մասը արտահայտում են տուն, շինարչուն բնորոշման բառերը հասկացության մասնանիի գրականումներ: Վերոհիշյալ խմբավորման շատ բառեր աղբրվում են պետական, վարչական կյանքին վերաբերող բառերի հետ (ալկան, պարխալ, պարկէն, սապատան բառերը կարելի է դիտել նաև որպես ռաղմական կյանքին վերաբերող բառեր):

7. Ժամանակ ցույց տվող բառեր

Անեկան, ամանակ, ժամ, ժամանակ, հրառից, մարգաց, մաբերի, մեհեկան, նաւասարդ, տէլ:

Այս խումբը բավական փոքրածավալ է: Եղևնը նաև, որ նույնութիամբ բերել ենք Աճառյանի ներկայացրած խմբավորումը⁶, բաց թողնելով ասան «առավոտ» բառը, որը մեր կարծիքով հայերենում ընդհանրապես վկայված չէ, (տես էջ 220), և, նախ-ը, որ գոյական չէ: Վերահիշյալ խմբին անդրադառնում ենք այն պատճառով, որ այդ խումբը ներկայացնող և փոխառյալ համարվող որոշ բառեր մոտորունների տեղիք են տալիս:

Այս խմբից էրբ բառ՝ ամանակ, ժամ և ժամանակ արտասանություն և ընդհանուր ժամանակի զարգացար, մյուսները ամանակուններ են, որոնք գործածել են մեր նախնիները: Այսինքն առաջիններից:

Թեպետ հայերենի իրանական փոխառություններին վերաբերող հոսքային գրականության մեջ ժամ բառի իրանական ծագումը կասկածի տակ չի առնվում, և մենք էլ թողել ենք փոխառյալ բառերի ցանկում, այդուհանդերձ այն կարող է լինել և ոչ իրանական բառ: Արմատական բառարանում ժամ-ը կապվում է իր. ʒamān, ʒamānak ձևեր հետ: Արտաբնույթ լինում է ամեն ինչ ճիշտ էլ Բայց ուր մնաց իր. an (anāk) ձևովը: Իրանական նշված ձևերը ավելի հարմար են մեր ժամանակ բառին:

Ուստի կարելի է ենթադրել ժամ բառի այլ ծագում (զուցն գլ+ամ, զ>ժ հետագա հնչյունափոխությամբ):

Սուսվել առարկելի են ամանակ-ի իրանական ծագման փաստարկները:

Ուսումնասիրողները իմաստային ընդհանրությունից ելնելով նույնացնում են ամանակ և ժամանակ բառերը: Պատրուբանին, օրինակ, պարզապես նշում է ժ-ի անվորը (բառասկզբի հնչյունը այդքան հեշտորեն կարող է ընկնել): Հյուրըմանը նույնպես կապ է տեսնում այդ երկու բառերի մեջ, թեև որոշակիորեն չի բացատրում ամանակ ձևի ծագումը: Արմատական բառարանում Հ. Աճառյանն էլ անվերապահորեն բառը համարում է իրանական փոխառություն՝ համարելով պր. amāna ձևի հետ, միաժամանակ նշելով, որ պարսկերենի մեջ այդպի-ե բառ չի ավանդված, բայց կա amān «ժամանակ, ժամանակահատված», որի հետ միասին՝ «հայերենի միջոցով ենթադրում են՝ amāna պղ. amānak ձևը: Նախ ասենք, որ միջ. իր. *amānak պրո-ում սպասելի էր *amāna, որը, ինչպես նշում է Աճառյանը, գո-

յութում լուծի, և ապա պր. amān-ը ոմանք համարում են արարերեն: Մերծելով այս, Աճառյանը գրում է, «ինչպես որ պր. zamān բնիկ պարսկերեն է և ոչ ընավ արաբերեն, ինչպես ցույց է տալիս հյւ-ժամանակ բառը, նմանապես և amān բնիկ պարսկերեն է, ինչպես ցույց է տալիս հյւ. ամանակ բառը»: Սա, ինչպես նկատում ենք, հիմնավոր փաստարկում չէ:

Ամանակը նվազ հաճախական է Բաղը լի կիրառված V դ. հայ շեղծակների մոտ, թարգմանական շատ գործերում, այդ թվում և Աստվածաշնչում: Վկայված օրինակները հուշում են, որ բառը գործածական չէր ոչ որտեղ է ընդգրկում և բերող է հիմնականում գիտական ո-մին Հմմտ. «Ջառուր և զգրչես, զամիսս և զտարիս և միանգամայն սուսասարակ ամանակ ո՞» արդեօր կցուց: Կամ՝ «Բայ է ընդունական ամանակաց» (ՆԼԹ) և այլն:

Կարելի է կարծել, որ ամանակը հյւ. բառ է. ամ-ից (հ.ե. *sem), անակ անանցով, անպայման ժամանակ բառի համարանությունը՝ ժամանակագրորեն վերջինից ավելի ուշ ստեղծված, կիրառական ոլորտներով ավելի սահմանափակ: (Նկատենք նաև, որ անակ-ով կազմությունները հայերենին խորթ չեն):

Անդրազատնանք ամասնունների շարքին: Հայց հին ամասնուններն են. նաւասարդ, հոթի, սանի, տէլ, ֆաղց, աքաց, մեհեկան, աբել, անեկան, մաբերի, մարգաց, հրառից: Մյուսնից 7-ը՝ նաւասարդ, տէլ, մեհեկան, աբել, մաբերի, մարգաց և հրառից համարվում են իրանական: «Տոմարը պարսկերենի մեջ էլ այս միևնույն կազմություն ունեւր,—գրում է Հ. Աճառյանը,—տրոսնից էլ փոխառություն անցավ հայերենին. ուստի զարմանալի չէ, որ յոթ ամասնուն և մեկ ամսի էլ թարգմանությունը միասին ժառանգած լինեն հայերը» (աբել և ամասնունը համարվում է թարգմանություն—Լ. Հ.):

Իրանական օրացույցն ու ամասնունները հայտնի են դեռևս արեմեյան շրջանից: Գարիճի արձանագրություններում վկայված է ութ ամասնուն, մյուսները վերսկանդզմում են այլ լեզուների տվյալներով⁷, Սասանյան շրջանում համընդհանուր գործածություն գտած օրացույցը արտասանություն էր ոչ թե արեմեյան, այլ ամենայն հավանականությամբ զրազարտական եկեղեցու նորմերը: Իրանական հին օրացույցը լեզվի փոփոխություններով կիրառվում էր մինչև մ.թ. 651 թվականը, այսինքն՝ մինչև արաբների տիրապետության հաստատումը⁸:

Հայերեն, անշուշտ, իրանական օրացույցին և ամասնուններին ծանոթ են եղել վաղնջական շրջանից, սակայն զիվար է ստուգապես

ենթադրել այն ժամանակաշրջանը, իրը հայերը սկսել են օգտագործել իրանական ամսանունները¹²: Ի զոնց նշենք, որ բոս ավանդության հայտնի մեջ գործածվող հին ամսանունները Հայկի զավակների տնտեսներն են. «Նասասարգ, Հոտի, Սահմի, և Մեհենկի, Արեկ, Մարբի ցուսերը էին Հայկին: Տրե, Քաղոց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին»¹³:

Մեր ամսանուններից մի քանիսի իրանական բնույթը, իրոք, կասկած չի հարուցում: Այգյան է, օրինակ, նավասարգը, որի երկու բաղադրիչներն էլ իրանական են. մեհենկան, անհկան և մարբի զարձալ հնչյունական կազմով համապատասխանում են իրանական ձևերին:

Կասկածելի է հեռացից, մաբգաց և առլ ամսանունների փոխառչյալ լինելը: Առարկելով առլ ամսանվան բնորոշված ստուգաբանության դեմ (պճ, մե, պր. մի շարքակիցին շորթոր ամիրք՝ հայերեն տիրե-ի -և- վերջավորությունը դիտվում է իրանական մի զավասակների ուղղակի վերջավորություն), է. Աղայանը, տալիս է բառի նոր մեկնություն՝ համարելով այն հայերեն «Հին հայոց ամսանունները, — նկատում է է. Աղայանը,— սեռական հոլովով են կազմված, ինչպես Բաղոց, մաբգաց և այլն. սեռականով կազմությունն ամսանունների համար այնպիսի համակարգ է ներկայացնում, որ է. Քենդեհստը հակված է նույնիսկ առեզ ամսանունը, առլ բառի սեռականը համարելու: Այսպես պետք է մտածել նաև առլ ամսանվան մասին և համարել այն սեռական հոլով, ինչպես վարվում է Հ. Հյուրշմանը: Որ հնագույն հայերենը ունեցել է —և հոլովիչով հոլովում, դա հայտնի բան է (հմմտ.) որովհետև, արդարև են): Տրլ ամսանունն էլ, ահա, ներկայացնում է մեր Տրլ(կամ Տրը) ասածու անվան սեռական և նշանակել է Տրիլ ամիս: Ուտի և իրանական հիշյալ ձևերի նմանությունը պետք է դիտել որպես պատահական զուգահեռություն»¹⁴: Գրեականի փաստարկումները համոզիչ են, և այդ ամսանունը պետք է համարել հայկական:

Հրոտից-ը կապվում է fravārtika «Ասեղաց-ի հետ: Սա փոքր-ինչ անհամոզիչ է, որովհետև հայերենում սպասելի էր ակնա(եկան) վերջավորությամբ բառ, ինչպես անհկան (*ahrakān-ից): Հրոտից-ի համապատասխան ձևը վերջված չէ նաև հին պարսկական արձանագրություններում (վկայված չեն 5, 6, 8 և 11-րդ ամիսները): Համեմատելով հին իրանական, կլամական և բաբելոնական ամսանունները, Ֆրեյմանը վերականգնում է և շավանդված հին իրանական ամսանունները՝ 5-րդը *ura(na)bašiš «շերմություն պարզեղոց», 6-րդ՝ garmaba xšiš «դարձյալ նույն նշանակությամբ»¹⁵: Հին իրա-

նական ամսանունների բառմաստը հուշում է մեր հեռացից բառի մեջ տեսնելու «հոր, չերմություն» իմաստը (հիշենք, որ բոս անշարժ տոմարի հեռացի-ը սկսվում է հուլիսի 7-ից): Եթի մերժելի էլ համարենք այս ենթադրությունը, ապա հեռացից ամսանվան միայն բառաձևը (ից սեռականաձևը) հուշում է, որ բառը հայակազմություն է, և այն չպետք է զետեղել փոխառությունների ցանկում: Է. Աղայանը նույնպես ընդունելով բառի իրանական ծագումը, գտնում է, որ իրանականինց ստացված նախնական հրոտ ձևը ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է հուս բառի հետ: Ծիկրորը ք-ի շնչուժով դարձելով հրոտ (սեռականը հրոտից) և հայազմում վերախմտաստվորվելով բոս բաղադրիչների՝ հոր+ոս անանց: Այդ վերախմտաստվորվելով էլ վաղնջական ժամանակներից դիտվել է որպես հայակազմ բառ¹⁶: Մաբգաց-ը հայկական տոմարի 11-րդ ամիսն է (անշարժ ամսարով հուլիսի 7-ից հուլիսի 6-ը): Արմատական բառարանում այն կապվում է հարս. *margazana — ամսանվան հետ, որ գործածված է Քիսի-թունի արձանագրության մեջ և նշանակում է «թույլունների թուխսի ժամանակը»:

Իրականում, իրանական նշված ձևը դուրսվում ունի Գարեհի արձանագրության էլամերեն տարբերակում markazanaš(markašanaš): Իրանագետները ենթադրում են, որ margazana-ն նշանակում է կամ թույլունների թուխս նստելու (marg «թույլուն բառից) կամ էլ խոտհեծի ժամանակի (marg «մարգագետին» բառից): Նախ՝ նշենք, որ Նյ. մարգագ-ի մեջ, բացակայում է zana «մին» բաղադրիչը, որը Քիրևս բարդության հիմնական իմաստն արտահայտող բաղադրիչն է: Բաղադրիչի բացակայությունը հայերենում, ենթադրում է, որ Նյ. մաբգաց-ը, լքել իրոք, կապվում է իրանական վերը նշված ձևի հետ, բաղադրանին հետոցի է փոխառչյալ մեկն և ենթադրվել է էական փոփոխություն:

Ա. Ֆրեյմանը, եկառնելով, որ *margazana-ն իրանական օրացույցի 8-րդ ամիսն է և համապատասխանում է հունվար-փետրվարին, որը ոչ խոտհեծի և ոչ էլ Քիսի ժամանակ կարող է լինել, կասկածի տակ է առնում այդ ամսանվան բացատրությունը, և քանի որ իրանական լեզուների ավյալներով կատարված ստուգաբանությունները զուսացույցի արդյունքներ չեն տալիս, նա առաջադրում է նոր մեկնություն՝ այլ լեզուների ավյալներով:

Հայտնի է իրանական օրացույցի ազդեցությունը բաբելոնականից: Ֆրեյմանը իր. ձևի համար ենթադրում է բաբել. *marahšamna, նկա-

անլով, որ նշված ձևի և markazanas(marikašanas)-ի կապը անբան սերտ է, որ սրբագրությունը է բարեկական անմիջական փոխառությունը հին պարսկերենի կողմից¹⁶: Այն բառ Ֆրեյմանի հին պարսկերենում նշում էր բարել. *maraxsanna կամ *marxasanna-ի նման Տ — խուլով՝ ի հակադրություն կամական markazanaš-ի շ-ի)¹⁷: նշված ամսանունը թե իրանական և թե բարեկական օրացույցի Տ-րդ ամսանուն էր, որը ավելի հավասար է դարձնում արևելացիոր գաւտողությունները: Եթե Ֆրեյմանի այս վերականգնումն ու մեկնությունը ընդունվում է գիտական շրջանակներում, ապա բնականաբար պետք է մերժել հայոց մազազ ամսանվան անմիջական կապը իր. *margazana-ի նկատ:

Ն. Բազազ-ի արձագը, տեղուշու, մազգ բառն է: Ճիշտ է վերջին նույնպես իրանական ծագում ունի, բայց մենք մազազ-ը փոխառյալ միավոր չենք հայտնում: Յուրաքանչեւ փոխառյալ մազգ-ը և ընդունելով որպես սեփական բառ, հայերենը կերտել է նոր բառ, նոր ամսանուն, որը այդ ձևով չկա իրանական լեզուներում (այժմ տեղական հուլովի ցուցիչը վկայում է դարձյալ բառաձևի հայերեն լինելու մասին):

Կարող ենք ենթադրել, որ մազազ ամսանվան մազգ բառը գաղղաղիւնը նշանակում է «մարգագետին», այսինքն՝ եկատի է անվանում հնձի մամանակը, որովհետեւ մազգ «թալուն» բառը հայերենում անկախաբար էի կիրառվում և հանդես է գալիս որպես բարդության երկրորդ բաղադրիչ (լորեմազգ, սիրեմազգ... և այլն)¹⁸:

Այժմ անդրադառնանք այն բաներին, որոնք արտացոլում են պեւսական-կրոնական կյանքը: Ստորև բերվող բառախմբերը արտահայտում են պեւսական-կրոնական կյանքի տարբեր հասկացություններ: Վերջիններիս բովանդակության, բուն իմաստի և նշանակության վերահանումը ավելի մոդուլարների պատմության, սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների ուսումնասիրության հարց է, այսինքն՝ պատմաբանի ուսումնասիրության ոլորտ: Իրանագիտական գրականության մեջ այդ հարցերը բավարար չափով թնկված են: Հայերենում գործառույթ իրանական տերմինների բովանդակությանը վերաբերող բազմաթիվ հարցեր նույնպես թնկված են ինչպես իրանագիտական, այնպես էլ հայագիտական աշխատություններում (Մելիք, Նենինգ, Բեւզինիստ, Պատանյան, Աղեջո, Մանանդյան, Գ. Մարգարյան): Առանձնապես պետք է նշել Ա. Փերիբանյանի վաստակը, որը

իրանական նյութի մանրագիտի թննության հետ շրջանառության մեջ է դնում ու համադրում հայ մասնագետության տվյալները¹⁹:

Թննությունների անվանումները հիման վրա, ընդհանուր գծերով կարելի է նշել հետևյալը. համառ իրանական լեզուներում և հայերենում հասկացության բովանդակության շրջանակները չեն համընկնում, հասկացությունների բովանդակությունը բացահայտելու համար երբեմն օգտագործվում են տվյալ տերմինի ստուգաբանական տվյալները, որը միշտ էլ, որ կարող է հշմարիտ լինել: Իրանական տերմինների իմաստի բացատրությունը երբեմն օգնում են հայերենի տվյալները. տերմինների բազմիմաստությունը դժվարացնում է նրա նախնական իմաստի բացահայտումն ու իմաստային զարգացման գործընթացի որոշումը այսպես նաև անհստակության է մտցնում այս կամ այն ենթախմբերում գասկազգելու սկզբունքների մեջ:

Ներբոհիշյալ ենթախմբերում բերվող բառերի հետ առնչվող այլնայլ բացերի հետ կիրառվել ենք որոշ բառեր իմաստի, բայց հարկ է նաև նշանակել իրանական զուգահեռների մասին:

8. Պեւսական, վաշական բնագավառ.

Այս խմբավորման մեջ մտնող բառերի թիվը բավական շատ է, ուստի նպատակահարմար է այն ներկայացնել առանձին ենթախմբերով.

ա) տիպոս, պաշտոն, կուլում

Անգերեմպետ, ասպետ, բամբիշ, բանուական, բղեշյ, դամասպետ, գահիճ, դաշկարան, դեհպետ, դեպտան, գերանդերմապետ, դշխոյ, դրանիկ, խոտապետ, խոտտակ, կարապետ, կոտոզպետ, համարակար, համարակապետ, մապլետ, մարդպետ, մարդպան, մարդպետ, նախաբար, հունչը, նուիրակ, նուիրակապետ, շահխոտապետ, շահանշահ, շահպա, զահշրմար, շապատան սակաասպետ, շարասդար, ոստիկան, պահակապան, պաշազետ, պայիկ, պատանիկ, պատգոսապան, պատմաճաճան, պատտիրակ, պարիկ, պարեական, պարետ, պէշասպիկ, չափտան հոտրով, սակտան անդերմապետ, սպասանկ:

Այս տիպոսների շարքում երեք բառ՝ բամբիշ, բանուական, դշխոյ վերաբերում է կանանց՝ «թալունի», «խանուշի» ընդհանրական իմաստով: Այս շարքին կարելի է ավելացնել և քազոնի, որի երկու բաղադրիչները թեև իրանական են, բայց բառն ամբողջապես ստեղծվել է հայերենում: Մյուս բոլոր տիպոս-պաշտոնները վերաբերում են տղամարդկանց: Ասպետ-ը Արմ-ում ստուգաբանվում է aspa «ծի կ թալ տեր» իժի այս ստուգաբանությունը ճիշտ է, այսպես մեր ասպետ

բառում, համեմայն զեպս «Տեճյալ» իմաստը չի գիտակցվում: Այդ տեղ-
միջը զգալիորեն հնաացել է իր ստուգաբանական հիմքից: Ասպետը՝
Բագրատունիների՝ որպես թագադիրների, տրվող տիտղոսն է: Գահ-
նամակում, որտեղ ներկայացվում է հայոց նախարարությունների ջու-
ցակը Կազրատունեաց տէր-ի փոխարեն գրվում է միայն **ասպետե՛**
ա) Սիրենաց տէր, բ) Ասպետն, գ) Արծրունեաց տէր»²⁷...: Ուխտանեսի
մտտ պահպանված է նույն հերթականությունը²⁸:

Պատմական գիտությունների թեկնածու Ս. Փետրոսյանը ասպետը
համարում է ոչ թե տանտիրական, այլ գործակալական տիտղոս: Նա
առաջարկում է բառի նոր ստուգաբանություն. «արս-պետ ասպետ»
(«Արս «կողմ, ժայռմաս» ա.հ. «perk'-ից»)՝:

Մայրապետ, մարդապետ, մարզպետ բառերի ստուգաբանական նոր
փորձերին այստեղ շեղումներ անցրազանում: Այդ մասին կիսոսներ իր
տեղում: Նշենք, որ մեր մասնագրություն մեզ ավելի հաճախաբար է
մարդպետ-ը: Հայերենում մարդապետ և մարդպետական տիտղոսները
դարձել են Արծրունյաց տունի մեկ ճյուղի ազգանուն (անվանում):
Մարդպետությունը դրանց մտտ ժառանգական էր:

Կողակետը, ըստ Պատկանյանի, դիտարկելով նկարչին տրվող տիտ-
ղոսն էր: (Общ... էջ 21): Արմատական բառարանում՝ «արհեստա-
պետ»: Բայց վկայված է միայն մեկ անգամ: Ավանդված օրինակում
բացատրվում է տեղմիջի իմաստը «...անուն Պուսակ, որոյ աշտիման
իր կողակետ կոչել, որ թարգմանի զուխ արուեստագիտաց արբունի»
(Վկ. Արև. 139):

Պայագատ բառի «ժառանգություն», «ժառանգորդ» իմաստը ակն-
հայտ է: Ա. Փերիսյանյանը տալիս է բառի նոր ստուգաբանություն՝
իր. *urpayazata՝ այդ նույն արմատը տեսնելով Բայազետ հատուկ
անվան մեջ²⁹:

Բղենալիս և նախաբառ տեղմիջները վկայված են միայն արշակունյաց
շրջանի համար³⁰:

Նախապետ բայց հայերենում հաճախ հանդես է գալիս Զիկ
նախապետ կապակցության մեջ: Իրանական աղբյուրներում, պե-
տական և պալատական պաշտոնյաների մեջ նույնպես վկայված է
չy'k nywipri: Փայատտի մտտ Զիկ նախապետը որս ժառանգնե-
րից մեկն է²⁷:

բ) ռազմական կյանք

Աշտնայ, ճահնայ, սպասամբ, ասպազեն, ասպահապետ, ասպատակ,
ասպար, ատրճանակ²⁸, արշառ, աւար, բանակ, գումարտակ, զունգ, զաշ-
100

նակ, գաստապան, դարան, դրոշ, ղեն, զինգակապետ, գրահ, զորթ),
թիրաթ, թշնամի, լախտ, լաշկար, խիշտ, հագարապետ, համհարթ,
հեն, դակիշ, ճամբար, մատեան, «պարսից անմահների գունդը» մար-
զիկ, նիզակ, շահատակ, շահ, պատկանգարան, պատերազմ, պարս,
պշուպայ, ռազմ, սաղաւարտ, սաղար, սպասալար, սպայ, սպահ, սպա-
րապետ, վահան, վառ, վարդ, վիրգ, տապար, տէգ, փուշտիպան, փուշ-
տիպանաղար:

Վերջինչյալ բառերի զգալի մասը զենքի տեսակներ են (աշտնայ,
սպազեն, ասպար, ատրճանակ, ռաշնակ, զեն, գրահ, լախտ, խիշտ,
նիզակ, շահ, պարս, սաղաւարտ, վահան, վարդ, վիրգ, տապար, տէգ):
Մի բանի բառեր վերաբերում են զորամիջոցումներին (բանակ, գու-
մարտակ, զունգ, լաշկար, ճամբար, մատեան, պշուպայ, սպայ)²⁹,
հրամանատարական կազմին վերաբերող՝ (զինգակապետ, հագարա-
պետ, համհարթ, սպասալար, սպարապետ, փուշտիպան, փուշտիպան-
աղար)³⁰:

Վերջիններից հայ իրականությանը վերաբերում են միայն հագա-
րապետը, համհարթը, սպարապետը, որոշ վերապահություններ նաև
սպասալարը՝

Համհարթ Ազոնցը համարում է պալատին կից զորք (придвор-
ная гвардия): Անշուշտ, համհարթ բայց նշանակում էր նաև զորք,
զորքի տեսակ, խումբ. հմմտ. «...դիզբայր թագաւորին լինաց և բա-
զում համհարզս նորին ընդ նմին ստաակէր» (Նիզիշ. 73): Համհարթ
պետը էլ դիտել նաև որպես տիտղոս, աստիճան, որով համհարթները
տարբերվում էին սովորական զինվորից կամ զինվորների խմբե-
րից: Այն թեևս իմաստային աղերսներ ունի վշտիպան սպահապան,
օղակական՝ բառի հետ. հմմտ. «զամեհույն փշտիպան և համհարզս»
(ՆՇԲ):

Սպարապետը զորքի բոլոր տեսակների զերադույն հրամանատարն
էր:

Հագարապետը անշուշտ զինվորական բարձր կոչում է. «հագար
զինվորների գլխավորը» կամ ընդհանրապես բարձրաստիճան հրամա-
նատար: Հագարապետը Հայաստանում նաև պետական մեծ պաշտոն-
յաց էր: Հագարապետները թե արշակունյաց և թե մարզպանության
շրջանում, վարել են հարկային կարևոր գործը, աշակցել և հեղել երկրի
շինարարական աշխատանքներին: Մի խոսքով այն ռազմա-տնտեսա-
կան տերմին է, ինչպես և իրանական իրականություն մեզ: (Վերջե-
նում հագարապետը և հագարապետությունը ավելի շատ քաղաքական-

ունտական հակացուցիչուն էր³¹։ Ա. Փերիխանյանը նշում է, որ արքայանական Իրանում հազարապետությունը հարկային համակարգի պետական եկամուտների վարչական բարձրագույն հաստատություն է, իսկ հազարապետը այդ հաստատության ղեկավորը, և հայերը ուզում էին նահանգական այդ հաստատությունը ծառայել ևն արեմենյաններից³²։

Ռազմական կյանքին վերաբերող բնիկ հայերեն բառերը անհամեմատ քիչ են օտար, հատկապես իրանական բառերի համեմատությամբ, (նշենք մի բաները. արդն, զեղարդն, զերի, նես, սլաք), որը բացատրվում է դարեր շարունակ իրանական ուզմական զերիշխանությամբ, ապա նաև այդ բնագավառի սերտ հարաբերություններով։ Ստորև ներշնչի գրքից (որտեղ ավելի հաճախակի ենք հանդիպում ուղեմական բառապաշարի) բերվող մի փոքրիկ հատվածում (երբ պարսից արքան հետարբերվում է թշնամու բանակի մասին) ակնհայտորեն զգացվում է իրանական փոխառյալ տերմինների առատությունը։ Գրանք ընդգծված են։ «... եւ իբրև լուա զիբի համաւոյ թազուրքան, առանկւ ևն փութացաւ ուսանել, թէ բանից իցեն պարագլուխ բաշ նահառուկացն... այլ և դրօշից անգամ իւրաքանչիւրոյ տեղեկական ի նմանիս և թէ բանի գուղջ զգօսն բաժանիցեն և որ որ ի նոցանէ սաղաբէ լինիցին և որ զօրացլուխ յորմէ կողմանէ յուզմ մտանիցէ և զինչ անուանք իւրաքանչիւր համեարգացն իցեն և բանի փողհարբ ի մէջ զնիցն ձայն սինցեն։ Դակիչ գործիցեն արձեօք, եթլ» արձակ բանակիցեն։ մաղաւս ևն կախաւ գործիցեն, ևթլ՝ համագուղջ ընդ մի տեղի զրգիցեն (ՏԳ)։

Նկատված է, որ իրանական այս բառաշրջանը դեռևս վաղնջական շրջանից ենթարկված է այլ լեզուներ։ Հին հնդկերենում գործառուղ իրանական ուզմավարչական բնույթի բառերի մուտքը ենթադրվում է մ.թ.ա. I հազարամյակի կեսերը, երբ արեմենյան իշխանությունը հասավ Ինդոսի ավազանը³³։ Անշուշտ ուզմական կյանքին վերաբերող բառերի մի մասը հայերենին ծանոթ է եղել գարձայլ արեմենյան շրջանից։

գ) առաձմային-վաղշական ստորաբաժանում

աշխարհ, սուպարել, արկ, արուարձան, զեհ, մարդ, նահանգ, շահասուան, շեն, ոտաստակ, սահման։ (Ասան բառը իրանական փոխառություն չենք համարում, տե՛ս էջ 221)։ Ե՛տա տեղանվանական բաղադրիչը աննախարար չի գործածվում, այլ հանդես է գալիս որպես ներկրող բաղադրիչ՝ Աշտիշատ, Արտաշատ... և այլն, ուստի ցանկում չենք ներկայացնում։

դ) հարկային համակարգ

բաթ, բաշխ, բեկար, հարկ, նեպակ, սակ։
Այս տերմինները արտահայտում են հարկ ընդհանուր հասկացության մասնակի դրսևորումները։ 2. Մասնաշրջանը շահմայնվելով Ադոնցի հետ, որը ենթադրում էր բաժի հողային հարկ լինելը, տարբեր վկայությունների համադրմամբ, նաև իրանական համապատասխան տերմինի բնույթի վերաբերյալ ենթադրում է, որ բաժը մարսային հարկ էր³⁴։
Բեկարի հնագույն վկայությունը 7-րդ դարից է։ Գվինի 645 թ. ութնորդ կանոնում կարդում ենք. «Իսկ եթէ որդեգրեալն արժանացա թահախոթին»՝ զեղեն վկայությունը կամ որ որդեգրացն զնա և չէր անկ նմա քահանայութիւն, սակայն զկէս շնորհին կալցէ յազազս ձեռնազբութեան, ազատ ի հարկէ և ի բեկարէ»։ Ըստ Մասնաշրջանի բեկարը արբոնի հատուկ հարկ է, որ սակի շատ կարող է ունեցած լինել հողային հարկի նշանակությունը, քան զլատահարի (102)։

Յակն էլ ըստ երևույթին դրամական հարկ է³⁵։
Համազերբով Թ. Արթուրյուն մտա նեպակ բառի գործածության համաբերտը ներշնչի համապատասխան հատվածի հետ 2. Անտանյանը ենթադրում է, որ նեպակը ինչ-որ շարքի մասն է կովկասյան մոթեխակոտին (տե՛ս Արմ., նեպակ բառի տակ)։ Ըստ նոր տվյալների, միջ. դրս. nǫpāk-ը ուներ «գրապ», «պատանդ» իմաստները, սող-ը. ԲՊՔ պարսաթաու սարուկ (ДОЛГОВОЙ рѣб)։

ե) սոցիալական դիւբ, դասային կարգ

ազատ, անաշահիկ, գեբրգաստանիկ, մշակ, նաժիշտ, նեղեհ, ոստանիկ, պանդուխտ, ուսմիկ, սեպուհ։

Այս շարքում անաշահիկ, նեղեն, պանդուխտ ունեն «օտարական» իմաստը։ Իրանական իրականության մեջ ա։ Sahrīkān-ը «վերնապետ ստրկագրած ուզմագեորհներն էին (համաձայն տերմինի պատմական ստուգաբանության)։ Իրականում այդ կասեզորդայի մեջ ներառվում են ստրուկների խմբեր, բայ իրենց սոնտակահան, իրավական գիրքի- auSahrīkān ստրուկները հիմնականում ընդգրկված էին զյուզատնտեսական աշխատանքների մեջ»³⁷։ Հայերենում անաշահիկը բնի է վկայված, որս համարանություն կազմաված անաշահիկը հայականություն է և ունի համահայական գործածություն։

Ազատների ունեոր դասին (նաև սեպուհների և ոստանիկների) հակադրվում են սումիկները և շինակները։ (Վերջինիս երկու բաղադրիչները՝ շեն Կական թեև ծագումով իրանական են, սակայն բոլոր

փոխառություն չէ): Ռամիկները գյուղական և քաղաքային, իսկ շինականները միայն գյուղական բնակչության ստորին խավերն են՝

«Աղախին, սան ծառա» իմաստով են գործածվում նաժիշտ, գերդաստանիկ բառերը:

դ) դատական, գրագրական-փաստաթղթային տերմինաբանություն ամբաստան, անդարձ, դահնամակ, գրավ(ական), դատ, դատախազ, դատաստան³⁸, կտակ, համիմազ, հրովարտակ, մուրհակ, յնտիար, նամակ, շահրմար, պաման-նամակ, պատշիբ, պատճէն, պարտաշխի, շատագով, վկայ, վճիռ, փուրջինս:

է) կրոն, հավատ

ախտարմու, ատրուշան, բազին, բախտ, բարամոնք, բողպայիտ, գեբեման, գոմէզ, գուշակ, դեն, դենիմազդեզն, դենպետ, դե, դժոխ(ք), դրոման, զոճ, կախարդ, կեշտ, համբարու, համակղեն, հատու, հեշմակ, հրաշք, հրեշտակ, մազդեզն, մաբդարէ, մեհեան, մոզ, մոզպետ, յազ, յաշտ, յուշկպարիկ, նոզով, պահլավիկ, պարսկազեն, պարիկ, պարտաշ, պետմոզ, շատուկ, աստ, սանդարամետ, սպանդարամետ, վարդապետ:

Այս բնագավառում փոխառյալ բառերի թիվը զգալիորեն գերազանցում է բնիկ բառերին: Վաղուց նկատված է, որ հայերի քրիստոնեական կրոնին վերաբերող բառապաշարը հիմնականում փոխառյալ է իրանականից և ասորականից³⁹:

Կարևոր է այս կարգի բառերի փոխառության բուն աղբյուրի և ժամանակաշրջանի հարցը: Մեյլի կարծիքով, իրանական կրոնական-քրիստոնեական տերմինաբանությունը բուն ավետան չի կարող լինել. «Սասանյանների պաշտոնական կրոն հանդիսացող Ավետարանի վարդապետությունը վերջնականապես կայունացել է միայն այն ժամանակ, երբ զարգայել է ազգայնական մեծ շարժումը, որ հանդես բերեց Սասանյան հարստության հատուտումը: Հայաստանի կրած իրանական ազդեցությունները, որոնք պարթևական ժամանակաշրջանի ազդեցություններ են այլ բնույթ ունենում... եվ թվում է, թե հայերը ոչինչ պարտական չեն բուն ավետարանական վարդապետությանը»⁴⁰:

Ըստ Մեյլի, հայերի քրիստոնեական բառապաշարի լուսարանմանը կարող են օգնել Իրանի չլուսխի այն լեզուները, որոնցով խոսում էին արշակունյաց ժամանակաշրջանի քրիստոնյաները: Թեր-

ևս այդ լեզուների տվյալներով կարելի է բացատրել սարկապ, վարդապետ, կարապետ, մկրտել, զատիկ բառերը⁴¹:

Եվ իրոք, ոչ միայն քրիստոնեական, այլ իրանական փոխառությունների մի մասի լուսարանման համար անփաստելի նոր նյութ են տալիս բարբառային նորահայտ տվյալները:

Ինչպես նշեցինք, հայերնի քրիստոնեական տերմինաբանության մի մասը իրանական ծագում ունի և ենթադրում է փոխառության հին նախասասանյան ակունք: Դրանք արդեն 5-րդ դարից լայն գործառություն ունենին: Հնարավոր է, որ քրիստոնեության շրջանում, որոշ բառեր իմաստափոխության ենթարկվելով ավելի են հեռացել փոխառում լեզվի նախնական իմաստից: Որպես օրինակ կարող ենք բերել սպանդարամետ (սանդարամետ) բառը: Ըստ էմինի սանդարամետ կամ սանդարապետը հին պարսիկների և հեթանոս հայերի մոտ նշանակել է մաքրող ու հնազանդ հողի. «Քրիստոնեակ հայաց մէջ քրտրովին ասոր հակառակ նշանակություն մը ունեցաւ: Թէպէտ այս բառով ոգի մը կ'ստակնային, բայց մաքրու և հնազանդ ըլլալը չփոխնայէ զսո՛վ դժոխային անդեզոց թագաւորութեան շար ոգին կենպէտնե՞ալ»⁴²:

Բառաբանները սանդարամետ/սպանդարամետ մեկնում են «ստորերկրյա վիճ, անզունը, դժոխային ոգիներ», հմտ. «Եղբային զնա ի դժոխս ընդ իջեալան ի զոք և միթիբարէին զնա ի սանդարամետես...» (Սզեկ, Ա, 16), «Իրև տօն հասանէր սպանդարամետական պաշտամանն, տաղնապին զնոս՝ պօսակեալս թաւ ոսոքս սպանդարամտին կաբաւեալ» (Բ. Մակ., 7):

Կրոնական (առհասարակ պետական կյանքն արտացոլող) բառապաշարը քննության արժանի է և մի այլ, մեզ թվում է՝ կարևոր հանգանակից:

Փոխառությունների մեջ կրոնական բնագավառը ներկայացնող բառերի գերակշիռ մասը վերաբերում է զրադաշտությանը: Դրանք տերմին-հասկացություններ են, որոնք 5-րդ դարում հայ հեղինակը չէր կարող թարգմանել կամ հարկն էլ չկար: Առանձնացնենք զուտ իրանական (զրադաշտական) իրականությունն արտացոլող բառերը:

Ախտարմու, անպարաքաշ, ատրուշան, բողպայիտ, գոմէզ, դեն, դենիմազդեզն, դենպետ, կեշտ, համակղէն, հեշմակ, մազդեզն, մոզ, մովպետ, մովպետան մովպետ, մովան անդերձապետ, յաշտ, պարտաշ, պետմոզ, աստ:

Որոշ բառեր նույնիսկ պահել են իրանական լեզուներին բերող բառակազմական հատկանիշները. (գենիմազդեզն ներկայանում է ի-

գաֆետային կառույցով, մովպետան-մովպետը նույնպես իրանական բառակազմություն է):

Այս բառերը հայերի համար միշտ էլ բնիկովը են որպես օտար, գրանց բուն նշանակությունը երբեք հասկանալի չի եղել: Հիշենք միջնադարյան պատկերներն-հայերեն բառարանը (տե՛ս էջ 16), որտեղ անհասկանալի համարվող և մեկնվող (նաև արտասոց սխալ մեկնություններով) բառերը հիմնականում կրոնական նաև պետական կյանքին **և** վերաբերում: Գրտական ուսումնասիրություններում էլ մի շարք բառերի իմաստների վերաբերյալ տրվում են ստորերբ: Երբեմն իրար լրացնող, երբեմն էլ իրար անտեմք բացատրություններ. օրինակ, ցածմ էլ միասնական կարծիք չկա նդիշից ստորև բերվող հաստատված քնդ-զբժված բառերի իմաստների հարցում: «Գիտէք և զԱմպարտուհչն ուսեալ էր և զԲողոպայտն, ունէր և զՊանիպիկն և զՊարսկաղենն: Քանզի այս Հինգ կնշար են, որ զրուեալ ունին դամենայն օրէնս մեքու-թեանն, քայց արտաքոյ սոցա է միս ևս այլ վեցերորդ զոր Պետմօզն կուշեն» (144): Ընդհանուրը կարծիքների մեջ այն է, որ վերահիշյալ բառերը համարվում են զրադաշտական տերմիններ, հասկացություններ⁶⁵:

Նկատենք, որ մի շարք բառեր էլ նմուշ հաճախական են և հանդիպում են 1—2 անգամ (տե՛ս էջ 159): Որոշ բառերի հաճախակա-նությունը թեև այնքան էլ նվազ չէ, սակայն անկա է մեկ այլ զործա-նական-համատեքստային սահմանափակություն: Օրինակ, կրօն բառերի հետ համանիշային եզրեր ունեցող դեմ, կեշ, Բեշ բառերը զործա-նում են մեզանում այնպիսի համատեքստում, երբ խոսք է գնում զքա-ղաշտության կամ իրանական կյանքի մասին քնդհանրապես: Իրա-նական կյանքի հետ շաղերավող գրեկրում և հատվածներում դրանք չեն գործառնում. օրինակ քնդգծված բառերը չկան Աստվածաշնչում և Գոր-յունի մտո: Ներքին 4 անգամ մկիրառում է կեշու-ը, նդիիը՝ 8 ան-գամ՝ Քեշ (դեմ և կեշտ բառերը նդիիը չի զործածում):

Եթև բուն իրանական կյանքի արտադրող 20-ից ավելի կրօնա-նական բառերին ավելացնենք նաև այդ տիպի պետական կյանքն ար-տադրող ներքահիշյալ բառերը, ապա պարզ կդառնա, որ շնայած հա-չիրենում նմանօրինակ բազալերտի մեծ ծավալին, գրանց զգալի մա-սը (մտո Հինգ տասնյակ) չըրժանական սահմանափակություն ու-նեցող բառեր են. անդերձապետ, անչիման, ասպահապետ, բարսմուք, դերանդերձապետ, զինդիկապետ, լաշկար, խոտապետ, խորաւարան, կողպետ, հաղարաւախտ, համարակար, շահապ, շահապետ, շահա-

խոտապետ, շապտան տակառապետ, շարսոդար, պասսիկ, պտ-զոտապան, պէշոպա, սակստան, անդերձապետ, սաղար, վզուրկ հրա-մատար, փուշտիպան, փուշտիպանապար:

Անշուշտ, այս տիպի բառերը նույնպես փոխառություններ են Մակայն սրանք բնորոշվում են բառիմաստների՝ անհասկանալիության աստիճանի հասնող անհասկանալիությամբ, նեղ իրադրական կիրառու-թյամբ, նմուշ հաճախականությամբ ու բառակազմական սուղ հնա-րավորությամբ. հանդամանքներ, որոնք հիջք են տալիս շնայացնելու սովորական փոխառությունների հետ: Սրանց համար կարելի է կի-բառել օտար բառեր տերմինը⁶⁶:

ԱՍԿԱՆՆԵՐ

Ներկայացնենք իրանական ծագում ունեցող անականները.

Ախարծ, ակահ՛, ակամաչ, ահնակ, անբարբըշտ, ամբարհաւաճ, ամ-բարտաւան, անտպակ, անսյշ, աշխէտ, աշխոյժ, աղակոտ, ապնիկազ, ապիկաժ, ապիրատ, ասպաճարակական, ասոչ-ստաներիկ, ասպիշգան, ատակ, ասարագոյն, ասորաշէկ, արծակ, արջն, բազում, բարգաւաճ, բաւանդակ, դածան, դաւաճան, դժգոյն, դժխեմ, դժկամակ, դժկնքազ, դմնդակ, դմենա, դժուար, դրսժան, զարտակ, զգոյշ, բմբոտ, թշտաթ, թուտակ, ժանտ, ժիր, խամ, խաւար, խում, կամակար, կապոյտ, կար-միր, կոյր, կոտակ, համակ, համասպրամ, համավար, հանդարտ, հարտ, հասարակ, հաւասար, հօր, հնազանդ, հպարտ, ճապրով, ճարտար, ճարտուկ, ճերմակ, ճիշտ, ճշմարիտ, նիկոզ, նիհար, նպերտ, նուազ, նուստ, շատ, շիտակ, շուտ, պատիր, պատշաճ, պատրաստ, պա-րարտ, պարզ, պարկեշտ, սատակ, սեաւ, սպիտակ, ստամբակ, վատ, վատախտարակ, վատթար, վարծ, վաժկեր, վեհ, վեհեր, վզուրկ, փար-թամ, օժանդակ, օտար:

Մոտ 100-ի հասնող այս բառացանկում մեկ տասնյակից ավելի բառեր հայ մատենագրության մեջ զործածված են 1—2 անգամ: Կո-տակ «փոքր» անականը հանդես է գալիս որպես մականուն. «Ակա յիտ թագաւորեաց հոսրով Կոտակ» (Բուդ. 6): Թովմա Արծրունին նույն թագաւորին անվանում է հոսրով փոքր: Վզուրկ ստուգաբանորեն նշա-նակում է «մեծ», սակայն այս բառն էլ բոտ էութիան զործառական սահմանափակություն ունի և զարձայլ տիտղոսի անվանում է. «Եւ ի պարտել զՎզրկն որ անուանէր հարան, նուանեալ տայ զդոսար իւր

նմա կնութեան» (տոր., 235)։ «Աս իմիմք ժամանակա այլ ոմն կա-
ցեալ վզրի հարան» (Ն. տ.)։ «Նս ամենայն վզուրիք և պատուական
նախարարքն ամաշեցեալ կորանային...» (Նզիշ., 84)։

Կատ բազազրիշով ունենք վատբար, վատախտառակ փոխառու-
թյունները։ Արմատական բառարանը նշում է նաև վաղգոնար «գոն-
հիկ», վատմիր «վատ» բառերը։ Կաղգոնար ձեր վկայված է։ Ըստ
Արմ-ի կա վատգոհարութիւն, սակայն սրա խկութիւնն էլ ստույգ է,
ուստի վատգոնարը փոխառութիւն չենք համարում։ Կատմիր-ը գոր-
ծածել է թ. Արծրունի, «նոր ոմն նարուզարդան կամ Զամիր յայտնեալ
ի յազանգոյն նեստորի երեքթըշուտանն վատաշուք, վատմիր գա-
հաղութեանն շարիս արտացեալս։ Արդոյր Արծրունի կիրառել է իրա-
նական բառ, թե՛ Միհրիկ որպէս շարութիւնն աստված որակելով ինքն
է ստեղծել նոր բառ։ Արմատականում Զ. Աճառայնք գրում է. «Բա-
ռու կազմութիւնը նույնն է, ինչպէս արդի զվ. շարիանու-շար Զու-
լիանուս։ Գծկերպ, զգոչն ձևերը նույնպէս վկայված չեն, սակայն մի
կողմից՝ նտարարայն փուլում այդ բառերի առկայութիւնը, մյուս
կողմից՝ զժգունել, զժգունութիւն, զժկերպութիւն ձևերը հուշում են, որ
զրանք գործածական են եղել և գրարարում։
Արմատական բառարանում և փոխառութիւնների ցանկում բերված են
նաև անտրի, սոստ, առոյց, խտրովային, կունդ, ստանկ բառերը,
որոնք սակայն փոխառույ ժիւղորդներ չենք համարում (տե՛ս էջ 209,
220—226)։

Ածականների գերակշիռ մասը որակական է։ Զգալի թիվ են կազ-
մում անձի հատկանիշ ցույց տվող ածականները (ամբարիշտ, ամ-
բարտաան, ապարտասան, ապիկամ, ապիրատ, զժկամակ, զրուժան,
ըմբռստ, թուանիկ, խոտ, հարազատ, հօր, ստամբակ և այլն)։

Հայերենի հիմնական գունանունները սպիտակ, սեւ, կամփիւր և
կապույտ-ը իրանական են։ Գունային տարրեր երանգներ են արտա-
հայտում նաև փոխառույ աշխիւտ, տաւազոյն, արշն⁴⁵, երաշիւ, զար-
տակ, ճարտուկ, ճեմակ բառերը։ Սպիտակ, սեւ, կամփիւր, կապույտ
գունանունները մյուսներին քանակապես են գործածութիւն հաճա-
խականութիւնը, վկայված և կայուն կիրառութիւն ունեն մեր լեզվի
բոլոր փուլերում, այլև բարբառներում։ Երաշիւ, զարտակ, ճարտուկ,
ճեմակ բառերը գործածված են լոկ մեկական անգամ, այսինքն՝ հա-
ճախականութիւն տեսակետից զգալապէս տարրերում են հիմնական
գունանուններից։ Բացի դրանից, սրանք գրսեւորում են գործառական
բնույթի մեկ այլ սահմանափակութիւն՝ արտահայտելով միայն ձիւ
108

գույն։ Նույնն է նաև աշխիւ-ը՝ գործածութիւն ոչ թե մեկ, այլ մի բու-
րի գեպերով։ Քերիկը օրինակներ նշված բառերով. «Այր մի հեծեալ
յաշխիւտ ձի» (Զարս., Ա 8)։ Աստվածաշնչում վկայված երեք օրինակ-
ներն էլ ձիու գույն են մատնանշում։ «Թ ձի երաշիւ արինադուն հե-
ծեալ գոլքը ետես տեսանօզն» (Մագ. թղթ. Ժէ 51)։ «Ահա ձի զարտակ»
(Յայտ. 2 7, 8)։ Նարտուկ-ը օգտագործվում է ճարտուկ ճանճկէն կա-
պիկցութիւնն մեք։ Հանդիպում ենք միայն Բուզանդի օտո՝ նույն էջում
երկու անգամ. «Նե էր ձին գունով ճարտուկ ճանճկէն» (43)։ «Զնոյն
նման գնչն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ., առ իշխանն
յկարպատական առ Վարազն արձակէր» (Ե.տ.)։ «Նե էր երի-
վարն Մուշեղի ճերմակ ձի մի» (Բուզ., 159)։ «Նս ես նկարել
զտաշա ի պատկեր զՄուշեղ ճերմական» (Բուզ., 159)։ «Ճերմակա-
ձին զինի արքեջ» (Ե. տ.)։ Արդոյր այս բառերի գործածական սահ-
մանափակութիւնը հետագա երեսուցի է, թե՛ եղել է սկզբնապէս։ Այլ
կերպ ստած, հայերենում է կատարվել կատարի նեղարան, թե՛ փո-
խառու լեզուներից անցել են միայն այդ նշանակութիւնը։ Համանա-
կանք վերջինն է։ Չունենք նշված բառերի այլ կիրառութիւն օրինակ-
ներ նաև բարբառներում⁴⁶։

Տարրեր լեզուների բնձնած փաստերը հաստատում են, որ իրոք կան
որոշակի առարկայի հատկացված գունանուններ։ Այսպէս, белый, бро-
wnый գունային անվանումները նեղվորապական ծագում ունեն, առա-
ջինը արդի անտերինում համարական է և սպիտակ գույն մատնանշող
հիմնական բառն է։ Իսկ հին սլավ. брѣнны-ը նշանակում էր միայն
ձիու գույն⁴⁷։ Կամ հին սլավ. сивы, русы, сивый, ітѣ. Сѣвъ սեպագ-
տա-արիտակապուն» նույնպէս վերաբերում էր ձիերին⁴⁸։ Արեւին, կա-
րելի է համոզված եզրակացնել, որ իրանական լեզուներից փոխառույ
աշխիւտ, երաշիւ, զարտակ, ճարտուկ, ճեմակ բառերը հինց փոխառ-
վել են որպէս ձիու գույն արտահայտող բառեր։ Ավելին, կարելի է
ենթադրել, որ հայերենի՝ իրանական լեզուներից փոխառույ բոլոր գուն-
անունները սկզբնապէս վերաբերել են կոնկրետ առարկայի։

Անցնենք փոխառույ հիմնական գունանունների բնույթյանը։ Յու-
րաբանչուր ժողովուրդ, յուրաբանչուր հանրութիւն ունի աշխարհմա-
նաչազութիւն ու աշխարհընկալման իր առանձնահատկութիւնները⁴⁹
պայմանավորված երկրի աշխարհագրական դիրքով, բնակիչնայական
պայմաններով, ժողովրդի նախատատկութիւնն այլևայլ յաբանատկու-
թիւններով։ Միեւնույն Երևույթը տարրեր ժողովուրդների մաս կարող

է տարբեր ընկալում ունենալ, այդ վերաբերում է նաև գույների բնութանունները և նրանք, օրինակ նշում է գույների նշանակության ևական տարբերությունները, այդ նշանակման խիստ կամայական ու զայտնաբերված բնույթը վալլիերենում, անգլերենում և ղանկիերենում⁴⁰: Ընդգիտողարանության մեջ հայտնի է և այն երևույթը, երբ համապատասխան արմատից ծագած գունանունները տարբեր ժողովրդերի մոտ ունեն տարբեր նշանակություններ Աշագն օրինակ, հ. և. *k'ni, *k'el — արմատից իրանական լեզուներում siyān, slav մասնանշում են սև գույնը, իսկ բալթոսլավոնական լեզուներում մոխրագույն, սպիտակավուն իմաստներ⁴⁰: Այս կարգի օրինակներ շատ են բերվում գունային համակարգերին վերաբերող տարբեր կարգի հետազոտություններում⁴¹: Քուրդլուրդի կարծիքով գունային առաջին նշանակումները եղել են սպիտակ, սև և կառմիր գույները, որովհետև տարկիպական իրականություն մեջ ամենից հասակը այդ գույներն են, մյուսները ինչ-որ շափով նշված գույների այլևայլ երանգներն են:

Չարանսպիրեն հայերենում հենց նշված գունանունները, նաև կապույտ-ը իրանական բաներ են: Լեզուների պատմության մեջ նմանօրինակ դեպքեր շատ կան, երբ այս կամ այն լեզվից փոխառված բաները (խոսքը գունանունների մասին է) դուրս են մղում բնիկ բանին կամ դառնում նրա համանիշը: Հայերեն անշուշտ ունեցել են սև, կապույտ, կարմիր, սպիտակ գույների սեփական անվանումները, այդքան սովորական ու առօրյա հասկացությունների նախաիրանական անվանումների գոյությունը կապված չի հարուցում, մասնավորապես որ ուսումնասիրողների կարծիքով, ակնհայտ է հիմնական գունանունների ճնշակվորական ծագումը:

Վերջին ժամանակներս այդ հարցին վերաբերող ամփոփ աշխատանք է Լ. Սարաջևայի վերը նշված հոդվածը, որտեղ հեղինակը հարցի պատմության, հարցին աղետալու մի շարք երևույթների հետ, քննելով է մասնավորապես գունային անվանումների համեմատական տիպարանական այն ընդհանրությունները, որոնք առկա են հայերենում և հին սլավոններենում:

Բնական է, որ բացի իրանական փոխառություն հանդիսացող գունանուններից հայերենը այդ բաներին զուգահեռ օգտագործել է նաև համապատասխան նշանակության այլ՝ ոչ իրանական բաներ Անշուշտ, յուրաքանչյուր բառ թերևս ունեցել է իրանգույնի արտահայտության օրին ընդգծված իմաստ: Տվյալ դեպքում սա կարևոր չէ, որովհետև, նախ՝ արտահայտում են մեկ հիմնական գույնի նրբերանգները, և

սպա պատմական մտայնությամբ այնքան էլ հեշտ չէ տարբերակել միևնույն գույնին վերաբերող տարբեր անվանումների երանգային կոնկրետությունը, առանձնահատկությունը:

Կարմիր բառի երանգները բոտ և Սարաջևայի արտահայտված են հետևյալ բաներով՝ բոսոր, ծիրանի, շառ²¹: Շառ-ը անկախաբար չի կիրառվում, ուրիմն խոսել այդ բառի համախախտության կամ գործառական այլ առանձնահատկությունների մասին ավելորդ է: Բաաւ-ը վաղ զբարբարում նույնպես համախախտ չէր: Ավելի համախախտ է ծիրանի-ն՝ վկայված հեթանոսական շրջանից: «Ծրիներ երկիր, երկինք երկին, երկինք և ծովն ծիրանի»: Մեր կարծիքով, «կարմիր» իմաստը տեղեցել են նուր և բոց բաները. «Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրտա»: Սրանք սակայն համատեքստային րեույթ ունեն՝ գոյականների անվանական կիրառությունը:

Խաւանաւ-ը նույնպես այդ շարքի բաների մեջ է մտնում հմմտ. «Մի գորմանեցէ բահանայի վասն խորտեւոյ մազոյն» (Ղեւտ., ԺԳ, 36): 5-րդ դարի տվյալներով կարմիր հասկացության բառաբարբար արտահայտում են հիմնականում կարմիր և ծիրանի գույները: Առավել համախախտ և ընդգրկուց կարմիրն է, թեև ծիրանին գործառության հին ակունքներ ունի: Գույնի այդ ընկալումը կապված է ծիրանի մրջի հետ, որի հայրենիքը Հուլատասն է, կարմիր սականըր վկայված չէ հին իրանական լեզուներում: Հին պարսկերենում այդ հասկացությունը արտահայտվում էր suxta բառով՝ suk «կրակ» (հմմտ. հյ. հուր-ը: suxta-ից է և արդի պրս. sofx-ը): Կարմիր բառի համար ենթադրվում է պհլ. *karmir: Ըստ երևույթին բառը հայերենին է անցել միջին իրանական լեզուներից և սկզբնապես ունեցել է որոշակի իմաստ՝ որդան կարմիր: Հիշենք, որ տարբեր լեզուներում կարմիր բառը՝ լատ. vermis, ուու., ուկր. червоный հանգում են հ.հ. *karm- «որդ», «կարմիր» արմատին²²: Տարբեր լեզուների այդ ընդհանրությունը պատահական չէ և բացատրվում է նրանով, որ կարմիր ներկը ստանում էին այդ որդից: Հետագայում է, որ կարմիր-ը ընդլայնում է իմաստային ոլորտները:

Սպիտակ հասկացությունն արտահայտող որևէ այլ բառ չունենել միշտ է, այդ իմաստը տալիս են աւծաք, ալի(f) և ընդհանրապես լույս հասկացությունն արտահայտող բառերը, բայց դրանց «սպիտակ» իմաստը միջանցված ձևով է հայտնի և գալիս բարդության մեջ՝ սպիտակ գույնի և այդ բաների նշանակության առարկայական կապի միջոցով: Անշուշտ, հայերենը ինչ-որ ժամանակ ունեցել է այդպիսի

բառ կամ բառաշարք: Պետք է նկատի ունենալ, որ սպիտակ-ը ափ-
լի շատ գունային գամմաներ է պարունակում, և ոչ սև-սպիտակ հա-
կազրույթյան միջանկյալ օղակների գունային երանգները, նաև ան-
գույն-ը կարող են բնկալվել որպես սպիտակ գույն, համապատաս-
խան բառային արտահայտություններով: Գրաբարում, օրինակ սպի-
տակ են համարվում նաև սառույցն ու ապակին: Հմմտ. «Նման սպի-
տակութեան սառին» (Յայտ. Գ, 6): «Յմայակի սպիտակ ջուր արկեալ
յարեաւ ունիցիս» (Նդն., 219):

«Սպիտակ» իմաստը կարելի է տեսնել և աղանի բառի մեջ: Հև.
*albho «սպիտակ», հյ. աղանի: Հմմտ. և հին ալ., աուս. λευκός,
լեհ. labedź, նմանապես չիտ. bal—balds «ազավի»⁵⁵: Ինչ վերաբերում
է սպիտակ-ի փոխառությունից աղբյուրին, այն թերևս պարթևերեն է.
թեև կուզ. Աղբյուրներ այն համարում է ոչ իրանական, այլ հնդգլտ-
պական ծառանգություն, սակայն հնդիտակի փաստարկները՝ շեշտի,
վանկի և արտասանական այլ հատկանիշների ցնեությունը, արամա-
բանական ու համոզիչ չեն⁵⁶: Ինչպես նշել ենք, ներմակ-ը ունի եզակի
կիրառություն և վաղ շրջանի վկայության վրա հիմնվելով չի կարելի
պնդել, որ այդ բառը մասնանշում է սպիտակ գույն:

Կապույտ-ի համանիշները քիչ կան: Քիլը վաղ գրաբարում, նվազ
հաճախական է: Ղարաբաղի բարբառում ցայսօր էլ «բաց երկնազույն»
իմաստի համար գործածվում է բառ: Այս բառը ըստ երևույթին հնդգ-
լտերպական ծագում ունի, կամ փոխառյալ է իրանական լեզուներից-
հմմտ. շուգն. ւր, աուշ. խուփ. տժ բարբանգ. տժ և այլն: Սրանք
նշված լեզուներում «սև» երանգ արտահայտող բառեր են: Կապույտ-ին
զուգահեռ գրաբարում կիրառվում է և կապուտակը, որը kapōtak
«կապույտ» բառից է ծագում:

Սև գույն արտահայտող բառերից են. սեաւ, մուր, մուգ, մալլ-
բուլի, կարելի է ափշացնել նաև փոշ, աղն: Մուգ-ը գրաբարում գործա-
ծական չէ: Արդի հայերենում այն նույնպես որպես առանձին գունանուն
չի գործառնում, այլ մուգ կապույտ, մուգ կարմիր տիպի կապակցու-
թյուններում: Մուգ-ը ծագում է հ.ս. *smugh-ից: Հնարավոր է այդ
բառի՝ ինչ-որ շրջանում անկախաբար կիրառությունը: Ղարաբա-
ղի բարբառում և Աշտարակի խոսվածքում մուգ սեւերանգ», «փարթու-
րան» բառը կա⁵⁵: Համոզված կարելի է ասել, որ գրաբարում սեաւ-ի
համանիշը րուխ-ն է: Այդ է հաստատում ոչ միայն րուխ-ի հաճա-
խականությունը, որը բեռավ չի գիշում սեաւ-ին, այլև այն, որ մին-

նույն նախադասության մեջ դրանք հանդես են գալիս կողք-կողքի
որպես համանիշներ, նաև այն, որ սպիտակ-ի հականիշ հանդես է
գալիս և րուխ-ը և սեաւ-ը: Հմմտ. «Ոչ ինչ ինքեան հակառակ էր,
այլ ընկերին որպէս սպիտակ թեղ» (Նդն., 34): «Սպիտակ աննի
կամ թուզ» (Մատ. ԺԳ, 37): «Վարք նորա կոածոյք սեաւ (Նրգ-
ն. 11): «Մազն սպիտակ չիցէ զարծնայ» (Ղեաւ. ԺԳ, 3): «Մազ մի
սպիտակ աննի կամ թուխ» (Մատ. Ե. 36): «Քաւ է մարմնով և
թուխ է գունով» (Քուռ. 10): Կարելի է կարծել, որ նախքան իրանա-
կան seav-ի փոխառելը այդ գույնի համար հայերենը գործածում էր
րուխը: Ենթադրելի է նաև, որ ընչաժամ սեաւ-ի հաճախական կիրա-
ռությունը և կապակցելիական լայն հնարավորություններին, այդու-
հանդերձ այդ բառը նույնպես փոխառության սկզբնական շրջանում
գործածական նեղ ոլորտ է ընդգրկել՝ վերաբերելով միայն օրնէ կոնկ-
րետ առարկայի: Մեզ թվում է, որ նախապես սեաւ-ը վերաբերել է
ձյուն: Գրաբարում այդ բառն ամենահին վկայությունը հենց այդպես է
«Հեծած արի արբայն Արտաշէս ի սեան գեղեցիկ» (Նոր., 179): Աստ-
վածաշնչի վեց վկայություններից երեքը դարձալ այդպես է: «Յորում
էին ձի սեաւք» (Ղար. Զ, 2): «Ի կասն երկրորդ ձիք սեաւք» (Ն. տ.
Ղ 6): «Տեսի և ահա ձի սեաւ» (Յայտ. Զ, 5): նմանօրինակ փաստը
կան և այլ լեզուներում: Ընդհանուր սլավոներենի բառապաշարում «սև»
գույն արտահայտելու համար օգտագործվում էր *СѢНЪ և *VOГНЪ:
Վերջինս վերաբերում է միայն ձիերին⁵⁶:

Մի շարք լեզուներում սև և սպիտակ-ը նաև կրոնական սիմվոլի-
կայի արտահայտության միջոցներ են: Փաստերը ցույց են տալիս,
որ գրաբարում կրոնական սիմվոլիկայի ընդգծված արտահայտություն
նշված բառերը չունեն: Գրաբարում այդ իմաստով ափշի ցայտուն է
բարի-շար հակադրությունը: Սա ևս կարող է վկայել սեաւ-ի սկզբնա-
պես նեղ գործառական ոլորտի մասին:

Այսանց հարկ ենք համարում խոսել գունանուն ցույց տվող բառ-դրոյն
կազմության բնույթի մասին: Արդյոք կարմրագույն, կապտագույն, վա-
րագույն, շիկագույն բարդությունները ամբողջական փոխառություններ
են թե ոչ: Իրանազեաներից ոմանք Բելլի (TPS, 1955, 82), Բենզե-
նիտա (REA, 1964, 36), Փերիտիանյան (REA, 1969, 27) նման բա-
ռերը փոխառություն համարելու միտում ունեն: Անշուշտ, բառը կամ
բարդությունը փոխառյալ համարելու շափանիշներից մեկը նրանց ա-
վանդված լինելն է փոխառում լեզվում: Մեր կարծիքով, վերոհիշյալ
բառերի զեպունն այս հանգամանքը էական չէ: Հայերենը փոխառյալ

զունանուններով և զպէս բազազորելով կարող է ստեղծել նոր բառեր, անկախ այն բանից, թե առաջին բազազորելը հայերեն է թե փոխառութիւն: Ուրեմն, իրավունք չունենք անվերապահորեն վերահիշյալ բարբառութիւնները համարելու իրանական: Դրանք կարող են լինել և հայակազգայնութիւններ, հայերեն բառեր: Մեզ ավելի միշտ է թվում այս սկզբունքը:

ՐԱՅՆՐ

Հրչայա Աճառչանի «Շայտց լիզիլի պատմութիւն» առաջին հատորում զետեղված իրանական փոխառյալ բառերի ցանկում հա 62 բայ: Միայ կլինի կարծել, թե այստեղ ներկայացված են իրանական արմատներով կազմված բոլոր բայերը. չենք միայն -ա-ով սկսող բառերից կարելի է ավելացնել ազատում, ազդեն, ախորժեն, աշակերտում, ապշուում, ապաստանում, ապաստերում... Ուրեմն, նման մտնցմամբ, բայերի թիվը կկրկնապատկվի. կրազմապատկվի: Ցանկում մի շարք բայեր (բազմիլ, դիտել, զենուլ) բերված են համապատասխան անվանական ձևի հետ՝ մեկ թվահամարով, այսինքն՝ բայական ձևի մատնանշումը չի ավելացնում փոխառութիւնների քանակը: Աճառչանի նպատակը այստեղ փոխառյալ արմատները ըստ հնարաբանի ամբողջական ներկայացնելն է կզել: 45 բայ ներկայանում են առանձին թվահամարով՝ այս դեպքում ավելացնելով փոխառութիւնների քանակը: Ահա այդ բայերը. անդանել, աշխատիլ, ապաշխարել, ապարսնել, ապպարել, արժել, արկանել, բազմիլ, բաժանել, բաշխել, բնակիլ, բռնիւնել, զովել, դարակիլ, քստել, իշխել, խոտտոզանել, կենդել, կանիլ, կանգրիւնել, կմայիլ, կմամայիլ, կարակիլ, մարգել, մարգել, մարտնել, յազել, յախիլ, յիշել, նիրհել, եշմարել, պաշտել, պատապարել, պարմայել, սպամել, սրկել, վարել, վիբալ, վկանդել, վճարել, վաարել, սանել, տաշել, քանդել, քարշել, օրհնել:

Ուշագիւր նշելով այս ցանկին, նկատում ենք, որ ներկայացված բայաձևերի արմատները անվանական կիրառություն չունեն կամ դրանք կրեկրետ նյութական առարկաներ չեն (նիրհ-ել, եշմար-ել և այլն): Ուրեմն, Աճառչանը բայաձևերը ներկայացնելիս դարձյալ նպատակ է ունեցիլ ներկայացնելու փոխառյալ արմատները:

Վերահիշյալ բառերից իշխել-ը իրանական չենք համարում (տճ՝ ս էջ 224—225), մարգել/մարձել, յիշել/յուշել-ը նույն արմատների հըն-

չյունափոխված ձևերն են՝ ըստ երևույթին տարբեր աղբյուրներից եկող ձևեր:

Դարակիլ միակ վկայութիւնը XVII դ. է: Ըստ Արմ-ի ունի «Ճանաչել, զննել» իմաստը: Բառի մեկ այլ տարբերակն է դարակիլմ՝ վկայված XIII դ.: Յախիլ բառի ծագումը ստույգ չէ:

Իրանական արմատներով կազմված բայերի զերեկշիւ մասը ավանդված է V դ. և գործառում է արդի հայերենում: Դրանցում առկա իմաստափոխական երևույթները լիզիլի ընկանուն գործացման արդյունք են:

Ստոր արմատներով բայերի ընտելւան ժամանակ, առաջին հերթին ծագում է հիմնական մի հարց. արդյա՞նք այդ բայերը համարել փոխառյալ փոխառներ. թե՞ ոչ: Սրանից էլ բխում է մեկ այլ հարց. փոխառյալ արմատներով բայերը զետեղել՞ով փոխառյալ բառերը ներկայացնող ցանկում: (Այս կամ այն լիզիլի փոխառյալ բառապաշարի ուսումնասիրողները որպէս կանոն ներկայացնում են փոխառութիւնների ցանկը): Այննչայստորեն ավյալ լիզիլին բնորոշ բայական վերաբերութիւնները (հայերենի զեպքում -ել(ալ-ը) արցին հոշում են, որ գործ ունենք փոխառութիւնների նոր տիպի հետ, փոխառութիւններ, որ բառաձևով նույնական չեն փոխառու լիզիլի բայերի հետ: Ընզվարանական գրականութիւն մեզ այս երևույթը նկատված է: Մեզանում այս հարցին մանրամասն անգրադարձել է բնաստիարական գիտութիւնների զոկտոր, պրոֆ. Աշ. Արրահամյանը՝ առանձին հոդվածով⁵⁷, ապա նաև Քթայր ժամանակակից հայերենում՝ աշխատութիւն մեջ Քննելով փոխառյալ արմատներով բայերի բառակազմութիւնը, Ա. Արրահամյանը գրում է. «Շեղուակ թե աշպիտի բայերը ամբողջական փոխառութիւններ են մեր լիզվում՝ միանգամայն սխալ կլինի... այստեղ գործ ունենք բուն լիզիլական մասնիկազմում հետ, որը սովի է ամբողջական բայական ձևեր, իսկ հայերենի բայական մասնիկազմումը իբրև բերականական-բայակազմական մի ընդհանուր երևույթ հայերենի համար՝ իր յուրահատուկ գրաւորումներով, չէր կարող տասնցիորեն նույնանալ սովորական փոխառութիւնների հետ» (էջ 120):

Փոխառյալ բայերի զեպքում, ինչպիս նշում է և Աշ. Արրահամյանը, փոխառվում է ոչ թե փոխառու լիզիլի ամբողջ բառույթը, այլ բայական հիմնական ձևույթը իր իմաստով և հայերենում ձևաբերված է հայերենին հատուկ մասնիկազմութիւնով: Այս երևույթը Ա. Արրահամյանը անվանում է վերակազմական փոխառություն կամ լիզ-

վական-Ֆերականական փոխանկերում՝ փոխատու լեզվի բայական հիմնական ձևերի օգտագործումով (էջ 121):

Ընդհանրապես բայական փոխառությունների հարցը բնեկիս անհրաժեշտ է ցուցաբերել պատմական մոտեցում, շատամանափակվել կարճ ժամանակահատվածի ընձեռած տվյալներով: Պատմական մոտեցում ստեղծել, բնավ նկատի չունենք լեզվաբանության մեջ վաղուց և այժմ էլ շոշափվող՝ սկզբնապես անվանական կամ բայական ձևերի նախորդակն ու հաջորդման հարցը. փոխառությունների բնութագրի ժամանակ սա էական չէ: Էականը պատմական-ստուգաբանական և այլ փաստարկների հաշվառումն է: Քերենք լեզվի օրինակ դարձյալ Ա. Արքաճանյանի գրքից: Նշելով արդի հայերենում համար կապի և համարել բայի կիրառությունը, լեզվաբանը նկատում է. «եթև ասենք, որ այս բայը կազմված է համար կապից, սպազ դա կլինի սոսկ ձևական մոտեցում և կաղավաղվի պատմական կրողությունը» (75): Քանի որ համարել բայը կազմվել է շատ ավելի վաղ և իմաստով սերտորեն կապվում է համար գոյականի հետ (վերջինս իրանական փոխառություն է և վկայված է V դ.): Այսպիսի օրինակներ կարելի է շատ բերել:

Կարելի է նաև առաջադրել այն հարցը, թե՛ որ փոխառու լեզվում առկա է բառի և անվանական և բայական ձևը, սպա որն է օրին նախորդել: Այստեղ պատմական վկայությունները կարևոր են, բայց ոչ սպառիչ: Եթե ասենք, որ ազատելը (օրինակը պայմանական է) մեր մատենագրության մեջ ավելի վաղ ավանդված լինի քան ազատը, սպա դեռ այդ փաստը իրավունք չի տալիս եզրակացնելու, որ հայերենը նախապես իրանական ձևերից վերցրել է բայականը (բնդունենք իրանականում բայական ձևի առկայությունը), որովհետև կարող է այն գործածական լինել նախապես չորսընտանիքում, բայց վաղ մատենագրության մեջ ավանդված չլինել: Երբեմն հաշվի են առնվում փոխառու լեզվի վկայություն և ստուգաբանության տվյալները: Քրեներով մի շարք փոխառյալ բառեր, որոնց մեծ մասը իրանական ծագում ունեն (ազատ, գանձ, դատ, դոճ, խաւար, խրատ...) և հենվելով փոխառու լեզվում գրանց անվանական ձևերի առկայության փաստի վրա Աշ. Արքաճանյանը եզրակացնում է. «եթե հայերենում այս կամ այն բայի կազմության հիմքում ընկած փոխառյալ արմատը փոխառու լեզվում բայական նշանակություն չի ունեցել և հայերենում էլ բայի կազմությունից դուրս անկախ բառույթ է, սպա ոչ մի ղեկըրում մենք չենք կարող ընդունել կամ ենթադրել, որ տվյալ անկախ բա-

ռույթը նախապես բայական նշանակություն է ունեցել, քանի որ հայերենում նրա բայացումը կարող էր կատարվել համապատասխան մասնիկավորումով և այս դեպքում միայն իմաստային անցումով (էջ 113): Անշուշտ, այս եզրահանգումը ճիշտ է, բայց հարցի լուծման համար դարձյալ թերի է, որովհետև հատկապես հին լեզուներից կատարված փոխառությունների ղեկըրում փոխառու լեզուն ավանդված բառապաշարի ու բառաձևերի տեսակետից կրթիք ամբողջական չէ և շատ ձևեր, որ մեզ չեն հասել, փոխառության շրջանում անպայման եղել են (նորից հիշենք, որ իրանական շատ ձևեր վերականգնվում են հենց հայերենի միջոցով):

Մեզ թվում է փոխառյալ արմատներով բայերը բնեկիս անհրաժեշտ է վեր հանել համապատասխան արմատով կազմությունները, այսինքն՝ մեր արմատի բառակազմական հետազոտությունները՝ ժամանակային օրել կտրվածքում:

Ստորև ներկայացնենք փոխառությունների ցանկում առանձին թվահամարի տակ արված, այսինքն՝ փոխառյալ բառեր համարվող բայերի ածանցված ձևերը. կիշերը միայն վերջածանցումները, բայերմատը անկախաբար կիրառվելու ղեկըրում՝ եսև արմատը (փակադրում օրել նշում չլինելու դեպքում նշանակում է, որ վկայված է միայն բայաձևեր):

- Անդամներ (անդամներ)
- աշխատել (աշխատ ստեղծել, աշխատարար, աշխատանք, աշխատութիւն)
- ապաշխարեմ (ապաշխարան, ապաշխարող, ապաշխարութիւն)
- ապարթանել
- ապսպարել
- արթել (արթան, արթանարար, արթանանալ, արթանել, արթանի)⁵⁸
- արկանել
- բազմիլ (բազմոց—ուշ շրջանից)
- բածանել (բած, բածան, բածանորդ, բածանումն, բածիք)
- բաշխել (բաշխ, բաշխական, բաշխիչ, բաշխող, բաշխումն)
- բնակել (բնակ, բնական, բնականաձև, բնակարան)
- բռշխնել
- գովել (գով, գովանք, գովելի, գովեստ)
- թասել
- խոստովանել (խոստովան առնիմ, լինիմ, խոստովանարար, խոստովանող, խոստովանութիւն)

կերակ (կերտ, կերտանալ, կերտութիւն)
 հանիլ (հաճ, հաճելի, հաճութիւն, հաճոյ, հաճոյական)
 հանգրիմել
 հմայել (հմայութիւն, հմայք)
 հրամայել⁸⁹
 ճարակի տարածիչ (ճարակ, ճարակատը, շխտարտուտ)
 մարդիկ (մարդարան, մարդիկ, մարդիչ, մարդուն)
 մարմնել (մարմնիկ)
 յազկել (յազած, յազումն)
 յիշել (իշտղ, ուշ շրջանից՝ յիշոց, յիշումն)⁹⁰
 ներհել (ներհ, ներհումն)
 նշմարել (նշմար, նշմարանք)
 պաշտել (պաշտան, պաշտամունք, պաշտումն)
 պատասխարել (պատասպարան, պատասպարութիւն)
 պարմայել
 սպումել (սպումումն)
 սրակել (սրակումն)
 վանել (վանումն)
 վիրալ
 վկանդել
 վճարել (վճար, վճարումն)
 վտարել (վտարական, վտարակ, վտարանդի, վտարումն)
 տանջել (տանջական, տանջանք, տանջելի, տանջիչ, տանջող, տանջումն, տանջք)
 տաշել (տաշ, տաշիկ, տաշտոյ)
 քանդել (քանդ, քանդակ, քանդուկ, քանդումն)
 քարշի (քարշ, քարշումն)
 օրհնել (օրհնելի, օրհնելալ, օրհնութիւն, ուշ շրջանից՝ օրհն, օրհն-ը
 օհնդեմ է դալիս նակ մի շարք բարց բառերի կազմում՝ օրհնարան, օրհնաձայն, օրհնեղջուր...)

Տեսնում ենք, որ համապատասխան բայը ներկայացնող հիմքով (արմատով) առկա են շատ կազմութիւններ. եթե ավելացնենք նախածանցումներն ու բարդ բառերը, ապա այդ կազմութիւնների թիվը անհամեմատ ավելի կմեծանաւ:

Արդյո՞ք փակագծերում բերված ձևերը հաջորդել են բայական ձևերին: Նախ, ասենք, որ շատ ձևեր՝ բայերին զուգընթաց առկա են V դ., բայց քանի որ գրաւոր ավանդված լինելը բառագոյացման փ-

մանկակազրանի հասակ լրփանելը չէ, ուստի 5-րդ դարից վկայված լինելը էական չենք համարում:

Առաջադիր հարցին հնարավոր է երկու պատասխան ա) կարելի է կարծել, որ հայերենը նախ վերցրել է փոխառու լեզվի բայը՝ ներկայացնելով հայերենի համապատասխան վերջավորութիւնը և ապա արդեն իրենը համարվող բայահիմքից կերտել նոր բառեր (Փոխառու լեզվում որոշ բայական ձևեր իբրք առկա են. հմմ. ապսպարել—միջ. պրս. abespārdan, պարմայել—միջ. պրս. parmādan): բ) Հնարավոր է նաև, որ հայերենին ծանոթ լինելով իրանական բայահասոյի իմաստը, միասնամանակ այդ արմատով ստեղծել է նոր ձևեր՝ այդ թվում և բայական (ժամանակագրորեն բացասելի շպետը է համաբնկան բայական ձևերի հաջորդումը անանցված ձևերին): Առկա իրանական բայաձևերի կողքին հայերենը ունի նույն արմատով գոյականներ, հմմտ. paYMōxtan «հացցնել»—հչ. պատմունգ «հանդեմ, հագուտ», պատմունակ «հանդերձապետ», իսկ պատմունգնեմ «զգնատավորել» արգեն ակհայտորեն հայտնազմութիւն է: Մի խոսքով, նշված երկու ճանապարհները հնարավոր են, իսկ ընդունել միայն մեկը՝ միտնելով մյուսը, սիշտ չի լինի: Այս երկվութիւնը իր հերթին դժվարացնում է փոխառյալ բառերի համակարգում բայերի կարգավիճակի որոշումը:

Արդ, ինչպե՞ս վարվել: Բայաձևերը համարել փոխառութիւն, թե՞ ոչ: Մեր կարծիքով, հենց այդ հանգամանքը, որ փոխառու լեզվի բայական միավորը ձևակառուցվածքային էական տարբերութիւն ունի փոխառու լեզվի համապատասխան միավորի համեմատութիւնը՝ իր կազմում ներառելով մայրենի լեզվի ձևույթ, հուշում է, որ բայաձևերը, չպետք է զետեղել փոխառութիւնների ցանկում: Եթե մենք աշխատելք համարենք փոխառութիւն անտեսելով -ել- մասնիկը, ապա նույն իրավունքով փոխառյալ միավոր պետք է համարենք աշխատանք-ը, աշխատալիւն-ը, աշխատ առնել-ը, մի խոսքով աշխատով կազմված բոլոր ձևերը, մի բան որ բնավ տարմարանական չէ: Փոխառութիւն պետք է համարել և ցանկում զետեղել միայն արմատը. որոշ վերապահութիւնը ցանկերի մեջ կարելի է զետեղել այն բայաձևերը, որոնց հիմքերը (արմատները) այլ կազմութիւններում չեն հանդիպում: Այս դեպքում էլ դարձյալ նշելով, որ փոխառութիւն է ոչ թե բայն ընդհանրապես, այլ համապատասխան արմատը, որ գտնում ենք ավյալ բայաձևի մեջ: Այս սկզբունքով առայնդորդելով Աճառյանի ցանկում զետեղված իրանական փոխառյալ բայերից կ-

քելի է թողնել միայն անդամն⁶¹, ապարանել, քանել, հանգրհնել, հրամայել, պարմայել, սպուծել, վկանդել, սրանց ավելացնելով նաև բոս նառճառյանական ստուգարանությունների իրանական համարվող անպարել, անշատել, կասել, հրաժարել, նշկանել, հռանել, շկապել-ը, կրկնում ենք, փոխառյալ արմատ է ոչ թե բայը ցույց տալու համար:

Ի դեպ, նշենք, որ փոխառյալ բայերի շարքում կան և նշույկ-սինթեր, որոնք հայկական բայական վերջավորություններից զատ ունեն նաև այլ՝ հայերենին բնորոշ ձևույթներ: Հմմտ. աղկանել. նախ, ստույգ լայնոր է համարել -աղկ- իրանական բնույթը և ապա -ան- միջածանցն էլ այստեղ զուտ հայկական է: Ուշագրավ մի հողվածում մ. Առաքելյանը գրում է. «Մեր խորին համոզմամբ ոչ մի ածանցավոր բայ [խոսքը չի վերաբերում -ա- խոնարհմանը] փոխառություն չի նկատվում»⁶²:

Այս, փաստերը խոսում են այս ենթադրության օգտին: Բավ-անել ում նույնպես -ան- միջածանցը մերն է: Բավ արմատը, անշուշտ, իրանական է: Հայերենը պահել է իրանական նաչ և նաչ տարբերակները: Փոխառելով բավ արմատը, հայերենը այդ արմատով ստեղծել է և նոր հիմք՝ բավան, իսկ այդ հիմքով էլ մի շարք նոր բառեր. բավան, բավանար, բավանակալ, բավանակից, բավանատեր, բավանող, բավանող, բավանուիրին, սրանց շարքում նաև բավանել/բավանիմ-ը: Ավելորդ չէ նշել, որ «Տարկ տայ», «Տարկ աննել» իմաստով հայերենում կիրառվում է նաև բավան-ը, որը կառուցվածորեն էպակես տարբերվում է բավանիմ-ից: Ապաշխարիմ-ում նիթ, իրք, իր-արախ՝ -ն է, -ար-ը զարժյալ հայերենի մասնիկ է, որ առկա է մի շարք բառերում. մեծ-ար-ել, աստուած-ար-ել...: Էլ չենք խոսում զ-արգ-ան-աղ-ի մասին, որը ներառվում է երեք հայերեն մասնիկ: Սրանք, անկասկա խոսքի մասային պատկանելությունից, որպես սկզբունք ամբողջական փոխառություն չենք համարում: Խիստ ապարկելի է, առհասարակ փոխառյալ բայ տերմինը: Սրա փոխարեն կարելի է օգտագործել օտար հիմքով (արմատով) բայ, որն ավելի ճշգրտորեն է ներկայացնում հասկացություն բովանդակությունը⁶³:

ԱՆ ԿՈՍԵՐ ՄԱՍԵՐ

Փոխառյալ մակբայները գոյականների ու ածականների համեմատությամբ զգալիորեն քիչ են: Նշենք, որ գրաբարի շատ ածականներ 120

համաձայնությամբ կարող են մակբայական-պարագայական կիրառություն ստանալ, նույնը բնականաբար վերաբերում է իրանական ծագմամբ ածականներին: Այս դեպքում գործ ունենք, ոչ թե փոխառյալ մակբայների, այլ հայերենում ածական→մակբայ գործառական փոխանցումների հետ: Հմմտ. «...տես գհայրն կատարեալ և զորդին քըշմարիտ» (Աղաթ.): «Չի նշմարիտ իցէ բանն առ ի աստուած» (ժնդ. հնկ, 32): Առաջին օրինակում ընդգծվածը ածական է, երկրորդում՝ մակբայ: Ածականների մակբայական կիրառությունը բնորոշ է շատ, այդ թվում և իրանական լեզուներին: Հայերենում այդ երևույթը ավելի քան սովորական է՝ կապված նաև մակբայների և ածականների մի շարք ընդհանրությունների հետ: Առաջին հերթին պետք է նշել նրանց բառային նշանակությունը. երկուսն էլ հատկանշակիչ բառեր են: Հատկանիշ-- Առարկա հարաբերությունը զեպրում գործ ունենք ածականների, Հատկանիշ--Գործողություն հարաբերության զեպրում՝ մակբայների հետ:

Նկատենք, որ բոլոր ածականները չեն, որ զրուսում են մակբայական կիրառություն. օրինակ, տարածական հատկանիշ արտահայտող, կամ ասենք, կոյր, համբ, իրոյ և նման կարգի ածականները մակբայաբար ավելի հազվադեպ են կիրառվում, քանի որ օտանմանփակ են այդ հատկանիշները գործողության հետ հարաբերելու հնարավորությունները:

Գրաբարում ածականների ու մակբայների փոխկիրառությանը նպաստում է նաև սրանց ձևականորեն շարաբերակվածությունը (առանկրենում, օրինակ այդպես չէ. հմմտ. ԵՍՏՐԻՍ և ԵՍՏՐՈՒ)։ Մակբայական բառանցներով բառերը կարող են հանդես գալ նաև որոշային կիրառությամբ, իսկ ածականին բնորոշ ձևային ցուցիչները, համեմատության աստիճանների արտահայտման եղանակները խորթ չեն և մակբայներին: Այս երևույթը վաղուց նկատվում է հայ քերականագիտության մեջ: Մ. Չամչյանը հատկապես շեշտում է ածանցավոր և բարդ ածականների մակբայական կիրառությունը: «Գիտելի է զի բաղում անուանք ածականք երբեմն իբրև զմակբայ վարին. Զխոտ զխորստում պայծառ զարգարէ, որ ածական անուան պայծառ եղեալ է և իբրև մակբայ. փխնկ. բաղիս պայծառապէս... Այս կիրառութիւնն յաճախ է ի բարդ ածականս. պարզերես կայցիք առաջի աւանդողին: Սոյնպէս ևս ածական անուանք, որք ունից զբաղադրական մասնիկս ան կամ զբաղադրական մասնիկս զոյն բազում անգամ վարին իբրև զմակբայ. Հարկանեն մեղմազոյնք (զեպ)»⁶⁴:

Ածականների և մակբայների տարբերությունները հանգեցնել մեկի թերականության մյուսի ոչ թերականության, դարձյալ ճիշտ չէ, որովհետեւ, նախ՝ ոչ բոլոր անականներն են հոլովում և ապա՝ անականների իրենին հոլովման կորպ չունեն, հոլովման հատկությունը ի հայտ է գալիս առարկայի հետ անհրաժեշտ հարաբերությամբ: Եթե էաչ մաշ կապակցության հարցուցում անականը կարող է հոլովվել, ապա էաչ իմանալ կապակցության մեջ այն ո՛չ հոլովում է, ո՛չ էլ խոնարհում: Որքան թերականության կարգը իրենին անականին բնորոշ չէ, սա եւ անականների և մակբայների մեկ ընդհանրություն է:

Մի խոսքով, հայերենում անական→մակբայ փոխկերտությունը օրինաչափ երևույթ է և իրանական ծագմամբ անականների մակբայական կերտությունը հիմք չի տալիս խոսելու փոխառյալ մակբայների մասին, եթե նույնիսկ փոխառու լեզվում ավանդված լինի անականի մակբայական կերտությունը: Փոխառյալ մակբայներ չլիքաք է համարել իրանական արմատով հայերեն անանցմամբ ու հայերենի հոլովական վերաձգություններով կազմված ձևերը (օրանք հայերենի մակբայակերտման հնարավորությունն են): Տմտ. տակա, սակա, ճեպ-ով, դտտ-տա, ճշմարիտ-իկ, տաղեպ-ով: Փոխառյալ չանք համարում և իր. բառ+եյ. բառ, ապա նաև իրանական բառ+իրանական բառ մակբայական կառույցները. այնգունակ, այլազգ, այժմ, բազում անգամ, իբր անգամ, ձկալ է ձկալի և այլն: Յոժ մակբայն էլ ամբողջական փոխառություն չէ, այլ յ+ոյժ կազմությունը: Հայերենի (ա)պէս և օրէն արդյունավետ մակբայական անանցները ծագումով իրանական են, սակայն այդ անանցմամբ ձևերն էլ՝ նույնիսկ իր. արմատ+(ա)պէս, օրէն կազմությունների ղեկավարում դարձյալ փոխառյալ մակբայներ չեն, բանի որ բառակազմական այդ կազապարը գործուն է օրինաչափ է հայերենում:

Այդուհանդերձ, գրաբարում կան մի շարք բառեր (մակբայներ), որոնք անանքին փոխառություններ են. կամայ, պամայ, սրանց արմատը իրանական է, որից ունենք կամ(է), սակայն կամայ, պամայն թերևս հայակազմություններ չեն, այլ իրանականից վերցված ձևեր: Ապամայ-ի ա- ժրտականն էլ դարձյալ իրանական է, հայերենում սպասելի էր անկամ: Կարի-ի կար արմատը նույնպես իրանական է. կարելի է ենթադրել, որ -ի-ն մեր մակբայակերտ անանցներից է Տմտ. բան-ի, ծ-ի և այլն, բայց իրանական լեզուներում սողո. կա՞մ ձևի առկայությունը խոսում է բառի ամբողջական փոխառություն լինելու օգտին: Կունակ, հանապազ. միշտ, զուր, յախտան, առազ մակբայ-

ները նույնպես իրանական են: Հավանաբար փոխառության շրջանից իսկ այս բառերի հիմնական գործածությունն եղել է մակբայական, ինչպես և փոխառու լեզվում:

Կապեր և շաղկապներ այլ լեզուներից սակավ են փոխառվում: Կապերը որպես կանոն ծագում են նյութական խոսքի մասերից՝ նյութական իմաստի կերտի և թերականական նոր իմաստի ձևաբերումով:

Այլ խոսքի մաս→կապ անցումը կարող է (ինչև ա) բնագրով պայմանավորված, էրր ավել խոսքի մասը միայն ավելյալ համատեղատում է հանդես գալիս նոր՝ կապական կերտությունամբ. այս ղեկավարում ավելյալ բառի խոսքիմաստային պատկանելությունը որոշվում է միայն բնագրով (Հմտ. հանդերձ կապը և հանդերձ գոյականը), բ) փոխանցումը կարող է լինել վերջական և ավարտան, էրր բարձր երկարատև գործածության ընթացքում փոխում է նախկին խոսքիմաստային արժեքը և ձևը բերում նոր որակ, ավելյալ ղեկավարում դանաւով կապ (Տմտ. գրաբարի առ, բառ, ի, ց նախդրները):

Պետք է նկատել, որ ոչ բոլոր գոյականները կամ անականները կաշող են կապական կերտություն ունենալ: Այդ հնարավորությունը գրեթեբոլորում են միայն այն բառերը, որոնք բառիմաստային և սրանից բխող գործառական առանձնահատկություններով ներունակ են արտահայտելու սպասարկու բառերին բնորոշ զանազան հարաբերություններ:

Հայերենի իրանական փոխառությունների մեջ կան մի շարք բառեր, որոնք բացի բուն խոսքիմաստային գործածությունից՝ հանդես են գալիս նաև կապական կերտությունում: Նշենք, որ այլ խոսքի մաս→կապ անցումը պետք է բացատրել միայն կոնկրետ պատճառներով, որը միշտ չէ, որ հնարավոր է: Մտորե ներկայացնենք իրանական այն բառերը, որոնք միաժամանակ նաև կապեր են:

Որոշ ղեկավարում կիրթնելիք տալ խոսքիմաստային փոխանցման բացատրությունը: Պմ(է)—գոյական է, բայց կա և այդ բառի կապական կերտությունը օրինակ. «Հանդէս ստակալի ցուցէր դէմ Բելխարայ» (ՆշՔ): Արդի հայերենում դմ-ը թերևս միայն կապական կերտություն է հանդես գալիս Մեր կարծիքով նշված բառի գոյական→կապ անցմանը նպատակ է նրա բազմիմաստությունը: Հենց գրաբարում բացի «դեմ» նշանակությունից այն ուներ նաև «աջակողմ», «երեսցող բան», «անձ», «անհատ» իմաստները, նաև թերականական աեր-մին էր: Իմաստային բազմապատկանում ու ներբանցներ, վերջին

հաշվով ավելի տարածած են զարձնում բառի առարկայական, նյութական բնորոշումը՝ հնարավորություն ստեղծելով նրա կապական կիրառության համար: Անշուշտ ղևմ(և) բառի կապացումը կատարվել է հայերենում և մենք չենք կարող խոսել ղևմ փոխառյալ կապի մասին: Ընդհանուր հայակազմությունը է՝ ընդ նախորդով: Ցանցիման կապը ունի «ղեմ», «ղիմացը», «առչը» իմաստը. «եստեր նա յանցիման տաճորին» (Մարկ. ԺԳ, 3), «Տիգրիս նա է, որ երթալ յանցիման Ասորեստանի» (Ճննդ. Բ., 14): Ցանցիման բառածը ամբողջական փոխառություն է. միջպարս. andēmān, handēmān: Եթե այս ձևերը փոխառու լեզվում կապական կիրառություն են ունեցել, ապա յանցիման-ը պետք է փոխառյալ կապ դիտենք: Ժամ/ժամանակի գոյականները կապական անունի դեպքում չեն կորցնում իրենց բառիմաստը, ավելին, հենց վերջինով է փեշարդովում կապական գործածությունը: Իրզվելով որևէ այլ բառերի հետ, այն մասնանշում է ժամանակային հարաբերություն, կապվող բառի հետ հանդես գալով որպես նախադասության մեկ անդամ՝ ժամանակի պարագա: «Ահա ժամ ճաշոյ է» (Հոսի. է, 14): «Որ և ժամ յայտ առնէր» (Բ. Մակ. Գ, 14): Այս օրինակներում ժամը գոյական է, իսկ ներքոգոյակներում՝ կապական կիրառություն ունի. «Եւ Ստեփանոս ի ժամ մահուան իւրոյ նստս զերկինս բացեալ» (Ագաթ.): «Ի ժամանակս Արարանու արք Սողոմ զգինին անօրինութեան» (Ագաթ.): Առհասարակ ժամանականիշ բառերի կապական կիրառությունը հնարավոր է համար. «Եւ յառաջ Ստուգալ արարին պատերազմ ընդ բնակիչսն» (Ա. Մն. Ե, 10): Նման դեպքերում ժամանակ ցույց տվող բառերը կորցնում են կոնկրետ ժամանակային միավորի արժեքը և զբոսնորում ժամանակի հասկացություն ավելի ընդհանուր ու վերացական արտահայտություն:

Պէպ պատահմունք», «ղիվզած» ունի նաև «արմար», «պատառ» իմաստները: Գրաբարում նաև կապական կիրառություն ունի նձր-ն դասական շրջանից ներկայացնում է միայն մեկ օրինակ՝ եղչեկից. «Յօրժամ կշիս ղկ պիգակակ պտահիցէլ: V դ. կարելի է բերել այլ օրինակներ. «Փայտեան իրարանչիւր ղկ պի երեսց իրեանց» (Խոր.): «Սեկացն տեղի ղկ պի գլխոյն» (Փիլ. Բ, 224): Արդի հայերենում սովորական է ղեպի կապի գործածությունը:

Բերենք գոյական→կապ անցման այլ օրինակներ: Ձանդերն «Տաղատ» գոյականի կապական կիրառությունը հաճախական է. «Երեսասարգօր հանդերձ երթիցուք» (Բ. Ժ. Թ, 9): «Ձանդերձ ընկերօ առցին» (Բ. Եզր. Ա, 4): «Տեսին զմանուկն հանդերձ Մարեամա՛ւ՝ մարքն իւրով»

(Մտթ. Բ, 11): Ձանդերձ կապի հիմնական գործածությունը նախագառ է, բայց կան և հետագա կիրառություն օրինակներ. «Գաթուրա հանդերձ և ընկերօր եօրա» (Եսթ. Գ, 11):

Համար-ը իբրև կապ հաճախական է աշխարհարարում: Ըստ Ա. Արարհայանի «Գրաբարյան շրջանում կարելի է նշել միայն նրա սազմնավորումը որպես այգյախիսի ի-նախորդի հետ՝ ի յամար Մ. Խորենացու «Պատմություն Հայոց»-ում ինչպես նաև «Հարանց վարքում», «Մխիթար Գոշի մոտ և այլն»⁶⁵: Ըստ Ա. Արարհայանի համարել բայը և համար կապը առաջացել են համար գոյականից՝ միմյանցից անկախ, մեկը մասնիկավորումով ու խոսքի մասանկի իմաստի անցումով, իսկ մյուսը առանց մասնիկավորման՝ նյութական իմաստի կորուստով և սպասարկու բառի վերածվելով (ն.ս.):

Կարելի է խոսել պատճառ, ապ գոյականների և համապատասխան կապերի մասին, սակայն վերջիններս ուղիղ ձևով չեն կիրառվում, այլ որոշ հոլովական վերջավորություններով ու նախորդներով, որը հայակազմություն է՝ «Ոչ ի պատճառս ազատության» (Ա. Թեո. Բ-5), «Ի պատճառս սովոր» (Ժն.), տես նաև հետադարձի պատճառս, ապ պատճառ (Խոր.): Սակ-ի կապական գործածության նախնական ձևն էր ի սակս (հոգնակի նախորդ հայցական), հետագայում հաճախական դարձավ սակս՝ նախագառ և հետագա գործածությունը՝ կապվող բառի սեռական հոլովով⁶⁶:

Որոշ գոյականների կապական կիրառության անշուշտ նպատակ է այց բառերի մակբայական կիրառությունը: Ա. Շախմատովի կարծիքով բուրբ կապերը իրենց ծագմամբ հանգում են մակբայների⁶⁷: Այս տեսակետը առարկելի է: Այո, մակբայական կիրառությունը նպատակ է զոչականների կապացմանը, բայց թերևս այն պարտադիր օղակ չէ զոչականների կապի վերածվելու գործընթացում⁶⁸:

Անական→կապ փոխանցման օրինակներ են կամ. Անական-ի կապական կիրառությունը վկայում է նձր-ն. «Անական ի երկնն թիղ մի» Հաասար-ը նույնպես երբեմն հանդես է գալիս որպես կապ. է՝ «բան հաասար մահո» (Միրաբ. 2Գ, 15): «զորս ոչ համարելի լինել հաասար շանց» (Յովհ., 2, 1):

Իրանական փոխառություններից գրաբարում հանգոյն, Եման, պև, վաճն բառերի հիմնական կիրառությունը կապական է: Սրանք կամ փոխառվել են որպես կապեր կամ էլ կապացման գործընթացը սկսվել է շատ վաղուց, բանի որ 5-րդ դարում գիտակցվում էին որպես կապեր: Վասն-ը շատ սովորական էր 5-րդ դարի հայերենում,

արա համանիշներն են յաղագս, աղագաւ, սակս, որոնք պատճառի չպեր են: Այս համանիշներից ամենատարածվածը վասն է, մյուսները Աճառյանի կարծիքով գործածվում են միայն կրկնությունից խոսակցու համար: Հմմտ. «Վասն համբերութեան ասարկուցն, գոր յաղագս Քրիստոսի համբերեցին բազում և մեծամեծ վշտոց»: «Արդ եթէ վասն նորա յաշտ ասնելու զի որդի լինիցի նմա, իսկ Որմբող վասն նորա յո՞ր սակս ասնել. միթէ կասկած ինչ ուստեք էր նմա և այն աղագաւ պատուիրէր նմա վասն յաշտ ասնելոյ»:

Պէս—հիմնականում կտաղաւ է. «Գեոռոյ պէս սահի անցանէ» (Ոսկ. է 7): «Ուղտուց պէս անճեթեթս վազիցէր» (Ոսկ. Մ. Բ. 23): «Այր մի աստուածապաշտ րո պէս» (Վրք. հրեց. Ա. 12): Ըստ էրևույթին պէս—ը բնորոշ է եղել ժողովրդախոսակցական ոճին:

Կամ—ի շաղկապացումը թերևս կատարվել է հայերենում: Համ շաղկապ գրաբարում ավանդված չէ, բայց գործուն է միջինհայերենյան փուլից և հաճախական է արդի բարբառներում: Այս շաղկապի գործածությունը ակունքները թերևս միջին իրանական լեզուներն են: Միջ. իր. ham-ը ծագում է իր. *hama գերանվանական անականից և իմաստալին ընդհանրություններ ունի հյ. համ շաղկապի հետ⁶⁹: Բարբառներում այդ շաղկապի տարածված կիրառությունը նպատակ է նոր պարսկերենը, մասամբ և թուրքերենը, որն իրանական լեզուներից նույնպես փոխառել է այդ շաղկապը: Ջ. Բույսնիկեյին, Պիզանիի հեռուությամբ, ելնելով հայերենում այդ և ձի, այլուսի զուգածներից (հմմտ. նաև պարսապատշաճ, որի պարստ և պատշաճ բաղադրիչները իրանական են) այդ տիպի կազմությունների —ու—ն համարում է միջ. իր. —ո— շաղկապը (fonti... 63):

Մա, իհարկե, խիստ վարկածային է, և անտեսվում է հյ. է, ու շաղկապների գործառական հնարավորությունները, հայերենի բառարարդան օրինաչափությունները:

Փաբգաստ սակավազեպ հանդիպող ձայնարկությունը նույնպես իրանական է: Թվականներից փոխառյալ են հազար և բիւ—ր: Փաբառյալ դերանուններ չկան: Որոշ ուսումնասիրողներ հայերենի առանիկ, առաիկ, առաղիկ, ցուցականները իրանական ձևերի հետ աղերսելու միտում ունեն:

Ա. Մեյլեն, Հ. Աճառյանը այդ ցուցակները նաև անառաիկ, անառաղիկ, անառանիկ ձևերը բնիկ են համարում⁷⁰: Ա. Մեյլեն դրանք կոչում է ցուցական մակրայներ, Հ. Աճառյանը՝ գերանուններ, Ա. Արքաշամյանը՝ եղանակավորող բառեր⁷¹: Ըստ Գ. Ջահուկյանի —իկ—ը նո-

րակազմություն է, իսկ ա(ա)-ի հարաբերությունը իրանական ava ցուցական հիմքի հետ հստակ չէ⁷²: Ա. Փերիխանյանը հյ. առաղիկ-ի համար նշում է իր. avadā (հմմտ. պրթ. մանիք. 'wwd, միջ. պրս. օն), հյ. ահառաղիկ՝ իր. *aḥvada (aḥa, ita* + avadā), հյ. առանիկ-ի. *avana հյ. առաիկ—միջ. իր. *avās, որը ցույց է տալիս հին իրանական ava-ի մի առանձնահատուկ կիրառությունը: Ա. Փերիխանյանի կարծիքով մեր ցուցականները ներկայացնում են միջին իրանական հյուսիսային բարբառային ձևեր⁷³:

Բայց զնայերում չենք կարող անվերապահորեն պնդել մեր ցուցակների իրանական ծագումը, այդ բանը հիմնավորելու համար անհրաժեշտ են նոր փաստեր, պարզելու հայերենի և իրանական համապատասխան ձևերի հարաբերությունը:

ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԿԻՐԸ

1. ԱՆՈՒՆԱԲԱՐ ԶԻՐԱՌՎՈՂ ԱՐՄԱՆՆԵՐ

Փոխառյալ մի շարք արմատներ (բառեր) հայերենում հանդես են գալիս միայն անանցավոր կամ բարդ բառերի կազմում: Ստորև ներկայացնում ենք դրանք:

Աշխատ բայահիմքից կազմված են աշխատեմ, աշխատիմ, աշխատեցուցանեմ բայերը, առաջին հաճախական է աշխատ անոնիմ հարգությունը: Աշխատ արմատով և համապատասխան անանցներով կազմվում է դերբայ, մակերայ, գոյական. (աշխատիլ, աշխատարար, աշխատաբիւն...): Առկա են նաև մի շարք բարդ բառեր, որոնք հիմնականում ուշ գրաբարյան են. (աշխատասէր, աշխատախոնդ, դառնաշխատ):

Ապաշխ(ար)-ով ունենք ապաշխարան, ապաշխարեմ, ապաշխարող, ապաշխարություն, անապաշխար, անապաշխարան, անապաշխարություն: Այս արմատով մի շարք բառեր գործածական են արդի գրական հայերենում, սակայն ի տարբերություն գրաբարի, միայն կրեոնական առումով:

Ապատ-ը հանդես է գալիս որպես մի շարք հատուկ անունների բաղադրիչ: Այն գրաբարում և այժմ էլ տեղանվանակերտ ձևույթ է: Գրաբարում ունենք վաղարշապատ, ներսևհայատ, Պերոզապատ... Ապատ-ը անանցների շարքում չկար ներկայացնում, որովհետև նրանով կազմված ձևերում թերևս գիտակցվում է ռշեն, շեն տեղ, վայր» իմաստը (իր. ձրձի շշեն):

Ապարբան արմատով (հիմքով) սպարբանեմ, «խորխտանալ, հանդռնել» բայը մեկ անգամ օգտագործել է Եղիշեն. «Ե վեր քան դմարդկային բնութիւն ընդզկեալ սպարբանէր» (12), սպարբանական

ձևով՝ Ազգաբնակչոցը. «Ապրիմանկան... զօրուն վաշտացեալ դրեորօրն... ի բուրն կորնել» (268), նշՐ-ն էլ բերում է հենց նշված ձևը: Ինչպես նկատում ենք, սպարբան արմատով բառերը գրաբարում խիստ սահմանափակ են: Կարելի է ենթադրել, որ այդ արմատի և գրանով կազմված ձևերի իմաստները համընդհանուր մատչելի չեն եղել:

Ապր «ամպ» արմատը վկայված է զարծյալ մեկ անգամ՝ սպրալոյզ (Երևակ մուրբակը) բառում: նշՐ-ում այս բառը չի ավանդված. այն գիտեղված է Քաջունու բառարանում²:

Ապ «ձի» բառն էլ գրաբարում զարմանալիորեն անկախաբար կիրառված չէ, կամ համեմալիդական նման կիրառություն մեզ չի հասել: Այնինչ, այն հանդիպում է, և բավական հաճախ, որպես բաղադրիչ-հիմնա. սապազան, սապազեն, սապազինեմ, սապականի, սապաճահական, սապատան, սապաստանիկ, սապատակ... Չնարավոր է, որ այս բոլոր բառերի ամբողջական փոխառություններ են, այս ղեզքում էլ, ըստ երևույթին, գիտակցվել է սապ-ի բառիմաստը:

Ատր «կրակ» արմատն էլ սովոր է մի շարք բառերում. ատրագոյն, ատրուշան, ատրճանակ, սրանք ամենայն հավանականությամբ ամբողջական փոխառություններ են, ունենք նաև հայկազմ ձևեր, ատրբակ, ատրբական, ատրական, ատրաշէկ³, ատրաշիկանալ: Ատրագոյն-ը կարող է լինել թե՛ ամբողջական փոխառություն, թե՛ հայկազմություն:

Ազգ-ունենք անկախաբար չկիրառվող երեք համանուն արմատ 1. ազգ «հարգ, սքծնք, արժանիք», 2. ազգ «գործ, աշխատանք», 3. ազգ «գիր, աղբյուր» վերջինը հ.հ. ծագում ունի, երկրորդը հունարենից կտառած փոխառություն է, իսկ առաջինը համար ենթադրվում է ձիջ իրանական ձևը, որը բավական գործուն է, այդ արմատով ունենք անբար, անարգաբար, անարգական, արգաւոր, մեծարդի, մեծարդոյ, մարգարէականագոյ, հայրանարգոյ, արգաղբի: Հաճախական են նաև այդ արմատի նախորդով տարբերակային ձևերը (զ)արգ, զարգանք, զարգանալ, զարգացումն, (լ)արգ, յարգել, յարգաւոր, յարգի և այլն:

Արժ-ով ունենք արժեմ արժէք, զանդարծանլ: Արժ-ով կազմությունները ավելի շատ են արդի գրական լեզվում: Աճալյանի կարծիքով առանձին փոխառություն է աճման բառը, որով ունենք արգմաթիմ նոր բառեր:

Արշա—բաղադրիչը առկա է արշալոյս (արշալուրջ) բառի մեջ: Այլ բառերի կազմում այն չի հանդիպում:

Բագ «ստալած» արձատր հանդես է գալիս մի շարք հատուկ անձնակների կազմում որպես առաջին բաղադրիչ. Բագարան, Բագաւան, Բագայաթիք, Բագարատ: Իբրև հասարակ անուն ունենք բազմին-ը և այդ բառով կազմությունները՝ բազնապետ, բազնագիտություն, բազնայարկ, բազնասէր: Գրարարում կա մեկ այլ ՔԱԳ «բաժին, ժառանգություն» արձատր ևս: Այս արձատր ունենք բագ աղկանի, բագ անկանի «բաժին հանել, բաժին բնիկնել» հարազրությունները, բագոր գոյականը: Բագ արձատր մեկ անգամ վկայված է և անկախարար. «Չիք իմ ասէ որդեակ, որ ունիցի քրագ և բաժին իմ» (Եփր. Թագ. 402):

Իստ արձատր հայերենում միշտ հանդես է գալիս զ նախորդով, ըստ այսմ փաստորեն կրեող ենք իսուել զքո տարրերակի մասին, որն իրանական արձատր + զ կազմությունն է, այսինքն՝ արձատրական ձևը ինքին փոխառություն չի եկնազրում. զքո տարրերակն էլ անկախարար չի կիրառվում, այլ մի շարք բառանկերում. զքոսանալ, զքոսանի (զքոսուել), զքոսանք, զքոսուելի, զքոսուցուցանել, բնազրուել... և այլն:

Գար-ը հանդես գալով որպես բարդության բաղադրիչ, արտահայտում է «ցավ, հիվանդություն, հիվանդ» նշանակությունը: «Իբրտ փախրստական ի խոսովեալ քաղցը ենք մարմնոյն արւարթս անկեալ գարադրութիւն և ողորկազութիւն հոսմամբ որովայնին» (ՆՃԲ): Գար արձատր այնչէր շատ վերջադաս է. զլլազար, խկազար, միլազար, լիզազար: Ընչ շրջանից՝ ցավազար, որտեղ արդեն Գար գիտակցվում է որպես սծանց: Արդի հայերենում էլ Գար-ը սծանցական արձեքով է լինվալում միայն:

Գոյը «ծածկոց» բաղադրիչը առկա է վարագոյր, շարագոյր, արնգոյր բառերում:

Գան արձատր առկա է միայն դահմունն «ձոն, նվեր» բառի մեջ. «Ջերեկին դահմունն մերոց» (Գ Մակ. Գ. 11): «Ջպտուղս ձեռաց ձերոց և դահմունն ձեր» (Քիք, ԻԸ, 2):

Դաստ «ձեռք» արձատրով զարբար ունի դաստակ, դաստապան, դաստառակ, դաստիարակ: Մրանք բոլորն էլ ամբողջական փոխառություններ են: Անշուշտ, զարբարում գիտակցվել է «ձեռք» նշանակությունը, որովհետև Երբեմն դաստ բաղադրիչի փոխարեն օգտագործվում է ձեռք բառը: Գրարարան փոլում դաստ-ի անկախ կիրառություն մեզ չի հասել: Միջին հայերենյան շրջանից այդպիսի կիրառություն կա. «Երբեւ զանոթ բրտի փշրել՝ զպպատամբեալան, որ զան ի գաստ» (վկայված է XIII դ.):

Դուխտ «ազդիկ» բառը նույնպես հայերենում անկախարար չի կիրառվում, այնինչ այն առկա է բազմաթիվ իգական անունների մեջ՝ որպես կերպորդ բաղադրիչ. Մահակնդուխտ, Ջարմանդուխտ, Որմըզդուխտ և այլն: Բառակազմական նույն կազմապարն է և իրանական լեզուներում. Նմտա. Artax—šatr—duxt, Mitr—duxt և այլն: Նկատելի է, որ վաղ զարբարում դուխտ-ը հանդես է գալիս այնպիսի բարդ բառերում, որոնց առաջին բաղադրիչը զարձալ կրանական է: Հայերենը սկզբնական փոխան էլ դուխտ-ով հատուկ նունակները, այնուհետև սկսել է գործել ոչ իրանական անձնանուն + դուխտ կազմապար:

Դրոս «հեղություն» բառը ՆՃԲ-ն չունի, կա ԱԲ-ում. սակայն բառը անկախարար չի կիրառվում, այլ միայն որպես բաղադրիչ. ուխտադրում, բարեղում, տիբարում, դոժողփրին...:

Երախտ արձատրով բարդված ձևերը բավական շատ են. երախտիք, երախտագործ, երախտակարույս, ապիբախտ, երախտաուր, երախտաու և այլն: Բերենք մի բանի վկայություն. «Ջանձինս խրեանց երախտաուր ճամարկին» (Բ ՄԱԿ. ԺԲ, 29): «Վասն երախտեալ անն միոյ սկարի» (Գժ. Գ, 9):

Երաչլս «քրավական» բառը անկախարար եղանի կիրառություն ունի միայն. «Ահաասիկ երաչլին իմ թափեալ ձեզ» (ՆՃԲ): V դ. են յերաչլիս սունուլ, յերաչլի սանել շարազրությունները. «Այք բարերար յերաչլի սանել զմերձաւորն» (Միք. ԻԲ, 19): «Մտայ քո առեալ է յերաչլի զմանուկ ի հօրէ խրմն» (Ծն, ԽԳ, 9): Երաչլս արձատրով զարբարն ունի երաչլիք, երաչլատորն, երաչլատորիք... և այլն: Չան սկիբոս արձատր վկայված է փաստորեն միայն զանգազն բառում, այլ զնպերում այն սծանցային արձեք ունի, որի մասին կիսովի համապատասխան տեղում:

Ջեն «զոհ»-ի անկախ կիրառության մեկ զեպը են վկայում բառարանները. «Ջիխն մեզ զեն պատարագ...»: Բանասեր Ա. Վարդանյանը⁶ հայերենը համեմատելով ասորական բնագրի հետ, զեն-ը ուղղում է Լզն, ըստ այդմ՝ «եզն նմա զեզն պարարակ», որը համոզելու ուղղում է: Այդ արձատրից կազմված ձևերից են. զենածոյ, զենակար զենաուան, զենեմ, զենելուրիւն, զենիկ, զենումն. անզեն, անզենիկ, գառնազեն, մարգազեն և այլն:

Ճէտ (մեա) բաղադրիչը գտնում ենք մի շարք բառերում. տխտաձէտ, դիւաձէտ, լուսնաձէտ, նեկաձէտ, արկուաձէտ(ուրին):

է. Աղաչանը գտնում է, որ ձէտ, մեա, ժատ ձևեր սխալազրություններ չեն, այլ հին իրանական ջատ «խփել» բայի զերբայական

ձևերը: ժառ, ծառ ձևերի համար Ազգայնը ենթադրում է մի անհայտ անձանց կամ «որը ավելի հարմարակալ է, մէտ բաղադրիչը իմաստի և ինքնորոշութեան միջազնունով վերածվել է ծառ, ծառ անանցներին»:

Իրանական դերբայների հետ ունեցած կապը հիմնավոր կլինէր մէտ, մեռ, ծառ ձևերի զգալի բառաշարքի դեպքում, հին իրանական լեզուների հետ ունեցած առնչությունն էլ կասկածելի է —մ-ի պատճառով: Նկատենք նաև, որ ծառ, ծառ ձևերը հայերենում ավանդված են ուշ նրբանց և անանցային արժեք ունեն: Է. Ազգայնի կարծիքով հին հայերենի այդ երեք տարբերակների գոյությունը ցույց է տալիս, որ հին հայերենում դա եղել է մի կենսունակ բառ, որը պահպանելով իրանական ձայնավորական հերթագայությունը, պահպանել է նաև դրանց միանությունն ու կապը և կազմել նորանոր բառեր⁵:

Պէտք է ասել, որ մեր գրավոր հուշարձանները, այլև բարբառները այլ բան են հուշում, հավաստելով, որ մէտ-ը ինքնուրույն կիրառություն չի ունեցել, կենսունակ բառ չի եղել, այլ փոխառյալ որոշ բաների համարանությունը հայերենը կերտել է մի բանի նոր բառեր, որոնք ընդգրկվում են մեկ իմաստային դաշտի մեջ (հիմնադրությունը նշող բառեր)⁶: Մեր ենթադրության օգտին է խառն նաև մէտ-ի բառաբարձման կազապարների խիստ սահմանափակությունը (առկա է միայն վերջնահար դիրքում, այն էլ ինչպես նշեցինք մի բանի բառերում):

Խազ «բար» բաղադրիչը առկա է գալլախազ, գալլախազեայ բառերում: Բերենք մեկ օրինակ. «Սուրս բարեղէնս գալլախազեայս» (Յեւտ, է, 3): Խազ-ի ծագումը բնա ԱՐՄ-ի կապվում է պճ. ՃՃ «բար» բառի հետ⁷:

Խոն «կերակուր, ճաշ». ունենք մի շարք բառեր. խոնակեր, խոնակերեղ, խոնակերոց, խոնակ, խոնանոց, խոնավանա, խոնապետ: Այս անք են խոհակերոց, որ հասուցանեցին պարտունային սահն զգեկոյն ժողովրդեան» (Ա, Յագ. Բ, 23): «Խոհակերոցը շինելաք ի ներքոյ պարտզամացն շուքընակի» (Նզկն, ԽՁ, 23): «Չձառայություն պարտիզն ու դիտանոցն ու խոհակն» (ՆԶԲ):

Խոն արմատը հանդես է գալիս նաև խան, խոխ, խախ տարբերակներով. հմտ, «...առեալ զորդին՝ խահագործեաց և եփեալ եղ առաքի անն» (ՆԶԲ): «Որովայն ի խահակերութենէ օտոզեալ կերակրովք» (ՆԶԲ):

Խոն—արմատի անկախ կիրառություն վաղ գրաբարում չկա: Օգ-

տագործել է Գ. Մազիստուր. «Վե՞ կազմելով զիտե՞ երախանին բազմազան խորակաց» (ՆԶԲ):

Խան-ը անկախաբար վկայված է ավելի վաղ (8-րդ դար). «Պատրաստել զիտահան: «Լի են խահիք սեղանք» (ՆԶԲ):

Խոստ—առկա է մի շարք բառերում. խոստանալ, խոստումն, խոստարանօրին, խոստաւոր. : խոստ լինել, ի խոստ ամըլ կապակցությունները ետգրաբարյան փուլից են: Խոստ արմատի անկախ կիրառությունը 12—13-րդ դարերից է: Այդ անկախությունն էլ հարաբերական է, որովհետև զործառում է դարձյալ հարաբերության մեջ. խոստ աննալ, խոստ եկն և այլն:

Խոստ-ի մի այլ տարբերակն է խոստովան-ը, որն նույնպես անկախ կիրառություն չունի (խոստովան առնմ. խոստովան լինմ, խոստովանաբար, խոստովանագուտար, խոստովանական, խոստովանակից, խոստովանեմ):

Խորտակ—անկախաբար գրաբարում վկայված չէ: 5-րդ դարից ունենք խորտակել, խորտակումն:

Խուն «սեղան»—հանդիպում ենք միայն խունաագործին բարդություն մեջ. «Մբ մեղ խունաագործին և խահակերութին պիտանացու և ոչ երբեք» (ՆԶԲ):

Կերտ «գործ, շինություն» արմատի առանձին զործածության մի բանի օրինակներ կան միայն՝ այն էլ թերևս ուշ շրջանից: Ունենք կերտել, կերտանալ բայերը: Գասական գրաբարում կերտ-ը հանդես է գալիս միայն որպես բարդության երկրորդ բաղադրիչ. ստատանակերտ, դաստակերտ, ըզմակերտ, հնահակերտ... Կերտ-ը նաև անդամական կերտ է. Խառովակերտ, Վաղարշակերտ, Տիգրանակերտ, Երանդակերտ, Վարապկերտ: Կերտ-ով անդանուններ են ստեղծվում նաև արքի հայերենում. Ստեփանակերտ, Մառապկերտ:

Նշմանկ «զն, ստանա» բառը գտնում ենք միայն հեշմակապալտ բարդության մեջ, որ մեկ անգամ վկայված է Նզկիկի մոտ. «Յամենայն դարս ստոտանապալտը դտանէին, որը յանդիմանէին զնշմակապատան» (Նզկ. 239): Աճառյանը ընդգծվածը համարում է սխալագործություն և ուղղում՝ հեշմակապալտ (տե՛ս Արմ. նշված բառի տակ): ՆԶԲ-ն համարում է վրացական փոխառություն: Մակայն հայերենի և վրացերենի փոխառություն արդյուրը իրանական լեզուներն են:

Շաշ արմատը զործածվում է սովորաբար անեղական: Այդ արմատով կազմված բառը ու անանցավոր բառերը բախական մեծ թիվ են կազմում Խահիկերորդորդայան գրաբարում: Կան մի շարք կազմու-

թյուններ, որոնցում հրաշք բանի երկրորդ բաղադրիչ է. զեղեցիկահաշ, զեհահաշ, ետահաշ, երկհահաշ: 5-րդ դարից հրաշ արմատով ունենք մի բանի բառ միայն. հեաշագլտ, հրաշակերտ, հրաշագործ: Կան նաև հրաշ-ի անկախ կիրառության դեպքեր, որոնք սակայն հաճախական չեն:

Վան «նետնի» առկա է թերևս միայն երախեան բառում: Մտակ «ամսավարձ» առկա է սեմամական «անվարձ» բառի մեջ: Եղկան—հանդես է գալիս բայական ձևով՝ եղկանեմ «արհամարհել, անարգել, եղկանեալ» անարգված: Ավելի նորն են եղկանումն, եղկանելի սերեր:

Մարզ «մեղուն» արմատը առկա է լուամարզ, սիւրամարզ բառերում: Համանուն մարզ «մարզագետին» գործածվում է անկախաբար: Նառ արմատը հանդես է գալիս որպես մի շարք տեղանունների երկրորդ բաղադրիչ. Արաշառ, Ալտիշառ, Նուանդաշառ, Վասակաշառ... Իրանական լեզուներում նույնպես Տձէ-ով տեղանուններ կան, սակայն, ի տարբերություն հայերենի, այնտեղ այն նախագաս է: Լրդի հայերենում էլ շատք գործուն տեղանվանական ձևույթ է, սակայն այն ընկալվում է «բազում, շատ» նշանակությամբ, իսկ գրաբանիքը ծագումնաբանորեն կապում են պ՛չ. Տձէ «տրախ» բառի հետ¹⁶:

Ոյզ—եթև այս արմատը իբրև իրանական ծագում ունի, ապա առկա է միայն առոյզ բառի մեջ:

Պանանջ անկախ կիրառություն ունի արդի հայերենում: Գրաբարում անկախ կիրառություն վիպված չէ, բայց ենթարբելի է: Արքան 5-րդ դարից ունենք պանանջեմ, պանանջեմ, պանանջիլ, պանանջող, պանանջումն ձևերը, այն նաև բարդության բաղադրիչ կարող է լինել: որկպանանջ, օրկեպանանջ...

Պաշտ արմատը նույնպես անկախաբար չի կիրառվում: Կան պաշտել բայը, պաշտումն, պաշտակ, պաշտօն, պաշտօնեայ բառերը հաճախական են: Պաշտպանը ամբողջական փոխառություն է: Պաշտ-ի պարիշտ տարբերակը գործչով անկախաբար չի կիրառվում. սրանով կազմված ձևերը զգալիորեն բիշ են պաշտ-ով կազմություններից (ամբարիշտ, բարեպարիշտ, բերանպարիշտ «մատովակ», պարշտութիւն):

Պատկան—իր. paktān «նետ» բառը առկա է պատկանցաբան «կապարձ»-ում, որը կարող է լինել ամբողջական փոխառություն: Բանասեր Ա. Վարդանյանը բերում է պատկան արմատի մի նոր վկայություն: «Պատկանեցէք ի նա գ՛ամբառս իբրև զնետս և ձեցեցէք ի Յոր որպէս ի նպատակ» (ԶԱ, 1912, 625):

Ռոշն—առկա է ողնական «լուսավոր», ողնաբին «լուսավորություն» բառերի մեջ: Ետգրաբարյան շրջանում կա ուշան «պայծառ»։ «Նանս զհետով զգիհին ռուշան, որ բու տետուղ նմանեցաւ» (Կ. Երզնկացի), բառարանները վկայում են նաև ուշինա (տե՛ս ԵԶԲ):

Ռառ «գետ» բառին հանդիպում ենք մի բանի տեղանուններում. Մարզոտ, Մարվի ոտ, Աղունգոտ, Բաղանոտ (նաև՝ ոտորիաղա, որն իրանական լեզուներին բնորոշ իզաֆեետային կազմություն է):

Վտար արմատից գրաբարում հաճախական է վտարել բայը: Այլ կազմություններից են՝ վտարակ, վտարանգի, վտարական, վտարանգի: Մարզ «տարի» ներկայանում է միայն երեք բառում. Նաասարդ, Երիտասարդ, սասարդ: Երեքն էլ ամբողջական փոխառություններ են, ծագումնաբանորեն բարդ բառեր:

Վլժ արմատից ունենք վիժիլ, վիժիլ, վիժուլ բայերը: Վլժ-ը հանդես է գալիս նաև որպես բաղադրիչ. զանվլժ, դարավլժ, ծովավլժ, Լարավլժ:

Տար «հետ» արմատը անկախաբար գործածվում է միայն տարաշխաեհ կապակցություն մեջ. «Տար աշխարհ՝ հարկանիցես, զնաց ի տար աշխարհ» (ՆԶԲ): Ընդհանրապես, տար-ով կազմությունները շատ են. տարաշխաեհիլ, տարաղիմիլ, տարագիր, տարակաց և այլն: Առկա են տար+գոյ. (տարաբան, տարաբուն), տար+բայ (տարբեր, տարբերել), տար+դերբայ (տարբերող, տարաբրիչ) կազմապարսերը: Տար-ը նաև անանցային կիրառություն ունի:

Փայ «տար» բառը կա Մագիստրոսի թղթերում. «...որ զօրէն լահնացի վիմացն սահնայ լարծին փայտական և լինցիցն զմեզ իբրև զխաղթն անդամարեկ» (236—237): (Նկատի ունի բանաստեղծական ոտքը—Լ. 2.): Այլ արմատով գրաբարն ունի պայիլ: Պ<Փ եթև հայերենի հնչյունափոխության արդյունք չէ, ապա փայ ձևը նոր պարսկերենից կատարած փոխառություն պետք է համարել: Ինչպես տեսանք, գրաբարում իրանական ծագում ունեցող մոտ 40 բառ (արմատ) անկախաբար չեն կիրառվում, կամ այդպիսի կիրառության եղանկ օրինակներ են վկայված միայն:

Վերոհիշյալ բառերի հաճախակատությունը և զուգորդման բառակազմական հնարավորությունները տարբեր են: Կան այնպիսիք, որոնք որպես բաղադրիչ առկա են մեկ-երկու բառերում (խաղ, պատկան, ապարթան, ապր), ընդհակառակը, մի խումբ բառերի բառակազմական

Ներառվորությունները ավելի շատ են, կաղապարները՝ բազմազան (գաստ, ասր, կերտ, տար...):

Ապատ, կերտ, բագ, շատ, ոտտ ձևությունները հոմանիշային խումբ են կազմում՝ հանդես գալով որպես տեղանվանակերտ բազադրիչներ:

Հարց են պնդանում, արդյոք, նախադրային ինչ-որ շրջանում կամ զրարարում վերոհիշյալ բառերը անկախարար կիրառվել են, թե՞ ոչ: Հաշվի առնելով այդ բառերի զործառական յուրահատկությունները, կարելի է կարծի, որ համախառն և զուգորդման համեմատաբար մեծ ներառվորություն ունեցող բառերը զործածվել են նաև անկախարար Քերես անկախ կիրառության փաստարկ կարելի է դիտել տվյալ արմատից բայածին առկայությունը (արծ-եմ, կերտ-եմ):

Սակայն սա սպառել պատասխան չէ: Ըստ էության որոշակի բան պնդելը ներառվոր էլ չէ: Քացառելի չէ և այն հանգամանքը, որ երբեք այդ բառերը անկախարար կիրառված չլինեն: Բազմամբով օրինակներ կան (ու միայն վերք նշոժ բուռերով), որ անկախ կիրառությունները ժամանակագրորեն զգալիորեն ուշ են վկայված:

Այս նարցում պետք է հաշվի առնել մի հանգամանք ևս. դա փոխատու լեզվի հասկանալիության խնդիրն է: Հայերի (կամ թե՛ բարձր զրավոր ճանապարհով է անցել, հայ հեղինակի) համար, անշուշտ, հասկանալի են եղել իրանական բառերը, ուստի նա իմանալով, ասելը, խումբ, դաստ բառերի նշանակությունը, նրանցով կարող էր ստեղծել նոր բառեր, այս դեպքում պարզապես չէ, որ այդ և նման բառերը անպայման անկախորեն կիրառվեին հայերենում: Քերես շատ դեպքերում այդպես էլ եղել է:

2. ԿՈՆՏԱԿՏՈՒՄ ԲԱՅԵՐ

Փոխառությունների շարքում կրն անշուշտի բառեր, որոնք ներկայացնում են նույն արմատը (հիմքը) կամ սրանց հնչյունափոխված տարբերակը:

band «կապ»: Սրա անմիջական արտացոլումը հայ. բանտ-ն է (եթե վերջին համարները փոխառությունն), այդ արմատի անց տարբերակով հայերենը մի շարք բառեր է փոխառել: Եթև միճելի է արգասանգ, բարձրաանգ(ակ), սարասանգ, զաճաանգ, դարասանգ բառերում անց «կապ» բազադրիչի խկությունը, սպա ներբոհիշյալ բառերում հաստատապես այդ բազադրիչն է. նախաբանը «թաղի կապ»:

ապաանգ(ակ) «պարան», բանանգ, (կանացի զարդ է, բոսացի) «բազկապ»), մեհնանգ (զարդ), պանանանգ «գոտի», պարասանգ «տոցի, ձեռքի կապ», օրից՝ պարասանգի շղթայի, կապի», դանդանանգ «սանձ», բոսացի՝ «սատանակապ»: band-ի անցյալի հիմքը՝ bast առկա է բաստարան «բանաս», ևուստ, պատաստ բառերում: d ā t ā, dāt «օրհնք»: Առկա է դատ, դատախագ, դատատ, դատաստան բառերում: Այս նույն արմատն է նաև ապիրատ բառում, որն ի հայտ է գալիս ստուգաբանորեն:

dāt «դատ» արմատն է դարապատ, դարապետ, դարապետ, բոսերևույթին նաև դանելի բառերում: Բարապան, բարապետ բառերում էլ, որը փոխառություն է պարթևերենից իր. dāt «դատ» արմատն է¹¹, det «ծայի»: Հայերենի անմիջական արտացոլումը դեմ-ն է, որից ունենք նաև բազմաթիվ անանցված ձևեր: Այդ արմատն է նաև պարետ բառում միջնայնադրային d-ը օրինաչափ հնչյունափոխությունը:

gar «բռնել, վերցնել»—առկա է պատգարակ, գրաստ ենթադրելի է նաև գրասկան, գրա, հանգրուան բառերում: Ոմանք այդ արմատի չ-ով տարբերակն են տեսնում նաև յոմար, ցմար, հրամար(եմ) բառերում: (Բեյլի, TPS, 1956):

gam-ը ներկայանում է սնգամ, հան-գամ-անգ, գամ, գամապե՞տ բառերում:

չարս. gauša, միշ. իր. ցծհ «սական» հայերենում ներկայանում է գոյշ, սգոյշ, լինի թե» (հանդես է գալիս հասկապես գոյշ թե, գոյշ ուրեմ կապակցությամբ), գուշակ, բանդագոյշ, հանգուշ, մարգանգոյշ բառերում: Նշված արմատն է և գոյշ-ում, որն ինքն զ-+գոյշ կազմությունն է, սպա ամբողջական փոխառություն է:

Kausa «կողմ»—հայ. կոյս «կողմ» համապատասխանությունը ակնհայտ է: Քուստ, պատգոսապան, թերևս նաև անգոսնել բառերում նույն արմատն է՝ հնչյունափոխված տարբերակներով: Կուսակալ-ի առաջին բազադրիչը նույնպես նշված արմատն է:

Kan «փորել, քանդել» արմատը ներկայանում է բազմաթիվ բառերում. ական «փոս, անցք», ական, ցկանակ, ապական(եմ). իրանական անց. հիմքը՝ -կանդ-ձևով առկա է կարկանդակ, վկանդեմ, կ-ը հնչյունափոխությամբ՝ րանդակ, րանդուկ: Այս արմատը առկայնում է նաև a>ē հնչյունափոխությամբ՝ պարկէն «պարպի շուրջ փորված փոս» (միշտ հանդես է գալիս փոս բառի հետ. պար-

վեն, փոսի, պարհենա փոսի և այլն): Քաշկէն «գարեհնաց» բառով արդոյր նույն արմատը է՝:

Kar «գործ, անել» արմատով հայերենում փոխառյալ բառեր շատ կան: Իրանական արմատը ներկայանում է մի բանի հնչյունափոխված ձևերով, որոնք ամենայն հավանականութեամբ զալիս են փոխառու լեզուներից: Կ-ով ունենք Բրտիկար, վնասակար, օգտակար: Վնասակար-ը ամբողջական փոխառություն է, օգտակար-ը թերևս համարանունային արդյունք է, թեև ենթադրություն կա բառի ամբողջական փոխառություն լինելու օգտին: Անկախ այս բարբոթից օգտակար-ի կար բարբարիչի իրանական ծագումը կասկած չի հարուցում: Եթե նախնական կապ կա kar «գործ» և kar «տոժ, զորություն» արմատների միջև, ապա անկար, տկար, ապիկար, կարատը, կարի բառերն էլ կարելի է գիտնել այս շարքում:

Կարող ենք նշել կողպետ «արհեստագետ»-ը՝ ր-ա հնչյունափոխություն: Ք-ով պայար, Բրտիկար, Բարտար, Բարտար, Գ-ով անգար, «համարել, մի բանի տեղ դնել», օ>ե հնչյունափոխություն՝ աշակերտ, կերտել, խոհակեր, աղօրկեր, պանակեր, պակեր:

Ինչպես գիտենք, իրանական լեզուներում գործում էր կ-ը հնչյունափոխությունը, որը արտահայտվում է նաև վերոհիշյալ արմատի դեպքում, հմմտ. անտ «սարք», նառ, նարպիկ, նարատ, նարտառայետ և այլն: Այդ արմատն է ենթադրվում վաճառ բառում:

մա՝ ապի» իրանական արմատը (հ.հ. *mē) ի հայտ է գալիս մի շարք բառերում, որոնք ամբողջական փոխառություններ են, նամենատ, նամիմազ, պայման: Պարմայել, նաման բառերի արմատը նույնպես մա-ն է: Ըստ երևույթին ամալի բառում ենթադրելի է այդ արմատը:

muč (mōč) «հագնել» արմատն է իրանականից փոխառյալ մուճակ, պատմունակ, պատմունեան, նաև մոյլ բառում:

Հպրո. pāda, միջ. իր. pād, pāy «տաք»-ը առկա է պալիկ «հեփտոտն գինվոր», ալվիի ոչ շրջանից փոխառյալ փալիկ «տուհնահակ» բառերում: Պարսաանդ-ում դարձյալ այդ արմատն է d>ր հնչյունափոխություն: Այդպես է թերևս նեպալարակ-ը: Պարեկ «պահպան, շրջադետ» բառը Աճառյանը նույնացնում է պահակ, պանակապան բառերի հետ: Պարեկ բառով ունենք պարեկապան, նաև՝ պարեկապան «պահնորդ, դետ»: Կարելի է ենթադրել pād, «տաք» բազադիչը, իսկ պարակ ձևի դեպքում էլ ալ (իր. օկ) դերբայակերտ

ցուցիչը: Այս դեպքում պարեկ/պարեկի համար կարելի է ենթադրել նախնական «տաքձ շրջող» խմատը:

*pašt (pušt), pas «թիկունք, մեջք» արմատը առկա է պաշուպան, պասանիկ «գրեմիոր, սպասատր», պ-ի հնչյունափոխություն՝ փուշափպան, փուշափպանապար, նաև՝ փաշաման «զղչում» բառերում:

Pač—առկա է նպար, պարեն, սմբար, համբարակապետ բառերում:

ram (a)-ով ունենք երամ, երամակ, ասմիկ:

rāh «ճանապարհ»—ապարան, ասմիլեյալ, ասմ:

rōk, roč «օր, լույս»—առկա է օրնիկ, պատուհակ, ոռչե, պատույց բառերում:

srav «ասել, խոսել, երգել» արմատը հայերենում առկայանում է դրոմվ, պարաու, նաև Խոսրոմ անձանվան մեջ:

tač «վազել, հուսել» արմատից ունենք ասպատակ, յովատակ, շահատակ, վտակ, տագնապ, տանիկ փոխառությունները:

tan «մարմին» գտնում ենք ապարանեմ «հանգրեմ, խրոխտանալ», մեքրան «զգեստ» բառերում: Մեզ թվում է պատանի բառի մեջ էլ նույն արմատն է:

tar—առկա է վտար, օտար, նաև տար ձևով՝ տար աշխարհապակցություն մեջ: vak(vāč «խոսել» պահված է նույզ, նուան, ալաչ բառերում: Այդ արմատն է անշուշտ գրուակ խոսք, զրույց» բառում: Բարգաւան, ամբարնաւան բառերում ոմանք ենթադրում են դարձյալ vač/vak արմատը¹⁹:

vāč «ծածկել»: Նուարտան «ծածկող», սաղաւաթ, վարտիֆ, անդրաւաթի(f), վերմակ, վերտ, տաղաւար, պատուար, վարագոյր բառերում անկասկած այս արմատն է:

vačed (vēd) «գրտենալ»-ից՝ հուալե, նուլե, պատուլե, պատուփրան:

x'ar «տուտել» արմատով ունենք ախոռ, խոտիկ, ապխոր: Ցազ(եմ) և յաշա «զոհ» բառերը նույնարմատ են. իր. yaz: Ընդ որում յաշա-ը յազ-ի դերբայական ձևն է:

Վերոհիշյալ բառերը հիմնականում ամբողջական փոխառություններ են: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հնչյունափոխված տարբերակները, որոնք նպատակում են բացահայտելու

3. ՔԱՐԻ ՔԱՆԵՐԻ ԸՆՈՑՅԸ

Փոխառությունների բնությունը ամբողջական ներկայացնելու միտումով, համառոտակի անդրադառնանք նաև բարդ բառերի կառուցվածքային յուրահատկություններին Որոշ պայմանականությամբ կարող ենք կատարել հետևյալ դասակարգումը.

ա) **Քաներ**, որոնք բարդ են ծագումնաբանորեն, իսկ հայերենում գիտակցվում են որպես պարզ: Բերենք մի քանի օրինակ. ապետ, աւազան, գոմէշ, երիտասարդ, ճշմարիտ, շատրուան, շպետ, պաշտպան, պատասխանի... սրանց թիվը այնքան էլ մեծ չէ:

բ) **Քաներ**, որոնք ծագումնաբանորեն բարդ են, հայերենում էլ բառակցից պիտակցվում են որպես սյուզյակին, սակայն բաղադրիչները, կամ բաղադրիչներից մեկը հայերենում անկախաբար չի կիրառվում: Քանի որ դրանք հետաքրքրական են նաև բաղադրիչների գործառնության տեսանկյունից, ուստի ներկայացնենք այդ կարգի բառերի քստ հնարավորին ամբողջական ցանկը.

Ախտարմոյ, ամբարտուան, ամպարտքաշ, անդերձապետ, անդրավարտիք, աշխոյժ, ապարտճ, ապիտո, ասպաղեն, ասպահապետ, ասպանաբարկական, ասպատակ, ասպարէզ, սակետ, ատրապոնի, ատրաճանակ, ատրաշխի, ատրաշան, բարապան, բարապետ, բարգաւաճ, բէշկ մշկոյ, բողպայիտ, բուլճնեխի, գաղերբուակ, գաւազան, գոյիբուակ, գորշապահանգ, գրապան, գանգանաանդ, դաստակերտ, դասապան, դաստառակ, դաստիրակ, դաստիտակ, դարապան, դարապետ, դարձնեխի, դասճան, զինիմազիզի, դերանդերձապետ, զանկապան, զենակար, զինդիկապետ, խարազան, խարբուզ, խոտապետ, խոտախորք, կամակար, համիմաղ, համհարզ, հնչմակապաշտ, հնազան, հողիրուակ, հրբուակ, մայպետ, մաշկապարճէն, մտկպետ, յուշկապարիկ, իսխիրուակ, նաւակատի(ք), նասասարզ, շահրմար, շապըտան տակասապետ, շարսաղար, շարսանդ, շարպազանգ, պիսնաւանդ, պատգոսապան, պատկանդարան, պարտաշ, պէշուպիկ, շատաղով, ռահվիրայ, ռոտաստակ, ռոտազէս, սակստան անդերձապետ, սազաարտ, սանդարմետ, սպանդորամետ, սրիսպան, վաճառքաճ, վարաւանդ, վարդապետ, փուշտիպան...

Վերոգրյալ ցանկում կարելի է տեսնել այնպիսի բառեր, որոնց բաղադրիչները հայերենում անկախաբար կիրառվում են: Առկա են իրականում այդպես չէ, բանի որ դրանք նույնանուն, բայց ոչ նույնիմաստ արմատներ են: Օրինակ, անդրաւաւտիլ բառի առաջին բաղադրիչը, անդր-ը իրանական andar «եներքի» բառն է, պատկանդարան-ի պատկան-ը պատկանիմ բայի արմատը չէ, այլ իր. patkān «ենտա բար» և այլն:

Ինչպես նկատվում է, բարդությունները հիմնականում երկբաղադրիչ են: Առկա են նաև հարադրավոր բարդություններ, մի շարք բառեր էլ պահել են իզաֆեռտային կառույցները՝ դեհիմազիզգ, գաշիրակ, որն իր հերթին հաստատում է, որ բարդությունն ամբողջապես փոխառությունն է:

գ) **Քարզ բառեր**, որոնց բաղադրիչները անկախ կիրառություն ունեն: Այս կարգի բառերի ցանկը բավական ծավալուն է: Մեր հնչյունափոխումը դրանց թիվը անցնում է 500-ից: Քանի որ ալիբրոդ է այգ ծավալուն բառաշարքը այստեղ ներկայացնելը, բավարարվենք միայն մեկ բառով կազմված ձևերը ներկայացնելով, որով և պարզ է դուռնում բառարարգման հիմնական կողպարները, կազմության յուրահատկությունները, նախօրոք նշենք, որ այս կարգի բարդ բառերի թիվը մի շնչին մասն է, որ ամբողջական փոխառություն է: Փաստորեն այստեղ գործ ունենք իրանական արմատներով հայակազմ բառերի հետ: Նկատել ենք, որ բառարարգման, ամենագործուն բաղադրիչը քաղում բառն է, որով կազմված ձևերն էլ ներկայացնում ենք ստորև: Բազմաբաշխ, բազմաբաշխ, բազմաբաշխական, բազմաբնակ, բազմաբուրեան, բազմազանձ, բազմազոյն, բազմազով, բազմազուամար, բազմաբունակ, բազմազունի, բազմազարման, բազմազմ, բազմազեկ, բազմազիմակ, բազմազիմի, բազմազորատո, բազմազուանազոյն, բազմազանակ, բազմազգան, բազմազդուշայի, բազմազոր, բազմածամանակ, բազմախորտակ(ի/ի), բազմախորտիկ, բազմախոտ(ու/ի/ն), բազմակամար, բազմակիրոպ, բազմակոհակ, բազմակոյտ, բազմահազար(ք), բազմահան(ոյ), բազմահամար, բազմահանդէս, բազմահանձար, բազմահնար, բազմամբարիշտ, բազմամբոխ, բազմանշանակ, բազմանուագ, բազմանուէք, բազմանշատ, բազմապատիժ, բազմապատիկ, բազմապարսիպ, բազմապարտ, բազմապետ, բազմամրէպ, բազմատանջ, բազմատոհմ, բազմամբոտի, բազմաբանդակ, բազմերախտ, բազմերամ, բազմերանդ, բազմօրինակ, բազմ-

օրհնելով, բազումժամանակ(հայ): Ինչպես տեսանք, միայն բազում բազազրիլով կա ավելի քան 70 բարգոթյուն:

Բարդ բառերի մեծ մասը հողակազմով է, որը հաստատում է, որ այն կերտվել է հայերենում: Ամբողջական փոխառություններում, հոգակապը բացակայում է: Հմմտ. մոզգլետ, պեմոմոգ, մազգլան, դենպետ, դենպետ:

Ինչպես մի առիթով նշել ենք, զուևանուն+գոյն կազմությունը ոմանք համարում են ամբողջական փոխառություն (սևագոյն, վաղազոյն...), որը առարկելի է:

Բառակազմական գործուն բազազրիլներ են նաև գոյն, պեմ, եպս, պէս, բառերը Արևելադեաներ Մ. Անտրան և է. Բենվենիստը հասուն բնության են առել պեմ-ով կազմությունները: է. Բենվենիստը նկատում է, որ իր. pati > pat-ի համեմատությամբ հայ. պեմ-ը ավելի հաճախական է, քան հանդիս է դալին և անկախաբար, մի կերտվի, որ բնորոշ չէ իրանական լեզուների (տե՛ս ՀԱ, 1961, 631—639):

Իրանական բառերով բարդությունների գերակշիռ մասը երկրազազրիլ է, դա նաև հայերենի բարդ բառերի առանձնահատկությունն է, կան նաև եռանդամ կազմություններ. բազմազանազոյն, խոհակերպպետ, սանգարամետապետ:

Հաճախական են գոյ+գոյ=ած. (աշխարհաբանակ, գալեկատուհմ, զիւզգունդ, նկարակերպ) ած.+գոյ.=ած. (ազգահամբ, ազատատահմ, անուշաբույր...), գոյ.+գոյ.=գոյ. կազապարները (տահմապետ, սպայապետ, սպայապետ...):

Հայերենում կալուն գործածություն ունեցող իրանական բառերը, ինչպես տեսանք, հանդիս են գալիս նաև որպես հայերենի բառապաշարի հարստացման միջոցներ՝ կազմելով բարդ բառեր:

4. ԻՐԱՆԱԿԱՆ ԵՐԱԳՄԻ ԱՅՆԱԿԱՆ: ԱՅՆԱԿԱՆ ԶԵՎԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՈՒՆԵՐ ՀԱՅԵՐԵՆՈՒԹ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԱՅՆՈՒՆԵՐՈՒԹ

Փնությունը ցույց է տալիս, որ հայերենում և իրանական լեզուներում առկա են անանցման զգալի համընկնումներ: Այդ համընկնումները արտահայտվում են մի կողմից՝ հայերենում իրանական անանցների ներկայությամբ, մյուս կողմից՝ երկու լեզուներում մի շարք անանցների և անանցման քնդհանրությամբ:

Պետք է նշել, որ գրաբարի անանցների պատմական ու համակար-

գային քննություն առայժմ չկա: Ինչ վերաբերում է գրաբարում գործառու իրանական անանցներին, ապա դրանց ծագման ու գործառական որոշ առանձնահատկություններին անդադարաբն էն մի շարք ուսումնասիրողներ (Բելարդի, Բելլի, Անադյան, Բենվենիստ, Բոլոնիեզի, Արտա, Ա. Շմիդտ):

Հարցին անդադարաբն է նաև Ջ. Գրեյպիեր, որի աշխատանքը արժեքավորվում է նյութի ամբողջական քննությամբ, անանցների ազգակցական ու ծագումնաբանական շափանչներին տարբերակմամբ, թեպետ հեղինակը երբեմն հասնում է ծայրահեղությունների՝ թույլ տալով նաև որոշ սխալներ¹³:

Ստորև մեր կողմից քննվող նյութը կարելի է բաժանել երկու խմբի՝ 1. իրանական արմատներ, որոնք հայերենում պահելով իրենց նյութական ու խոսքիմասային իմաստը հանդիս են գալիս նաև անանցազական կիրառությամբ: 2. զուտ անանցներ, որոնք հայերենում և իրանական լեզուներում (նկատի ունենք հատկապես միջին իրանական լեզուները) դրսևորում են գործառական քնդհանրություններ: Սկզբնք առաջիններից:

Գոյն գոյականից ծագած համապատասխան անանցը հաճախական է գրաբարում: Գոյն բարդ բացի հիմնական սգոյն, կրանգ նշանակությունից ունի նաև «տեսակ, ձև, կերպ» իմաստները, որը հիմնական իմաստի լայնացման գրանցումն է: Գոյն անանցը առաջացել է վերահիշյալ երկրորդական իմաստներից կամ թերևս անանցային իմաստն էլ հայերենը փոխառել է իրանական լեզուներից, որտեղ նա առկա է գոյն բառի իմաստային և կիրառական նմանօրինակ երկատվածություն (տե՛ս Արմ. զոյն բառի տակ):

Պև-ը համանիշ է իրև, հանգոյն, նման բառերին: Պև անանցով կազմվում են հատկանիշ ցույց տվող բառեր (Առատապէ, մեծապէ, առտրապէ, բաշապէ...): Բառակազմական հիմնական կազապարը անական+պէս-ն է:

Նշենք, որ վաղ գրաբարում պև-ի անանցային կիրառությունը դեռևս հատակ չէր, և պէս-ով կազմությունները, առհասարակ հաճախական չէին: Աստվածաշնչում, օրինակ, կա յոթ օրինակ. դառնապէս, յայտնապէս, ճշմարտապէս, մեծապէս, պնդապէս, սմանապէս, փութապէս: Պև-ի անանցային կիրառությունը՝ այսինքն նյութական խմ. —անանցը անցումը կատարվել է թերևս հայերենի հոյի վրա:

Օրէն(ք) բարդ գործիչ իրանական փոխառություն է: Ունենք մի շարք կազմություններ, կրք օրէն-ը մակերայակերտ կամ անականու-

կերտ ածանց է: Հմմ. մարդկորէն, յանկա՛ծօրէն, համօրէն, վարագօրէն... Առհասարակ օրէն-ով ձևերը բազմական մեծ թիվ են կազմում: Եկատակի է նաև, որ ուշ գրաբարում առկն-ով մի շարք ձևեր արհեստական են, բնորոշ միայն գիտական ոճին: Օրինակ կարող ենք բերել Արխատակի Քարգամնութիւններում հանդիպող զլլաարօրէն, զծօրէն բառերը, վերջինս օգտագործել է նաև Գ. Մազիսարսը (տե՛ս նշխ):

Տար «հնու, հեռավոր» իմաստի միջազմամբ բարդ ձևը է բերել նաև ապ, չ, ան միտական ածանցի գործառնություն: Ինչպես նկատել են ուսումնասիրողները, հոտակերպչան շրջանում ընդարձակվում են աւտ-ի գործածութիւնն որոսները և այն ձևը է բերում հուն. նիթ-օ՛ւ, զթօ— նախամասնիկների արծիթ¹⁴: Ահա մի քանի օրինակներ տար-ի ածանցային կիրառութիւնը. տարածամ, տարապարտ, տարահանելի, տարապայման, տարօրինակ, տարածախոթիւն և այլն: Տար-ի ածանցային կիրառութիւնը, առշուշտ, ձևը է բերվել հայերենում:

Այժմ անգրագետներ այն ձևայիններին, որոնք հայերենում բացառապես ածանցներ են: Գրաբար ներկայանում են և որպես նախածանցներ է՝ որպես վերջածանցներ: Իրանական ծագում ունեցող նախածանցների թիվը մեծ է:

Համ—իրանական լեզուներում ham-ը արտագրողական ածանցներից է և արտահայտում է նույնութիւն, ընդհանրութիւն. այդ օճանցով վկայված շատ ձևեր կան: Համ ածանցը լրագրականց արտագրողական է նաև գրաբարում: Այն կազմում է հիմնականում ածականներ (նաև գոյականներ): Առկա են հետևյալ կազապարները՝ համ+գոյ. (համարարատ, համարեութիւն, համահայր, համաձայն), համ+բայ (համարանում, համբարանում), համ+ած. (համարանական, համանման) և այլն:

Հայերենում համ-ը բազմիմաստ է: Ըստ Արմ.-ի ունի՛ ա) նման, նույն, միևնույն, բ) համայն, ամեն կողմ, բոլորը, ամբողջը, գ) բոլորովին, ամբողջովին, դ) զործածվում է նաև որպես թարմատար: Համ-ը հանդես է գալիս նաև ձևափոխված տեսքով՝ հ-ի կրճատումով, մ-ն հնչյունափոխութիւնը (ամբարձումն, ամփոփ, անդորր, հանգէտ, հանգրկութիւն...): Համ-ի տարատեսակն է նաև համ-ը (հոմարին, հոմագրի, հոմանուն): Համ-ը համարվում է Իռանաբան դպրերի կողմից ներմուծված ածանց¹⁵:

Կան շատ բառեր, որոնց երկրորդ բաղադրիչը, իրանական փոխառնություն է. համազունց, համազգի... Եթէ համ-ը իրոք իրանական ծագում ունի, ապա դա դեռևս իրավունք չի տալիս այս տիպի բառերը իրանական փոխառնություն համարելու: Այլիմ հավանական է, որ արանք կերտված լինեն հայերենում: Ամբողջական փոխառնություն պետք է համարել համ ածանց ունեցող այն բառերը, որոնց երկրորդ բաղադրիչը անկախաբար չի զործածվում և չի գիտակցվում. համաւյեակ, համլիրակ, համակ և այլն: Որոշ դեպքերում էլ կարելի է հարգի հանել հոդակապով կամ առանց հոդակապի լինելու փաստը. համակաղն, համահարզ (կա նաև համահարզ ձևը):

ham — ծագում է իր. *hama-ից. հմմտ. հպրս. hamapitar «համահայր» (ՕՒԿ, 1981, 198—199): Այս էլ իր հերթին հ.ե. *sem «մեկ, միակ» ձևից, որի ձայնադարձներն են som, sōm, sm, smm: Ըստ Արմ.-ի այս բառերը նշանակում են նաև «միասին»: Հ. Անտալյան հայ. համ-ը փոխառնու է համարում իրանականից «մասնավորապես ա (փի. հ.ե. Ե)»-ի և ընդհանրապես ձևական նմանությունների պատճառով (տե՛ս Արմ. համ բառի տակ): Գուցե շատ բծախնդիր լինելու պարագայում կարելի է և համ-ը բխեցնել հ.ե. *sm-ից (Գ. Զահուկյանը նույնպես համ-ը կաակածելով է համարում իրանական (տե՛ս Օսեր-ԿԻ..., 311)¹⁶: Համ-ի մեծ համախախտությունը, բառակազմական լայն հնարավորությունները, եթէ չեն հավաստում նրա բնիկ լինելը, ապա գտնից ցույց են տալիս նրա ինքնուրույն լայն զարգացումը հայերենում:

Դժ-ը միտական ածանց է, ծագում է իրանական duš «գառ» ձևից: Նախքան այս ածանցի ցնեութիւնն անցնելը համառոտակի անդրադառնանք մեկ այլ հարցին: Գրաբարում միտական ածանցներն են ան, զթ, օ, ապ, չ: Ամենաարդյունավետը արանց մեջ ան-ն է, որով կազմվում են մի քանի հարյուրի հասնող ածականներ՝ ան+գոյական, ան+ածական կազապարներով¹⁷:

Համանման մի մասնիկ էլ կա իրանական լեզուներում: Օրինակ, an-ը (ա-ի տարբերակը) պարթևերենում կազմում է ածականներ և գոյականներ: an-ը գրվում է ձայնավորով սկզբող բառերից առաջ, anabyād «մտացված» հմմտ. abyād «հիշողություն» (ՕՒԿ, 1981, 198): Այդպես է և միջին պարսկերենում. tuvān «կարող», atuvān «անկարող», ayār «օգնական», anayār «չօգնող»:

Մենք, ի տարբերություն որոշ ուսումնասիրողների, ան ածանցը փոխառնություն չենք դիտում: Երկու լեզուներում ան միտական ածանցի առկայութիւնը ընդհանրական երևույթ է:

Հայերենը իրանականից փոխ է առել ան-ով ամբողջական կազմառութուններ, որոնցում ան-ի առանձին ձևույթ լինելը չի գիտակցվում, ինչպես չի գիտակցվում նաև մյուս ձևույթի ինքնուրույն բառային ի-մասարը:

Հմտ. անաշարիկ, անոյշ, անապակ: Այլ է դժ-ի հարցը: Մրա ի-րանական ծագումը անստորկելի է. այդ հաստատվում է ոչ միայն ստուգաբանորեն, այլև նրանով, որ հայերենում դժ-ով բառերի գերա-լիշու մասը իրանական ծագում ունի, այսինքն՝ այդ բառերը ամբող-ջական փոխառություններ են: Հայերենում այդ մասնիկով մտա մեկ ու կես տասնյակ բառեր կան. դժնայ, դժնի, դժարան, դժար, դժխեմ, դժվամակ, դժգոյն, դժկերպ, դժմիտ, դժնգակ, դժոխ, դժտար, դժպատեն, դժպիկ: Այս բառերի մեծ մասում նույնիսկ ան-ի ձևույթային արժեքը չի գիտակցվում, բանի որ բառարանաները գծկապ կիրառությունն չու-նեն: Բացառություն են դժգոյն-ը, և դժկերպ-ը, որոնց զայն և կերպ արմատները հայերենում վաղուց գիտակցվել են որպես մայրենի բա-ռեր՝ սանդեղով նորանոր կազմառություններ:

Ոչ իրանական ծագում ունեցող բառերում դժ-ը ներկայանում է միայն դժարան, դժգոն, դժպատեն, դժմիտ-ում: Գոն-ի և պատեն-ի ծագումը ստույգ չէ (բառերի արտաքին հնչյունական տեսքը չի բա-ցառում դրանց իրանական բնույթը): Բուն հայերեն բառերի մեջ դժ-ը ներկայանում է փաստորեն միայն դժարան և դժմիտ բառերում: Կժարան-ը հարկադրեալ կիրառություն ունի՝ վկայված 5-րդ դարից ուշ, իսկ դժմիտ-ը (դժմախոտ) V դ. է. «Այս շարահմար և դժնամբոտ» Թերև լսլր ի դժնամիտ հարաբարակետեա (ՆՃԲ): Մի խոսքով, գրա-բարում, իրանական -դժ- ածանցի կիրառությունը և ճանախակա-կանությունը խիստ սահմանափակ է: Կարելի է կարծել, որ խոսակ-ցական լեզվում այն չի կիրառվել. դժ-ով կազմառությունները քերեն սահմանափակվել են գրավոր լեզվի հետ զուրոտներում: Ի դեպ, այդ սահմանը անարտադրողական է նաև արդի լեզուներում: «Գժ-ածանցը, որ հայերենին է անցել որպես մի շարք բառերի բաղադրիչ, արդի հա-լերենում գիտակցվում է որպես ժխտական ածանց միայն այն բառե-րում, որոնց նախատիպը որպես առանձին բառային միավորներ գի-տակցվում են՝ դժբախտ, դժգոն, դժկամ, դժմիտ, դժպատեն, որոնցից մի բանին էլ դառնում են նոր բաղադրությունների նախատիպեր... Կժ-ով նոր բառեր չեն կազմվում»¹⁶:

Իրանական ճՍՏ-ը երկու բառում՝ բշտամի, բշտառ, ներկայանում է

-բշ- ձևով: Նշված բառերում բշ-ն որպես ածանց չի գիտակցվում: Թշ-ով նոր բառեր չեն կազմվել:

Անցյենը վերջածանցների բնութայնը:

Այլ: —Հայերենի իրանական փոխառությունների մեջ բազմաթիվ բառեր ունեն այս ձևույթը: Մրանք փոխառու լեզվից անցած ձևեր են, որոնցում ակ ածանցային արժեքը շատ դեպքում չի գիտակցվում¹⁷: Այդ ածանցը բավական արտադրողական էր հատկապես միջին իրա-նական լեզուներում: Միջին պարսկերենում և պարսկերենում կազմում էր զոչականներ՝ բայահիմերից, թվականներից ու սծականներից, ածականներ՝ գոյականներից ու բայառուներից: Հանդիպում են նաև բառեր Ս(զըս) և ակ ածանցային հակադրությունը, որոնց միջև ի-մասնային և խոսքմասնային տարբերություններ չեն նկատվում: Ուսումնասիրողները նշում են ակ-ի նաև փոքրացուցիչ, փաղաքա-կան իմաստը: Այդպիսի օրինակներ, սակայն, բիշ են, կամ ավելի ճիշտ, բիշ են վկայված, որովհետև դրանք բնորոշ են խոսակցական-բանավոր լեզվին:

Գրաբարում ակ-ի համախական գործառությունը համարվում է նվազական-փաղաքական կիրառությունը. արոսակ, բլթակ, նավակ, աճակ, բլրակ, պատանեակ... Ակ-ի այդ իմաստը պահպանել են նաև արդի իրանական որոշ լեզուներ ու բարբառներ²⁰:

Քյուրդիսացություն կլինի կարծել, քն գրաբարի -ակ-ով վերջա-ցող բոլոր բառերը իրանական են: Վերջիններս, այս, շատ են, բայց կարելի է առանձնացնել մի շարք -ակ-ով վերջացող բառեր, որոնք իրանական փոխառություններ չեն. ագարակ, աղաղակ, դասակ, ի-մաստակ, իմաստասիրակ, խնդրակ, կրակ, հետակ, մտրակ, նեբ-նակ, սխալակ, սոխակ, տափարակ, տեսակ, տրոհակ և այլն:

Ակ-ով վերջացող բառերի բնութայնը պարզում է, որ այն գոր-ծառություն ընդհանուր եզրեր ունի իրանական համապատասխան ա-ծանցի հետ: Նրանով ևս բայառուներից գոյական է կերտվում (տրոհ-տրոհակ)²¹: Հայերենում էլ կան ակ/0 բառային զույգեր՝ առանց ի-մաստային տարբերակվածության: Աղաղ աղաղ բառ ՆՃԲ-ի ունի «տղիղ, հարթ», «արդարացի» իմաստները. «Ձույց արդարք և կշիռք արդարք և շափք արդար և կապիճ արդար լինիցի ձեզ» (Ղես. ԺԲ, 36): «Ձի հարթ պահնցեալ արդար կուշեցուք հաստարթիմ հաստարթեճամբն» (ՆՃԲ): Նույն իմաստն ունի և արդարակ-ը. «Ձորս հաստատեաց կա-ցոյց բուտիւնս արդարակ զուգրողութեան» (ՆՃԲ): «Ոճմանք ոչինչ ար-

տարոյ քան առ մարդիկ արդարապէս՝ բարի ինչ կարճեցնեն զոյ» (ՆՆԲ)։ Այսպէս նաև՝ իմաստասեր-իմաստասիրակ։ «Անն իմաստասիրի որոյս անի չայր խոր» (Առակ, ԻՔ, 13)։ «Ան իմաստութիւն ճանապարհոն կոչի իմաստասիրութիւն. բանզի իմաստասիրակ է արարչական զօրութիւն, իմաստասիրակ է և արքունականն, իմաստասիրակ է աշխարհ» (Փիլ.)²²։ Կարող ենք նշել նաև սխալ/սխալակ, ազատ/ազատակ և այլն։

Ակ-ով ձևերը գրաբարում երբեմն զերբայական իմաստ են արտահայտում. զորձակ «գործող», խնդրակ «որոնող», զտակ «գտնող», հնարող»։ Հմտ. «Առանց մարդ առ ի եղիլատացող Հեփեսոսս որ և հրոյ զտակ լինէր» (Ենս. Քր. Ա)։ Բացի անվանութակ, զդպկանութակ կազազարենից անկա են նաև բայաւմտութակ, բվականութակ կազազարենից, երեակ, երգակ, դիտակ, երկակ, եռակ, եակ։

Տեսանք, որ ակ-ի հիմնական գործառնայլը նվազակառնութուն-փաղաքականութիւնն արտահայտելու մեջ չէ. Ակ-ի գործածութիւնն մտանի է. Քունանչանը արում է. «ժողովրդացիք -ակ- ածանցը մի շարք զեպերում ձեռք է բերում բառակազմական գործառնութիւն, արմատապէս փոխելով ածանցվող բառի իմաստային միջուկը, որը շեղան հայտանի է բնորոշ չէ նվազա-փաղաքական ածանցներից ընդհանրապէս»²³։ Որպէս օրինակ նա բերում է օրինակ բառը՝ օրէնքից։

Երևոյթը ճիշտ է նկատված, բերված օրինակը սակայն առարկելի է, որովհետև օրինակ-ը և օրէնք-ը ստանձնի փոխառնութիւններ են։

Հայերենի և իրանական լեզուների բնձնած փաստերը հաստատում են, որ երկու լեզուներում անկա են ակ-ի գործածական-իմաստային լայն քնհանրութիւնները։ Անշուշտ իրանական աղբյուրութիւն կա, բայց չպիտի է մերժել նաև հայերենում ակ-ի որոշ գործածութիւնների ինքնուրույն զարգացումը՝ նույնիսկ իրանական լեզուներում այդ կիրառութիւնները անկա լինելու դեպքում։ Ըստ երկվայթի նակ-ով իրանական ձևերի փոխառնութիւն շրջանում դրանք հայերենի համար որպէս խորթ ձևեր չեն գիտակցվել, այդ պատճառով էլ հարազատորեն պահպանվել են՝ առանց հնչյունական փոփոխութիւնների ենթարկվելու։

Ական-ածանցը գործուն և արտադրողական է հայերենի բոլոր փուլերում։ Վաղ գրաբարից այդ ածանցին համանիշ է ային-ը։ Մականն թի հաճախականութիւն և թի կիրառական ոլորտների ընդգրկման տեսակետից ական-ը ավելի արդունավետ է Դասական գրա-

բարի բնորոշ հատկանիշներից մեկը ուսումնասիրողները համարում են հենց ական-ի գործածութիւնը։ Ական-ով կազմված բառերի թիվը հասնում է 1000-ի, իսկ ային-ով ունենք մոտ 60 բառ²⁴։

Ական-ը հիմնականում անակառակնոր է։ Բնորոշ են հետևյալ կազազարենից՝ զոյ. +ական=ան. (ազգական, սիրտական, ամուսնական, անձեական), բայաւմտ (բայանիւմ) +ական=ան. (էական, զիտական, աճական, սնհասական անբարձանելիս), անվական +ական=անվական (անշտական, ատրէական, բացական, իգական)։ Գործուն է նաև դերբայ +ական=ան. կազազարտ (արարչական, դատազական և այլն)։ Բնականաբար բազմաթիվ կազազարների հնարաբարութիւնը ենթադրում է ական-ով բառերի մեծ թիվ. և դա, իբր, այդպէս էլ։ Իրանական լեզուներում նույնպէս անկա է սյուզիսի մի ամանց՝ akān /agān; որը միջին պարսկերենում և պարթևերենում անվական կերպ է (OHA, 1981, 70, 195)։ Ծագումը ենթադրվում է իր. aka + ana-(OHЯ, 1981, 70)։

Է. Բենդլենիսը իր. akān-ը դիտում է, նախ և առաջ, որպէս իրանական հայրաբանութիւն (պատրոնիմիկա) արտահայտման բնորոշ ածանց-ձևույթ։ Հմտ. Šahrpur Papakan, Šasanakan, պրթ. āyazan nān-i-tanikān –հայ. նանական մենեան և այլն է. Բենդլենիսը նկատում է, որ իրանական այդ գործածութիւն ակունքները զգլխս են դնեն հին իրանական լեզուներից²⁵։ Կապված այս կիրառութիւնն նաև ական-ը թի իրանական լեզուներում, ի՛նչ հայերենում նաև տեղանվանական է։ Հմտ. Աուրպատական, Վապարտական, հայերենում նաև՝ Օշական, Փառական և այլն։ Նշելով երկու լեզուներում ական-ի գործածական մի շարք բնահանրութիւններ, Է. Բենդլենիսը իրականացնում է, որ հայերենը պարթևերենից վերցրել է ոչ միայն ական ածանցը, այլև նրա շարահյուսական գործածութիւնները²⁶։

Ինչպէս նշել ենք, -ական-ի կիրառութիւնները հայերենում ավելի լայն են։ Փեղան բառ Բենդլենիսին օգնի մեզ հասած պարթևական տեքստերը ավելի ծավալուն ու ամբողջական լինելի, սպա կրացուհայտվելին նշված ածանցի գործածական ավելի շատ համապատասխանութիւններ²⁷, սակայն ամենայն հավանականութիւնը հայերենում -ական-ի կիրառութիւնն սահմանների ընդարձակումը հայերենի հողի վրա կատարված երևույթ է։ Ածանցների շարահյուսական լայն ոլորտների «փոխառնութիւնը» ընդհանրապէս չի հիմնավորվում։

Ան-ը գրաբարում նանդես է գայիս հիմնականում որպէս դերբայական մանիկ (կերբայ դերբայ)՝ համանիշ հանդիսանալով ող,

մանը-ը հուեական փոխառություն է, պահոց, հիւանց, եւրմանց, մարմանց, շրտանց, պատանց բառերի ստուգարանությունը վտահելի չէ: (Բացառված չէ սրանց իրանական բնույթը): Մի խօսքով անց-ի ածանցային բնույթը հայերենում հստակ չէ, ուստի և որոշակի չի կարելի պնդել այդ ձևույթի՝ որպես իրանական ածանցի փոստը:

Անցակ—հազվագեղ հանդիպող ածանցներից է: Դրա իրանական ծագումը նշել է զեռուս Արաբշահանը՝ սուեհանդակ-ի անցակ բաղադրիչը համարելով իրանական անձակ մասնիկը²⁹: Միջին իրանական լեզուներում զբանով կազմված ձևերը հիմնականում զերբայական նշանակություն ունեն: Հայերենում անցակ ածանցին հանդիպում ենք մի քանի բառերում. սասպնդակ, բուսանդակ (բովանդակ), սուբհանդակի Սրանք ամբողջական փոխառություններ են, և այս բառերը հիման վրա խոսել հայերենում անցակ ածանցի գոյության մասին, թերևս միշտ չէ: Անցակ ածանցը տեսնում ենք այլտնդակ բառում, օծանդակ-ն էլ ամբողջական փոխառություն է:

(Ա)րան-ը Բժամասային-հնչյունական ակնհայտ ընդհանրություն ունի միջ. պրս. մնդ-ի հետ: Զ. Գրեպպիերը նկատում է հետևյալ օրինակները. հայեմ-հայարան, բառ-բառարան, աղօթ-աղօթարան, միջ. պրս. zēn-zēndān կարող ենք ավելացնել ātaxš «կրակ» — ataxšdān «կրակարան»: Արան-ի իրանական բնույթը ավելի համոզիչ կլինեք, եթե իրանական յեղուներում էլ ստեղծ լինեք dan- ածանցի ք-ով Աեիրը ներառող զգալի բառաշարը:

Ոմանք հայ. արեև-ը (հմտ. փոխարէն) հակված են համարելու իրանական շ. իր. *a.šayana կազմված ավ. šay «տեսնել» արմատից, Հայերենում արեև-ը հանդես է գալիս հիմնականում որպես որևէ լեզու ցույց տվող ածանց. հուեարէն, դաղմատարէն...³⁰ Եթե ծագումնաբանորեն իրքը հայ. նշված ածանցը իրանական է, ապա հիմնական գործառնությունը նորամուծություն է:

Զան գրարարի մակրայակերտ ածանց է: Հանդիպում է մի շարք բառերում: Նախատիպ բառը կարող է լինել իրանական փոխառություն կամ բերիլ հայերեն, կամ էլ այլ լեզուներից կառարած փոխառություն: Ահա զան-ածանցով բառերի մի շարք. այլազան, ամենազան, աստուա-ձագան, բազմազան, բաղազան, գեղազան, գեղեցկազան, զանազան, զարմանազան, հիզան, հեղազան, որզան: Ըստ Ահառայանի, դասական շրջանում ավտոդիված է միայն զանազան-ը (տես Արմ. զան բառի տակ): Մյուս ձևերը թեև ետդասական, բայց համեմատյան զեպս ուշ շրջանից չեն: Հայ. զան-ի կայր իր. zana-ի հետ կապված չի հարուցում:

Քառ—անշուշտ իրանական լար ձևույթն է, որը ածականների համեմատության աստիճանի ցույցը է: Քառ-մասնիկով հայերենում ունենք ընդամենը մեկ օրինակ. վառքար, որն ամենայն հավանականությամբ ամբողջական փոխառություն է, ամնավանդ որ քառ-ը հայերեն բառում համեմատության աստիճան ցույց տվող ձևույթ չէ. գրաբարում վառքար նշանակում է վատ: Ուրեմն, փաստորեն քառ—ածանց հայերենում չկա:

Իկ-ը գրարարում փաղաքշական-փոքրացուցիչ ածանց է: Հմտ. անանիկ, հափիկ, հացիկ, շրիկ, վայրիկ և այլն: Իկ-ը այդ նշանակությամբ գործածել է միջին հայերենում, գործածում է և այժմ: «Տե-սականորեն այն բոլոր առարկաներ անուններից, որոնցից կարելի է, նախարվոր է ֆեզիկապես մեծ ու փոքր սարքերի, արդի հայերենում հնարավոր է -իկ ածանցով նվազական կազմել, չնայած որոշ մասի համար սովորական են -ակ և -ուկ ածանցներով բաղադրությունները»³¹:

Գրարարում -իկ- փաղաքշական-նվազական ածանցով բառաշարքը մեծ չէ: Իրանական լեզուներում նույնպես ստեղծ է իկ ածանցը: Եղած նյութը զեռուս հնարավորություն չի տալիս լայն ընդհանրություններ տեսնելու հայ. -իկ-ի և իր. իկ-ի գործառնությունների միջև: Միջին իրանական լեզուներում իկ-ը հիմնականում բնութագրվում է որպես հարաբերական ածականներ-կերտող ածանց՝ բաշանուններից ու սրյականներից (ОИЯ, 1981, 69, 195):

Հայերենի պարսիկ, երկիկ, պակավիկ, զանդիկ, խումիկ ձևերը կան և իրանական լեզուներում: Սրանք ամբողջական փոխառություններ են:

Իկ-ով բաղադրությունները ցույց են տալիս նաև նախատիպ բառով արտահայտված իմաստը կրող ստարկան: Նման ձևեր ստեղծ են և իրանական լեզուներում: Նախատիպ բառի փոխառյալ լինելու զեպքում կարելի է ենթադրել կազմակերպչական ամբողջական փոխառություն լինելը. ուզմիկ, ումիկ, վաշտիկ, փայիկ, ասպաստանիկ, ստոմիկ, պայիկ, դրանիկ, շահրիկ... Սրանց համաբանությամբ հայերենն ունի նաև այլ բառեր. զբանք մեծապույն մասում բաղադրիչներից մեկը իրանական է (բարդ բառերի զեպքում հնարավոր է, որ երկու բաղադրիչներն իրանական լինեն): Սրանք, սակայն փոխառություններ չեն. փոխառյալ է միայն բառակազմական կառավարող Ազատաստմիկ, անաշխարհիկ, բարեստմիկ, զերաշխարհիկ, օտարաշխարհիկ, աշխարառանդիկ, ձեռակերտիկ, պատերազմիկ, զինեմաճատիկ: Հայերեն

բառով ստան զուգորդելիության ոչ համախական լինելը: Ունենք հարս-
նարան, վարդապետարան, եպիսկոպոսանոց, օտարանոց, իսկ դրանց
ստան-ով ձևերը չկան: Եղակի վկայությունը կա միայն օտարտան
ձևը:

Ստան—ածանցը ծագում է իրանական *stāna «տեղ» բառից: Միջին պարսկերենում և պարթևերենում հինիականում տեղանիչ է. bočestān «այգի» նման. Վայ. բուրաստան, Šāhrestān «գաղա, բաղաբ», frahangestān «գրպոց»: Իմաստի լայնացմամբ ու փոխա-
բերացմամբ նաև dādestān «դատաստան, դատ, գատավարություն»,
dad «օրէնք» բառից:

Ունի—իզականակերտ ածանցը ծագում է իր. uhi(urhi)-ից: Ըստ
Անտոյանի գրաբարում ունի-ով կազմությունները 60 հատ են: Սկզբնա-
պես ունի մասնիկը իրանական ծագմամբ հատուկ անունների բաղա-
դրել էր՝ Զարուհի, Խարսթուհի, Համազասպուհի, Մմբատուհի, Տա-
ճատուհի: Այսպիսի բառերում ունի-ն հումանիչ է իր. զովտ «տղտիկ»
բառին Հետագայում հատուկ անունների բ-շտղրիչ լինելուց զատ, այն
սկզբում է կիրառվել, ընդհանրապես որպես իզական սեռի ցուցիչ. բա-
նիկամանի, եգիպտունի, Իրմուկի, աբխալունի և այլն: Ըստ Հ. Անտո-
յանի V դ. ունի-ով կար ընդամենը յոթ հասարակ անուն. քաղունի,
Բաւնունի, Խաւնունի, իմաստունի, հաստունի, սարկապաունի, առա-
վունի (ՎՋԼ, 3-րդ, 305): Արի հայերենում ունի-ով կազմություն-
ները ավելի մեծ թիվ են կազմում: Է. Բենվեհիստը ենթադրում է, որ
ունի-ն նախապես առկա է եղել քաղունի՝ մի կարեւոր բնութագրական
բառում: Հետագայում միայն այն ընդհանրացվելով դարձել է իզական
անունների ցուցիչ: Բենվեհիստը կարծում է, որ քաղունին ամբողջական
փոխառություն է (TPS, 1945, 74): Սակայն բառը թերեւ հայակաղ-
մութիւն է. ճիշտ է, սպասելի քաղատունի-ի փոխարեն քաղունի-ն
կարող է առարկելի դարձնել նրա հայակաղմ բնույթը, սակայն այդ
կազմությունները բնորոշ էին հայերենին (նման. դատունի՝ զատա-
վորի կին), «կին դատավոր»: նաև՝ քաղագում, քաղամատանց, քա-
ղակերպել—թագաորակերպել, որոնք զուտ հայակաղմություններ
են):

Իանդ—այս բաղադրիչով առկա են մի շարք բառեր. պլաւտանդ,
գանաանդ, բանուանդ, պարուանդ, չարուանդ, բարձրաանդ³², դա-
րուանդ, դանդանաանդ, պախնաանդ, կարուանդ, մանաանդ, սա-
րուանդ, վարաանդ (նաև որոշ տեղանուններ՝ Բագրեսանդ, Զարա-

անդ...): Բնիկ հայերեն բառերում անդ-ը սակավադիպ է (բարձա-
անդ, սարուանդ): Իանդ-ի անանջային իմաստն էլ հոտակ չէ:

Յէտ—գրաբարում արտահայտում է հավաքականություն, մի բա-
նից շատ լինելը. հանդիպում ենք հետևյալ բառերում. գինուտ, (գի-
նուտ), հազարուտ, ընչուտ, խաչնուտ, խոտուտ, ծաղկուտ, ծա-
ուուտ, կենդանուտ, մրգուտ, շահուտ, ուխտուտ:

Շայ. վա-ը կրթման փորձում են կապել հ.հ. -vent- մասնիկի
հետ: Հ. Անտոյանը նկատելով իմաստային ընդհանրությունը մեր-
ժամ է վա-ի ծագումը՝ vent-ից՝ կնկնով հնչյունական անհամապա-
սարանությունից: (ՎՋԼ, 3, 115): Է. Արտոյանը նույնպես մեր-
ժեղով դրանց ծագումնաբանական կապը, հ.հ. *vent-ի հետ կապում է
գինե Ժամացը (ՔԱՀ, 54—55): Իրանական լեզուներում նույնպես զոր-
ծառում է vand, vend Ժամաց, որ ծագած են համարում իր. *vat: vant
արաբան և չեղք սեռի Ժամացին (ՕՈՂ, 1981, 70): Այս Ժամացը Շայ-
ւա-ի հետ իմաստային ընդհանրության եզրեր սննի: Հմմտ. պրթ.
isprahm «ծաղիկ», isprahmāvend «ծաղկաշատ»:

Իէտ Ժամացը, սակայն փոխառություն չենք համարում³³, նկատե-
լի է, որ իրանական ծագում ունեցող բառերի կազմում վա Ժամացը
այնքան էլ հաճախական չէ:

Իոր-(ուտ) Ժամացը շափազանց արդյունավետ է գրաբարում: Երա-
նով կազմված բառերը մի քանի հարյուրի են հասնում: Առը ձևույթի
էական սարքը, ինչպես նկատում է Ա. Մխչեն, -ուտ-ն է, որ հանդի-
պում է մի շարք բառերում. գինուտ, չրուտ, վարձուտ (նաև վարձա-
ուտ) և այլն (ՄՃԱ, 102): Հայերենում ավելի հաճախական է աուտ
ձևը: Ուսումնասիրողների կարծիքով աուտ-ը «երբ» նշանակող մի
ձևույթ է, որը բերին-ի նկատմամբ նույնն է, ինչ որ հուն. αὐτός
նկատմամբ: (ՄՃԱ, 102):

Աուտ-ով ձևերը ցույց են տալիս. ա) պաշտու. դատուտ, գան-
ձուտ, սեղանուտ, մարտուտ, բ) մի քանից ունեցող, մի քան կող
անձնակրթություն. գրեմուտ, սոււեւուտ, մկնդաուտ, կադանուտ,
հաւաաուտ, ձրուտ, գ) նախադրիչ նման, նման ձև ունեցող. գիւս-
ուտ, զոգաուտ, զոնուտ: Աուտ-ով հատկապես կազմում են անա-
կաններ (նաև գոյականներ) նկատը, երաշխուտ, երկարուտ, կա-
մաուտ, կարեւոր, հարգարուտ, հանդիսուտ, հարկուտ, հարուտ:

Առկա են գոյ+աուտ, անակ+աուտ, բայանուն+աուտ, մակբայ+
աուտ, քվ.+աուտ կաղապարները: Նշված Ժամացի հայկական բնույթը
հիմնավորել են մի շարք հայագետներ³⁴:

իրանական լեզուներում -var(-br, -wr) ածանցն էլ իմաստային, գործառական որոշ ընդհանրություններ ունի հայ. արտ-ի հետ: Մեծալատական Հ. Աճառյանը արտ կազմությունը մի քանի քառ հիսում է որպես ամբողջական փոխառություններ իրանականից: Բերենք երկու օրինակ. հետևելով Հյուրմանին, նա գտնում էր արտը և ամբողջական փոխառություն՝ պհլ. ganjuvar(ganjubar): նա հայա-կազմություն չի համարում նաև արտ մասնիկի «պետ» իմաստի պատճառով: Բայց սա առարկել կարելի է, որովհետև արտ-ի այդ իմաստը առկա է և մախար, սեղանար բառերում, որոնք իրանական փոխառություններ չեն: Գտնում ենք ամբողջական փոխառություն լինելու ղեկավարում հատկորեն չի մեկնվում արտ-արտ անցումը:

Կոնկրետ գտնում ենք համար հնարավոր է երկու ճանապարհ. կամ այն հայա-կազմություն է՝ գտնոթար, կամ էլ հայերենը վերցնելով ganjuvar, այն ենթարկել է իր օրենքներին և արգեն գրավոր ավանդման շրջանից մեկ է ներկայացրել գտնում անով (հայա-կական բնույթի օգտին է խոսում նաև ծ-ի առկայությունը շ-ի փոխարեն):

Գառար բառն էլ Արմատական բառարանում փոխառյալ է գիտվում: Պհլ. datavar կամ dātavar: Սրա ղեմն ևս կարող ենք առարկել այն փաստարկներով, ինչ գտնում ենք բառի համար: Պետք է ընդունել, որ հայերենը փոխառյալ դատ բառով կազմել է նոր բառ: Ըստ Մեյերի, քաղար բառում (բառաբխ՝ քաղ կրող) հայերենը պարզապես թարգմանում է իրանական մի բառը բառ (ՄՀՈԻ, 103): Մեյերն նշում է նաև, որ արտ վերջահանգով հայերեն բաղձաթիվ բառի կազմվել են համապատասխան իրանական բառերի հետևողությունը. «կայաբազ, քեն ա-ար-ը բուն հայերեն տարր է և ձևն ու իմաստի տեսակետից հեշտությունը բացառվում է հայերենի ներքում, այն կրել է իրանական օղղեցություն. այստեղ կանգնած ենք մի իսկական լեզվական խաչավորման առաջ» (ՄՀՈԻ, 103):

Մեկ թվում է, որ հայ. արտ-ը իրանական ոչ մի սղղեցություն չի կրել: Իննելով հայերենում չափազանց հաճախական, ունենալով ածանցային իմաստների հասակ արտահայտություն, արտ-ով կերտվել են մի շարք բառեր, այդ թվում նաև նախատիպ իրանական փոխառություններով և եթև որոշ ղեկավարում իրանական բառն ու հայերենը ձևային ընդհանրություններ են ցուցաբերում, ապա դա լրաց փաստ չէ սղղեցություն հիմնավորման համար: Մի խոսքով, իրանական փոխառյալ բառ նախատիպով ու արտ կազմությամբ ձևերը պետք է

հանել փոխառությունների ցանկից, մանավանդ, երբ նախատիպ բառը անկախ գործածություն ունի հայերենում:

Ամփոփենք: Հին հայերենում գործառում են իրանական մի քանի ածանցներ՝ նախածանցներ ու վերջածանցներ: Վերջիններս ավելի շատ են: Ածանցները առանձնառում են նաև ըստ բառակազմական ու իմաստային հատկանիշների, ըստ խոսքի մասերի կերտման հնարավորության ու նշանակության:

Պարզիմացություն կլինի կարծիք, թե օտար լեզվից անմիջապես վերցրված է տվյալ ածանցը և կիրառվում: Այդպես չէ: Դրանք տվյալ լեզուն են ներթափանցում այն փոխառյալ բառերի շնորհիվ, որոնցում առկա է տվյալ ածանցը և գիտակցված է նրա իմաստը: Այդ բառերի նմանություններ էլ կերտվում են նորանոր ածանցավոր ձևեր:

Ածանցները առաջանում են նյութական իմաստ ունեցող բառերից՝ վերջինիս միազանումով, այլև որոշ հնչյունական փոփոխությունների շնորհիվ: Ինչպես նշել ենք, փոխառյալ բառերից ածանցային իմաստներն ու կիրառությունները կարող են ձևոր բերվել փոխառու լեզվում: Այս ղեկավարում, որքան, դա չպետք է դիտել որպես փոխառյալ ածանց, այլ նշել միայն տվյալ ձևի օտար ծագման մասին: Եթև ստուգաբանորեն տվյալ ածանցը օտար ծագում է ենթադրում, ապա ածանցային իմաստը կարող է օտար լինել:

Մերեմիքն պետք է համարել այն սկզբունքը, երբ երկու լեզուներում իմաստային ու գործառական ընդհանրություններ ունեցող ածանցները անհայտան հիտվում են որպես փոխառություն (տվյալ ղեկավարում իրանական փոխառություն):

Նկատվում է, որ բուն իրանական ծագում ունեցող ածանցները (ղծ, թար, ճան, անգակ) հայերենում իմաստային-կիրառական լայն ընդգրկում չունեն:

5. ԵՎՍՁ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՐՏԻՐ

Իրանական ծագում ունեցող բառերը հայերենում գործառական նույն արժեքը չունեն: Կան բաղձաթիվ բառեր, որոնք հայոց լեզվում կիրառվել են 1—2 անգամ: Սրանց առանձնացումը և բնությունները ինքնակառավար չէ: Մա, նախ և առաջ, իրանական փոխառությունների նոր՝ ըստ գործածության հաճախականության սկզբունքի դասակարգման փորձ է, որը մինչև այժմ չի կատարվել ուսումնասիրողների կողմից: Իսկ բառերի գործառական հաճախականության և առհասարակ կիրառության ուրուրների որոշումը խիստ կարևոր է փոխառու լեզվում

Ազգին—«բաեզի ազոնից ձեր և փառաւորութիւն մեծութեամբ հանրեճ ոչ միայն Հայոց աշխարհից խնդութիւն է այլ և վրաց» (Գիրք թղթ. 170): Արմ-ում բարձր համարվում է իրանական՝ պ՛շ. azat(ի-ից: Ավելի համոզիչ է թվում ն. Բուզանգացու մեկնութիւնը, երբ բարձր կապում է ասոր. եզղնի, Եզգանի, «փառաւորութիւն» հետ (ՀԱ. 1909, 820): Եղված համատեքստում, իրոք, ավելի հարմար է «փառաւորութիւն», քան «ազատութիւն, ազնւականութիւն» իմաստ (վերջինս ունի իրանական բարձր), քիչ հաճանական է նաև, որ իրանական բարձր հայերենում վկայվեր միայն IX—X դդ.: Իրանական azat մեկից հայերենը արդեն V դարում ուներ բազմաթիվ բառեր, բարդութիւններ՝ իմաստային զանազան ներբանականներով և տրամաբանական չէ, որ այդ յուրացված ու զործուծ արմատի առկայութեան պայմաններում ոչ շրջանուծ հայերենը փոքր աստիճանով ազատի մանջարագատ ձևը:

Բանկիլ—Ակա ի վերտառ իմն հանելու ազնութիւն՝ պատաստի վերտ և ամուր բաշիկի և կուտ զրահին ամրութիւն արբային Քուշանաց ի նիգալկէ Սմբատայ» (Սեբ. 68): Աճառայնք բարձր կապում է պ՛շ. *bahlik «զրահ»-ի հետ: Ավելի համոզիչ է Սա. Մայխատայի մեկնութիւնը՝ «բաշում շինված, ինչպես Գամակուտի անունով սրերը կոչվում են զամաակյան» (Սեբ. 1939 թ. հրտ. ծան. 48): Դժկեկալ—Ընթազրվում է կապը իրանական լեզուներում լավանգված՝ *čuškerp-ի հետ, հնարավոր է նաև, որ բարձր լինի հայկազգւորթիւն:

Բանդուկ—«լինի ի Բիլմանիս հող սպիտակ, զոր մանր արացեալ և ցանեալ ի բանդուկս ի վերայ ցորենի ճճի շուտել» (Աշխ. 600): Արմատական բառարանում ենթադրվում է կապը իրանական kändük կամ kändu հետ: Հնարավոր է նաև արդեն հայերեն գիտակցվող Բանդ + ուկ կազմութիւնը: Բանդուկ կարող է նշանակել նաև «բանդած տեղ, հոր», իսկ հորերում ցորեն պահելու սովորութիւնը հնարանել է մինչև մեր օրերը:

Ակառ—Անկախարար վկայված է Եղիշիի որոշ հրատարակութիւններում. «Ճամենայն տեղիս, յայպատս և յանպպատս միայնանոցս շինէին» (1859 թ. էջ 46):

Քննական հրատարակութեան մեջ իրավացիորեն այդ բարձր հանված է, որով և ավելի է հստականում նախադասութեան իմաստը՝ «ամենայն տեղիս անպպատս միայնանոցս շինէին»: Որքան, Ակառը հայ մատենագրութեան մեջ անկախարար գործածութիւն չունի, այն հանգիս է զայն որպես տեղանունների բազարիչ, հետևաբար և որպես առանձին բառ լպնար է դիտել:

Ապարհայիկ (պարսկական գեղի անո՞ն): Դարձյալ հանդիպում ենք Եղիշիի մոտ. «Իսկ գունդն զապարհայիկ և զկառտա և զհոնաց և զգեղաց և զայն ի մի վայր ժողովէին» (Արմ.): «Անշուշա իրանյան փոխառութիւն է,—գրում է Աճառյանը,—ինչպես ցույց են տալիս նախ իմաստը և երկրորդ պահլավական Կ վերջապարտութիւնը» (Արմ.): Քնարայնք բարձր մեկնում է՝ ապա-բաշ-իկ «զարստուղի ճամփաներով ինչամուն հայածոց գունդ» (Արմ.): ՆՃԲ-ում բարձր վկայված չէ, որով հետև բառարանի հեղինակները բարձր դիտել են որպես հատուկ անուն: Եղիշիի քննական բնարարում բարձր ուղղված է՝ ապարհայի (115): Եկանակներ, որ Ակար աշխարհի մասին հիշատակութիւններ կան նաև մեր այլ մատենագիրների մոտ: Հմմտ. «Եւ Յազկեր... Ելեալ յԱկար աշխարհ» (Փարս. 86): Որքան, եթէ վստահելի է ուղղումը, ապարհայիկ բարձր պետք է հանել փոխառութիւնների ցանկից:

Տաշտակ—ը Արմ-ում դիտվում է առանձին բառ՝ պ՛շ. *taštak, պրս. tašta «փոքր առշտ»-ից: Աճառ այդ բառով վկայված օրինակը. «Բաժակ էր և արեան անասնոցն զոր ետ զենչոյն անունին ի տաշտակս և ի ցածակս» (ՆՃԲ.):

Տաշտակ—ի ազդերը իրանական եղված ձևերի հետ կարելի է և առարկել, եթե պ՛շ. ձևը ամենզգված չէ, ապա պրս. ձևն էլ նմազ համախական է և պարսկերենի շատ բառարաններ վկայում են tašt և ոչ թե tašta: tašta ձևը կարող է նոր պարսկերենյան իրողութիւն լինել, իսկ a-ն փոքրացուցիչ մասնիկ՝ նկատելու նաև, որ մեր բարբառներում նույնպես զործածվում է րէշտ բարձր, որ զարբարյան տաշտ-ը չէ, այլ պարսկերեն tašt: Այս փաստերը հավաստում են, որ տաշտակ բարձր կարող է հայկազգւորթիւն լինել՝ առշտ+ակ փոքրացուցիչ մասնիկ, իսկ, որ տաշտակը տաշտի փոքր տեսակն է վկայում է նաև օրինակը՝ տաշտակս և բաժակս:

Ինչիւ, անկախ այն բանից, թե այս մի բանի բառերը փոխառութիւն ենք դիտում թե ոչ, մենք նմազ հաճախական բառերի առանձնացումը կարեւոր ենք համարում: Դրանք հայերենի չլուրացված իրանական բառերն են: Սրանց մասքը Եղիչ է պատահական՝ որն է հեղինակի կամ հետազայում որն է գրչի կողմից, որոնց մեծ մասը անհասկանալի է եղել թերևս և բառի փաստագրման շրջանում, ավելացանք, որ այդ բառերի զերիշխող մասը լկա և մեր բարբառներում, որք բանավոր ասարած զրանց լիկիրավելու համոզիչ փաստ է:

մակ, նապաստակ, նարդեմ, նաւազ, նաւակատիք, նաւասարդ, նաւթ, նաքարակիրտ, նգար, նդով, նծար, նծղե՛՛ն, նիւազ, նիդակ, նի՛՛նար, նիր-
՛՛(ն), նկան, նկանակ, նկար, նկուն, ն՛՛անգ, նման, նշան, նշանակ, նշաւակ, նշխար, նշկա՛՛, նշմար, նշտիր, նոխազ, նոճի, նպար, նպնրտ, նրազ, նրազ ճանգամ՛, նրազ ճրածակն՛, նրազ, նրաճ(եմ), նրասա, նրարտան, նռէր, նուիրակ, նուիրակապետ, նպաստ, նպար, շահախոռա-
պետ, շահազ, շահապետ, շահաստան, շահատակ, շամբուշ, շամբիտակ, շայնիկ, շայգետան տակառապետ, շատ, շատրուան, շար, շարագոյր, շէկ, շէն, շիշ, շկապ(եմ), շկօթակ, շնոր՛, շպետ, շտասպ, ոյթ, ուտան՛, ու-
տիկան, ուխտ, ուշ, շաման, շուռտ, պահաճճանգ, պահճաւանդ, պակաս, պահ, շահազ, պահակեր, պահանջ, պահանգան, պայազատ, պայիկ, պայման, պայտակակ, պայրար, պանդուխտ, պանիր, պաշար, պաշտ(ել), պաշտպան, պառակ, պառու, պատաստ, պատաստիւն, պատարար, պատգամ, պատգարակ, պատերազմ, պատիր, պատիւ, պատկանակ, պատ-
կանգարան, պատկեր, պատճառ, պատճէն, պատմունակ, պատմունան, պտտաճ, պտտազգամբ, պտտշիր, պատուաստ, պատուար, պատուէր, պատուիրակ, պատուիրան, պատու՛՛ա, պատասպարել, պատուանդան, պատու՛՛ան, պատրաստ, պտտորդ, պատրուակ, պատրուանի, պա-
բար, պարարտ, պարաւանդ, պարեկ, պարեհ՛՛նակ, պարզ, պատշիր, պարէն, պարէտ, պարեկ, պարիսպ, պարիկշտ, պարկէն, պարմա(եմ), պարմանի, պարս, պարսառ, պարտ, պարտաս(ել), պարտարաշի, պար-
տէզ, պարտքաշ, պետ, պետմոզ, պէշասպիկ, պէս, պէտ(բ), պիտակ, պի՛՛, պղինճ, պղպեղ, պղովատ, պտակ, շատագով, ջատուկ, ջօի, ռահ-
վիրայ, ռազմ, ռամիկ, ռատ, ռօճիկ, ռոտաստակ, սակ, սակառան ան-
դերձապետ, սահման, սաղար, սաղաւարտ, սամոյր, սանդալ, սան-
դարամետ, սապատ, ստտակ, սեւա, սարոյ, սեպու՛՛, սիկ, սիրամարգ, սկաւառակ, սմբակ, սմնակ, սնդոյր, սնդուս, սոթ, սոխ, սով, սուզ, սուրճանդակ, սպառ, սպաս, սպարապետ, սպիտակ, ստամբակ, ստաշ-
խըն, ստուար, սրահ՛, սրակապան, սրակեմ, վագր, վախճան, վահան, վաճառ, վան(եմ), վան(բ), վանդակ, վաշի, վաշտ, վառ, վասն, վատ, վատախտարակ, վատթար, վարագոյր, վարազ, վարապան, վարդ, վար-
դապետ, վար(եմ), վարժ, վարժ, վարձակ, վարժ, վարշամակ, վարունգ, վարտ, վարտախրայ, վարտի(բ), վաւեր, վե՛՛, վեհեր, վզուրկ, վէշ, վէժ, վէճ, վէժ, վիճակ, վիճ, վիշապ, վիր(ալ), վիրզ, վիշա, վկանդ(եմ), վճուկ, վճար(եմ), վճիր, վնստ, վնտտակ, վտտա՛՛, վտտա՛՛, վտտակ, վտտակ, վտտ(եմ), վտակ, վտասան, վրան, վրէպ, տագնապ, տախտ, տախ-
տա՛՛, տակ, տակառ, տաղաւար, տանճար, տանճիկ, տանջ(եմ), տաշ(եմ),

տաշտ, տապ, տապակ, տապան, տապաստ, տապար, տատրակ, տա-
րազ տաւիզ, տգրուկ, տէգ, տո՛՛մ, տոյժ, տօթ, փապան, փաշաման, փառք, փարգաստ, փիղ, փիղ, փշիտ, փուշտիպան, փուշտիպանա-
դար, փուտ, փուրսիշն, քանգակ, քաշ, քար(եմ), քեմուխտ, քէշ, քուրճ, քսակ, քրտիկար, քրքում, օճանդակ, օճիտ, օշարակ, օշնան, օտար, օրէն(բ), օրինակ, օր՛՛ն(եմ)։

Ե-ր գարից վկայութուն չկա՛

VII դար

Արտարբ, ա՛՛նոկ, անազարմ, անգարձ, անջիման, ապախտար, ա-
պաղաբէ, ապրիշում, բամբակ, բան(բույս), բէշկ մշկոյ, բուճենիկ, բրինձ, գազըբրուակ, գազպեն, գոյբրուակ, գո՛՛ար, դանդան, դարա-
պաս, դարիճենիկ, դե՛՛, հրաստ, զառիկ, իստօրակ, թուանիկ, լատան, խիշտ, Նամագրուակ, Նամավար, Նոյիբրուակ, Նրբուակ, Նրիտակ, ճամ-
բար ճճանյակ՛, ճանդան, ճարակ ճճանանգ՛, մանեւօր, մարզանգորշ, մտշկ, լետակ, նայիրուակ, նախիկ, նունեղ, նպիրտ, շահդանակ, շահուար, շահ՛՛մար, շարաւանդ, շաքար, շտրպադանգ, պայմաննա-
մակ, պատգոսապան, պէշոպտ, պիտակ, անգրուեղ, սպուճ(եմ), վաճառագա՛՛, վատպուրական, փաղանգամուշկ, փարուազ, քանգակ, քա-
փուր։

VIII դար

Պարտակ, վարդ։

IX դար

Աւանդ, բազպան, կո՛՛նակ, նեպակ, շահան շահ՛, ռահ՛, սպասալար, վատմի՛՛ր։

X դար

Աւանգ, գահճամակ, խոստակ, ճուռակ, յովատակ, նուաստ, պա-
ճո՛՛մ։

XI դար

Աշգահակ, բզուր, գաւազ, գրուակ, դարիճակ, հրաշխ «աշխտ», ծճան, լական, մատնան ճէգ ճի՛, նկահ՛, շիփ, ուտաղէս, վերմակ, փա-
լանիկ, փրզանգ, քաշտի։

Ինչպես նկատելի է, իրանական փոխառութիւնները վկայված են հիմնականում Ե-ր գարից։ Այդ շրջանից վկայված բառերի գերակշիռ

մասը գործածվել է մեր լեզվի բլրը փոխելում՝ հարստացնելով լեզվի հիմնական բառաֆոնդը: 6-րդ դարում նոր փոխառությունների բացակայությունը պայմանավորված է այդ դարից մեզ հասած մատենագրական աղբյուրի ժառանգությամբ: 7-րդ դարի վկայություններից մի քանի բառ են միայն, որ շարունակում են գործածվել նաև մեր օրերում: Այդ դարից ավանդված շատ բառերի հանդիպում ենք միայն «Աշխարհացույցում»: Դրանք կենդանիների անուններ են, բուսանուններ, որոնք հաճախական չեն և թերևս միշտ էլ գիտակցվել են որպես օտար բառեր (հմտ. գազերբուակ, նախիրուակ, շարպազանեզ...) VIII—X դդ. վկայված բառերի թիվը խիստ սահմանափակ է:

Հարկ է նշել, որ մի շարք բառերի վկայության օտույզ ժամանակաշրջանը հնարավոր չէ որոշել կամ այդ անկող համար անհրաժեշտ է մանրակրկիտ բանասրահական ու տեքստարանական աշխատանք: Այդ բառերը ավանդված են բառարաններում կամ այնպիսի գրքերում, որոնք ներկայացնում են տարբեր դարերի գրություններ («Ավարք Հաբանեք», Կանոնագրքեր և այլն): Բերենք նման կարգի մի շարք բառեր. ազուտ, ազոհճ, անզղ, անուշադր, սասպղզակ, արբոն, բոր, գունուն, գրտակ, զամ, դարպազպեղ, զենակար, լեղակ, խափշիկ, կաղամբ, կանկար, համառճ, մոռճակ, նաճայ, շարտաղար, պասանիկ, սմպատակ, ստինճ, փերեղակ, բաշիկ...

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան դեպքեր, երբ բառը վկայված է ուշ շրջանից, իսկ նրանով կազմված բարդությունը՝ ափի վաղ՝ Օրինակ, զոնչ վկայված է ետարաբայան փուլում, իսկ V դարից ունենք զոնչուրին: մագղ, նարմ, Բեմալստ բառերը ավելի ուշ են վկայված քան մագղուրին, նարմաշարմ, Բեմալստպատ բարդությունները, ունք IX դ. է, իսկ ուսմվիրայն՝ V դ.: Ամենայն հավանականությամբ ուն և վիրայ բաղադրիչների իմաստները V դ. չեն գիտակցվել և բարդությունը ամբողջապես փոխառված է: (—վիրայի համար հմտ. նաև վարսուիրայ), դաստ բառը նույնպես V դ. անկախաբար չէր կիրառվում (համեմատելուցս այդպիսի օրինակ չկա), բայց ունենք դաստակերտ, դաստուկ, դաստապան... բարդությունները: Խորենացին դաստակերտին զուգահեռ օտարագրծում է և ձևապիտ հոմանիշը: «Փաղոց է ինձ ասել և յազազս զեղեցիկ դաստակերտին նրուանդակերտու: Վասն ձեռակերտի, որ կոչի նրուանդակերտու: Նշանակում է V դարում իրանական կերտ—ը ընկալվել է որպես հայերեն բառ, իսկ դաստ—ը՝ ոչ:

Փոխառությունների վկայության ժամանակաշրջանը երբեք չպետք է

նույնացնել փոխառման ժամանակի հետ: Վերջինիս որոշումը այնքան էլ հեշտ չէ՝ երբևէն նաև անհնարին է: Քանի որ իրանական փոխառությունների գերակշիռ մասը վկայված է V դարում, այսպիսի մասին կարող ենք ասել, որ վկայված բառերի մեծ մասը փոխառվել է ավելի վաղ և գործածվել նախադարյան շրջանից: Ինչ՞ո՞ւ ենք այդպես կարծում: Նախ, V դարի քաղաքական իրադարձությունները նպաստավոր չէին լեզվական սերտ շփումների համար: Քաղաքական, կրոնական հակասությունների պայմաններում հազվել թե հայերը բառերի այցքան մեծ քանակություն փոխառեն: Երկրորդ, վկայված բառերի զգալի մասը գործառույթյան հաճախականությունամբ, բառակազմական հնարավորություններով նաև հնչյունական կազմով արդեն հանդես էին գալիս որպես «յուրացված» բառեր և թերևս չէին էլ գիտակցվում որպես փոխառություններ: Պետք է նկատել ունենալ նաև մեկ այլ հանգամանք. V դարում հայ մատենագրության ծաղկման շրջանում օտար բառեր թիչ էին փոխառվում: Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը «V դարի հայ Քաղաքանիշները շանացել են օտար լեզվի ամեն բառ հնացնել, այդ է պատճառը, որ փոխառությունները այդ դարում թիչ են: Փոխառվել են թարգմանվող լեզվից միայն այն բառերը, որոնք չեն հասկացվել կամ համապատասխան հայերենը չի եղել, ու եղածը չի արտահայտել այն յուրահատուկ հասկացությունը, որ տվյալ դեպքում անհրաժեշտ էր արտահայտել»³⁶:

Ավելացնենք, որ օտարբանություններից խուսափելու միտումը բնորոշ էր նաև ինքնուրույն գործերին: (V դարի երկրորդ կեսերից որոշ հեղինակների մոտ նկատվող լեզվական օտարաբանությունը, խոսքը վերաբերում է հունարան հայերենին, այլ հարց է):

7. ՊԱՏՃՆՈՒՄՆԵՐ ԻՄԱՆԱՆ ԼՅՈՒՆՆԵՐԻՑ

Լեզվաբանական աշխատություններում պատճենման երևույթը, սովորաբար բնկվում է օտար ազդեցություններին կամ փոխառություններին վերաբերող բաժնում: Դա բնական է, որովհետև պատճենման դեպքում զործ ունենք անվազն երկու լեզուների կամ համակարգերի հետ: Լեզվական ազդեցությունները միայն բառային փոխառություններով չեն արտահայտվում, այլ՝ նաև տվյալ լեզվի ձևաբանության, շարահյուսության, բառարարքման կաղապարների ընդօրինակմամբ, որն իր բնույթով զգալապես տարբերվում է փոխառություններից: Պատճենման դեպքում շրջանառության մեջ են դրվում ոչ միայն օտար, այլև

մայրենի լեզվի հնարավորությունները Բառապատճենման ժամանակ փոխառված է ոչ թե օտար բառը, այլ նրա իմաստը, սենթրբն ձևը», որը առկայանում է մայրենի լեզվաբանության միջոցներով:

Լեզվաբանական գրականության մեջ պատճենման միասնական և լիակատար սահմանում, կարելի է ասել, գեղես չկա: Դա պայմանավորված է երևույթի առանձնահատկությամբ, նրա ծավալացուցչամբ, հարակից մի շարք հասկացությունների (թարգմանություն, իմաստի վերարտադրություն... և այլն) հետ ունեցած սերտ առնչությամբ, նրանցից տարբերակելու սկզբունքների ոչ միասնականությունը ու այլ կարգի զգվարություններով: Բոլոր դեպքերում, առկա սահմանումների մեջ, հիմնական են համարվում ոչ թե բառի, այլ հասկացության, իմաստի փոխառումը, ընդօրինակումը: Հայ լեզվաբանների աշխատություններից բերենք պատճենման իրողությունը բացահայտող Եղիտ օրհնակ. ըստ է. Աղայանի բառապատճենումը այն է, երբ փոխառվում է ոչ թե բառը, այլ նրա հասկացությունը, «այսինքն օտար լեզվի բառը ուղղակի թարգմանվում է»³⁶:

Լեզվաբանական բառարանում պատճենում համարվում է այն երևույթը, երբ որոշ բառեր կամ արտահայտություններ կազմվում են օտար լեզվի համապատասխան բառերի կամ արտահայտությունների ընդօրինակումով, պատճենմամբ: Այդ կատարվում է այնպիսի բառի կամ արտահայտության բազաղրի մասերի մեխանիկական թարգմանություն միջոցով³⁷: Ամեն մի սահմանում, ինչպես նշել ենք, ունի ընդհրդումն իր սահմանները, դրանց թերությունները կամ առավելությունները ի հայտ են գալիս կոնկրետ նյութի ուսումնասիրության ընթացքում, կապված նաև այն հայեցակետի հետ, որ հիմնականն է տրվալ ուսումնասիրության նպատակագրման մեջ:

Լեզվական պատճենումների մանրազնին ու ամբողջական բնությունը, անշուշտ, կարևոր է լեզվի համակարգային ուսումնասիրության համար, սակայն երբեմն գերազանցատվում է պատճենման գերմ: Ֆրանսիացի լեզվաբան Ծ. Բալլին պատճենման և բառափոխության գերի մասին խոսելով, գրում է.

«Բառերի փոխառությունը լեզվական ազդեցության սուկ կոնկրետ արտահայտություններից մեկն է, այն էլ զգալիորեն փորքածավալ, բան պատճենումը Պատճենման ներույթը կողմված է նոր թագի հաղորդել բառագիտական ուսումնասիրություններին: Հիսուն տարի անց նույնիսկ անհնարին կլինի պատկերացնել որևէ ստուգաբանական բառարան, որը շարացուցի բառիմաստների գարգացումը կամ շամփոփի թարգմանու-

թյուն միջոցով լեզվում ներմուծված բառերի համակարգային վերլուծությունը»³⁸:

Մեզ թվում է հակառակը, բառապաշարի ուսումնասիրության համար էականը փոխառությունների՝ տարբեր հայեցակետից կատարված ուսումնասիրությունն է:

Պատճենման իրողությունների լիակատար բնությունը առարկայական և երբեմն էլ անհաղթահարելի զմայարությունների հետ է կապված, որովհետև հաճախ հնարավոր չէ տարբերակել պատճենումը թարգմանությունից կամ պատճենումը մայրենի լեզվի հարազատ բանից:

Բերենք մեկ-երկու օրինակ. Հ. Աճառյանը «Բարդ բառեր, որոնք կազմված են նշանակության համապատասխանում են ճիշտ ու ճշրտ պարսկերենին» դասակարգման տակ բերում է նաև հետևյալ բառերը. աշխատակալ, ամօրահար, սեպակ³⁹, և այլն: Արդյոք սրանք իրենական համապատասխան ձևերից պատճենումներ են, համապատասխան բառերի թարգմանություններ, թե՞ զուտ հայակազմություններ, հայերեն բառեր, սպառել պատասխան տալ ըստ ներույթին հնարավոր չէ:

Կան նաև այլ կարգի զմայարություններ: Փերես այդ է պատճեններից մեկը, որ մեզանում պատճենման վերաբերյալ ամփոփ աշխատություն առաջմ չկա: Մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ ուշադրավ գիտազոյություններ ունի Բ. Բարիզիզյանը⁴⁰: Նա պատճենման տարբերաման համար առաջարկում է երեք հիմնական կատանիշներ. կառուցվածքի կրկնօրինակում, իմաստի վերարտադրում և օտար միավորի ազդեցությամբ ստեղծված լինելու որոշակիություն⁴¹:

Այս կատանիշները իրոք կիրառելի են հատկապես օտար սկզբնազրույթի և պատճենման ժամանակաշրջանի որոշակիության զեպրում:

Որևէ լեզվում պատճենումների ստեղծումը կարող է լինել մտավորականության, առանձին անհատների աշխատանքի արդյունք: Գրական, գիտական գործերի թարգմանության ընթացքում թարգմանիչը հաճախ ստիպված է լինում պատճենել օտար շատ հասկացություններ: Վերջին շրջանում հայերենում ակտիվ գործածություն ենթարկում այնպիսի բառեր ու բառակապակցություններ, ինչպիսիք են տիեզերահամ, տիեզերագնաց, յուսեզնաց, կոմունիստական աշխատանքի բրիգադ և այլն պատճենումներ են ուսուրենից, որոնք լեզվի մեջ կայունացել են զրավոր շրջանառությամբ: Այս կարգի պատճենումների առանձնացումն ու ուսումնասիրությունը ավելի հեշտ է՝ պայմանավոր-

ված փոխառու լեզվի, փոխառության կոնկրետ ազդյալի, բառի կամ հասկացության օգտագործման ու պատճենման ժամանակաշրջանի ու կիրառության ոլորտների որոշակիությունը:

Պատճենումներ կարող են կատարվել նաև ժողովրդական լայն խավերի կողմից: Այս դեպքում էականը երկու ժողովուրդների ու լեզուների ազդեցությունն են, պատմական իրադարձություններն ու շփման հարատևությունը: Սա կարող ենք անվանել բանավոր ճանապարհով կատարված պատճենումներ, որովհետև փոխառություններն ու պատճենումներ կարող են կատարվել նաև այն դեպքում, երբ տվյալ ժողովուրդները չունեն գիր ու գրակառուցիչն (Հայերենի դեպքում կոնկրետ մինչև մ.թ. 5-րդ դարը), մյուս կողմից էլ երկու ժողովուրդների հարևանության կամ երկլեզվության դեպքում գիր ունենալը այս հարցում այնքան էլ էական չէ, որովհետև լեզվապահ շատ ազդեցություններ կարող են ի հայտ գալ և տարածում ստանալ բանավոր խոսակցական լեզվում, նոր միայն թափանցիկ գրավոր լեզվի մեջ:

Այժմ անգրագետանք հայերենում իրանական լեզուներից կատարված պատճենումներին, որը հենց վերոհիշյալ ուղին է եմթագրում:

Հայերենի բառապաշարի վրա իրանական լեզուների ունեցած մեծ ազդեցությունը, որը վերջին հաշիվով երկու ժողովուրդների սոր. — սքս բաղկություն հետևանք է, ենթադրում է նաև հայերենում իրանական բառերի, կապակցությունների ու ոճերի պատճենման առկայությունը: Նշենք միջին պարսկերենից ու պարսկերենից բաղված մի շարք միավորներ, որոնց կառուցվածքային և իմաստային ընդհանրությունները առկա են նաև հայերենում:

Միշ, պրս. kadag — bānag հյ. սանտիկին, kadak — x'atāy — հյ. տանտեր (տանտեր), nemrōz — հյ. կեսոր, marg — aržan — հյ. մահաբժան, bahrī duxtīh — աղջկա բաժին: Պրթ. hazār — čašm հյ. բիրանի, čuhr bād — հյ. չորբոտանի Ժանաթան» bagpuhr աստուածորդի, razmyōz — ապգամանի, šarg — zādag առիւծաձին, burdišnōhr (burd Ժաննի, վերջնի կրեւշ) — ջերմակալ, noxžād — նորածին... և այլն:

Իրանական լեզուներից կատարված պատճենումների հարցը հետազոտողների կողմից հատուկ ուսումնասիրության առարկա չի եղել: Կան միայն առանձին դիտողություններ ու օրինակներ: Առաջինը թերևս Է. Անտոյանն է, որ հայերենի իրանական բառաշարի ուսումնասիրման ընթացքում փորձել է առանձնացնել նաև պատճեն-

ված ձևերը (այս տերմինը հեղինակը չի օգտագործում): Այդ նյութը գետնելված է նրա «Հայոց լեզվի պատմության» առաջին հատորի 309—315 էջերում: Բնականաբար բոլոր օրինակներին մենք չենք անդրադառնալ: Նշենք միայն, որ համոզիչ է օրինակների մի մասը: Այլ դեպքերում ընդհանրությունը առկա է նաև երբիչ լեզուներում չմտ. aznab նուրից, ի նուրայ, de nouveau..., որը արդեն հայերենի տվյալները իրանական պատճենում չհամարելու փաստարկ է: Աճառյանի մտահոսականներն ստորբերակված չեն պատճենումները Քարգամանություններից. ինչպես նաև օրինակները քառ լեզվական փոսիերի (Սերմեն երկու լեզուներից վկայագրվող փաստերը վերաբերում են նոր շրջանին, որը տվյալ դեպքում մեզ համար հետաքրքրություն չի ներկայացնում): Այս բոլորով հանդերձ, անմիտելի է գիտնականի վաստակը հենց միայն ներկայացրել նյութի տեսակետից:

Պատճենման հարցերին անդրադարձել են նաև Նշանավոր իրանագետներ Բոլոնիեզին և Բենվինիստը⁹²: Բազմաթիվ օրինակներ է բերում Լ. Փլիբիակյանը մի շարք հոգվածներում և հատկապես մասունքան զատաստանագրքի» բառարանում: Վերջումը ցույց է տալիս, որ պատճենված օրինակներում գերակշիռ են բարդ բառերն ու կապակցությունները: Պարզ բառերը անհամեմատ քիչ են: Վերջիններից կարելի է նշել հյ. նեբֆին բար, որը թեև զուտ հայերեն բառ է, բայց ինչպես նկատում է Լ. Մեյլեն⁹³ բառմատուր ենթադրել է տալիս իր. andar «ներս» բառի պատճենման փաստը: Լ. Մեյլեն բերում է նաև մի շարք բառեր, որոնցում նկատում է իրանական պատճենման հետաքրքրություն: Աշխարհակար — *xsadra — dāra, կուսակալ — պրս. dast-yar, ազատանք — քառ Մեյլեի անմիջականորեն հիշեցնում է իր. *mita — lauxm: Հայ. դոնպան կազմության համար կարող էր հմեք ծառայել իր. բարագանք — և այլն⁹⁴:

Արևիկ բարը նույնպես պատճենում է դիտվում իր. x'ar — asar-ից (ՄՀՈՒ): Արևիկի համարանությունը՝ նաև արևմալ (ՄՀՈՒ, 90):

Բարդ բառերից կարելի է նշել հետախյանբը: Միջին իրանականում վկայված է aydēn (Cyd. 432) բառը: Հայերենում այդ բառի համարման է ալլանատու-ը: Չմտ. «Զոր կապիտան յերկրի գանաուրս և գալլանատաս» (ՆՀԲ): Ընդգրկված բառը կարող է լինել այժմու-ի ու զակի պատճենումը, թեև բացառված չէ և բառի զուտ հայաանություն լինելը: Իսկ այլադեմ «այլահատու, այլսիրոն» արդեն ամենայն հավանականությամբ պատճենում է:

«Զի մի այլադնին, ասեմ. եկեալ բառնայցն զոցա» (Նդիշ, 179): Այստեղ գործ ունենք մի բարի հետ, որի մեկ բաղադրիչը իրանական է, մյուսը հայերեն: Եման օրինակներ կան Գրաբարում համանիշներ են դաստակեում և ձևակերտ բաները: Առաջինը ամբողջապես իրանական է, իսկ երկրորդ բառը պատճենում-թարգմանությունն է, որի կերտ բաղադրիչը՝ իրանական է (5-րդ դարում այն գիտակցվում է որպես հայերեն բառ), իսկ ձևն—ը՝ հայերեն:

Գործակալ բառը (հմմտ...սպալու զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհայն իրոց պարսկի գործակալօք) բառ՝ Փերիստեյանի պարսկերեն Kardar(an) բառն է⁴⁵: Այս դեպքում էլ ուրեմն առկա է պատճենման փաստը: Մեծամեծ բառը, հատկապես հոգեմտիկ ձևով, կիրառվում է որպես տիտղոս. (լլփոթնք նշն մեծամեծ օժտակալ կամ մեծ օժտակն գերազարկան աստիճանի արեանկօթյան հետ): «Էս-մոյ թուէր առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն» (Նդիշ, 19): «Եւրդ եկն ել զահճապետն և մատնաւ առաջի ամենայն մեծամեծացն» (137): Գործընկ ինքնազրկում է այս տերմինի պատճենումը իրանական շարձան-ից⁴⁶:

Չերբակալ «կայանափոր, գերի» իմաստը և կազմութիւնը նույնն է, ինչ որ միջ. պրս. dast groß, dastgir (TPS, 1945, 77—78) պրթ. Saimzad հայ. անօթնաբ (Sarm ամոթ), շն շրփիլ):

Արևայից արևայ բառը պատճենված է իրանական Sahan-Sah-ից: Եվ շարտարական և հողովան համապատասխանությունները ակնհայտ են: Հայերենում սպասելի տիկնանց տիկին ձևը կարող է լինել կամ արևայից արևայի համարառությանը կամ ինչպես ենթադրում է Ինկելիստը իրանական *bānbišnān bandišn ձևերից⁴⁷, Գրաբարում ավանդված է մոլվետան մոլվետ (մոզպետան մոզպետ) բառը: «Ես գրեմ և ցուցանեմ ի զուռն մոլվետան մոլվետի» (Նդիշ, 62): Մոլվետ և մոզպետ ձևերը ենթադրում են փոխառության տարբեր աղբյուրներ: Մոլվետան մոլվետը պատճենում չէ. այստեղ գործ ունենք զուտ իրանական կառույցի, այսինքն՝ զուտ իրանական բառի հետ: Պատճենման դեպքում սպասելի է մոզպետաց մոզպետ կամ մոլվետաց մոլվետ ձևը: Փարսեպետ մտտ հանդիպում ենք իրանական մի տիտղոսի՝ մովակ անգերձապետ ձևով (հմմտ. «մանցալ անդ պահապանացն բառ հրամանի Դեհնալայն և մովակ անգերձապետի և Ջիկհանայ մալպետի» (102): Իսկ նույն տիտղոսը Բուզանգի մտտ մասնակիորեն պատճենված է: «Եւ սպանանէին անդ զմոզպաց ան-սիոճապետն» (134):

Ա. Փերիստեյանը իրանական Sāhān Sah bandak կապակցության հյ. համարները համարում է արևայից արևայի ծառայ (Суд. 325):

«Զի ոչ իշխէ արևայից արևայի ծառայ ի կայսր խրախօսէ» (Նդիշ, 252): Աս նույնպես պատճենում է: Նախ, գործ ունենք ոչ թե ծառայ սովորական հասկացության հետ, այլ՝ տերմինի, մյուս կողմից՝ էթն շրեղուներ որպես պատճենում, սպա սպասելի է ծառայ արևայից արևայի կառուցվածքը: Ուրեմն և՛ շարահյուսական աստիճանատիվությունը, և՛ տերմինային արժեքը համաստեմ է արևայից արևայի ծառայ կապակցության պատճենման փաստը:

Կարելի է զուգահեռ անցկացնել արևայից արևայ, տիկնանց տիկին... կազմությունների և գրաբարում ամականների գերազրկան աստիճանը արտահայտելու այն միջոցի հետ, երբ հատկանիշը աստիճանեկու համար տալիս բառը գործածվում է հոգեմտի սեռական հետ: Զարիշյան-Ալտրեյանի հայտնի դասազրկում արձանագրված է այդ փաստը:

«Երբեմն գերազրկան կը ձևանայ գոյականի մը բով իր յոգե-նակի սեռականն ավելացրնելով: Ամեն պարծանաց պարծանք խոնարհութիւն է: Ունայնութիւն ունայնութիւնաց: Ո՛հ, կարի է առասպելա և առասպելաց առասպել»⁴⁸: Ի՛նչպիսի, այսօրվա թերականացիտական շարժանիշներով վերագրյալ օրինակները ամականների գերազրկան աստիճանները չեն և ոչ էլ պարծանք կամ ունայնությունը ամականներու էականը դա չէ, այլ այն, որ գրաբարում որևէ հատկանիշի կամ երևույթի աստիճանման համար գոյություն ունեւ մասածորության և զրան համապատասխան լեզվական արտահայտության ուրույն ձև, որը թերականորեն համարժեք է մի շարք տերմինների պատճենված ձևերին: Արդյոք որևէ կապ կա՞, մի կողմից, առասպելաց առասպելի, մյուս կողմից՝ արևայից արևայի միջև: Փերականական կապը, ինչպես նշելիքնք, ակնհայտ է: Կարելի է ենթադրել, որ հայերենի «գերազրկան աստիճան» արտահայտող վերահիշյալ ձևի առկայությունն է, որ հնարավորություն է տվել, հեշտորեն ընկալել և պատճենել արևայից արևայ և նման տերմինային ձևերը: Գերազրկանության վերը նշված ձևն էլ իր հերթին, սակայն բնորոշ չէ հայերենին. որեմն պետք է ենթադրել նրա օտարամտա լինելը: Եթե դա այդպես է, ապա հնարավոր է դարձյալ, որ այն իրանական լեզուների ազդեցությունն է: Այժմ որոշակիորեն չենք կարող պնդել այդ թեզը, բայց իրանական որոշ լեզուներում նմանատիպ կառույցի առկայությունը խոսում է մեր ենթադրության օտրիկն⁴⁹:

է. Բնեմկեհաբը այս անուն գրաբարի կապակցությունը, այսինքն՝ անուն+անորը զերանուն կառույցը (Հմմտ. «Երթաբ ի թաղարս առ այս անուն և ասացէր զնա» (ՄՏՔ, ԻԶ, 18) համարում է զուտ իրոն-նակին: Իրանական մի շարք լեզուներից (պահլավերեն, քոթաներեն, խորեզմերեն) բերելով նույնատիպ ձևերը⁵⁰:

Պատճենում կարելի է դիտել և գրաբարում շատ տարածված օրէն+օժ, բայ կառույցը Հմմտ. միջ. իրանական ք՞էն but:

Յախուլանս յախսնեց—բառ Ար-ի նույնն է ինչ-որ զեղ. yav-vaēča yavaēčātāēča հաճախակի գործածվող բանածնը (տե՛ս յաւլո բառի տակ):

Համեմատաբար շատ են բայական հարադրություններով կազմված ձևերի պատճենումները: Ընկնմ բայով հարադրություններից Բնեմկեհաբը⁵¹ որպես պատճենում առանձնացնում է զան ըմպի կապակցությունը. Բերենը հայերեն մեկ երկու օրինակ: «Քանիք է կէլ որդի որութ մտաժարժ իցէ, զան ոչ ըմպիցէ» (Նզն, 82): «Յորժամ արեսն կամ յայլ անդուն միս խաղալցէ նշանակ հեծանելոյ որութ և ստեն... կամ զան ըմպիլոյ» (Անդ, 176): Այս կապակցությունը պատճենված է համապատասխան ղոյ+ xurdan կառույցից: Բնեմկեհաբը հայերեն վերոհիշյալ կապակցությունը համարում է կես-փոխառություն, կես-պատճենում, զան-ը համարելով իրանական փոխառություն: Սա, բոս մեզ, առարկիլ է, և միանգամայն համոզիչ է զան-ի Նեղեվրդական ծագման փաստարկումը: Իրանական ձև կարող ենք համարել և մեր բարբառներում օգտագործվող երգում ուտի (պրս. savgan xōrdan) կառույցը: Քուրբական մի շարք լեզուներ (օրինակ ազերբայձաներենը) նույնպես համապատասխան հասկացությունը պատճենել է պարսկե-րենից and (էտեկ) բառացի երգում լանիլ, ընդ որում թյուրքական լեզուներ իրանական xurdan-ի երկու իմաստներից՝ «ուտել» և «խը-մել», վերցրիլ են երկրորդը:

ժողովրդա-խոսակցական լեզվում նման օրինակներ շատ կան, որոնց անդրադառնալը մեր նպատակից դուրս է, քանի որ հիմնականում ուշ շրջանից պատճենում-ազդեցություններ կարող են լինել:

Պեւ շաղբ, լաց՝ բառը (վկայված է միայն Արս-ում)Պեւ զարձիլ հարադրությունը հայանորեն պատճենում է իրանականից Հմմտ. պրս. ۱۰ گری ۱۰ گری «լալ, ողբալ»:

Բայական հարադրության պատճենման մի շարք օրինակներ գրու-նում ենք Բուռնիկիի վերջ նշված պրոնմ: Հարադրության բայա-կան անդամները հիմնականում երբայ, արկանել, հարկանել, ունել.

առնել, լինել, ապ բառերն են: Բերենը օրինակներ: Քնել իմաստը գրաբարում արտահայտվում է նաև ի հուն երբայ կապակցությամբ՝ նմանօրինակ կազմություն կա և պարսկերենում՝ bax'ab raftan: Հա-մեմտաբար շատ են արկանել (հարկանել) բայերով հարադրու-թյունների իրանական համարժեքները:

Հուր արկանել—«...նուր արկանել սկսան ի բանակի» (Ա, ՄԿԲ, Կ, 20): Այստեղ ընդգծված կապակցությունը ունի «կրակ վառել» ի-մաստը, կամ՝ «Ամենայն ծառ, որ ոչ անել զպտուղ... հատանի և ի-նուր արկանի» (Ղուկ., 9, 10): Պարսկերենում համապատասխան ար-տահայտության ունենք ātaš zadan ձևով:

Դեռևս Ա. Մեյնե փող հարկանել կապակցությունը պահլավականից պատճենված ձև է դիտել (պ՞ջ շետա բալից):

Բանակ հարկանել իմաստը հայերենում արտահայտվում է նաև բանակիմ պարզ բայով. Հմմտ. «...զի հասնալ մուծեալ բանակէին ի դաւան Բանեայ» (Քուղ., 118):

Բանակ հարկանել-ը (Հմմտ. «Զօրօք հանգերձ բանակ հարկաներ») իրանական հարազատ ձև է, որը շարունակվում է նոր պարսկերենում urdū zadan ձևով:

Հայերենի խորան հարկանել զի էր հարեալ զխորանն ի ձոր յուր բերգին» (Քուղ. 109) իրան. համարժեքն է նոր պրս. čadur zadan կապակցությունը: Հյ. սանձահարել բարդ բառը Բուռնիկիին համեմա-տում է պրս. afsār zadan-ի հետ, եկնադրելով, որ այն նույնպես պատճենում է մանավանդ, որ հայերենում համապատասխան իմաստը արտահայտում է և սանձել բայը:

Մեր պահ ունել կապակցությունը (Հմմտ. «Իշխանքն, որ զեր-նելին զՄահակ ի պահ ունէին») իր զուգահեռն ունի իրանական լեզու-ներում Հմմտ. պրս. pās dāštan: Դասեմ-ի կողքին զատ առնել-ի իրա-նական համապատասխան ձևը dād kardān-է (Դատ արացել Աս-տուած ընդ իս և ընդ քեզ) (ժն. ժԶ, 5):

Ազատել, ազաղակել, հաչակել, հեռանում, վնասել, այցելել, Բարկանել, փութամ բայերին զուգահեռ գրաբարում կիրառվում են նաև սրանց հարադիր ձևերը՝ համապատասխան բայաբնառում+ալլ բայ կա-ռուցվածքով: Հմմտ. «Կարաց զնա ազատ առնել ի կասկածանաց» (Նզն., 137): «Ազաղակ արացել վան նոցա» (Նսայ. Ե, 30): «Իսկ նորս... (137): «Ազաղակ հարկանէին» (Քուղ., 138): «Եւ նա իկալ սկսաւ բարդակ զազաղակ հարկանէին» (Մարկ. Ա, 45): «Մի հեռի առնել յոյժ եւ հուչակ հարկանել զբանն» (Մարկ. Ա, 45): «Մի հեռի առնել յոյժ եւ հուչակ հարկանել զբանն» (Առակ. Ի, 2): «Դա-զօգեակառութիւն»: «Ընտա առնէ անձին իրում» (Առակ. Ի, 2): «Դա-զօգեակառութիւն»:

քծ: Քաղաքը այց արա» (Ք., ճգր. 2, 1) «Քարկոծ կամէին առնել գնա» (ՆԶԲ):

Պարսկերենում առկա են համապատասխան ձևերը ազառ առնել äzəd kardan, աշողակ (հարկանել, առնել) laryäd zadan, հնոի արկանել (dur kardan, փոլթ առնել (tavavüñ kardan, գնառ առնել gınah kardan): Ավելացնենք ևս, որ հրաման տալ, պատասխանի տալ կապակցությունները նույնպես կիրառվում են պարսկերենում (framan dadan, pasux dadan)

Զ. Բոլոնիզից ենկատում է նաև մի այլ ընդհանրություն: Բայական կապակցություններում առնեն-ով կազմված ձևերը ներգործական սեռ են արտահայտում, իսկ գրանց կրավորականը գրևերվում է լինիմ բայով: Պարսկերենում նույնպես այդ հակադրությունը կա՝ արտահայտվելով kardan/Sudan ձևերով:

Գրաբարյան ակն ունիմ կապակցության Ս. գրքում վկայված օրինակների հետարեն համապատասխան բառերի համադրումով, Զ. Բոլոնիզիցի հետաքրքրական զուգահեռներ է պարզում, գտնելով նաև, որ հայ. ակն ունիմ արտահայտում է նաև օտարում, ակնկալել իմաստը, ինչպես պրո. Շահմ ժահտո-ը (ՂԱ. 1961, 657—663): Հայերենի և պրո. համապատասխան գոպակցության բազադրիչների նաև կապակցության նույնությունը, ինչ խօսք գիտարժան է: Բոլոնիզիցի հակված է այն ևս դիտելու որպես պատահում:

Ակնհայտորեն պատճենումներ են համա-նախածանցով մի շարք բառեր. համահայր, համամայր (հմմտ. հին պրո. hamapitar, hama-matar) համատոհմ, համատոհմիկ... և այլն:

Կարելի է բերել այլ օրինակներ, երբ հայերենն ու պարսկերենը գրևերվում են ձև-իմաստային ընդհանրություններ: Բայց ճիշտ չէ, բոլոր դեպքերում անվերապահորեն պնդել հայերենի իրանական լեզուներից պատճենման փաստը: Նույնը կարելի է ասել և վերագրել որոշ օրինակների վերաբերյալ: Շատ դեպքերում հայերենի պատճենում համարված ձևը գտնում ենք միայն նոր պարսկերենում, որը գեղես գրաբարի համապատասխան ձևը իրանական համարելու լիարժեք փաստարկում չէ. եթե բավարարվենք ժամանակային այդ կտրվածքով, ապա կարելի է պնդել և հակասուկը՝ նոր պարսկերենի՝ հայերենից կատարած պատճենման փաստը, մասնավորապես որ գրաբարում ավանդված ձևերը ժամանակագրորեն զգալիորեն առաջ են նոր պարսկերենից: Մենք իհարկե, այդ չենք պնդում: Ասենք. սակայն, որ հայերենի համապատասխան ձևերի առկայությունը կամ ենթադրական առ-

կառույթները հին կամ միջին իրանական լեզուներում գործյալ պատճենման երևույթ արձանագրելու երբակացություն հիմք չի տալիս: Օրինակ, գրաբարում կարելի է գտնել տասնյակ հարադրություններ Սրիեակ, գրաբարում կարելի է գտնել տասնյակ հարադրություններ և կալ, հարձով բարդությունները, դա նշանակում է, որ մեր լեզվին է ընդորոշ երևույթներ են դրանք: Նույնիսկ իրանական լեզուներում է հայերենում առկա ընդհանրություններն էլ կարելի է բացատրել ու լին ազդեցությամբ կամ պատճենմամբ, այլ երկու լեզուների, կամ լին նույնն է, երկու ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրություններ, մասնավորապես, որ այդ ընդհանրությունը նպաստող արտալեզվական և ներլեզվական գործոններ շատ կան:

Նկատենք, որ նմանատիպ բայական հարադրությամբ կազմված որոշ ձևեր առկա են նաև այլ լեզուներում, այլ ժողովուրդների մոտ, որոնք հայերի կամ պարսիկների անմիջական հարևանները չեն: Պարսկական այսպիսի դեպքերում գործ ունենք սեփական լեզվամտածողության հետ, ինչպես հայերենում ու իրանական լեզուներում: Իհարկե, բնավ չենք ժխտում իրանական լեզուներից կատարված պատճենումների գոյությունը: Դրանք, անշուշտ, կան: Հաստատապես պատճենում կարելի է համարել այն հակացությունները, որոնք վերաբերում են իրանի պետական-տնտեսական-քաղաքական կյանքին, այլ կերպ ասած, այն բառերն ու կապակցությունները, որոնք լրիվ կամ որոշ լասիով տերմինային արժեք ունեն (հմմտ. արբայից արբա, գործակալ, բանակ հարկանել, կրակատուն... և այլն): Առօրյա հակացությունների ու երևույթների դեպքում ձևա-իմաստային ընդհանրությունները գեղես միայն միավորը պատճենում համարելու բավարար հիմք չեն տալիս:

8. ՀՈՄԱՆՆԵՐՈՒԹՅՈՒՆ

Հմտանիշությունը տարբեր լեզուներում գրևերվում է տարբեր ձևերով ու առանձնահատկություններով՝ պայմանավորված ինչպես արտալեզվական իրողություններով, այնպես էլ ավելի լեզվի զարգացման ներքին օրինաչափությամբ: Բառային հմտանիշության առկայությունը ավելի լեզվի բառապաշարի ճոխությունն ու հարստությունը արտահայտությունն է: Հմտանիշությունը արտահայտվում են միևնույն հակացությունների ներբերանգային կողմերը, հմտանիշ բառերը նաև հու-

զականությունը, արտահայտչականություն են հաղորդում արտահայտվող մտքերին, խոսքը դարձնում են ավելի կոնկրետ ու հստակ, հոմանիշների կիրառությամբ հնարավոր է դառնում խուսափել խոսքի միօրինակությունից, անհարկի բառային կրկնությունից:

Հայոց լեզվի բառային հոմանիշությունը տարբեր առիթներով անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, բայց հարցի խոր և համակարգային քննություն կատարվել է միայն վերջին ժամանակներս², ինքը վերաբերում է արդի հայերենի հոմանիշության քննությանը: Խոսքի գրաբարի հոմանիշությունը առայժմ կարելի է շուտամասերված համարել: Գրաբարի հոմանիշության վերաբերելու զգույն նյութ են ստալիս միայն գրաբարի բառարանները: Մակաուն բառարանները տալիս են հոմանիշությանը վերաբերող նյութը ոչ ամբողջությամբ, նույնիսկ բառարանների բնձնում նյութն էլ առայժմ ուսումնասիրված չէ:

Ի՞նչ են հոմանիշ բառերը: Ի՞նչ է հոմանիշությունը: Այս հարցերի մանրազնին քննությունը, նոր սահմանում տալը կամ եղածների մանրամասն վերլուծությունը մեր նպատակը չէ: Նշենք միայն, որ արտասահմանյան և հատկապես սովետական լեզվաբանության մեջ ստեղծված է ծավալուն գրականություն, որտեղ քննվում են հոմանիշության հետ առնչվող շատ հարցեր:

Ուսումնասիրողների մեծ մասը հոմանիշներ են համարում իմաստով բնութագրանքային բառախմբեր, մեկ այլ մասը՝ իմաստով մտաբանող: Բոլոր դեպքերում իմաստային կողմը էական է դիտվում: Ոճական քննության տեսակետից երբմե՞ն էական է համարվում համատեքստում հոմանիշների փոխադարձ փոխարինելիության հնարավորությունը: Նկատենք, որ այն հատկանիշները, որոնք էական կարող են լինել իմաստարանական և ոճական տեսակետից, էական կարող են լինել քերականական և արտասրանական հարաբերությունների տեսակետից:

Որեմե՞ն, լեզուների բառապաշարի, այդ թվում և հոմանիշության քննությունը կարելի է կատարել տարբեր հայեցակետերից, օգտագործելով տարբեր մեթոդներ: (Օգտագործում ենք նաև նամանիշ և հոմանիշ տերմինները):

Հոմանիշ խմբերը ստեղծ են լեզվի և համաժամանակյա և տարժամանակյա կտրվածքներում: Բնականաբար ժամանակային փոքր կտրվածքի դեպքում հոմանիշ անդամների բանական կողմը ավելի նվազ է և ուսումնասիրության համար առաջադրվող հարցերն էլ՝ սահմանափակ:

գրանցումներ:
ա) հոմանիշ անդամներ կարող են պատկանել տվյալ լեզվի նույն կտրվածքին:

բ) հոմանիշ անդամներ կարող են պատկանել տարբեր կտրվածքների (փուլերի):

գ) հոմանիշ միավորներ կարող են ընդհանուր լինել լեզվի դարգացման բոլոր փուլերին³:

դ) հոմանիշ անդամներից մեկը կարող է լինել գրական-նորմատիվ, մյուսը՝ բարբառային:

ե) հոմանիշ անդամներից մեկը կարող է լինել օտար փոխառություն:

զ) հոմանիշ անդամներ կարող են լինել փոխառություններ: Այս թվարկումը բնավ էլ ամբողջական չէ և կարելի է շարունակել ներառելով հոմանիշության բազմազան այլ գրականություններ:

Մեր նպատակը գրաբարի հոմանիշության այն խմբերի քննությունն է, որոնց անդամները իրանական լեզուներից կատարված փոխառություններ են: Կաշխատենք հայոց լեզվի գրաբարյան փուլի բնձնում նյութի տվյալներով բացահայտել հոմանիշ փոխառված միավորների նրբիմաստային, գործառական-ոճական, առանձնահատկությունները: Քանի որ մեր քննությունը գրաբարի բառային հոմանիշության երկու և մասնակի հարցի պարզաբանման առաջին փորձն է, ուստի երբեմն գուցե զարմ մեզ հետաքրքրող խնդրի շրջանակներից, հաշտի կառնենք նաև ուշ շրջանի փոխառությունները (եթե նրանք լրացնում են հոմանիշ խմբերը), ինչպես նաև առանձին դեպքերում համեմատության մեջ կրկնել հոմանիշության տվյալ խմբի բնիկ հայերեն կամ օտար, բայց ոչ իրանական փոխառությունները:

Պետք է նշել, որ ընդհանրապես լեզուների հոմանիշության համակարգում միևնույն լեզվից կատարված փոխառությունների թիվը մեծ չէ: Բայց քանի որ հայ-իրանական հարաբերությունները եղել են անընդհատ ու սերտ, որի լեզվական հետևանքը բազմաթիվ իրանական փոխառություններն են հայերենում, ուստի առանձնանում են և զգույն հոմանիշային խմբեր:

Իրանական փոխառված միավորների լեզվական արձեղք բոտմանային ներկայացնելու մատուցելով բոտերի իմաստային (հոմանիշային) ընդհանրությունները վեր հանելուց զատ, կաշխատենք ցույց տալ գրանց

գործառական, բառակազմական, ծագումնաբանական, հնչյունափոխական նկատմող առանձնահատկությունները: նշենք, որ հոմանիշ միավորներ կան տարբեր խոսքի մասերի համակարգում, բայց որովհետև գերիշխող գոյականներն են, ուստի սկսենք գոյականներից:

ա) Գոյականներ

Ազգ⁵⁴—տոնմ. Բմաստները ընդհանուր են «ցեղ, սերունդ» հասկացությունների արտահայտման ղեկբում: Հմտ. «Յազգէն Գեթունեաց զարմանալի Տաճատ» (Նիշի, 119): «Ե տոնմէն Մոկաց Արտակ անուն» (Նիշի, 43): «Միտեզամ ամուսնալոցսցս կ մահանացուցս ազգ է տոնմ պատուածոց նոցս» (Նշն., 143): «Եսկ ազգն Համագասպայ որ է տոնմ Մամիկոնեան» (Ազաթ. 170): Ազգ-ը ունի բազումություն, «ժողովուրդ» իմաստները: Տմտ. «Բագմացցին ազգ հայոց» (Նիշի, 52), իսկ տոնմ հայոց կապակցությունը սպասակն է Մուսչիբը ունի նաև «տեսակ», «կերպ» իմաստները: Բմաստային լայն շրջանակներն են պարմանավորում ազգ-ի հաճախական կիրառությունները: Բառակազմական կազմակերպումը դարձյալ զրանք ընդհանրություններ ունեն Ազգական լլտոնմական, ազգային/տոնմային, ազգակից/տոնմակից, ազգայեան/տոնմայեան: Իհարկե, կան նաև յուրահատուկ ձևեր, տոնմատր, տոնմիկ, (ազգ բաղադրիչով նման ձևեր չկան), ազգահա... և այլն: Այս բառերի նեա հոմանիշությունն ենք ունի նաև բնիկ հայերեն ցեղ բառը, որը նվազ հաճախական է և ափելի շատ հանդիպ է գալիս ցեղանունում + ցեղ կապակցության մեջ: Հմտ. «Մեթան ցեղից կացին նահապետք արք արարք» (Ազաթ. 152): «Մասուցա ցեղն Յուգայի բաա տոնմիք» (Յնու., է 14): «Յեղից Արտաշեսի (եար. 205): Ազգ, տանմ բաղադրիչներով կազմվում են բազմաթիվ բառեր, որոնք վկայում են, որ այդ բառերը գործածության հին ակունքներ ունեն և արդեն 5-րդ դարում նրանք հայերենի կողմից «յուրացված» էին:

Ախոռ—ասպատան. Առաջինք 5-րդ դարի մատենագրության մեջ ավանդված չէ: Բայց ախոռակն ձևի վկայությունը ենթադրել է տալիս նաև ախոռ-ի գործածությունը: «Ախոռակետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպատանին» (Բուզ., 106): «Եկն նմուա Բագարն Հայոց Արշակ շրջել գասպատանա միով դարբային Պարսից» (Բուզ., 106): Երկուսն էլ նվազ հաճախական են: Ըստ երևույթին դրանք գիտակցվում էին որպես օտար բառեր: Պետք է կարծել նաև, որ ասպատան-ը ավելի նեղ իմաստ ուներ և նշանակում էր միեկի զոմ (ասպ=ձի)+տան, իսկ ախոռը՝ «զոմ» ընդհանրապես: Հմտ. «Որ

կացությունների արտահայտման ղեկբում: Հմտ. «Յազգէն Գեթունեաց որ կամի դիբա մտանէ յախոռս զոցս և լուծեալ տանի զլասնակս» (Վրթ. է):

Ժամանակ—ժամ. Որոշ գործառություններում նկատվող իմաստային ընդհանրությունները առաջին հերթին պայմանավորված են միևնույն բառարմատի առկայությամբ: Հակադրություններ էլ կան: Ժամ-ը հիմնականում հանդես է գալիս որպես ժամանակային միավոր: Օրինակ. «Գիրտակ որ ոչ միայն աուրե, այլ և ժամուն» (Ազաթ., 232): «Եսկ իբրև ժամվ երեք ի վերայ անցին...» (Նիշի., 156): «Ժամանակ-ի գործառական մի առանձնահատկություն նկատել է դեռևս Ա. Մելեն. ժամանակ բառը եզակի թվով կիրառվում է որոշակի իմաստով, բայց ժամանակային տարրեր մասեր ընդգրկող և անորոշ ամբողջություն արտահայտելու համար հաճախ դիմում են հոգնակիին. Հմտ. «...յցան ժամանակի ծնանելոյ» (Ղուկ. Ա, 57)⁵⁵: Առասան-երասան-ղանղանա-անղ: Այս բառերի գործառության մեջ առկա են «սանձ, կայ, պարս» իմաստները: Նկատենք նաև «Արասան-ի յուրահատկությունները Մագումնաբանորեն սրանք նույնական են պլն. *rasan «պարան սանձ»: Հայերենում իմաստային ընդհանրությունը ներկայանում է «կապ, պարան» նշանակություններով: Հմտ. «Ընդունալ ի սանձս կապոյ Երասանաց բմբունման զմտաց մայրապոլիսն» (ՆԷՐ): Առասան երերկին՝ ոչ վազվազակի խզեսցէ (ժող., Գ, 12): Նկատելի է նաև, որ հիշյալ բառերը չունեն «երիվարի սանձ» նշանակությունը: Այս կիրառությունը հանդես է գալիս երասանակ ձևը: «Ապա սպասեալ Յոհաննու րունն հարկաներ զերասանակց ձիւնս» (Բուզ., 226): «Գար-ձուցեալ այնուհետև զերասանակս երիվարացն՝ զնացին և նորս զհետ փախտալիցն Հայոց» (Փարս., 135): Հավանորեն իր. *rasan արմատից հայերեն (ե)րասանակ բառը սկզբնապես ունեցել է սանձ (երիվարի) նշանակությունը: Մեր մասնագրության մեջ ափելի հաճախական է հենց երասանակ ձևը «սանձ», «կապ» իմաստով: Առասանի երասան-ը հայերենում բառակազմական մեծ նարավորությունների շեկ դրսևորում: Կան առասանակ/երասանակ զուգաձևերը, առասանի շեկ դրսևորում: Կան զիմաց առկա է երասանակիմ-ը: Հանդիպում ենք երասանակագեց, երասանական, երասանակոմ բարդություններին, որոնք առասան⁵⁶ բաղադրիչով վկայված չեն: «Սանձ, կապ» իմաստն է արտահայտում նաև ղանղանաանղ-ը, որը բառացի նշանակում է «ստամոնակապ»: Բուռ V դարի ինքնուրույն զրականության մեջ վկայված չէ, բայց կա Առավածաշնուն և այլ թարգմանություններում: Բերենք, մեկ օրինակ. «Ի սանձս և ի ղանղանաանղս միխեսցես զերանկս

նոցա: (Սաղ., 116, 12): Այս օրինակը հենց վկայում է սանն (զանդա-
նաունդ) հոմանիշության մասին: Վառագոյնդ «սանն» բառը առանձին
չի գործածվում, որպես բարդ բառի բաղադրիչ վկայված է 5-րդ գա-
րից. «Արշակ թագաւորն... բազում նծուզս արքունական ձիոյ՝ ար-
մանի օճառովք ոսկիարանանց ապրդովմն աայր նմա» (Բուզ., 91):

Ասորա-վանան: նույնանիշեր են: Հմմտ. «Նենկով նիդակ և ա-
պոր» (Բ. Մն., Ին, 5): «...Վահանս և նիգդաս» (Բ. Մն., ԺԱ, 12):
«Սրով և զնգորդեամբ և սապարաւ» (ՆՃԲ): «Երեկցան ամեներեան զի-
նակաբ և սաղաարեանայր, սոր ընդ մէջ և վահան ի ձերին...» (Յղիշ.,
58): Բառակազմական որոշ կաղապարներով, ինչպես նաև համապա-
տասխան բառաձևերով արտահայտված իմաստների ընդհանրությունը,
սրանք դարձյալ շփման եզրեր ունեն: Հմմտ. Վահանկիր/|սապա-
րակիր, վահանատր/|սապարատր, վահանափակ/|սապարակակ և այլն:

Ասպար-ը նվազ համախառն է Օրինակ, Ասպարեղզոսի, Կոր-
յունի, Եղնիկի, Խորենացու, Բուզանդի մոտ այդ բառը կիրառված չէ
(Վերջինի մոտ բառարարգրված ձևն է): Բարձրաստեների, զործառու-
թյան սյուրտների, բառակազմական որոշ կաղապարների ընդհանրու-
թյունը, մյուս կողմից վանան-ի համախառն կիրառությունը, դրա-
նով բարդված ավելի շատ բառաձևերի առկայությունը հիմք են ապրե-
ն եղրակացնելու, որ վանան-ը ավելի հին փոխառություն է:

Անաչառնիկ-նծղեն-պանդուխտ: Ունեն «օտարական» իմաստը: Ա-
ռաչիւր, սակայն կիրառված է միայն մեկ անգամ (տե՛ս Արմ), որը
թերևս անաչառնիկի «օտարական» բառի աղավաղված ձևն է: Ընդ-
գծվածի արմատը իրանական է՝ *xšatr > xšahr > šahr > աշխառն.
սակայն բառն ամբողջությամբ հայակազմություն պետք է զիտել, մա-
նավանդ, որ համապատասխան ձևը իրանական լեզուներում վկայված
չէ: Ունենք նաև օտարաշխառնիկ ձևը. «Այդ եթէ ի բուն զայնկոթունն
վասն պատուական օրինացն ոչ ինայեաց ի նա, ո՞րչափ ևս առանկ
ի ձեզ օտարաշխարհիկս...» (Յղիշ., 162):

Նծղեն-ի հետ հոմանիշ խումբ են կազմում անաչառնիկի, պան-
դուխտ, մասամբ և օտարական բառերը: Աճողայնը նկատում է, որ
պանդուխտ-ի և նծղեն-ի «տարբերությունը այն է, որ նծղենը շեշտում է
օտար երկրի մեջ ընկալություն, իսկ պանդուխտ օտար տան մեջ ընա-
կություն»⁵⁷: Այս տարբերությունը սակայն հստակ չէ: Հմմտ. «Եւ յըն-
աբու Արքամ ի մեռելոյ անտի իրմէ ևս իստեցաւ. Պանդուխտ եմ առա-
ջի բո, նծղեն՝ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ» (ՆՃԲ): Նծղեն-ը
Նույնպես նվազ համախառն է: Կարելի է կարծել, որ վերջինս հոմա-

նիշային վերոհիշյալ խմբի մեջ է մտել ավելի ուշ շրջանում՝ «օտար-
եկեացիք» իմաստով («deh» երկիր, գավառ):

Քերէք այլ օրինակներ նաև անաչառնիկ բառով. «Կին և որդիք...
անաշխարհիկ եղեալ յարքունիս երթիցեն» (Յղիշ. 171): «Եւ կապկալս
ևս անժին բազում լիկութեամբ և շարչարանք իրն զանաշխարհիկս»
(Գ. ՄԿԲ. Է, 3): «Այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար
ի մեզ...» (Ազաթ., 30): «Ոչ էք օտարք և պանդուխտ» (Եփր., Բ. 19):

Ասարդ-պտառ: «Եւ ոչ զաղչկանս միայն, այլև զաւսարդս, այլև
զուգահասակս» (ՆՃԲ): Երկուսի իմաստային ընդհանրությունը այն է,
որ նրանք ոչ միայն արտահայտում են «ծեր» իմաստը, այլև «ծեր կին»:
«Պատաւ-ը երբմէն արտահայտում է նաև «ծեր» ընդհանրապես, որն
անշուշտ իմաստի հետագա լայնացում է: Քերէք այդ բառով օրի-
նակներ. «Այլ ամենայն ստապելք են և պատասպազ զըջչնեք» (Յզն.,
99): «Սաւելն ծիքը և պատասխար» (Զարա, Ը, 4): Ասարդ-ը հայտը
լեզվի պատմության և ոչ թե շրջանում համախառն գործառու-
թյուն չի ունեցել: Նրա նախնական գործածությունը կարելի է բացա-
րելի հայերենի մեջ լայն ու կայուն գործածություն գտած եփիսապոստի
բառի համարանությունը: Հոմանիշությունն այս խմբին են պատկանում
ընկի նախնական ձևեր, ծերունի բառերը, որոնց նախնական նշանակությունը
«ծեր մարդ», «ծեր այր»-ն է: Մերունիկ, ինչպես նկատում է ՆՃԲ-ն,
արտահայտում է «ավելի ծեր», «ավելի տարիքոտ» նշանակությունը:
Մեր, ծերունի՝ մի կողմից և պտառ, աւսարդ զուգերը, մյուս կողմից,
սկզբնապես ունեցել են սեռային նախադրություն, որն հետագայում
անհետացել է:

Քամ-սակ-հարկ: Այս շարքի հիմնական անդամ կարելի է համարել
հարկը: Ամենահամախառն է հարկ-ն՝ վկայված V դ. և զործու-
ն հայերենի բոլոր փուլերում: Աճա V դ. վկայված երկու օրինակ. «Ան-
կիտայր ի ծառայութիւն տամբ հարկս» (Նենկով, Բ. 37): «Արժան է մեզ
կայսեր հարկս առլ» (Ղուկ., Ի 22): Քամ-ը և սակ-ը հարկի տարբեր
սեռակներն են:

Սակ և քամ-ը իրանական զբաղանդության մեջ համախառն են հանդի-
պում է մեծ մասամբ միասին: Այդպես է նաև Նղիշի մոտ. «Եւս և
բնաւ ով իսկ կարէ պատմել վասն ծաւրութեան մտից և սակից, բաժից
և հասից լերան և գաշտաց և մայրեան» (Յղիշ. 23): V դ. վկայված
տվյալներով ղժվար է զանազանի այդ բառեր բուն նշանակությունը:
Քամ(սակ)հարկ—իմաստների տարբերակումը կատարում է պատմա-
կան, բանասիրական ըննությունը: Սրանք իրանական լեզուներում

վկայված են միջին իրանական փուլից, ուստի հայերենի փոխառու-
թյան աղբյուրն էլ միջին իրանական լեզուներն են:

Հարկի տարբեր տեսակներ են արտահայտում նեպակ և բկլար
իրանական ծագմամբ բառերը, որոնք վաղ գրաբարում վկայված չեն
և ընդհանրապես հաճախական չեն:

Բազմակ-ճրագ: Առայինը նժԲ-ն մեկնում է՝ «ճրագ՝ որ բազմի ի
վերայ աշտանակի կամ ճրագարանի. մոմ, լապաթ, դամպար: Յրկ-
բորդը՝ «լոյս վառելու շրջոյ և ի պատրուգէ. լայնաբար. շահ, լոյս, մոմ,
լապաթ, կանթիկ»: Արմ-ում բազմակը մեկնվում է «ճրագ», իսկ
ճրագը՝ «շահ, լոյս, մոմ»:

Ճրկու բառերի իմաստային ընդհանրությունը ակնհայտ է: Այդ
են հաստատում նաև օրինակները: Ըմտ. «Քաղմակացի արծարծի լու-
տոյն՝ ձկն ի վերայ արկանել» (նժԲ): «Ձէթ ի ձիթենեաց ի լոյս. զի
եղիցի ճրագ հանապազոր» (նժԲ): Կարելի է եզրակացնել, որ բազ-
մակը, որն ի զեպ նվագ հաճախական է, առօրյա լեզվում գործա-
ծական չի եղել: Այս ենթադրությունը անուղղակի կերպով հաստատ-
վում է այն փաստարկումով, որ բազմակ-ով բարդված ձևերը մյուսի
համեմատությամբ զգալապես քիչ են. ունենք միայն բազմակայ, բազ-
մակակալ, բայց՝ ճրագբեռան, ճրագալոյց, ճրագակալ, ճրագակիր,
ճրագանձ, ճրագան, ճրագարան...: Ճրագ բառը ցայսօր էլ մեր լեզ-
վում ակտիվ գործածություն ունեցող բառ է: Մոմ-ը նույնպես իրա-
նական է՝ «մեղրամոմ» նշանակությամբ, «լուսատու» իմաստով բա-
ռը չի կիրառվում:

Բաժակ-նուագ: Իրանական լեզուներում սրանք վկայված չեն, Ի-
մաստային նույնանիշներ են: Քերեն օրինակներ: «Առ զբաժակ գին-
ւոյս անապակիս» (Նրե. Ին, 15): «Ունելով բաժակ սուկի ի ձեռին»
(Ցալա., ԺԷ 4): «Տարգալ ունել սուկի և պտտառարազ և ոսկեզեծօք
բնպկել նուագօխ» (Նոր., 174): «Բազում նուագ սուկիս կորուսակալ»
(նժԲ):

Ընդգծված բառերը ունեն «բժականակ», «գավաթ», իմաստը: Ա-
ռաջինը ակելի գործածական է: Ըստ երևույթին սրանք փոխառվել են
լեզվական տարբեր աղբյուրներից՝ տարբեր ժամանակներում:

Բասն⁵⁸-բաստարան-զեղան: Բոլորն էլ ունեն «բանտ», «արգելա-
բան» իմաստը: Բաստարան-ը վկայված է լոկ մեկ անգամ. «Մտա-
նեաց զնա ի բաստարանին» (Նիքր. Քզ. 446): Չեղան-ը նույնպես նվագ
հաճախական է: 5-րդ դարի մատենագրության մեջ ավանդված է
գաբձյալ մեկ անգամ: «Տարան ետուն յայն զեղան, ուր կային մա-
186

հապարտք» (նժԲ): Ուշ շրջանի մատենագրության մեջ հանդիպում ենք
այս բառի մի քանի կիրառությունների.

Բանըր (այլ գրություններում բանղ) տարածված ու կայուն կիրառու-
թյուն ունի, բազմաթիվ են և բանղ բաղադրիչով բարդ բառերը (միայն
նժԲ-ն տալիս է 15 բարդ բառ) զեղան-ով կազմված են միայն զըն-
գանել և զեղանարգել ձևերը:

Արձատական բառարանում բոլոր երեք փոխառյալ բառերի աղ-
բյուրը համարվում է պահլավերենը: Բաստարան-ը Քերես պատահա-
կան գործածություն ունի. այն, ինչպես ասացինք, վկայված է լոկ
մեկ անգամ. չկա միջին հայերենում, բարբառներում ու արդի գրա-
կան հայերենի երկու տարբերակներում, չկա նաև իրանական լեզունե-
րում. ամենայն հավանականությամբ երկրմի հայ թարգմանչի կեր-
տած բառն է, որը ծանոթ լինելով իր. bast արմատին (հիբերին) արան
ածանցով կերտել է նոր բառ: «Չեղան» իմաստով գրաբարում գործած-
վում է և ղղյակ բառը (տես Արմ., հտ. 4, էջ 625—626), որը նույնպես
իրանական փոխառություն է:

Բամբիշն—ղիխոյ: Վկայված են 5-րդ դարից: Համեմատելով բար-
բառային ձևերը, Բենվենիստը եզրակացնում է, որ բամբիշը զուտ
պարսկական տիտղոսի արտահայտություն է, որ թերևս šahan—šah-ի
իզական համարժեքն է⁵⁹: Հայերենում բառն ունի «թագուհի», «իշ-
խանուհի» իմաստները: Քերենք մի քանի օրինակ. «Եւ ամին զկապուտ
բանակին և զկանայս թագուարին և զբամբիշն...» (Քուղ., 48): «Եսթեր
եզը բամբիշ ի տեղի վաթիսան» (նժԲ):

Նկատելի է, որ բամբիշ «թագուհի» իմաստով, կեր խոսքը վերա-
բերում է հայ թագուհիներին կամ իշխաններին, չի կիրառվում, իսկ
որպես անձնանուն այն արդեն 5-րդ դարում կիրառվում էր Ըմտ.
«Մօր տրա Բամբիշն անն քոյր արքային Տիրանայ» (Քուղ., 58): Գըչ-
խոյն-ը նույնպես նշանակում է թագուհի: Այս վկայված օրինակներից
մի բանիցը. «... ղչխոյն հարաւոյ յարիցն» (Մատ. ԺԲ, 42, Դուկ. ԺԶ,
31): «Իսկ ղչխոյն Հրէից Ազեքանգրիայ... դարձոյց զնա անտի» (Նոր.,
129): «Նա և ոչ ղչխոյն Փառանձեմ զնաց ի կոչ տանն իւրոյ» (Նոր.,
299): «...Վառեալ ի Կղեուպարայ ղչխոյն եզիպտացոց» (Նոր., 136):
Ինչպես նկատում ենք, բամբիշն/ղիխոյ գույզերը ունեն իմաստային
և գործածական մեծ ընդհանրություններ. տարբերությունը թերևս այն է,
որ ղիխոյն վերաբերում է նաև հայ թագուհիներին, այլ կերպ ասած՝
այն նաև հայկական տիտղոս է: Բենվենիստը համարելով բանի հա-
յերենի, իրանական լեզուների և հունարենի համապատասխան կիրա-

ստթյունները, գտնում է, որ զլխոյ-ն նշանակում է «գերագույն իշխանութի»⁶⁰; իմաստային այս նրբերանգր քուցն զգալի է զշխոյ (Քաղաքի, տիրուհի, կին Քաղաքի) համարութիան մեջ, բայց զլխոյ/լրամբիշն զայգտում այդ չի զգացվում:

Գան-գանաուրակ-դարգին-ղևպակ-տախտ-ժանաւա: Ընդհանրանում են «նստարան, նստեկատեղի, պատարակ» իմաստով: Գան է գանաուրակ-ը առանձնանում են նաև «Քաղաքի կամ իշխանավորի սթոտ» նշանակությամբ: Վերջին կիրառության հետ կապված գան-ը մեթ է բերել «պատիկ, իշխանական աստիճան» իմաստները: Հմմտ. «Տայր այր յիրարանչիք գան հրամայէր մատուցանել» (Գ. ՄԿԲ, է., 8): «Արութեամբ և զանու ի վեր...» (ՆԶԲ):

Գարգինը թերևս երկաթե նստարան կամ մահճակալն է. իմաստային այս նրբերանգրվ բարձր հակազդվում է գան/գանաուրակ-ին, նույննում պատգարկ-ին, որը բառարաններում մեկնվում է «մահճակալ», «հիվանդի մահճակալ» և տախտ-ին, որը նույնպես ունի «մահճակալ» իմաստը. հմմտ. «Եղբաւ ևզև տախտ փղոսկանչա և արկին ի նման կողմին» (ՆԶԲ): Սակայն տախտը հիմնականում կիրառվում է «գահ, աթոռ, Քաղաքական գահուր» իմաստով. «Սրէնք էին՝ զի Քաղաւտի Պարսից և Քաղաւտն Հայոց ի միում տախտի բազմէին և ի միում գահոյս» (Բուգ. 142):

Դեպակ և ժանուարը հաճախական չեն: Ժանուարը վկայված է Բուգանդի մոտ. «Որ արձակեաց զկանայս Քաղաւտին Պարսից Շապհոց հանդերձ ժանուարօք և վաշտանօք» (163): «Նեանմտ գիտվ ժանուարօք արձակեաց զնստ գհտ Շապհոյ» (199) ժանուարը փոխադրամիջոց է, ըստ երևույթին կանանց համար, որ և հաստատում է բառի ստուգաբանությունը՝ յձնձ «կին»: Ժանուարի նպր. մեն է ՀՅՈՒՄԵՂ, որ բառարանները նկարագրում են. «Հըրտ փայտս բառակուրս կապակ, զմէջ նորին հրանն շրտանա կամ կապեն ի նման զմասն ինչ զորգի, այսինքն կապերտի և կամ զմասն ինչ մորթոյ և այնու տանին և կրեն այսր անդր զաղիս, զցիխ և զաթար» (տես. ԱՅԹ. ժանուար բառի տակ):

Ուլ զբարարում՝ XVII դ., ժանուար բառին հանդիպում ենք նաև Զարարիա Քանաքեղոս մոտ: Հնդիեակը հավանորեն օգտվել է Բուգանդից և բարձր օտար ու անհասկանալի գիտակցելով, Քարգմանել է նոր պարսկերեն համապատասխան համարժեքով. «Եւ ի մասնել նորա ի ժանուարն, որ է քանուայ, հարկանէին զնա անողորմ»⁶¹:

Ինպակի «պատգարակ» իմաստն էլ ակնհայտ է. վկայություններ կան Կորյունի, Կազանկասովաջու մոտ, Սերբերանոսի Քարգմանութեան մէր: «Ճւանէին ի զնպակն և ի կստա արքունատարս և բազում վաշտայութեամբ ունին զանանպարսն արքունական» (4որ. 68): «Եւ բանգի միշտ ընդ իւր անաւ կրէր զնշխարս երանկեանց հրամայէր զնպակն առել յանուն արքոցն» (4դն. 153):

Վերագրյալ 6 բառերն ունեն ընդհանրության և հակադրության եղբեր: Իմաստային ակնհայտ ընդհանրություններ ունեն մի կողմից զնպակն ու ժանուարը, մյուս կողմից գան, գանաուրակ, տախտը: Ինչպես նշել ենք, բոլոր բառերը չէ, որ հաճախական են: Կ. դ. զնպակը կիրառված է մեկ անգամ (4որյուն) ժանուարը՝ 2 (Բուգ.), զաշավորակը՝ 3 (Ագր.՝ 6, Ագր.՝ 1, Եղբ. 1), տախտը՝ 3 (Բուգ.): Ամենահաճախականը գահն է՝ 33 (Ագր.՝ 20, Բուգ.՝ 4, Ագր.՝ 2, Եղբ.՝ 3, Փարպ.՝ 18, Խոր. 6): Գանի զործածության մեծ հաճախականության պատճառ անպայման բառի բազմիմաստությունն է:

Դանաճուրե-ճուր: Երկուսն էլ վկայված են 5-րդ դարից: Առաջինում փոխառյալ է միայն գան արմատը: Դանաճուրե ունի «ընծա, նվիր» (հասկանցես ուտելիզեղով) իմաստը. «Զպատարագս իմ և զգանամուն իմ» (Քի, ԻԲ, 2): «Մտաուշիք և զղանամուն» (Բ. Օր. ԺԲ, 11): Խուէր-ը իմաստային ավելի շատ նրբերանգրներ ունի, զընծա, զո՛ւ, ձեն», նաև երախարիք, աստուծո անելու համար կարկերած գինի... և այլն: Բերենք մի բանի օրինակ. «Հարկ է զնոսս ողբել զուիք և նուիրօք» (Յգն., 12): «Եւ առցես ի խոյլ անտի զճարպն և զզմակն... և նուիրեացես զայն ճուր տաւչի տեան» (Նյր, ԻԲ, 26-28): «Եւ զինի ի ճուր զորրորդ զորակն անիկէր» (Քի, ԺԲ, 5): (Տես նաև Գ. ԹԳ, ԺԷ 12, ԻՄ. ԺԲ, 4, մԻ, 15):

Խուէր բառի նախնական իմաստը թերևս եղել է կրոնական (այդպես էր և փոխառու լիզվում): Խուէր-ը զբարարում հաճախական է, քան զդանաճուրե: Վերջինս մեկ տասնյակի հասնող զործածություն ունի, իսկ միայն Աստվածաշնչում Խուէրը կիրառված է 94 անգամ: «Նվէր» իմաստն է արտահայտում նաև պատարագ բարձր. հմմտ. «Տարարքս ասնն պատարագս՝ ուսին և մեղր և խունկ» (ՆԶԲ): Պատարագ-ի «զոհ» իմաստը նույնպես ակնհայտ է. հմմտ. «տալ պատարագ զոչս ասարակաց»։ «Պատարասով զմբարտն ևճր պատարագ կենդանի» (ՆԶԲ): Ի զնպ Խուէր-ն էլ ունի «զոհ»-ի իմաստը, զոհելու գաղափարը իր մեջ ներառում է նաև նվիրելը: Այդ երկու իմաստային նրբերանգրները առկա են հենց պատարագ բառի կիրառություններում: Փիլոնի

Քարգմանության մեջ հուն. «զոհ», նվեր» արտահայտող համապատասխան բառը ներկայանում է զենիի պատարագ կապակցությունում, իսկ ՍՄԲ-ում անխորհր գոն է:

Քերես պատարագի առավել հաճախական լինելու պատճառը նաև բառի իմաստային բազմազանությունն է (միայն ՍՄԲ-ում վկայված է 228 անգամ):

Դարապան-բարապան-դարապետ-բարապետ: Իմաստային տարբերակվածություն սրանց միջև Քերես գոյություն չունի: Նույնիսկ պան և պետ ձևույթների իմաստային առանձնահատկությունները բարդությունների մեջ չեն դրսևորվում: Քերեսը մի քանի օրինակներ ընդգծված բառերով: «Դարապանաց՝ որդուցն կորիսու» (Ա. Մն., Է, 11): «Ազաղակեցին բարապանեն» (Ք, ԹԳ, է, 11): «Առ դահճապետն... և էրիս բարապանս» (Երևմ., ՄԲ, 24): «Բարապետն զուարթ մի չաղթահարեսցի ի ընոյ» (նՃԲ) «...Դարապետ ընտսեր...» (նՃԲ): Բոլոր շրքս ձևերն էլ վկայված են 5-րդ դարին: Քար և դար ձևերը ենթադրում են փոխառություն տարբեր աղբյուրներ, քանի որ դրանք հայերենում անկախաբար չեն կիրառվում, այսպես, հավանորեն բարդություններն ամբողջական փոխառություններ են:

Վերահիշյալ հոմանիշային խմբի մեջ է մտնում նաև հզ. դուռ+պան (պահ) կազմությունը: Դոնապան, դոնապան (զոնապետ ձևի չենք հանդիպում): Այս բառերն ավելի հաճախական են, քան սրանց իրանական ծագմամբ հոմանիշները: (ՍՄԲ-ում օրինակ՝ դոնապանը գործածված է 36 անգամ, իսկ բարապանը՝ 4):

Դեհկան-դեհպետ «կուսակալ, իշխան», Առաջինը վկայված է միայն մեկ անգամ՝ դեհկանուրիսն ձևով. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանս. աշխարհաշէն աշխարհատարած դեհկանուրիսն, շինականաշէն ազգն գեունեաց» (Քուզ., 56): Մերսու ավելի գործածական է (նաև դեհպետն ձևով). «Միոյ աշխարհի՛ն երկու դեհպետեմ ոչ լինին» (Եղիշ., 33): Իսկ առհասարակ սրանք անհամեմատ քիչ գործածական են, քան հոմանիշային միևնույն խմբին պատկանող ոչ իրանական ծագմամբ կուսակալ, գավառապետ բառերը:

Դեհ-կեշտ (Քէշ) «գիրտ, աղանդ»: Առաջինը բացառապես վերաբերում է զբաղաչական կրոնին՝ մոզությունը, օրինակներ. «Շքաման նուուն մոզաց... Նամակ մի գրել ըստ ձախողուկի դեհին խրեանց» (Եղիշ., 24): «Քազուրեցուցար ձեզ իտարով ոմն ի գեհնէ ձերնէ» (Խոր., 311): Երկրորդը դարձյալ մոզություն է վերաբերում, նաև նրա տարբեր ազանդներին: «Քանդի այս հինգ կեշտք են, որ զրանալ ունենին

զամենայն օրէնս մոզութեանն» (Եղիշ., 144): «Եթէ նոյն բէշ է երկուցունց, ընդդր ասիցեն մոզք զզանդիկն» (Եզն., 116): Եւ որ բազում կեշտք են ի կողմանս, կողմանս աշխարհին պարսից» (Եղիշ., 61):

Այս բառերը մտնում են փոխառությունների այն խմբի մեջ, որն արտացոլում է միայն իրանական իրականությունը, այլայլ դեպքում՝ կրոնական կյանքը:

Արժեք էրել, որ Սուրբ գրքում, վերահիշյալ բառերը կիրառված չեն: Իսկ Բուզանդի, Եղիշի, Եզնիկի գրքերում, որտեղ Իրանի վերաբերող ծավալուն հատվածներ կան, այդ բառերը արդեն գործածվում են: Այն շարքին կարելի է միանցել և Խալատը: Բառի գործածությունը ձեռն մասամբ անեզական է: Բացի «Հալատ», «կրոն»-ից ունի նաև «Հալատարմություն, ապացույց, փաստ, ստուգություն, դաշինք» իմաստները: Այսինքն՝ ակնհայտ է իմաստային լայն ընդգրկումը գն և կնչու բառերի համեմատությամբ: Որքան կրոնական հասկացություն համակիչ է կրօն բառին: Հմտ. «Ձանչու շրջուցանի զհաւատ քրիստոսութեանն» (Խոր., 271): «Գիտակ իսկ ցա աննեայն կրօնից» (Գործ., ԻՉ, 3): «Եւ այլուր թէ մի է տէր և մի հաւատ» (Եզն., 169):

